# ԺԱՄԱԳԻՐՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՐՀ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԵՀԱՓԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ
Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅՈՐԹԱԳԻՒՂ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՃԽԷՂԷՑՒՈՅ

1848 ՌՄՂԷ

264+243

սուրբ
ժամագիրք

# ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԵԱԼ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱ-
ՇՆՈՐՀ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ ՄԵՐՈՑ

ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ

ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ
ՄԵՐՈՑ

ԳԻՒՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ
ԵՒ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ՚ի սատանայէ՝ և յամ-
խաբէութենէ նորա. ՚ի պատրանաց
նորա. ՚ի խորհրդոց նորա. ՚ի գնացից
նորա. ՚ի չար կամաց նորա. ՚ի չար հը-
րեշտակաց նորա. ՚ի չար պաշտօնէից
նորա. ՚ի չար կամարարաց նորա. և
յամենայն չար զօրութենէ նորա. հրա-
ժարելով հրաժարիմք.

Զայս երիցս ձայնէ՝ երեսս ՚ի յարեւմուտս՝
և ձեռս ՚ի վեր անելով. և ապա դառնայ յա-
րեւելս, և ասասցէ զդաւանութիւն ուղղափառ
հաւատոյ, երկրպագելով և ձեռնամած ծնրադիր,
և ասէ.

Խոստովանիմք և հաւատամք ամե-
նակատար սրտիւ զհայրն ա̃ծ. անեղ,
անծին, և անսկիզբն. այլև ծնող որդ-
ւոյ և բղխող հոգւոյն սրբոյ.

Հաւատամք զբանն ա̃ծ, անեղ՝ ծըն-
եալ՝ և սկսեալ ՚ի հօրէ նախ քան ըզ-

յաւիտենանս. ոչ յետոյ և ոչ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին և որդին որդի։

Հաւատամք զսուրբ Հոգին ա՟ծ. անեղ՝ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ՚ի Հօրէ. էակից Հօր և փառակից որդւոյ.

Հաւատամք զերրորդութիւն ս՟բ, մի բնութիւն, մի ա՟ծութի. ոչ երեք ա՟ծք, այլ՝ մի ա՟ծ. մի կամք. մի թագաւորութի. մի իշխանութի. արարիչ երևելեաց և աներևութից.

Հաւատամք յեկեղեցի սուրբ՝ զթողութի մեղաց՝ հաղորդութե՟ սրբոց.

Հաւատամք զմինն յերից անձանց զբանն ա՟ծ՝ ծնեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ՚ի ժամանակի իջեալ յա՟ծածին կոյսն մարիամ. առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում ա՟ծութեն. ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ. հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն. Աստուածն մար-

դացեալ առանց փոփոխման և առանց
այլայլութեն. աննսերմն յղութիւն և
անապական ծնունդ. որոյ ո՛չ է սկիզբն
ա՟ծութեն նորա՝ և ո՛չ վախճան մարդ-
կութեան նորա. (զի յ՟ս ք՟ս երէկ և
այսօր՝ նոյն և յաւիտեան).

Հաւատամք զտէրն մեր յ՟ս քրիս-
տոս շրջեալ ՚ի վերայ երկրի. յետ երե-
սուն ամաց եկեալ ՚ի մկրտութիւն.
Հայր ՚ի վերուստ վկայեալ՝ դա է որ-
դի իմ սիրելի. և հոգին սուրբ ա-
ղաւնակերպ իջեալ ՚ի վերայ նորա.
Փորձեալ ՚ի սատանայէ և յաղթեալ
նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութի՟։
Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝
քաղցեալ՝ և ծարաւեալ. Յետոյ եկ-
եալ կամաւ ՚ի չարչարանս. խաչեալ
և մեռեալ մարմնովն. և կենդանի
ա՟ծութեամբն. Մարմինն եդեալ ՚ի
գերեզմանի՝ միաւորեալ ա՟ծութեն,
և հոգւովն իջեալ ՚ի դժոխս՝ անքա-
ժանելի ա՟ծութեն. Քարոզեալ հոգ-
ւոցն՝ աւերեալ զդժոխս՝ և ազատ-
եալ զհոգիսն. Յետ երից աւուրց
յարուցեալ ՚ի մեռելոց և երևեալ

աշակերտացն։

Հաւատամք զտէրն մեր յս̄ քս̄՝ նոյին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Որ և յարութի̄ ամենայն մարդկան։

Հաւատամք և զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, և մեղաւորացն տանջանք յաւիտենական։

ԶՂՋՈՒՄՆ

Մեղայ ամենասուրբ երրորդութեանդ՝ հօր և որդւոյ և հոգւոյն սբյ։ Մեղուցեալ եմ այ̄։ Խոստովանիմ առաջի այ̄՝ և սրբուհւոյ ածածնին՝ և առաջի քո հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Զանցի մեղայ խորհրդով, բանիւ և գործով. կամայ և ակամայ, գիտութե̄ և անգիտութե̄, մեղայ այ̄։

Մեղայ հոգւովս և զօրութեամբ

սորա • մտօք և շարժմամբ սորա • մարմնովս և զգայութեամբ սորա ։

Մ՚եղայ զօրութ՟բ հոգւոյս • խորամանկութ՟բ, անզգամութ՟բ, յանդըգնութ՟բ և երկչոտութ՟բ, շռայլութ՟բ և ժլատութ՟բ, զեղխութ՟բ և անխրատութ՟բ, չարահաւանութ՟բ, յուսահատութեամբ, և թերամտութ՟բ, մեղայ աստուծոյ ։

Մ՚եղայ չար խորհրդով մտացս • նենգութ՟բ • ատելութ՟բ • խեթիւմախանօք • յաչաղանօք • թուլութ՟բ • պոռնկական խորհրդով • արուական • իգական • անասնական • գրաստական • գազանական • ՚ի գիշերի և ՚ի տուընջեան • երազական գիճութ՟բ, և յանըրջական դարշ աղտեղութեամբ, մեղայ աստուծոյ •

Մ՚եղայ ցանկութեամբ մարմնոյս • հեշտութեամբ • պղերգութեամբ • յօրանջմամբ գնոյ • շարժութ՟բ մարմնոյս, և զազրագործութեամբ ՚ի պէս պէս ախտս • հեշտալրութ՟ լսելեացս • արատութ՟ աչացս • ցանկութ՟ սրտիս • իգութ՟ ըռնգացս • պագշոտութ՟ բե-

բանիւս . անժուժկալութիւն . շուայտութիւն . և արբեցութիւն , մեղայ ա̃յ .

Մեղայ չարաբանութիւն լեզուիս . ստախօսութիւն . սուտ երդմամբ . երդմնազանցութեամբ . հակառակութիւն . վիճաբանութեամբ . բանսարկութիւն . շոգմոգութիւն . քսու . դատարկաբանութիւն . և ծաղրու . զրախօսութիւն . հերձախօսութիւն . և անիծաբանութիւն . տրանջելով . դժգոհելով . բամբասելով . և հայհոյելով , մեղայ ա̃յ .

Մեղայ գողութեամբ ձեռացս . ագահելով , զրկելով , հարկանելով , սպանանելով , և ընդ գարշս ածելով , մեղայ աստուծոյ .

Մեղայ ա̃մ յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս . հնդեակ զգայարանօքս , և վեցեկի շարժմամբս . վերամբարձ ոտնահարութիւն , և վայրաքարշ մեղկութիւն . յաջ և յահեակ խոտորելով , զառաջնոցն մեղանչելով , և վերջնոցն չար նշաւակ գոլով , մեղայ ա̃յ .

Եւ մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք . հպարտութիւն՝ և

մասամբք նորին․ նախանձու՝ և մա-
սամբք նորին․ բարկութե̃՝ և մասամբք
նորին․ ծուլութե̃՝ և մասամբք նորին․
ագահութե̃՝ և մասամբք նորին․ որկ-
րամոլութեամբ՝ և մասամբք նորին․
բղջախոհութե̃՝ և մասամբք նորին,
մեղայ Աստուծոյ։

Նաև մեղայ ա̃մ պատուիրանացն ա̃յ․ յանձնառնլեացն և հրաժարելեացն․ զի ոչ զյանձնառականսն կատարեցի, և ոչ ՚ի հրաժարելեացն հեռացայ․ Օրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ․ ՚ի կարգս քրիստոնէութե̃ հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ․ գիտելով զչարն կամաւ կորացայ, և ՚ի բարեաց գործոց ինձէն հեռացայ․ վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ։ Ո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ․ զի անթիւ են յանցանք իմ․ անասելի են անօրէնութ̃իք իմ․ աններելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ, մեղայ Աստուծոյ։

Հա՛յր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութե̃ և բարեխօս առ միածին որդին ա̃յ․ զի իշխանութեամբդ որ

տուեալ է քեզ, արձակեսցես զնա 'ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ։

## ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն ա͞ծ, և թողութ͞ի շնորհեսցէ ա͞մ յանցանաց քոց, խոստովանացելոցն և մոռացելոցն։ Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, և հրամանաւն ա͞ծային՝ թէ (զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս)։ Նոյն բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութ͞է մեղաց քոց, 'ի խորհրդոց՝ 'ի բանից՝ և 'ի գործոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Եւ դարձեալ՝ տամ զքեզ 'ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ 'ի բարեգործութիւն և 'ի փառս հանդերձեալ կենացն, ամէն։

[illegible]

Տէր եթէ զշրթունս․ Զօրէն գո-
հանամքն․ Օրհնեալ տէր մեր և փրկիչ
Յիսուս Քրիստոս․ Կանոնագլուխն․ Կա-
նոնի աղօթքն․ Զկնի ալէլուիայից և թա
գաւորացն՝ Սաղմոսիք և օրհնութիւն, և
այլն որ լինի․ Մեծացուսցէ աղօթքն․
այլև ողորմի փառքն․ Սուրբ աստուածի
աղօթքն․ Արձակման աղօթքն, թէ պա-
հոց և թէ ուտեաց․ Արևագալի Սուրբ
էս տէրն, և արձակմանն․ Ճաշու աւագ-
նորդեայն․ Հայր գթութեանցն․ Ընկեալն․
Ճաշու սկսուածքն․ Լոյս ձայնիցն․
Համբարձին․ Յիսուս կենացն․ Խաղաղա-
կանին․ Շնորհատու բարեացն․

Իսկ կողման դասուն այս է․ Սկըս-
ուածք օրհնութեան և հարցին և իւր աղօ-
թիցն․ Տէր յերկնից և իւր փառացն․
Սուրբ էս տէրն զկնի մանկանցն․ Արևա-
գալի աղօթքն․ Զատաւօտու զաղօթս․
Ճաշու խաղաղութեամբ․ Փարատեմ․

Քրիստոս որդի ն՟յն ։ Իսկ ժամամուտ և շարական՝ ձայնին է ։

Կիրակէից ճաշու եսային և աւետարանն՝ ձայնին է ։ Առաքեալն՝ կողմանն է ։ Իսկ լուր աւուր գիրք՝ կողմանն է ։ Աւետարանն՝ ձայնին է ։

Երեկոյի Խոնարհեցոն՝ ձայնին է ։ Արարեցոն , Հայր գթածն , Տէր բարերարն , Քրիստոս որդին՝ կողմանն է ։ Հայր մերն՝ ձայնին է ։

Հաւատով խոստովանիմ աղօթքն՝ 24 տուն է՝ ըստ 24 ժամուցն ։ Իսկ տէր մեր և փրկիչ , Տէր աստուած մերն՝ ՚ի կարգէ դուրս է , ժամարարին է և հարկաւոր հիւրին ։ Այս է արևելեան տան սահմանն ժամակարգութեան ՚ի փառս ա՟յ ։

Յորժամ Թուականն Հայոց կոճատ լինի՝ բուն ձայնքն՝ ա՟ձ բ՟ձ գ՟ձ դ՟ձ՝ յաջակողման դասուն լինին , ուր ն՟ք աւագանն է . և յորժամ դար լինի՝ ձախոյն լինին ։



Դաւիթ մարգարէ՝
Թագաւոր արդար․
Սաղմոսիւք երգէ՝
սուրբ ղոգւոյն քնար։

Կարգաւորութիւն համառօտ աղօթից հայաստանեայց եկեղեցւոյ. որ կատարի 'ի մէջ գիշերի 'ի դէմս հօր աստուծոյ։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

---

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ երրորդութիւն՝ հայր և որդի և հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։



36937
1573
ՀՍԽՀ
ИМ. А. МЯСНИКЯНА

Տէր զի բազում եղեն նեղիչք իմ,
և բազումք յարեան 'ի վերայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ,
թէ չի՛ք փրկութի̃ սորա առ ա̃ծ իւր։
Այլ դու տէր՝ օգնական իմ ես,
փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով ես առ տ̃ր կարդացի,
և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի և 'ի քուն եղէ, զարթ
եայ և տէր ընդունելի իմ է։
Ո՛չ երկեայց ես 'ի բիւրաւոր զօ-
րաց նոցա. որք շուրջանակի պատեալ
պաշարեալ պահէին զիս։
Արի՛ տէր՝ և փրկեա՛ զիս ա̃ծ իմ.
զի դու հարեր զամենեսեան, որք էին
ընդ իս թշնամութեամբ 'ի տարապար
տուց. և զատամունս մեղաւորաց
փշրեցես։
Տեառնէ է փրկութիւն. 'ի վերայ
ժողովրդեան քո օրհնութիւն քո.
Տէր ա̃ծ փրկութե̃ն իմոյ, 'ի տուէ
կարդացի և գիշերի առաջի քո.
Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր,
խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուա-
ծըս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ՚ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ՚ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ՚ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս, որք ննջեն ՚ի գերեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ՚ի գբի ներքնումն, ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու։

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն զբօսանս քո ածեր ՚ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ տ̃ր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Մի թէ մեռելոց առնիցես զսքանչելիս քո, կամ բժիշկք յարուցեա՛ն խոստովան առնիցին առ քեզ։

Մի թէ պատմեսցէ՞ ոք երբէք ՚ի

դերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ՚ի կորստեան։

Միթէ ճանաչիցին ՚ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացելոյ։

Եւ ես առ քեզ տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկութենէ իմմէ. ՚ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ։

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև որպէս ջուր, զօր ա̄մ պաշարեցին զիս ՚ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։

Օրհնեա՛ անձն իմ զտէր, և ա̄մ ոսկերք իմ զանուն սուրբ նորա։

Օրհնեա՛ անձն իմ զտէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա։

Որ քաւէ զմեղս քո, բժշկէ զամե-

նայն հիւանդութիւնս քո ։

Որ փրկէ յապականութ͞է զկեանս քո , պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ ։

Որ լնու 'ի բարութենէ զցանկութիւն քո , նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո ։

Առնէ ողորմութ͞իս Տէր , և իրաւունս ամենայն զրկելոց ։

Ցոյց Տէր զճանապարհս իւր Մովսիսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր ։

Գթած ողորմած է Տէր , երկայնամիտ և բազումողորմ ։

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր , և ո՛չ յաւիտեան պահէ ոխս ։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր , և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ ։

Զի ո͞չ բարձր են երկինք յերկրէ , այնպէս զօրացոյց Տէր զողորմութ͞ իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց ։

Որչափ հեռի են արևելք յարևմտից , այնչափ հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս մեր ։

Որ͞պ գթայ հայր 'ի վերայ որդւոց

իւրոց , այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր ։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր , և յիշեաց թէ հող եմք ։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր . որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի ։

Շնչէ 'ի նմա հողմ , և ոչ է , և ոչ ևս երևի տեղի նորա ։

Բայց ողորմութիւն տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց . և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս ։

Որք պահեն զուխտս նորա , յիշեն զպատուիրանս նորա՝ և առնեն զնա ։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր . արքայութիւն նորա ամենեցուն տիրէ ։

Օրհնեցէք զտէր ամ հրեշտակք նորա՝ հզօրք զօրութբ . որք առնէք զբան նորա 'ի լսել ձայնի պատգամաց նորա ։

Օրհնեցէք զտէր ամենայն զօրութիւնք նորա , պաշտօնեայք և արարօղք կամաց նորա ։

Օրհնեցէ՛ք զտէր ամենայն գործք նորա. զի ընդ ա̃մ տեղիս է տէրութ̃ի նորա. օրհնեա՛ անձն իմ զտէր:

Տէր լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լո՛ւր ինձ արդարութ̃բ քով, և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցիմ այնոցիկ, ոյք իջա-

նեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զո-
ղորմութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր
յուսացայ.

Ցոյց ինձ Ճանապարհ՝ յոր և գնա-
ցից. զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տ̄ր.
զի զքեզ ապաւէն ինձ արարի.

Ուսո ինձ առնել զկամս քո. զի
դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր՝ կեցուս-
ցես զիս, արդարութ̃բ քով հանցես
'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ̃բ քով սատակեա զթշնա
միս իմ. և կորո զա̃մ նեղիչս անձին
իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեան
նս յաւիտենից. ամէն։

Երգ տեառն Ներսեսի հայոց կաթուղիկոսի ասաց-եալ 'ի պաշտաման գիշերոյ։

Յիշեսցուք 'ի գիշերի զանուն քո Տէր։

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր պատմեսցեն զգործըս երկնաւոր Թագաւորիդ։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք ընդ քեզ Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ Տէր. 'ի գաւիթս քո 'ի մէջ նոր Երուսաղէմի։

Ի գիշերի համբարձցուք ընդ ձեռս մեր սրբութեան քեզ Տէր։

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեսցէք ըզՏէր։

Զարթիք փառք իմ, զարթիք. փ և ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա։

Զարթիք ընդ զուարթունս, մանկունք վերին նորն սիոնի. ալէ։

Ո՜ արթիք որդիք լուսոյ, ՚ի յօրհ
նութիւն հօրըն լուսոյ • ալէ։

Ո՜ արթիք փրկեալք արեամբ • և
տուք ըզփառըս փրկչին • ալէ։

Ո՜ արթիք նոր ժողովուրդք, նոր
երգս առեալ նորոգողին • ալէ։

Ո՜ արթիք հարսունք հոգւով ըս
պասեալք գալոյ սուրբ փեսային • ա

Ո՜ արթիք վառեալք լուսով ըստ
իմաստուն սուրբ կուսանացն • ալէ։

Ո՜ արթիք պատրաստեցէք իւղ
լապտերաց զձեր արտասուս • ալէ։

Ո՜ արթիք և մի ննջէք, նըման
յիմար կուսից նիրհէք • ալէ։

Ո՜ արթիք երկրպագցուք և ար
տասուօք զայս ասասցուք • ալէ։

փ Ո՜ արթիր ընդէր ննջես • տէ՛ր
մի մերժեր ըզմեզ իսպառ ։

Արի տէր օգնեա մեզ • տացուք
անուանըդ քում ըզփառս ։

Այժմ և յաւէտ • հօր և որդւոյ,
և սուրբ հոգւոյն • ամէն ։

Զարթուցեալքս 'ի զբաղմանէ փ
գիշերային հանգստենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր տէր
մխիթարութիւն եւ 'ի սփոփանս
եկեղեցւոյ։

Ահիւ եւ դողութեամբ կացցուք
'ի յաղօթս։

Ծնկեալ խոստովանեսցուք ըզ
յանցանս։

Խնդրեսցուք 'ի Քրիստոսէ զքաւ
ութիւն եւ ըզմեծ ողորմութիւն։

Անժամանելի եւ ըզհամագոյ կց
երրորդութեանդ. համաձայնեալք
ընդ ըզօրս երկնից. փառս մատու
ցանեմք։

Փառք քեզ։ Որ յանարուեստ
յաթոռ բարձրացեալ հանգչիս. որ
տէր ած հզօր եւ սքանչելագործ։

Փառք քեզ։ Որ յանէից գոյա
ցուցեր զամ արարածս. սուրբ տէրդ
անճառ հօր անեղ որդի։

Փառք քեզ։ Որ ամենեցուն խնամ

մեզ զամս արարած ես․ սուրբ անձ-
բերկրութեան անսպառ աղբեր․

Տէր․ Ժողովրդապետք եկեղեց-
ւոյ 'ի քէն հայցեն մսերով․ հովու-
բարբ․ ողորմեա՛ բանաւոր հօտի։
Ամէն․ ալէլուիա․ ալէլուիա․ ալէ։
Ամէն․ ալէլուիա․ ալէլուիա․ ալէ։

Քարոզ։

Զարթուցեալքս ամենեքեան 'ի հանգստենէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն Աստուած 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս տկարութեան մերում․ Եւ եկեալքս միաբան հոգևոր երգով 'ի փառաբանութիւն և 'ի պատիւ ամենասուրբ անուան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Նմին և գոհութիւն կացցուք յաղօթս առաջի նորա։ Եւ գոհացարուք զնմանէ 'ի գիշերային ժամուս յայսմիկ, վասն իրաւանց և արդարութեան նորա։ Որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով․ և շնորհեաց մեզ բերել ըզ-

նմանութի երկնային հրեշտակացն 'ի փառաբանիչս տն այ ամենեցուն եւ մեզ լինիլ։ Այլ մեք այսուհետեւ սըրբելով զանձինս մեր 'ի խղճէ եւ 'ի չար գործոց։ Համբարձցուք զձեռս մեր 'ի սրբութի առանց բարկութեան եւ երկմտութե։ Հաւատով խնդրեսցուք 'ի Նմանէ զբաւութի եւ զթողութիւն յանցանաց մերոց։ Խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին Աստուծոյ։ Որպէս զի ընդունելով զպատարագս մեր աղօթիւք եւ բարեխօսութբ ամ սրբոց։ Շնորհեսցէ մեզ մարդասէրն ած կեալ առաքինութբ՝ եւ անարատ վարուք ըստ կամաց նր յայսմ աշխարհի։ Այլ արժանաւոր լինելով յաւիտենական եւ երկնային խորանացն։ Որ խոստացաւ սիրելեաց իւրոց՝ ճշմարիտն ած՝ յս քս. տէր մեր կեցո եւ ողորմեա։ Կեցո տէր։

Զմնացուած գիշերիս խաղաղութբ անցուցանել՝ հաւատով 'ի տնէ խնդրեսցուք։ Շնորհեա տէր։

Զհրեշտակ կ խաղաղութե պահա-

պան անձանց մերոց · ՚ի Տեառնէ խնդ։

Զքաւութիւն և զթողութիւն յան-
ցանաց մերոց · ՚ի Տեառնէ խնդ։

Զսուրբ խաչին մեծ և կարող զօ-
րութիւնն յօգնութիւն անձանց մե-
րոց · ՚ի Տեառնէ խնդրեսցուք ։

Եւ ևս միաբանն վասն ճշմարիտ և
սուրբ հաւատոյ մերոյ՝ զՏէր աղա-
չեսցուք ։ Տէր ողորմեա։

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն
Այ ամենակալին յանձն արասցուք ։
Քեզ Տեառն յանձն եղիցուք ։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ
մեծի ողորմութեան քում · ասասցուք
ամենեքեան միաբանութեամբ ։

Տէր ողորմեա՛ · Տէր ողորմեա · Տէ՛ր
ողորմեա ։

Ասէ Տէր ողորմեա ըստ պատշաճի ա-
ւուրն ։ Ի կիրակէս և ՚ի տօնս տէրունականս՝
երեք Տէր ողորմեա · իսկ ՚ի տօնս սրբոց՝ յի-
սուն Տէր ողորմեա · և յաւուրս պահոց՝ հար-
իւր Տէր ողորմեա ։

Նորին տեառն Ներսեսի հայոց կաթուղիկոսի՝ ողբերգութիւն անձին ողջացելոյ, և բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար։

Աշխարհ ամ՟· առ իս նայեցեալ· ախտակից լերուք· Բանամ զշրթունս· բարբառիմ լեզուաւս· բողոքեմ զանձնէս· տէր ողորմեա՛· տէր ողորմեա՛· տէր ողորմեա՛։

Գող եղէ մեղաց· գըտող կորըստեան· գուբ ինձ փորեցի։ Դաւեցի զանձն իմ· դաւաճանեցի· դարան գործեցի· տէր ողորմեա՛։

Որբեմն էի լոյս· և այժմ եմ խաւար· և ըստուեր մահու։ Ո՞ իմ՛րդ-պատմեցից· զթիւ մեղաց իմոց· զի բազում են յոյժ· տէր ողորմեա՛։

Երկինք և երկիր· ե՛կայք ողբացէք· եղկելի զանձն իմ։ Ընտրեցի զչարն· ընկալայ կամաւ· ըզհոյլս մեղաց· տէր ողորմեա՛։

Թաթաւիմ տղմով· թաւալիմ ՚ի մեղս· թօթափիլ չկարեմ, Փանա ախտիւ լըցեալ· ժահահոտ եղէ· ժամանակս բազումս· տէր ողորմեա՛։

Ի բաց մեկնեցայ· ՚ի սբ՟ խորհրդոց·

՚ի բարեաց գործոց ։ Լու վարկ-
անձն իմ ․ լուսոյն հեռանալ ․ լինել
ընդ խաւար ․ տէր ողորմեա ։

Խորհուրդք չարին ․ խաբեն ըզ-
հոգիս ․ խորասոյզ առնեն ․ Ծած-
կեն անդընդովք ․ ծիծաղին գլորմամբս
ծանակ զիս առնեն ․ տէր ողորմեա ։

Կամաւ կորացայ ․ կարկամեալս ան-
ձամբս ․ կանգնիլ ոչ կարեմ ․ Հուր
մեղաց կիզող ․ հըրդեհեաց որ յիս
հոգևոր բարիս ․ տէր ողորմեա ։

Ձաղկեցայ մեղօք ․ ձաղեցին տե-
սօղք ․ ձանձրացաւ հոգիս ․ Դեղ
դառնութեան ․ զօղեալ ՚ի սիրտ իմ ․
զամպար իմ չիջաւ ․ տէր ողորմեա ։

Ճաշակմամբ մեղաց ․ ճաշեցի ըզ-
մահ ․ ճոխս աղքատացայ ․ Մեռեալ
եմ հոգւովս ․ մոլորեալ մտօքս ․ միայն
կամ մարմնովս ․ տէր ողորմեա ։

Յորոգայթ մահու ․ յորսողին ան-
կայ ․ յաղթեցայ յախտից ․ Նետից
թըշնամւոյն ․ նըշաւակ եղէ ․ նոր
միշտ խոցոտիմ ․ տէր ողորմեա ։

Շուրջ պատեալ զինև ․ շունք
բազումք եղեն ․ շաղախին արեամբս ։

Որ եղէ չարին · ուռկանաւ մեղաց · որսացաւ զանձն իմ · տէր ողորմեա՛ ։

Ձարաչար մշտօք · չարչարի անձն իմ · չուանիւ դաւդարուածի ։ Պարտապան դատոյ · պարտուց յանցանաց · պարտեալս 'ի մեղաց · տէր ողորմեա՛ ։

Յանամ զըղջանալ · ջեռանիմ դարձեալ · ջեռնում հրով մեղաց ։ Ռաբբի կոչեցայ · ռակայ անուանիմ · ռամկական վարուքս · տէր ողորմեա՛ ։

Սիրով ցանկութե · սաստիկ բարկութե · սիրտ իմ խոցեալ է ։ Սիրօք յանցանաց · վըշտանոյ հոգիս · վարանեալ շըջիմ · տէր ողորմեա՛ ։

Տիրեցին ինձ չարք · տարադիր հանին · տիրական դրկացն ։ Բաբունոյն բարւոյ · բախձական ձայնին · բոտինս ո՛չ լուայ · տէր ողորմեա՛ ։

Ցանկութի չարեաց · ցանկալի դիմօք · ցաւեցոյց զաչս իմ ։ Ախորաքանչիւրոց · ախտամամբ խուռն ախտից · ախտեալ է հոգիս · տ̄ր ողորմեա՛ ։

Փութացիր անձն իմ · փախչիլ 'ի չարեաց · փափագիլ բարեաց ։ Բեղ միշտ մերձ ծանիր · քուն մահու-

եկեալ · քըննօղ դատաւոր · տէր ողորմեա ։

Աստուածածնին բարեխօսութբ, փրկեա տէր և ողորմեա ։

Սորին տեառն Ներսէսի հայոց կաթուղիկոսի՝ երգ աղօթական ՚ի դէմս սրբոյ երրորդութեան, նաև իւ֊ րաքանչիւրոյ դիմի երրորդութեանն առանձնակի ։

Առաւօտ լուսոյ · արեգակն ար֊ դար · առ իս լոյս ծագեա ։ Բղխումն ՚ի հօրէ · բղխեա ՚ի հոգւոյս · բան քեզ ՚ի հաճոյս ։

Գանձ ողորմութեան · գանձիդ ծածկելոյ · գըտօղ զիս արա ։ Դուռն ողորմութեան · դաւանողիս բաց · դասեցո վերնոցն ։

Երրեակ միութիւն · եղելոց խնա֊ մօղ · և ինձ ողորմեա ։ Զարթիր տէր յօգնել · զարթո ըզթըմբրեալս · զուարթնոց նմանիլ ։

Է հայր անըսկիզբն · էակից որ֊ դի · է միշտ սուրբ հոգի ։ Ընկալ զիս գթած · ընկալ ողորմած · ընկալ մարդասէր ։

Թագաւոր փառաց · թողութեանց տուօղ · թող ինձ ըզ յանցանս : Ժողովօղ բարեաց · ժողովեա՛ և զիս · ժողովս անդրանկաց ·

Իքէն տէր հայցեմ · ՚ի մարդասիրէդ · ինձ բըժըշկութիւն : Լեր կեանք մեռելոյս · լոյս խաւարելոյս · լուծանօղ ցաւոյս :

Խորհրդոց գիտօղ · խաւարիս շնորհեա՛ · խորհուրդ լուսաւոր : Ծընունդ հօր ծոցոյ · ծածկելոյս ստուերաւ · ծագեա՛ լոյս փառաց ·

Կենարար փրկիչ · կեցո՛ ըզ մեռեալս · կանգնեա՛ զգըլորեալս : Հաստեա՛ հաւատով · հաստատեա՛ յուսով · հիմնեցո՛ սիրով ·

Ձայնիւս աղաչեմ · ձեռօքս պաղատիմ · ձիր բարեաց շնորհեա՛ : Ղամբարամբ լուսոյ · ղեկավար ճարտար · ղօղեալս ամրացո՛ :

Ճառագայթ փառաց · ճանապարհ ինձ ցո՛յց · ճեպել ՚ի յերկինս : Միածինըդ հօր · մո՛յծ զիս յառագաստ · մաքուր հարսանեացդ ·

Յորժամ գաս փառօք · յահագին

աւուրն · յիշեա՛ զիս քրիստոս ։ Նորո-գօղ հնութեանց · նորոգեա՛ և զիս · նորոգ զարդարեա՛ ։

Շնորհատու բարեաց · շնորհեա՛ զքաւութիւն · շնորհեա՛ զթողութի՛ ։ Ուրախացո՛ տէր · ոգւոյս փրկութե՟ · որ վասն եմ ՚ի սուգ ։

Զար մըշակողին · չար սերմանց նո-րին · չորացո՛ զպտուղն ։ Պարգևիչ բարեաց · պարգևեա՛ իմոց · պարտեացս թողութիւն ։

Տուր շնորհեա՛ աջացս · ջերմ հե-ղուլ զարտօսր · ջընջել ըզյանցանս ։ Աետինըրդ քաղցու · ռամ հոգւոյս արբո՛ · ռա՛հ ցոյց ինձ լուսոյ ·

Սէր անուն յս̃ · սիրով քով ճըմ-լեա՛ · սիրտ իմ քարեղէն ։ Ասըն դըթութեան · վասն ողորմութեան · վերըստին կեցո՛ ։

Տենչալույդ տեսլեամբ · տո՛ւր ինձ յադենալ · տէր յս̃ քս̃ ։ Ռաբունդ երկնաւոր · ըոտեա՛ զաշակերտս · ըա-միցս երկնայոց ։

Յօղ արեան քո տէր · ցօղեա՛ ՚ի հոգիս · ցըմծացէ անձն իմ ։ Նիւծ-

եալըս մեղօք . ուխտեալ աղաչեմ . ուսանել ինձ բարիս :

Փրկիչ բոլորից . փութա՛ զիս փըրկել . փորձութենց մեղաց : Քաւիչ յանցանաց . քաւեա՛ զօրհնաբանս . քեզ երգել ըզփառս :

Աստուածածնին բարեխօսութեն, յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

### Օ չնէ տուէ աղօթք :

Օքէն գոհանամք տէր ած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութե : Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ : Տուր մեզ տէր աղաչեմք զքեզ, զմնացուած գիշերիս խաղաղութե անցուցանել . և զամ ժամանակս կենաց պանդխտութե մերոյ, երկիւղիւդ քո ամրացո՛ և պահեա՛ : Որպ զի զգուշութե՝ և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհիս, ժամանեցուք յանքոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենա-

կան 'ի կեանսդ․ Շնորհօք և մարդա-սիրութե̄ տն̄ մերոյ և փրկչին յի̄ քի̄․ Ընդ որում քեզ հօր և հոգւոյդ սբյ վայելէ փառք իշխանութի̄ և պատիւ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-նից․ ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկրպագեսցուք։

Նայեա՛ց տէր բարերար ողորմութե̄ քով յերկրպագուս և 'ի փառաբա-նիչս անուանդ քում սրբոյ։ Տէր զօ-րութեանց խաղաղացո՛ զանձինս մեր յա̄մ սատանայական խռովութեանց և յաշխարհական զբօսանաց։ Զի հրեշ-տակ խաղաղութեան քո առաքեա՛ առ մեզ․ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով 'ի տուէ և 'ի դիշերի, յարթնութեան և 'ի հանգստեան մերում։ Որպէս զի բա-րեպաշտութե̄ և արժանաւորապէս քեզ տեառնդ ծառայելով 'ի կեանս յայ-սոսիկ, ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութե̄ քո․ զոր պատ-րաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սբց քոց։ Նաև ընդ նոսին գոհանալով փա-

ռաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Օրհնեալ Տէր մեր յս քս. ամէն.

Ալէլուիա. ալէլուիա.

Սաղ ԼԵ սաղմոս ըստ Յոյնին. և չէնէ սաղմոսին ԼԵ ըստ Յոյնին կանոնագլուխ։

Կանոնագլուխք կարգաւ ըստ ութ ձայնիցն։

Դատեա՛ Տէր զայնոսիկ. որք դատին զիս. ալէլուիա. մարտիր ընդ այնոսիկ որք մարտնչին ընդ իս. ալէլուիա. ած

Առ զզէն և զվահան քո. և արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա. և ասա դու ցանձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ.

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար.

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի

հողմոյ. և հրեշտակ տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար և ՚ի գայթակղութիւն, և հրեշտակ տն̃ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թաքուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց, և ՚ի նանիր նախատեցին զանձն իմ։

փ Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո. ճշմարտութիւն քո մինչև յամպս. ալէլուիա. ալէլուիա։

Արդարութիւն քո որպէս լերինք այ̃. իրաւունք քո որպէս խորք բազումք. զմարդիկ և զանասուն կեցուցանես դու տէր։

Որպ̃ զի բազում արարեր զողորմութիւն քո այ̃. այլ որդիք մարդկան ՚ի հովանի թևոց քոց յուսասցին։

Արբեսցին նոքա ՚ի պարարտութենէ տան քո. և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա։

Ի քէն է տէր աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ձգեա՛ զողորմութիւն քո՝ որք ճա-

նաչէն զքեզ, զարդարութիւն քո՝ որք ուղիղ են սրտիւք:

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն. մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ալէլուիա բեւ. ալէլուիա:

---

Ասա՛ց անզգամն ՚ի սրտի իւ- ակ
րում թէ՛ ոչ գո՛յ Աստուա՛ծ. ալէլուիա: ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն. ալէլուիա:

Տէ՛ր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զա̃ծ:

Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին, և անպիտանացան:

Ոչ ո՛ք է որ առնէ զբարի, և չէ՛

ռք մինչև 'ի մի ։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, ոյք գործեն զանօրէնութի̃ ։

Այք ուտէին զժողովուրդ իմ որպ̃ կերակուր հացի ։ և առ ա̃ծ ոչ կար- դացին ։

փ Ու ո՛չ գոյր նց̃ փոխանա՛կ ։ և ոչ երկեա՛ն յա՛ստուծո՛յ ։ ա՛լէ՛լու- իա ։ ալէլլուիա ։

Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցա- նել նոցա ։ և նոքա պղծեցին զօ- րէնս նորա ։

Բաժանեցան 'ի սրտմտութենէ երեսաց նորա ։ և եհաս 'ի սիրտս նոցա ։

Կակուղ էին բանք նց̃ քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք ։

Ընկեա 'ի տէր զհոգս քո՝ և նա կերակրէ զքեզ ։ և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ ։

Դու ա̃ծ իջուսցես զն̃ս 'ի գուբ ապականութեան ։ արք արիւնահեղք և նենգաւորք մի հասարակեսցեն զա- ւուրս իւրեանց ։ այլ ես 'ի քեզ տէր յուսացայ ։

Փառք Հօր և․ այժմ և միշտ և։
ալէլուիա, ալէլուիա․ ալէլուիա, ալէլուիա։

---

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչե-ցից յաւիտեան․ ալէլուիա․ յար-դարութեան քում փրկեա և ապրեցո զիս․ ալէլուիա։ բձ

Խոնարհեցո առ իս զունկն քո, և կեցո զիս։

Եղիր ինձ Ած ապաւէն, և տեղի ա-մուր կեցուցանել զիս․ զի հաստա-տութիւն իմ և ապաւէն իմ դու ես։

Աստուած իմ, փրկեա զիս ՚ի ձե-ռաց մեղաւորի, ՚ի ձեռաց անօրինի և անիրաւի։

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ։

Ի քեզ հաստատեցայ ես յարգան-դէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ա-պաւէն իմ․ և առ ՚ի քէն է օգնու-թիւն իմ յամենայն ժամ։

Երկիրպագցեն նմա ամ թագա-ւորք երկրի․ և ամ ազգք ծառայես- փ

ցեն նըմա · ա՛լքէ՜ ծառ̃իա · ա՛մլքէ՛ ·

Զի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօրի · զաղքատն եւ զտնանկն , որոյ ոչ է իւր օգնական ։

Խնայեսցէ նա յաղքատն եւ ՚ի տնանկն · եւ զանձինս տնանկաց կեցուսցէ · ՚ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա ։

Պատուական է անուն նորա առաջի նոցա · կեցցէ , եւ տացի նմա յոսկւոյն արաբացւոց ։

Յաղօթս կացցեն առ նա յամ̃ ժամ · եւ զօրհանապազ օրհնեսցեն զնա ։

Եղիցի հաստատութի̃ ընդ ամ̃ երկիր · եւ ՚ի վերայ գլխոց լերանց ։

Բարձրասցի քան զլիբանան պտուղ նորա · եւ ծաղկեսցի ՚ի քաղաքի տեառն որպէս խոտ երկրի ։

Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան · զի յառաջ քան զարեւ է անուն նորա ։

Ի նա օրհնեսցին ամ̃ ազգք երկրի , եւ ամենայն ազինք երանիցեն նմա ։

Օրհնեալ տէր ած̃ իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն · եւ օրհնեալ է

անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամ երկիր. եղիցի եղիցի։

Փառք Հօր և. ալէ լուիա. ալէ լուիա։

---

Ողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից. ալէ լուիա. բկ

ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով. ալէ լուիա։

Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութբ շինեսցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո։

Ուխտ եդի ընտրելոց իմոց. երդուայ Դաւթի ծառայի իմոյ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո. և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո։

Խոստովան եղիցին երկինք զքանչելեաց քոց Տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ. կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս այ։

փ Դարձուցե՛ր զօգնութ՟ ՚ի սրոյ նր՟.
և ո՛չ ընկալար զնա ՚ի՛ պատերազմի.
ալէլուիա. ալէ–լուիա.

Անարգեցեր զսրբութի՟ նորա, և
զաթոռ նորա յերկիր կործանեցեր։

Նուազ արարեր զաւուրս ժամա-
նակաց նր՟. և հեղեր զնովաւ զամօթ։

Մինչև յե՞րբ դարձուցանես զե-
րեսս քո ի սպառ. բորբոքեսցի որպէս
հուր բարկութիւն քո։

Իսկ արդ յիշեա՛ և տես՝ թէ ո՞վ է
իմ հանդիսատ. միթէ ՚ի զո՞ւր ինչ
ստեղծեր զա՟մ որդիս մարդկան։

Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ և ո՛չ տես-
ցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր
՚ի ձեռաց դժոխոց։

Ո՞ւր են ողորմութիւնք քո տ՟ր առաջինք,
զոր երդուար դաւթի ճշմարտուե՟ քով։

Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ, զոր
ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց բազմաց։

Զոր նախատեցին թշնամիք քո տ՟ր.
նախատեցին փոխանակ օծելոյ քոյ։

Օրհնեալ տէր ա՟ծ յաւիտեանս
յաւիտենից. եղիցի եղիցի.

Փառք Հօր և. ալէլուիա. ալէ

Խոստովան եղերուք տեառն զի քաղցր է. ալէլուիա. զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ալէլուիա. գձ

Ո՞ խօսեսցի զզօրութիւնս տեառն. լսելի արասցէ զամ օրհնութիւնս նորա.

Երանի՛ որք պահեն զիրաւունս, առնեն զարդարութիւն յամ ժամ.

Յիշեա՛ զմեզ տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո. և այց արա մեզ ի փրկութեան քում.

Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց. ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո. և գովեսցուք մեք ի ժառանգութեան քում.

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք.

Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց. տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա. և խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա. ալէլուիա. ալէլուիա. փ

Բազում անգամ փրկեաց զնոսա, և նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց. և կորացան յանօրէ-

նութեան իւրեանց ։

Հայեցաւ Տէր ՚ի նեղութիւնս նոցա,
՚ի լսել ձայնի աղօթից նոցա ։

Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ
ըստ բազում ողորմութեան իւրում.
և ետ զնոսա ՚ի գթութիւնս առաջի
ամենայն գերչաց նոցա ։

Փրկեա զմեզ Տէր Աստուած մեր · և ժողովեա զմեզ ՚ի հեթանոսաց ։

Խոստովան եղիցուք անուան քում
սրբոյ · և պարծեսցուք յօրհնութիւն քո ։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի · յաւիտեանս յաւիտենից ։

Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն · եղիցի եղիցի ։

Փառք Հօր և · ալէլուիա ալ ։

---

դկ Արարի իրաւունս և արդարութիւն ·
ալէլուիա · մի՛ մատներ զիս ՚ի ձեռս
նեղչաց իմոց · ալէլուիա ալ ։

Ընկալ զծառայս քո ՚ի բարի · զի
մի՛ ամբարտաւանք զղուեսցեն զիս ։

Պակասեցին աչք իմ փրկութեան քում
Տէր, և բանից արդարութեան քո ։

Արա՛ ընդ ծառայի քում տէր ըստ ողորմութեան քում. զարդարութի՟ս քո ուսո՛ ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստո՛ւն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զտէր. խափանեցին զօրէնս քո.

Մերձեցին խնդրուածք իմ ա՛ռաջի քո տ՟ր. ըստ բանի քում իմա՛ստո՛ւն արա՛ զի՟ս. ա՛լէլուիա՛. ա՛լէլուիա՛։ Փ

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՟ր. և բանիւ քո փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա՟մ պատուիրանք քո արդարութ՟ք են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութ՟ե քում տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որ՟պ զոչխար կորուս

եալ. խնդրեմ զծառայս քո, զի ըզ-
պատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Փառք Հօր և. Ալէլուիա. Ալէ

---

դձ Օրհնեամ անձն իմ զՏէր. օրհ-
նեցից զՏէր ՚ի կեանս իմ. ալէլ-
լուիա: սաղմոս ասացից այ իմոյ՝ մին-
չև եմ ես. ալէլուիա:

Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս
մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն
՚ի նոսա.

Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձ-
ցին անդրէն ՚ի հող. և յայնմ աւուր
կորիցեն ամ խորհուրդք նոցա:

Երանի այնմ՝ որոյ տէր ած յա-
կոբայ օգնական է նմա. և յոյս նորա
՚ի տէր աստուած է:

Արար զերկինս և զերկիր, ըզ-
ծով՝ և զամենայն որ է ՚ի նոսա:

Պահէ զճշմարտութի յաւիտեան.
և առնէ իրաւունս զրկելոց:

փ Գովեա Երուսաղէմ զՏէր.
ալէլուիա.

Աւ օրհնեա՛ զաստուած քո Սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութ՟ի. պարարտութ՟ե ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղ-վաղ ընթանան պատգամք նորա։
Տանէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն ո՟պ պատառս. ա-ռաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զն՟ս. շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ, զար-դարութիւն և զիրաւունս իսրայէլի։
Ո՛չ այսպէս արար ա՟մ ազգաց տ՟ր. և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց ն՟ց։
Փառք Հօր և. ալէ՟լու՟իա։

---

Սե՛րբեցից ըղքե՛զ տէր զօ՛րութի՛ դկ իմ. ա՛լէ՟լու՟իա՛. տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ. ա՛լէ՟լու՟իա՛։
Ա՟ծ օգնական իմ, և ես յուսամ

՚ի նա . ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է .

Օրհնելով կարդացից առ տէր, և ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց .

Շուրջ եղեն զինև երկունք մահու . և ուղխք անօրէնութե՟ խռովեցուցին զիս .

Ցիշտք դժոխոց պաշարեցին զիս . և ժամանեցին ինձ որոգայթք մահու .

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և առ ա՟ծ իմ աղաղակեցի .

Փ Զգեցուցեր ինձ զօրու՟թ ՚ի պատերազմի . և զյարուցեալսն ՚ի վերայ իմ ներքոյ իմ արարեր . ալէլուիա . ալէլուիա .

Զթշնամիս իմ հալածականս արարեր . և զատելիս իմ սատակեցեր .

Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկէր զնոսա . կարդացին առ տէր, և ոչ լուաւ նոցա .

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ . և որպէս կաւ դռեհաց կոխեցից զնոսա .

Փրկեսցէ զիս տէր ՚ի հակառակութե՟

ժողովրդոց · և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց ։

Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայեաց ինձ · և 'ի լուր ականջաց լըւաւ ինձ ։

Որդիք օտարաց ստեցին ինձ · որդիք օտարաց մաշեցան, և կաղացան 'ի շաւղաց իւրեանց ։

Կենդանի է տէր՝ և օրհնեալ է աստուած · և բարձր եղիցի աստուած փրկութեան իմոյ ։

Նա՛ է որ խնդրէ զվրէժ իմ · և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև ·

Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բարկացողաց · յայնցանէ որք յարուցեալ են 'ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս · և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս ։

Վասն այսորիկ՝ խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս · և անուան քում սաղմոս ասացից ։

Մեծ արարեր զփրկութի՟ թագաւորի նր՟ · առնել ողորմութի՟ ընդ օծելոյ նորա դաւթի, և ընդ զաւակի նր՟ ազգէ մինչև յազգ ։

Փառք հօր և · ալէլուիա · ալէ՟ ։

Կանոնագլուխ բուն Բարեկենդանին, և Նոր Կիւրակէին։

սղ Օրհնեա՛ անձն իմ զտէր. օրհնեցից զտէր ՚ի կեանս իմ. սաղմոսասացից այ իմոյ՝ մինչև եմ ես։

Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա։

Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին անդրէն ՚ի հող. և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա։

Երանի ազգի՝ որոյ տր ած յակոբայ օգնական է նմա և յոյս նր ՚ի տր ած է։

Որ արար զերկինս և զերկիր, ըզծով՝ և զամենայն որ է ՚ի նոսա։

Որ պահէ զճշմարտութիւն յաւիտեան. և առնէ իրաւունս զրկելոց։

Տայ հաց քաղցելոց. և արձակէ զկապեալս տէր։

Տէր բանայ զաչս կուրաց. և կանգնէ զգլորեալս տէր։

Տէր սիրէ զարդարս. տէր պահէ զպանդուխտս. զորբս՝ և զայրիս ընդունի տէր. և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ։

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, ա՟ծ քո Սիոն՝ ազգէ մինչեւ յազգ.

Օրհնեցից ընդ քեզ գոհութեամբ ՚ի կեանս իմ. սաղմոս ասացից քեզ քրիստոս Թագաւոր յաղթական նոր երգով օրհնութեամբ. Փ

Օրհնեցէք զՏէր՝ զի բարի է սաղմոս. աստուծոյ մերում քաղցր եղիցի օրհնութիւն. աղ

Շինէ զԵրուսաղէմ Տէր. եւ զցրուեալսն Իսրայէլի ժողովէ.

Բժշկէ զբեկեալ սիրտս, եւ պատէ զամենայն վէրս նոցա.

Աթուէ զբազմութիւն աստեղաց. եւ զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ.

Մեծ է Տր, եւ մեծ է զօրութիւն նր. իմաստութն նորա ոչ գոյ բաւ.

Ընդունի զհեզս Տէր. եւ խոնարհ առնէ զամբարշտաւանս մինչեւ յերկիր.

Օրհնեցէք զած խոստովանութբ. սաղմոս ասացէք նմա օրհնութբ.

Ազգեցոյց զերկինս ամպովք. եւ պատրաստ արար զանձրեւ իւր յերկիր.

Բուսոյց զխոտ ՚ի լերինս, եւ զդա-

լարի՝ 'ի ծառայութիւն մարդկան։
Ետալ անասնոց կերակուր. ձա-
գուց ագռաւուց՝ որք կարդան առ նա։
Ոչ թէ ընդ զօրութիս ձիոյ կա-
մեցաւ տէր. և ոչ ընդ իրանս առն
հսկայի հաճեցաւ։
Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւ-
ղածս իւր. և ընդ այնոսիկ՝ որք յու-
սան յողորմութիւն նորա։

փ Քաղցրանցին քեզ քո՝ գոհու-
թիք երկիւղածաց անուան քո. որ
յուսացուցեր ողորմութեամբ քով
'ի խորհուրդս կենսաբեր գալստեա-
նըդ քոյ։

աղ Գովեա երուսաղէմ ըզ տէր։
Նա օրհնեա զաստուած քո սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց,
և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղուի·
պարարտութե ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղ-
վաղ ընթանան պատգամք նորա։
Որ ետ զձիւն որպէս զասր, և զմէգ

որպէս փոշի ցնդեաց ։
Արկանէ զսառն որպէս պատառս․ առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնս․ շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք ։
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս իսրայելի ։
Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց տէր․ և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա ։

Զքեզ ք՛ս ամէն եկեղեցի փրկեալ քո սուրբ․ ցնծալով տեսանէ զքեզ զփրկօղդ էկեալ հայրական իշխանութե՛ ՚ի պսակել զսուրբս քո․ փ

Կանոնագլուխ մեծի Ուրբաթուն.

Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր․ ալ
ալէլուիա և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ․ ալէլուիա ։
Ցնծացայ ես ՚ի բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար բազում ։
Զմեղս ատեցի և անարգեցի, և

զօրէնս քո սիրեցի ։

Յօթն անգամ յաւուր օրհնեցի զքեզ, վասն իրաւանց և արդարութեան քո ։

Խաղաղութի՟ բազում է այնոցիկ, որք սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ նոսա գայթակղութիւն ։

Սպասեցի փրկութեան քում տէր, և զպատուիրանս քո սիրեցի ։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ ։

Պահեցից զպատուիրանս՝ և զվկայութիս քո · զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր · ըստ բանի քում իմաստուն արա զիս ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՟ր · և բանիւ քո փրկեա զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո · զի ա՟մ պատուիրանք քո արդարութի՟ են ։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել

զիս․ զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում՝ տէր․ և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ․ և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ․ խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Փառք Հօր և․ ա՛լէ․ ա՛լէ։

Ապա դնեն զգրակալն, և զսուրբ աւետարանն ի վերայ և զսաղմոսարանն․ և ասեն երգս քահանայք սաղմոսն, է, է, փոխ։ Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք։ Տէր զի բազում եղեն։ Ի կարդալ իմում լուար։ Այս աշխըն եղանակէն ձայնիւ երգեր, Իշխանք ժողովեցան․ երեքս անգամ ասա, և շարականն Բարձր։

—

Կանոնագլուխ մեծի Շաբաթուն։

Դատեա՛ տր զա՛յնո"։ ... Ի Բէ-ն 39։

Իսկ ըստ Կանոնագլխին ըստ սաղմոսին ասէ՝ չէ ... գործեալ որ է ... , և ասէ։ Իսկ եթէ ոչ ասէ ըստ սաղմոսին ... վասն զի ... , Այլ և ս խաղաղութեան։ Օրհնութիւն և։

Այս ապա պաշտօն առնէ ըստ չափնէն · և զինչ հանգստեան աւետարան ընթերցեալ լինի ։

Այլ եթէ հանդիսի օր լինի , կամ խաչի տօն լինի , Այսօր անճառ ասէ · և խաչելութեան աւետարան ընթերցեալ լինի ։ Զկնի աւետարանին՝ Նորոգօղ տիեզերաց · ապա Հոգւոց հանգուցելոց ։

Այլ սմանէ ընդ օրհնութեանն չորրդէն ըդատօնն · և զկնի օրհնութեանն աւետարան ընթերցուն , և զկնի Հոգւոց հանգուցելոց · և Քրիստոս որդի Այ ։

Երգ տեառն Ներսեսի հայոց կաթուղիկոսի ասացեալ յաղագս մեծի Սրբութեան գիշերին Աւետարանացն ։

Աշխարհք ժողովեցան ՚ի միաբան · վասն տեառն և վասն ծննդեան Նորա ։

Այսօր անճառ լուսոյն ծագումն ՚ի փրկութեան մեր կատարումն · խոնարհի ՚ի վերնատունն ՚ի ստուերական տօնից լրումն · Նախաքան զընթրիսն խորհրդոյ սփածաւ զենջակ արկօղն լուսոյ · և ջուր առեալ ծառայաբար զոտս լուանայր աշակերտացն ։

Ունին հօր փառաց լուսոյ պետ-րոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնմ ձեռաց որոյ են գործք երկնից եր-կինք և երկրաւորք. որով կուրաց ա-չք բացան խուլք և համերք արձա-կեցան. որ վերածեաց զինքն ՚ի ծո-վին սաստեաց ալեացն և լռեցին։

Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու-սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդէր զոտս և ըզգլուխս մաքրել մաղթէր. գըլխոյս ասէ՞ չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցդ պէտք են մաք-րութե՝ յօդիլ ՚ի գլուխդ սըրբութե՜։

Դասուց խորոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց. այսօր գործով ըզծառայութիւնն եցոյց յինք-եան զխոնարհութի՝. սպասաւորեալ հո-գեղինաց այն որ անտեսանէ հրեղե-նաց. տարեալ պաշտօն իւր ծառայ-իցն այն որ պաշտին ՚ի սրովբէից։

Եթէ տէ՜ր ասէ էից և վարդա-պետս բոլորից. զաշակերտացդ և զծա

ւոյից զմտօք լուացի ՚ի հնոյ աղտից· մեղմեանց և դուք համբերութեան՝ ցու- ցէք զնոյն խոնարհութիւն · բարձրացե- լոյն ՚ի կործանումն և անկելոյ բնու- թեան կանգնումն ։

Ո՛վ որ մաքրեցեր յաւազանին մա- քուր ձեռօք զոտս նոցին · և ուսու- ցեր խոնարհութե՝ յաղթօղ լինել չա- րեպարտին · և զիմ լուա զախտա- մեղաց աղաչանօք սրբոյ դրնդին · և ըզ դընացս ուղղեա զոտին խոնար- հութեամբ ելիւք յերկինս ։

Օ՛րհն · Ն-Եփրեմեան 1845 · ՃԺԷ · ԺԳ · 16 Նմէն ամէն · ՀԷՐՀ · և աշակերտքն Ի

Տէրունեան սաղմոս՝ 40 · Երանի որ խորհի՛ Որպէս փափագի , Պսմ տրա ,

Բան անօրէնութե եդին ՚ի վերայ իմ · տէր տէր մի թողուր զիս ։

Ա՛լից զօրէնսըն մեղեւսբ զոր խօ- սեցաւ ՚ի սինոյի · եկեր ըզդառն ծըղ- նակին և ըզլեաղարջն ընդ եղեգին ·

ըզհինն ՚ի նորըս փոխելով զըստուերըն ՚ի լոյս ճըշմարտելով. փոխան գառինն ինքըն գոլով գառն այ նուիրելով.

Ընդ բաղարջին հաց անխըմոր եւ ըզ մարմինն իւր զերկնաւոր. ըզ կուսածինն անսերմնաւոր զանապականն եւ զհոգեւոր. ընդ ոչխարին արեանն ուխտին եւ մեզ զարիւնն իւր ուխտ կըրկին. եւ եղեգան դառնադունին փոխան ըզ վարս այծային.

Թագաւորըն արարածոց զհացըն կենաց եւ քաղցելոց. եւ ըզբաժակն ուրախարար որք յադամայ տըրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեանն փոխան հընոյ ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս ՚ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մետասանին. որ զկենարարըդ քո մարմին բաշխեալ ետուր ընդ բաժակին. շնորհեա եւ մեզ որ ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ յոր փափագիմք եւ ըմպելոյդ ում ծարաւիմք.

Ի՞ յընտրելոց աշակերտացն յուդա մեկնեալ ՚ի մէջ դասուցն · զբարձրօղ մեղաց զդաւն ա՛յ մատնէր ՚ի մահ ընդ արծաթոյ · ՚ի յընթրիսն հօդե մերձի ժըպիրհն և նենգաւորն · ուտելով ընդ վարդապետին յաճախէ զխաբէութիւն :

Յո՞յսն խօսէր՝ աղերսալի խաւարելոյն վասն դարձի · մի ոմն ՚ի ձէնջ անէ՛ եղբարք զիս մատնելոց է առ մահ · պետրոս լուեալ զայն զարհուրէր և անկնարկէր առ յովհաննէս · հարցանել թէ ո՛վ իցէ դաւաճանող վարդապետին :

[illegible]
[illegible]

[illegible] 58 : Փրկեա՛ զիս ՚ի · Ա՞
մերժեցեր : Յոյր ...ծ աղօ :

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց ա՛ստուած · և ՚ի հալածչաց իմոց ապրեցո՛ զիս :

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն ըղ տրտմութիւն ըն փարատեաց · Թացեալ պատառ տայ յուդայի նշանակեալ զգողըն մատնիչ · զոր առեալ և մերկացաւ յածային հոգւոյն շնորհաց · մատնեցաւ նախաչարին ընդ մատնութեան վարդապետին ։

Ծայրագոյն լուսոյն զերկեալ խաւարասէրն արտաքս ելեալ · տէրն յայտնէր լոյս եղելոցն ընդ գայթակղիլն 'ի գիշերի · պետրոս խօսէր խրախուսելի և կըշտամբեիւր հաւախօսի · զնորին յաշխարհէ զփոխիլն ասէր և ընդ գալուստ հոգւոյն պատմէր ։

Կեդրոնեան յայնկոյս ձորոյ 'ի վեր նատուննն եւ խորհրդոյ · եմուտ պարտէզ ընդ պարտիզն եմոյծ զադամ յադէն դրախտին · մուծցես և զմեզ տր ընդ նմին ուստի հաներ նախ զառաջինն · զի ժառանգել ընդ հայրենին արժանացուք մեք վերստին ։

Հոգայր ընդ կրկցըն տրտմաբար երիւքն եղեալ առանձնաբար · վերր

կեալ զաշխարհս հողեղէն յօժար բայց ի
բնութիւն մարմնոյս տկար. ոչ ունի ու-
ժեղ և զօրաւոր և ունի անզօր վտան-
գաւոր. այլ մի և նոյն գոլ միաւոր
կերպէր ընդ կերպին կամաւոր։

Զայնիւ մաղթէր աղօթական վե-
իմ առ հայր իւր էական. ծնունդ գե-
ներ խոնարհական որում կերկնի
ծունր տեառ. եթէ փրկել մարդկան
հնար է առանց մահու իմ որ գրեալ
է. բաժակ մահուս յինէն անցցէ ոչ
իմ կամաւ այլ քոյդ տեսցէ։

Պօղեալ յերկիւղ քրտանց հո-
ման ողունաձև կայլակ վիժման. ի
զօրանալ հրեշտակ մերձեալ զօրէնա-
կան դէրքն լցեալ. զի կատարեալ
էառ զբնութիւն ածին բան ընդմարդ-
կութեն. պարտ էր զերկիւղ և զտրտ-
մութիւն յիւրումն կրել տնօրէնութեն։

Որբ. Աւետարան Մարկոսի ձկր. ժդ. 27։
Եւ ասէ ցնա յս. Վերջ. և սկսաւ լալ։

Ձայնորդ ասացեալ՝ 78։ Մի մոլին հե. Ար
հոլուեստ. Ձայնացեք առ ած.

Նոքա ՚ի ձեռանէ քումմէ մերժեցա՛ն . մե՛ք ժողովուրդք և խաշն արօտի քո՛.

Որոգայթ փառաց էին որ ըստ բնութեան մարդկային . տագնապեցար ՚ի գիշերին աղօթեցեր առ Հայր յերկինս . ծածկեալ ՚ի մէգ լուսոյ երկնային և փարատեալ զերկիւղ չարին . մասունք հոգւոյ մեր և մարմին յերկիւղ քո սուրբ ընծեռեսցին .

Մերձեալ յուդաս որ մատնելոց հանդերձ դասուն փարիսեցւոց . անկան նորման սատրանկելոցն որ յանխաեան չէին կանգնելոց . յուդաս նենգաւ համբուրելով առիթ մահու նշան տալով . փոխան սիրոյ զնա մատնելով չար ընդ բարւոյ վարձարելով .

Յայնժամ առ դութ սրոյն Պետրոս ըղ ծառային անուն Մաղքոս . և հատ սուսերբ զականջն աջոյ որ ո՛չ լուաւ տեառըն իւրոյ . Իսկ տէրըն մեր արագապէս յունկըն մերձեալ բըժըշկապէս . առողջացոյց ա՟ծապէս զոր

ո՛չ տեսին կուրա՛ցն հանդէ՛ս ։

Ո՞ր հօտին՝ փոքու ցրուեա՛լ քա-
ջի զհովուըն քաջ հարեալ ։ պետրո-
միայն ընդհետ երթեալ ՚ի յաղջկա-
նն ձեռին շարժեալ ։ Նշանակեալ հաւըն
խօսէր առ ՚ի պետրոս տ͞րն ակնարկէր
զուրանըն յիշէր ։ դառն արտասուէր
՚ի գլորմանէն դարձեալ կանգնէր ։

Շնորհեալ մեծին՝ եկեղեցւոյ դըռ-
պահեցէր ՚ի հոսելոյ ։ Եւ կանգնեցէր
՚ի գլորելոյ վասըն սրտիւն արտա-
սուելոյ ։ կանգնեա՛ և զիս տէր ընդ նը-
մին ՚ի գլորմանէ սայթաքողին ։ տա-
լով աչաց յորդ արտասուս և ջեր-
նըման ծովու գըլխոյս ։

Ո՛վ կամաւ զանկապելըն կապեալ
ընդ ձեռս արձակողին ։ ՚ի յապարանըն
ատեանէն կայիափայ և աննայէն ։ ծա-
ռայն զերեսն այն ապտակէր յորմէ
սրովբէն թևաքօղէր ։ թող արձակ-
եալ պիղծ բերանովն յայն որ կուրին
լոյս ծագեաց թքովն ։

Օրէն. Աւետարան Յոհաննու Մ. ձ. լիւ. ԾԱ։
Յայնժամ առէ ցնա։ վերջ. և փախեան։

Հինգերորդ սաղ՝ 108. Ած օրհնութ. Աստ
աէր ցաէր իմ. Խոստովան եղէր.

Խօսեցա՛ն զինէն լեզուաւ նենգա՛ւորաւ. և բանիւ ատելութեա՛ն զիս պաշարեցի՛ն.

Զօ՛ր կապանաց մարդկա՛ն լուծի՛ց որ կապեցա՛ր ընդկապելո՛յն. զիս արձակեա յինքնակապէս մեղա՛ց կապից դժոխայնոյն. ո՛ր ընդ մեղօք պարտաւորին կացեր անմեղդ 'ի յատենի. յո՛ր ժամ փառօք գաս հայրենի մի դատեսցես զիս ընդ նոսի՛ն.

Պատկառանօք հինն ադամոյ որ ձաղեցա՛ր վասն նորա. Ջնջեա զամօթ մեղա՛ց լերբեին որո՛վ զերեսս իմ ծածկեցի՛ն. ո՛ր ներեցեր չար ծառայի՛ն ածել ձեռօ՛ք քեղ ապտակին. հա՛ր ուժգնակի զդեմյս չարին որպէ՛ս և զիս եհա՛ր ուժգի՛ն.

Ջա՛հըն լուսո՜յ յառաւօտին ՚ի յուրբա՛թուն հընոյ զատկին . կայր առաջի դատաւորին ծառայն նըստեալ ՚ի յատենին . ՚ի հարցանել պիղատոսի տէրըն ոչ անէր պատասխանի . զի կանխասաց գիրըն լըցցի եղէ եւ մարդ որ ո՛չ խօսի :

Ռամկակա՜ն դասք զինուո՛րացն արկին հանդե՛րձ նախատանաց . այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրեւ զօթոց զինքեամբ արկած . ՚ի ծունր իջեալ կատակէին զգլուխն եղեգամբ հարկանէին . պըսակ ՚ի փշոց բոլորէին ըզփուշ մեղացըն բարձողին :

Սոսկալին քերովբէից բառնոյր ինքեամբ ըզփայտ խաչին . մինչ ՚ի տեղի գողգոթային յորում եդեալ մարդըն առաջին . ետուն ըմպել գինի զմըռսեալ եւ կերակուր լեղեաւ խառնեալ . որով զպըտղոյն դառըն ճաշակ փոխեաց մեզ քաղցր եւ ախորժակ :

Վերնակա՜նքըն զարհուրեալ տեսին ըզտէրըն մերկացեալ . եւ զհան

դերձանըն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ. ըզձեռսն եւ զոտսն ծակեցին ըստ յայտնապէս Դաւթեան ձայնին. ընդ փայտ խաչին բեւեռեցին զմատունսն որ գրեաց 'ի տախտակին։

Օրհն։ Մ. Եփրեմ Խորենացւոյ՝ յԴ։ եղ. 57։
Խակ նշ կալեալ։ Վերջ. եղաց գասնապէս։

Մ չորրորդ տող՝ 117։ Խոստովան եղերուք տեառն. զինչ ցոյն տունն որ տեէ՝ Անցէք լինձ, նշորդ։

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ փայտի դառըն պտղոյ կեանք ընդ մահու փոխարկելով. 'ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուօղն օրինաց. զոր ոչ տեսին աչքըն կուրաց բայց 'ի միոյն աւազակաց։

Ըմպելից արեգականն ըզ տիւն արար գիշերանման. զլուսաւորըն քօղ արկ մերկութեան զի մի տեսցէ ակն անարժան. 'ի մէջօրեայն նըսեմացաւ յորժամ ադամ մեղօք մեռաւ. 'ի լինե

երորդն 'ի լոյս դարձաւ յորժամ մեծ
ուամբ մահըն լուծաւ ։

Հօսէր արտօսրը ցաւագին մայր տեառն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լսէր ըղձմրաւքն բարբառելոյ քուր միածնին. Ետուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բղխեաց գեյադենի. Եւ 'ի վիմէն վըտակ բարի ուրբոյց տոհմին դաւանացողի.

Լուծեալ յերրորդ ժամու օձին զմիտըս նախնւոյ մօրն Եւայի. 'ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. 'ի սոյն ժամու տէրն 'ի խաչին զի քաւեսցէ զմեղս նոցին. Եւ յորժամ եղ ադամըն հին եդ զմանազակն 'ի մէջ դրախտին.

Փարելի բարբառ ընդ իմ Եղի Եղի առ հայր գոչէր. զհոգին կամաւ հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. Երկիր հիմամբք սասանեցաւ Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք 'ի յինքեանց պատառեցան Եւ գերեզմանք մահու բացան.

Բարձրեալ ՚ի սքանչելեաց աստ-
ուած մարմնով վասն իմ խաչեալ. մե-
րով բնութեամբըս մեռանի ած ան-
մահ խոստովանի. կրկնավորակն կո-
ղին աղբերբ եկեղեցին իւր հաստա-
տի. ջրովըն մաքրի զորդիսն ըմպէ
զորդին ընդ հօր փառաւորէ.

Օրհ․ Ս․ Եսայեան յօհան՝ ՃԾԷ․ ԺԸ․ 2․
Կիտակէր և յուդա․ Վէրջ․ Հաւ խօսեցաւ․

Նորին երգ՝ մեծի Ուրբաթու գիշերին․

Նորոգող տիեզերաց որ զգեցու- բկ
ցեր մեզ լոյս փառաց. որ կրէր ըզքեւ դկ
՚ի զինուորաց քղամիդ կարմիր նախա-
տանաց. մերկեա յինէն ըզքուրձ
մեղաց ըզտըրտմագինն արեամբ ներ-
կած. և զգեցո զուրախալին ըզպատ-
մուճանն իմ զառաջին.

Երկնաւոր թագաւորիդ ՚ի ծունր
իջեալ խաղ առնէին. ծածկեալ ըզ

գլուխըդ կըռափէին և եղեգամբ հարկանէին. և զիմ անկեալ մինչ 'ի գետին 'ի հնազանդել կամաց չարին. Թողուցուս խաղալ սովին այլ կանգնեսցես զիս վերըստին.

Րամեալ բոլորըդ քո մարմին յեռ վըճըռոյ դատաւորին. սաստիկ էառ զհարուած գանին վասըն գանից նախաստեղծին. զիս որ յոտից մինչև ցըգըլուխ ցաւօք նեղիմ անհընարին. առողջացո դարձեալ կըրկին որպէս շնորհօք յաւազանին.

Սըրբաբայլ պըղծնեալ զդառնութիւն զոր զգեցուցեր Ահարոնի. փոխան պըսակ 'ի փշոց եդին մըշակք այգւոյն Իսրայէլի. ըզփուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թըշնամին. Եւ ողջացո զխայթուած վէրին զի սպիք մեղացըն ջընջեսցին.

Օ'ՐՀԷ. Ի՞-Էսարան [illegible] յԺԷ. ԻԷ. Ա.
Ներև այգ եղև. վէրջ. և մայր որդւոցն.

Կ՚տուն ըմպե՜լ քեզ ըզե՛ղէն եւ բձ
ըզ քանցա՛խն ՚ի ծարաւէ՛ն ․ ա՛րբե՛ր կա դձ
մաւ զի քա՛ղցրասցին ճա՛շա՛կք պտղոյն
դա՛ռնադունին․ ընդդա՛ռնութե՞ թխնա-
ւո՛րին զո՛ր ՚ի մահասա՛նս հոգւոյս ար-
կէ՛ն․ հե՛ղքեա՛ ՚ի բաց հա՛նդե՛րձ սովին
եւ քա՛ղցրա՛սցի սէր քո՛ ՚ի սմի՛ն ․

Ատե՞ղնեալ ծառո՞յ մահաբե՛րին
ա՛յնմ որ բո՛ւսա՛ւ ՚ի մէջ դրախտին ․
փո՛խա՛ն բարձեր ընդփա՛յտ խաչին ՚ի՛
գո՛ղգո՛թա հա՛ներ տեղին ․ զի՛մ ա՛ռ
՚ի մե՞ղս անկեա՛լ զոգի եւ ծանրա՛գո՛յն
բարձօղ բեռին ․ բա՛րձ ՚ի յուսո՛յդ
ընդ ո՛չխարին հա՛ն ՚ի՛ յերկինս յուխտ
եա՛լ տեղի՛ն ․

Ի՛ յուրբաթո՜ւ ժամե՛րրո՛րդին բե-
ւեռե՛ցա՛ր տէր ՚ի խաչին ․ լո՛ւծեր
զկապանս նա՛խա՛ստեղծին եւ կա՛պե՛ցեր
ը՛զ թըշնամի՛ն ․ զի՛ս ամրացո՞ ընդ հօ-
վա՛նեա՛ւ կենդանա՛րա՛ր քո նըշանին ․
եւ ՚ի ծա՛գելն յա՛րձա՛կելից լո՛ւսա՛ւորեա
լուսո՛վ նորի՛ն ․

Լօրանեա՜լ աւազա՛կին բացեր ըզ դո՛ւռն ադին դրա՛խտին . ըստ հաւատոյ սըրբո՛յ նորին կատարե՛ցեր ըզ խընդրելին . տո՛ւր և ինձ տէր ընդ նըմին լսել ըզ նո՛յն պատասխանին. այսօր ընդ իս լիցես յադին ՚ի հա՛յրենիս քո առաջի՛ն .

Օ՛ՐՀ: Մ.-Եփրեմ Խորէն՝ Ձայն: ԺԵ. 1:
Նու վաղվաղակի: Հեղղ. Եկեալ են յեն:

ակ
գկ Բա՛րբառելո՜վ զե՛լք ե՛լին հիմունք երկրի՛ տատանէին . և՛ վարագոյր հի՛ն ծրինին վերո՛ւստ ՚ի վայր պատառէ-ին . ա՛րդ ընդ վիմացն որ շա՛րժէին շարժեա՛ զա՛նշարժ սիրտս ՚ի բա՛րին . ընդ պատառել վա՛րագուրին զիմ պա՛տառեա ըզ դի՛ր պարտին .

Մ՛րեգակն լոյս քօղ ա՛րկեա՛լ խաւարա՛նայր միջօրէին . և՛ գերեզմանըք բա՛նային մա՛րմինք սրբո՛ցըն յառնէին . ընդ խաւարի՛ լուսաւո՛րացն

մաքրեա՛ յինէ՛ն զգործ խաւարին. ընդ մեռելոցն որ յա՛ռնէին կա՛նգնեա՛ զմեզս մեռեա՛լ հոգիս:

Նո՛ր սիրո՜յ պատուիրա՛նին գործով լըցօ՛ղ եղեր բանին. աղօթելով առ հա՛յր յերկինս թողու՛լ ըզ մեղս ո՛ր 'ի խաչէին. ի՛նձ որ հոգւովս հաւա՛տացեա՛լ երկրպա՛գե՛մ քեզ միածին. թո՛ղ ըզ լուծումն հրա՛մա՛նին մի՛ յի՛շեսցին մեղքն ա՛ռաջի՛ն.

Սա՛րսեցին՜ սանդա՛րա՛մետք 'ի՛ յաւա՛նդե՛լն առ հայր զհոգի՛ն. ո՛ր 'ի դժոխս իջե՛ր ներքին 'ի բա՛նդ մահու եւ՛ խաւարին. կա՛պեա՛լ զիշխանն մա՛հա՛ծին հա՛ներ զհո՛գիսն ո՛ր 'ի բանտին. եւ՛ զիս հանցես ը՛նդ նոսին բա՛նտէ՛ մեղաց ա՛ղջա՛մղջի՛ն:

Օ՛ՐՒ: Լ.-Է-առրան ու-ջաւ՝ մղե: ի . 66:
Նու իբրև այդ եղև: Հէրջ. տեսանէին զայն:

Ն°զեկրա՜ցն անա՛պա՛կա՛ն որ յե՛տ մա՛- ա.ձ
հուն ա՛նմահարա՛ր. բըղխեալ 'ի քէն գ.ձ

վըտա՛կ կըրկին ՚ի՛ նորոգումըն հո-
ղածնին . բա՛ց ըզդըրան իմ յարբե-
ցումըն քո արեա՛ն կենարարին . ըզու-
դարձեալ յուսա՛զանին թէ ո՛չ շնոր-
հօք ա՛յլ ա՛րտասուօք ։

Յանմահիդ՝ մեռանելո՛վ զմեռեա՛լ
հո՛գիս կենդանացո . Թա՛ղմամբ ՚ի նոր
գերե՛զմանի զթաղեա՛լս ՚ի՛ մեղս վե-
րածեա . ՚ի՛ գբի ներքնումն իջանե-
լով ՚ի գբոյն մեղա՛ց վերաբերեա . ՚ի
սուրբ մահու քո բնա՛կելով լուսա-
ւորեա և զի՛մ հոգւոյս .

Սի՛րտ իմ առ քեզ՝ աղաղա՛կէ բան
որ ընդ Հօ՛ր խոկըզըանէ . որ կամաւոր
վասն մարդկա՛ն կրեցե՛ր մարմնով
զա՛յս ամ . ինձ լըսելի արա ըզձա՛յն
յարքայութե՛ըդ քո կոչմա՛ն . ընդ ժո-
ղովոցն ա՛նդ ա՛նդրանկա՛ցն օրհնե՛լ
ըզքեզ մի՛շտ յաւիտեա՛ն ։

Զինչ Մովսէս անձամբն՝ ասէ սաղմոս չորրդ. Աշանեցաւ. ձուս. Ի կարդալ ի-մուն. Այս ապա ընթերցեալ լինի աւետարան խաչելութեան ըստ Յոհաննու. և լինի ասէ շարա-կան՝ Նորոգօղ. Իսկ ոմանք յաւետարանի շա-րականն ձայն ասեն. և ոմանք զՆորոգօղն ձայնոյն ասեն. կամ քո է:

Իսկ յորժամ պատշաճման շարականն հան-դստեան ասես՝ լինի շարականոյն ասէ սաղմոս ըստ յայնին. և ընթերցեալ լինի աւետարան ըստ յայնին. և լինի աւետարանին ասէ յԾ-ննեղէն ձուս մ. լինի Ծննդեանն՝ Հոգ-ւոյն հանգուցելոց: Այս ոմանք ընդ Ծնա-նեղին երբեմն երբեմն չորրորդն Մ. բորինչ և մարգարէին զի փոխն. և կամ Նա սասցին զի փոխն. կամ քո է: Այս ապա Հոգւոյ. Քրիս-տոս որդի ով. Հայր մեր որ յերկինս:

Սաղմոսս ըստ [illegible] ձայնիցն նախ ձան [illegible] րաննն: Ի [illegible] է [illegible]

զայս սաղմոս:

Տէր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում
կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լերան սբ. քո

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն սրտի իւրում.

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ոչ արար

Նախատինս ՚ի մերձաւորաց նա ոչ առնու. արհամարհեալ է առաջի նր չարագործն.

Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ. որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ.

Զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ, և կաշառս ՚ի վերայ իրաւանց ոչ առնու. որ զայս արասցէ՝ նա մի սասանեսցի յաւիտեան.

---

ած Տէր՝ մի սրտմտութ̃ե քով յանդիմաներ զիս, և մի բարկութ̃ե քով խրատեր զիս.

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ.

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ.

Դարձ տէր և փրկեա զանձն իմ. կեցո՛ զիս տէր՝ ըստ ողորմութե՛ քում.

Զի ոչ ո՛ք է որ ՚ի մահու յիշէ զքեզ, կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ.

Աշխատեցայ ես ՚ի հեծութեան իմում, լուացի զա՟մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի.

Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես ՚ի վերայ ա՟մ թշնամեաց իմոց.

Ի բա՛ց կացէք յինէն ամէքեան, որք գործէք զանօրէնութիւն.

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր զխնդրուածս իմ ընկալաւ.

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա՟մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին.

ակ Բարձր առնեմ զքեզ տէր՝ զի ըն-
կալար զիս. և ոչ ուրախ արարեր ըզ-
թշնամին իմ յիս։
Տէր ա՟ծ իմ՝ կարդացի առ քեզ
և բժշկեցեր զիս. տէր հաներ ՚ի դժո-
խոց զանձն իմ, և փրկեցեր զիս յայն-
ցանէ՝ որք իջանեն ՚ի գուբ։
Սաղմոս ասացէք տեառն սուրբք
նորա. և խոստովա՛ն եղերուք յիշա-
տակի սրբութեան նորա։
Սրտմտութի՛ է ՚ի բարկութե՛ նր,
և կեանք են ՚ի կամաց նորա։
Ընդ երեկոյս հանգիցեն լալիք,
առաւօտու եղիցի ուրախութիւն։
Ես ասացի ՚ի բարեկենդանութե՛
իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտենի։
Տէր ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ
զօրութիւն, դարձուցեր զերեսս քո
յինէն՝ և ես եղէ խռովեալ։
Առ քեզ տէր կարդացի, և առ ա՟ծ
իմ աղաղակեցի. զի՛նչ օգուտ է քեզ
յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յա-
պականութիւն.
Միթէ հող խոստովան առնիցի
առ քեզ, կամ պատմեսցէ զճշմար-

տութիւնս քո ։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և տէր եղև ինձ օգնական ։

Դարձոյց զսուգ իմ յուրախութի՟, էքերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն ։

Որպ՟ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. և այլ մի ևս զղջացայց, տէր ա՟ծ իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ ։

---

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս, և բ՟ծ
'ի զօրութե՟ քում իրաւ արա ինձ ։

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկնդիր բանից բերանոյ իմոյ ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց ։

Ահա՛ ա՟ծ օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ ։

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտութ՟ քով սատակեա՛ զն՟ս ։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է ։

Զա՟մ նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ։

---

ԿԷ Ա՟Ծ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ և ողորմեա՛ մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազինս ա՟մ զփրկութիւն քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա՟Ծ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք. զի դու դատես զժողովուրդս ուղղութեամբ, և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա՟Ծ, գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Ա՟Ծ Ա՟Ծ մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և 'ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

Հաճեցար տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն յակոբայ ։ դձ

Թողեր զանօրէնութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զա̃մ մեղս նոցա ։

Լռեցուցեր զա̃մ սրտմտութիւնս քո, և դարձար 'ի բարկութենէ սրտմտութեան քո ։

Դարձ առ մեզ ա̃ծ փրկիչ մեր, և դարձո զսրտմտութիւնս քո 'ի մէնջ ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչև յազգ ։

Աստուած՝ դու դարձեալ կեցուսցես զմեզ, և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ ։

Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ ։

Լուայց զինչ խօսի տէր ա̃ծ մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ՝ որք դարձեալ են առ նա սրտիւք ։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակել փառաց նորա յերկրի մերում ։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պա-

տահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին.

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ՚ի ճանապարհի զգնացս իւր։

---

դկ Տէր լո՛ւր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուիւ չորացան։

Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հեծութեան իմոյ.

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսան անապատի,

Եղէ ես որպէս բու յաւերակի,

աքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօր հանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ սիօնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

---

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։ դՃ

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քո փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-

թիւնս քո . յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո . զի
ա͞մ պատուիրանք քո արդարութիւն են ։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել
զիս . զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Ցանկացայ փրկութե͞ քում տէր ,
և օրէնք քո խօսք իմ էին .

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ .
և իրաւունք քո օգնեսցեն ինձ .

Մոլորեցայ ես ո͞պ զոչխար կորու-
եալ . խնդրեա՛ զծառայս քո , զի ըզ-
պատուիրանս քո ես ոչ մոռացայ .

---

Ի տէրունի աւուրս երեք ժամնն դ͞պկ երգէ՝ ասա
զսաղմոսս զայս ։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր՝
տէր՝ լո՛ւր ձայնի իմում ։

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն
աղօթից իմոց ։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես
տէր՝ տէր , իսկ ո՞ կարէ կալ առաջի
քո . զի ՚ի քէն է քաւութիւն ։

Վասն անուան քո համբերի տէր .

համբեր անձն իմ բանի քում. յու-սացաւ անձն իմ ՚ի տէր։

Ի պահէ առաւօտու՝ մինչեւ յերեկոյ. ՚ի պահէ առաւօտու՝ յուսացաւ իսրայէլ ՚ի տէր։

Ի տեառնէ է ողորմութի բազում. ՚ի նմանէ է փրկութի. և նա փրկեաց զիսրայէլ յամ նեղութեանց նորա։

---

Տէր լո՛ւր աղօթից իմոց. ունկն դկ դի՛ր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով.

Լո՛ւր ինձ արդարութ՛ քով, և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամ գործս քո. յարարածըս ձեռաց քոց խորհեցայ, և համ-

բարձի առ քեզ զձեռս իմ.

Անձն իմ որպէս երկիր ծարաւի առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ.

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ այնոցիկ, որք իջանեն 'ի գուբ.

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ.

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ.

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի.

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես աստուած իմ.

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ.

Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ.

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ. և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ.

Որ լինի աղօթայս՝ ընթերցեալ լինի աւետա-
րան ըստ ճաշնին։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ժզ. 36։

Յայնժամ թողեալ զխուռն զժո- բկ
ղովուրդսն՝ եկն ՚ի տուն. մատեան առ դկ
նա աշակերտքն նորա՝ և ասեն. մեկ-
նեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի։
Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա
որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի
մարդոյ։ Եւ ագարակն աշխարհս է։
սերմն բարի նոքա են՝ որ որդիքն ար-
քայութեն են. իսկ որոմն որդիք չա-
րին են։ Եւ թշնամին որ վարեաց
զայն՝ սատանայ է. և հունձքն կատա
րած աշխարհի է. և հնձօղքն հրեշ-
տակք են։ Որպէս ժողովի որոմն՝ և
՚ի հուր այրի, այնպէս եղիցի ՚ի կա-
տարածի աշխարհիս։ Առաքեսցէ որ-
դի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողո-
վեսցեն յարքայութէ նորա զամ գայ-
թակղութիս, և զայնոսիկ ոյք գոր-
ծեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն
զնոսա ՚ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝
և կրճել ատամանց։ Յայնժամ ար-

դարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն
յարքայութ̃ե երկնից. որ ունիցի ա-
կանջս լսելոյ լուիցէ. Դարձեալ
նման է արքայութ̃ի երկնից գանձի
ծածկելոյ յագարակի, զոր գտեալ
մարդոյ՝ թագոյց. եւ ՚ի խնդութենէ
անտի երթայ վաճառէ զա̃մ ինչ զոր
ունի, եւ գնէ զագարակն զայն. Դար-
ձեալ՝ նման է արքայու̃թի երկնից առն
վաճառականի՝ որ խնդրիցէ մարգա-
րիտս գեղեցիկս. Եւ գտեալ մի պատ-
ուական մարգարիտ՝ երթեալ վաճա-
ռեաց զա̃մ զոր ինչ ունէր՝ եւ գնեաց
զայն մարգարիտ. Դարձեալ՝ նման է
արքայութ̃ի երկնից ուռկանի արկելոյ
՚ի ծով՝ եւ յա̃մ ազգաց ժողովելոյ՝
Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ ՚ի ցա-
մաք՝ եւ նստեալ ժողովեցին զբարի
բարին յամանս, եւ զխոտանն ՚ի բաց
ընկեցին. Այնպէս եղիցի ՚ի կատա-
րածի աշխարհիս. ելցեն հրեշտակք
եւ մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդա-
րոյ, եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հրոյն.
անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց.
Ասէ ցնոսա յիսուս. իմացարո՞ւք զայս

ա͞մ։ ասեն ցնա. այո՛ տէր։ Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ա͞մ դպիր աշակերտեալ արքայութե͞ երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին.

---

Աւետարան ըստ Մարկոսի. Դ. 26.

Եւ ասէր. այսպէս է արքայութի͞ բձ
ա͞յ. որպէս զի այր մի արկանիցէ սեր- դձ
մանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն՝ և ապա զհասկն, ապա զցորեանն ատոք 'ի հասկին։ Եւ յոր ժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ. զի հասեալ են հունձք։ Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն ա͞յ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկ րի, փոքրագոյն է քան զա͞մ սերմանիս՝ որ են յերկրի. և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան

զա̃մ բանջար, և արձակէ ոստս մեծա-
մեծս, մինչև բաւական լինել ընդ
հովանեաւ նորա թռչնոց երկնից բը-
նակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր
ընդ նոսա զբանն, որպ̃ կարօղ լինէին
լսել. և առանց առակի ոչինչ խօսէր
ընդ նոսա, բայց առանձինն աշակեր-
տացն իւրոց մեկնէր զամենայն։

---

Աւետարան ըստ Ղուկասու. ժ̃բ. 32.

ակ Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հա-
դկ ճեցաւ Հօր ձեր տալ ձեզ զարքա-
յութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր,
և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ
քսակս առանց հնանալոյ, գանձ ան-
պակաս յերկինս. ուր ոչ գող մերձե-
նայ, և ոչ ցեց ապականէ։ Զի ուր
գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր ե-
ղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ
ընդ մէջ՝ և ճրագունք լուցեալք.
Եւ դուք նմանօղք մարդկան՝ որ ակն
ունիցին տ̃ն իւրեանց՝ թէ երբ դառ-
նայցէ ՚ի հարսանեաց. զի յորժամ
դայցէ և բախիցէ, վաղվաղակի բա-

նայցեն նմա ։ Երանի՜ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս . ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնս̄, և անցեալ պաշտիցէ զնոսա ։ Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ ։ Բայց զայն գիտասջի՛ք , եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր , և չտայր թողուլ ական հատանել 'ի տան իւրում ։ Եւ դուք եղերո՛ւք պատրաստք՝ զի յորում ժամու ո՛չ կարծիցէք , գայ որդի մարդոյ ։ Ասէ պետրոս . տէ՛ր՝ առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան ։ Եւ ասէ տէր . ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն , զոր կացոյց տէր իւր 'ի վր̄ գերդաստանի իւրոյ տալ 'ի ժամու զկերակուրս ։ Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս ։ Արդարև ասեմ ձեզ՝ զի 'ի վերայ ա̄մ ընչից իւրոց կացուսցէ զնա ։ Ապա եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում . յամէ տէր

իմ 'ի գալ . և սկսանիցի հարկանել
զծառայսն և զաղախնայս , ուտել և
ըմպել և արբենալ ։ Եկեսցէ տր ծա-
ռային այնորիկ՝ յաւուր յորում ակն
ոչ ունիցի , և 'ի ժամու յորում ոչ գի-
տիցէ . ընդ մէջ կտրեսցէ զնա , և ըզ-
մասն նորա ընդ անհաւատս դիցէ ։
Այլ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տն
իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կա-
մաց նորա , արբցէ գան բազում ։ Իսկ
որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ
գործիցէ , արբցէ գան սակաւ ։ Ամ
որում շատ տուաւ , շատ խնդրեսցի
'ի նմանէ . և որում բազում աւան-
դեցաւ , առաւել ևս պահանջեսցեն
'ի նմանէ ։

---

Աւետարան ըստ Յովհաննու ։ Ե . 19 ։

աձ Պատասխանի ետ յս և ասէ ցնոսա .
գձ ամէն ամէն ասեմ ձեզ . ոչ կարէ որ-
դի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ ,
եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ .
զի զոր նայն առնէ , զնոյն և որդին
նմին նման գործէ ։ Զի հայր սիրէ

զորդի , և զա̄մ ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ . և մեծամեծս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս , ընդ որ դուքդ զարմանայք ։ Զի որ̄պ հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ , նոյնպէս և որդի՝ զորս կամի կենդանի առնէ ։ Եւ ոչ եթէ հայր դատի զոք՝ այլ զա̄մ դատաստան ետ որդւոյ իւրոյ . զի ամենեքեան պատուեսցեն զորդի՝ որ̄պ պատուեն զհայր ։ որ ոչ պատուէ զորդին , ոչ պատուէ զհայր զառաքիչն նորա ։ Ամէն ամէն ասեմ ձեզ . զի որ զբանն իմ լսէ , և հաւատայ այնմ որ առաքեաց զիս , ընդունի զկեանսն յաւիտենականս . և ՚ի դատաստան ոչ մտանէ , այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս ։ Ամէն ամէն ասեմ ձեզ . զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է , յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն այ̄ . և որք լսիցենն՝ կեցցեն ։ Զի որ̄պ հայր ունի կեանս յանձին իւրում , նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում . և իշխանութի̄ ետ նմա դատաստան առնել . և զի որդի

մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք
զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամե-
նեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լու-
ցեն ձայնի նորա , և եկեսցեն ար-
տաքս . որոց բարիս գործեալ իցէ՝ ի
յարութիւն կենաց . և որոց զչար ա-
րարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց:
Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել և ո՛չ
ինչ . այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դա-
տաստանն իմ արդար է . զի ո՛չ խնդ-
րեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ
որ առաքեացն զիս :

Նորին երգ՝ տեառն Ներսեսի ասացեալ վասն առ
'ի քրիստոս ննջեցելոց .

բկ Աստուած անեղ՝ անժամանակ
դկ Հայր անսկիզբն և անքանակ . որդ-
մտ ւոյ պատճառ ծննդեան անճառ հոգ-
ւոյն բղխման անքննաբար . աղա-
չեմք ըզ քեզ գթած երկայնամիտ և
ողորմած . ողորմեա քո ստեղծուա-
ծոյս 'ի քեզ յուսով ննջեցելոյս :

Բա՛նդ որ ՚ի ծո՜ց հօր միածին և կերպարան սկզբնատըպին. որով երկինք գոյացան աշխարհ լըրիւ հաստատեցան. հայցեմք ՚ի քէն տէր և փըրկիչ ամենողորմ և կեցուցիչ. ող.

Գերագոյն շնորհաց բաշխօղ երկնաւորաց և երկրայնոց. կեանք և կենաց տըւօղ Հոգի Հօր և որդւոյ ա-րարչակից. խընդրեմք ՚ի քէն աղ-բիւր բարեաց արբուցանօղդ ծա-րաւեաց. ող.

Պատուանի՜մք ընդ սրովբէից զկենդանարարդ համայնից. երեքսրբը-եան մի տէրութի՝ զհայր և զորդի և սուրբ զհոգիդ. յոր հանգուցեալըս մըկըրտեալ և հաւատով խոստովան-եալ. ող.

Սորակի՜ թիւ կատարեալ յերիս անձինըս բաժանեալ. երրորդութե միաւորեալ միով բնութե՝ հաւասար-եալ. յորմէ կապեալք և արձակիմք և վերըստին անլոյծ կապիմք. ող.

Օ՜ժակիցըդ հօր զորդի փառաւո՜

րեմք անլռելի · որ լինէր յարդանդ կուսին զանդամոյինն առեր մարմին · աղաչանօք ածածնին անապականն քում ծննդին · ող ։

Երեւեցար մարմնով յերկրի որ 'ի հօրէ անմեկնելի · ընդ հողեղէնս բնակեցար 'ի հրեղինաց երկրպագեալդ · պաղատանօք երկնաւորաց փառաբանիչ քոց հրեշտակաց · ող ։

Ըստ օրինացն մովսէսի ընծայեցար 'ի տաճարին · զի ըզբնութիւնս մարդկային ընծայեսցես հօր 'ի յերկինս · խնդրուածովք նոր ծերունւոյն քեւ 'ի կապից արձակելոյն · ող ։

Թագաւորդ հրեղինաց որ ընդ մարդկան հողեղինաց · շրջեցար տնօրինաբար կրեցեր ըզկիրըս մարդկաբար · որ վասն մեր զայս ամենայն 'ի յանձն առեր խոնարհութիւն · ող ։

բձ Ժողովեալքս 'ի հրաժարումն ծա-
դձ ռայի քո յաշխարհէ · հայցեմք 'ի քէն
մրկ արտասուելով եւ պաղատիմք զայս ասե

լով . Ճանապարհ ընդ քեզ ելից նըն
ջեցելոյս լեր ուղեկից . 'ի յօթեւանս
հօր քո լուսոյ ընդ ննջեցեալսն մեր
հանգո ։

Ի փրկուե՟ մերոյ սկզբան մկըր
տեցար 'ի յորդանան . զոր շնորհեցեր
նոր աւազան 'ի մաքրուե՟ մեղաց մարդ-
կան . հայցմամբ կուսին կարապետին
մեծին 'ի ծնունդս մկրտչին . 'ի ։

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ
դաւանեաց հայր էակից . աղաւնա-
կերպ հոգին իջեալ առ համագոյդ
իւր հանդուցեալ . ընդմկրտեալս
նովին հոգւով յորդեգրութի հօր
հաւատով . 'ի ։

Խաւար մեղաց հալածեցաւ լոյս
դիմուե՟ քո ծագեցաւ . խայթուած-
օձին բժշկեցաւ հիւանդութի մեր
ողջացաւ . կենդանարարդ մեռելոց
և լուսատուդ խաւարելոց . 'ի .

Ծագումն անուն առ 'ի հօրէ որ
ընտրեցեր 'ի յաշխարհէ . լուսաւորիչ
տիեզերաց ընդ դաս ընտրեալ աշակեր

տանցն . ամպհովանիք առաքելոցն փող յարութեան մեր եղելոց . 'ի՛:

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ որ ըստեղծեր զմեզ 'ի հողոյ . նորոգեցեր դարձեալ կրկին ծննդեամբ սրբոյ աւազանին . զոր կեցուցեր շնորհիւ քոյին 'ի մահուանէն այն առաջին . 'ի՛:

Հոգւով լցեր զմարդն առաջին զոր կորուսեալ խաբմամբ չարին . ընդ նոյն հոգի բանին քոյին հեղեր յոգիս մեր վերստին . նովին հոգւով սուրբ և բարի առաջնորդեա հոգւոյ սորին . 'ի՛:

Ձայնեցեր առ ղազարոս որով ետուր մեռելոց յոյս . կենդանութե չորեքօրեայն կենդանացան որք յադամայն . կենաց ձայնիւ վերջին փողոյ կոչեա ըզսա յայսմ հողոյ . 'ի՛:

Պօղեալ սարսեաց պահակ մահու 'ի կենարար ձայնին լըրոյ . մրադապէս զոյգ ընդ բանին ետ ըզմեռեալն ըստ հրամանին . Իշխանք օդոյս այս սարսեցեն զհոգի սորա մի արգելցեն . 'ի՛:

Ճանապարհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց · հրաւիրեցեր զորդիս լուսոյ ՚ի յերկնային հարսանիս քո · ընդ զուարճալիցն անդ ժողովելոց արժանացո ըզսա դասուց · լե՛ լապտերօք մուծ յառագաստ ընդ իմաստուն սուրբ կուսանացն ։

ակ
դկ
ղու

Մերով բնութե՜ զոր ըզգեցար ՚ի փայտ խաչին բևեռեցար · լուծանել զմեզ ՚ի մեղաց ՚ի նախահօրըն կապանաց · լոյծ և՛ ըզսա ՚ի յանցանաց վասըն քո սուրբ չարչարանաց · լե·

Յետ կամաւոր մահուն խաչին եդար ՚ի նոր գերեզմանի · երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ըստեղծեր զմեզ կենդանի · զննջեալս ընդ քեզ ՚ի հող մահու վերականգնեա ձայնիւ փողոյ · լե։

Նըստեալ կանա՜նցն իւղաբերից և ողբային արտասուալից · իբր ըզմեռեալ անյուսալից ըզկենդանիդ յաւիտենից · վասըն նոցին մե՜ք արտասուաց մաքրեա ըզսա ՚ի յանցանաց · լե·

Շարժեալ հիմանցըն դըժոխոց 'ի տեսանել ըզքեզ ներքնոց. համեր գհողխան որ 'ի բանտին կապեալ զիշխանըն մահածին. ընդ հանգուցեալ հոգիս սըրբոց հանգո զհոգիս նըն-ջեցելոյս. լի.

Ուրախութ. զօրք երկնային յերկնից յերկիր իջանէին. յորժամ յարեար 'ի մեռելոց լոյս ծագեցար արարածոց. որ յարութ. քո կենարար յարո ըզսա 'ի կեանս անմահ. լի.

Զըհանդուրժեալ պահապանացն 'ի յերկնուղէ երկնաւորացն. որք աւետիս տային կանանց թէ մահ լուծաւ մահկանացուաց. սա որ մահու քո տընկակից լեցի կենացդ հաղոր-դակից. լի.

Պարակցեալ անմարմնականքն առ կենսատու սուրբ գերեզմանն. աւետիս ետուն մարդկան վասըն կենացն յաւիտենականն. դասաւորեալ պարուց նոցին ըզննջեցեալս յօրըն վերջին. լի.

Գահաւորեալ նշան խաչին յա-
րեւելից փայլեալ ծագին. հաւատաց-
եալքն ՚ի քեզ բերկրին և ուրացող-
քըն կոծեցին. զերկրպագուս սբյ
խաչին պայծառացո լուսով նորին. լի.

Ահ գործեալ երկնաւորաց դասն աձ
առաջի քո նախընթաց. զընտրեալըս գձ
քո ժողովելով քեզ ընդ առաջ բե- յօհ
րեն ամպով. ընդ աղաւնեաց օդապա-
րից խառնեա ընդ սուրբ երամից.
դասաւորեա ընդ վերնոցն երգել
ըզփառս ընդ զուարթնոցն:

Սարսափին տարերք երկրի յոր-
ժամ փառօք գաս հայրենի. արեգա-
կան լոյս խաւարի լուսինն աստեղ-
քըն նուաղին. ըզսա յաւուրն անե-
րեկի լուսաւորեա լուսով քոյին. գա:

Վերնական զօրացն պետ փողէ
բարբառ աւետաբեր. որք մեռեալք
որք յադամայ քանզի ահա եկըն փե-
սայ. ընդ հարսնացեալ մաքուր հոգ-
ւոց կարգեա ըզսա ՚ի թիւ սբց. գա:

Տէրական յաթոռ նըստես յարա

րածոց երկրպագիս․ արդարութբ զաշ-
խարհ դատես վարձս ըստ գործոց հա-
տուցանես․ յայնժամ շնորհեա ողոր-
մութ նընջեցելոյս մեր Թողութ․ դա․

Բամեալ մարդկան ազգ ժողովին
որք յադամայ ծնեալք լինին․ և
հրեղինաց դասք երկնային համանգա-
մայն վայրաբերին․ 'ի յայնմ ահեղ
հրապարակին յիշեա ըզսա յօրն ահա-
գին․ դա․

Յուցանին գաղտնիք մարդկան
իւրաքանչիւր որ գործեցան․ բար-
եաց գործօղքըն պըսակին չարեացն
'ի հուրն անշէջ մատնին․ յայնժամ
յիշեա զորս բարին գործըք մեղ-
ցըն ջընջեսցին․ դասա․

Նեւսին պըսակք զանազանեալք
և պատմուճանք լուսափայլեալք․ որք
վերկայից 'ի դրախտ եդեալ և արդա-
րոցըն զարդարեալ․ հաղորդս արա
հայցմամբ նոցին ըզսա լուսոյ փա-
ռաց նոցին․ դա․

Փառաց 'ի փառըս բարձրանան ա-

ջակողմեանքըն վերանան. յորժամ լը
սեն զերանական ձայն օրհնութեան 'ի
քեն կողման. նըննջեցելոյս մեր լըսե
ցո զանծայլին բարբառըդ քո. դա.

Բաժանեալք և ժողովուրդք հայ-
ցեմք 'ի քեն տէր բարեգութ. ընդ
նըննջեցեալըն հաւատով ընկալ ըզ
մեզ նովին յուսով. յերուսաղէմ քա
ղաք վերին յորում արդարքըն ժողո
վին. փառս վերերգել միշտ ընդ նոսին
երրորդութեանդ երրեակ անձին.

Արարիչ է և մարդասէր անո- դձ
խակալ և բարեգութ. որ գովելի ես
'ի սրովբէից տէր դատաւոր ար-
դարութեան. ընդ սրբոց դասու քե
լոց տէր պըսակեա զմեր ննջեց
եալսն. ողորմած տէր ողորմեա
հոգւոցըն մեր ննջեցելոց.

Յորժամ գըրեալքըն կան աթո-
ռին որ զայնմ աւուր մեզ պա-
տմեցին. մարգարէից բանքըն յայ-
տնին առաքելոցըն վերձայրին. ող.

Ի վերինն Երուսաղէմ ի
բնակարանս հրեշտակաց. ուր Ե-
նովք և Եղիաս կան ծերաց-
եալ աղաւնակերպ ի դրախտին
Եդեմական պայծառացեալ ար-
ժանապէս. օղ.

Թագաւոր փառաց քրիստոս.
որ ժամանեալ գաս ի յերկնից. ի
վերայ թևոց հողմոց. քո հայրե-
նի կերպարանօք. և առնես հրա-
փորձութեան ընդքննութիւն որդ-
ւոց մարդկան. օղ.

Ի դնել բեմին բազմի փե-
սային. և առագաստն զարդարի.
գաբրիէլեան փողն գոչէ.
սուրբք ամենայն ընդ հարսին.
արդարոց դասքն բերկրին.
իսկ մեղաւորքն թախծին. օղ.

Յորժամ հնչէ ձայն փողոյն [illegible]-
նի ընդհանրական դիրքն յայտնի.
ճառագայթ սուրբ խաչին. յա-
րևելից փայլեալ ծագի. հրեշտա

կայց գունդք ծաւալին հրեշ-
տակապետք պարունակին. ող։

Մահեղ խորհուրդ քահանայ-
ին բաղկատարած կայ ՚ի բեմին.
առաջին մէ սեղանոյն. հուր շէ
ջանի խաւար մերժի. տըրտմեալ
հոգին քն ուրախանան. զի թո
ղութիւն մեղաց լինի. ող։

Մովսէս մատուա ծախսոն և ա
հարոն ըղ ղեւտացին. մարդարէ քն
իսրայէլի և քահանայք հին ծ
ընէին. յառաջադրոյն մեղ ծա
նուցին ըղդալուստ մե ամ
նիդ. ՚ի փըրկուել մեղ յա յանեցի
ն. յանապատի կերակրին. ող։

Տէրտմահաղորդ չարչարանոք.
՚ի յանձն առեր ըղ մահ խաչին. և
փոյթին բարձող եղեր վասն
ադամայ նախաստեղծին. ող։

Օրհնութեան զօրք երկնայի
ն. յորժամ տեսին զորդ ՚ի խա
չին. աղէտալին լոյս քող արկեա

ւ. Եւ լոյս լուսնին նուաղեցաւ. յահեղ փառացն ծորդուածն խա-ւոր եղեւ ընդ ոտն եղերն. Որ.

Ուրախացան ազգք մարդկան. յորժամ լուան զքո յարութիւն. նորափետուր զարդարեցան ի յարութեան քո մարմնիդ. Որ.

Աղաչանօք սրբոյ խաչին. եւ անբարբառ բարեխօսին. եւ սրբոյ աստուածածնին. եւ յովհաննու կարապետին. եւ սրբոյն ստե-փաննոսին. եւ առաջին մարտի-րոսին. եւ սրբոյ լուսաւորչին հայաստանեայց հայրապետին. եւ սրբոց առաքելոց. եւ համօրէն մարտիրոսաց. ողորմեա.

Ես ասացի ի վերանալ յե-նէն աւուրց իմոց. յոլ երթայ-ցեմ եւ ես այսօր. յառաջին օթեվա-նին զոր ոչ գիտէի. օգնեա եւ ինձ քո այսօր. յառաջին ճանապար-հին. եւ ի միւսանգամ գալստեանն

քո օրհնեալ իմ ինձ։

Այն եհաս օր վախճանի իմոյ. լալումն ողբումն եւ աշխարումն. սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ ոսկերք իմ ցամաքեցան. օգ։

Ի մահէ ձայն իմ զարթուցին զիս. պահանջողք հոգւոյ իմոյ. տանէին զիս ճանապարհ հեռաւոր. զոր ոչ գիտէի. օգ։

Զարհուրեցայ եւ ոչ ոք էր որ օգնէր ինձ. ապաւինեցայ յԱծ փրկութե իմոյ. ցնծասցէ հոգի իմ յարքայութեան քում. օգ։

Գրեցայ ես ի գիր կենդանութեան. եւ մեկնեցայ յերթալ առ արարիչն երկնի եւ երկրի. օգ։

Յանձնատուեր եւ յանեղ լուսոյն. հեռացայ ի խաբեմամբ խաւարային. ձանձրացեցի ընդ մահաբեր պտուղն. հողանայ պատկեր բարերար ստեղծողիդ. օգ։

Յանձնառուն հոգւոյս ի մահիմ

նոյս · Ի քաղաքիդ գեղեցիկ շինուածոյս · զարհուրիմ ի սպառնալեաց թագաւորին · Թէ պահանջեսցէ յինէն զանցանս պատուիրանին · օգ․

Կուսածին մարդացեալ տէր իմ յիսուս · յայնժամ աւուր ահեղ ատենին · ընդդէմ երեսն քո մի դատապարտեր · օգ․

Սոսկալի է օր վախճանին · և ահեղ օր դատաստանին · յայնժամ աւուր ահեղ ատենին · ընդդէմ երեսն քո մի անտես առներ · զի պատկեր եմ բարերար ստեղծողիդ · օգ․

Զահաւոր դատաստանն դատաւորիդ տեսի · և զարհուրեցայ · զի անպատրաստ եդիտ զիս ի հրամանաց քոց թագաւոր յաւիտենից · օգ․

Աստուածածին անարատ մայր տեառն և կոյս սուրբ · բարեխօսեա ան

որդի՛ն քո միածի՛ն․ զի՛ փրկեսցէ՛ ըզ մե՛զ ՚ի սպառնալեաց գե՛հենոյն․ և պարգևեսցէ՛ մե՛զ զե՛րկնից զարքայութի՛ն․ և հանգուսցէ՛ զհոգիս մեր ննջեցելոցն․ օգ․

Մաղթանք․

Հոգւոյն հանգուցելոց քո Տէր՝ արա հանգիստ և ողորմութի․ և մեզ մեղաւորացս՝ շնորհեա՛ զթողութիւն յանցանաց։

Եւ ևս խաղաղութե զտէր աղաչես․

Վասն հանգուցեալ հոգւոյն ա- քրզ
ղաչեսցուք զփրկիչն մեր Քս՝ զի ըզ նոսա ընդ արդարսն դասեսցէ․ և ըզ մեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ․ Ամենակալ տէր Ած մեր․ կեցո՛ և ողորմեա՛։

Տէր ողորմեա․ երիցս։

Ո՛վ որդի Այ անոխակալ և բարե- մաղ
գութ՝ դթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց․

Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քո: Արա՛ արժանի ողորմութեան՝ քաւութեան և թողութեան մեղաց՝ Պսակաւորեալ պայծառացո՛ ընդ սրբս քո յաջակողման դասուն. Զի դու ես Տէր, և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց՝ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ասա այս Օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն, ձայն 'ի ձայնէն. և յետ՝ Մաղթանքն, Քարոզն, և Աղօթքն:

Մաղթանք տէրունական տօնից:

Փառք հրաշափառ ծննդեան քո Տէր. զօրհնեալ և զփառաւորեալ, զհրաշալի և զյաղթօղ զծնունդ քո սուրբ օրհնեմք և փառաւորեմք:

Արդասա՛էր Տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի՝ և վասն խաչի քո պատուականի, ընկա՛լ զաղաչանս մեր. և կեցո՛ զմեզ:

Այնուհետեւ տամ և յանձնայն տօնս տէրունականս ըստ պատշաճի աւուրն · բէ Յայտնութեան , բէ Գալստեան , բէ Տնօրէնութեան , բէ Մատնութեան , բէ Խաչելութեան , բէ Թաղման , բէ Յարութեան , բէ Համբարձման , բէ Գալստեան հոգւոյն սրբոյ , բէ Պայծառակերպութեան , և բէ 'ի տօնս սրբոց խաչի և Եկեղեցւոյ : Բայց 'ի Գալստեան հոգւոյն ասէ՝ ՀՄարտուտէր տէրն այսպէս տաս , Ա՝արդաւէր տր՝ վասն սրբուհւոյ անարատի մօրն և կուսի · և վասն խաչին պատուականի՝ ընկա՛լ զաղաչանս : Ո՝է սիրելին որք աւէն ա հոգէին տէ , բէ մօր քոյ չամ խաչի քո · և 'ի տօնս եկեղեցւոյ տամ , Փառք տէրութեան քո տէր · և այլն որպէս 'ի վերոյ :

Մաղթանք 'ի տօնս սրբոց :

Բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին · և յովհաննու մկրտչին · սրբոյն ստեփաննոսի Նախավկային · և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին : Յիշատակաւ և աղօթիւք սբց (տալ անուն) , որոց այսօր է յիշատակ · Եւ վասն խաչի քոյ պատուականի , տէր ընկա՛լ զաղաչանս մեր · և կեցո՛ զմեզ :

Երան Սա՜ է իմ ա՜ծ, և փառաւոր առ-
դկ նեմ զսա․ ա՜ծ հօր իմոյ՝ և բարձր ա-
րարից զսա։ Մարդասէր տէր։

Երկին Տո՛ւք փառս ա՜յ, տո՛ւք օրհնութի՜
աձ մարդասիրին Թագաւորին յաւիտե-
նից, որ փրկէ զծառայս իւր և կե-
ցուցանէ։ Մարդասէր տէր։

Գնա Դու ես տէր մեր՝ դու ես ք՜ս
ակ փրկիչ մեր, զքեզ օրհնեն անձինք
մեր։ Մարդասէր տէր։

Ուր Բարձրացաւ եղջիւր իմ յա՜ծ փրր-
բձ կիչ իմ․ հաստատեցաւ սիրտ իմ 'ի տ՜ր՝
տերամբ և հաւատով։ Մարդասէր տ՜ր։

Եբրե Խաղաղութե՜ց տուօղ ք՜ս զխաղա-
բկ ղութի՜ և զերկնային ողորմութի՜ քո
պարգևեա՛ յարարածս քո։ Մարդա-
սէր տէր։

Որ ա Յոյս կենդանութե՜, լոյս և ապա-
դձ ւէն փրկութե՜ տէր յ՜ս փրկիչ․ փրր-
կեա՛ և փարատեցո՛ զցաւս անձին իմոյ։
Մարդասէր տէր։

Եոս Լկեսցեն աղօթք մեր 'ի տաճար
դկ սուրբ քո․ խոնարհեսցի ունկն քո 'ի
խնդրուածս մեր։ Մարդասէր տէր։

Լո՛ւր մեզ տէր լո՛ւր մեզ, ա՛ծայ- ԻՆԵՂ
ին ողորմութբ և գթութբ քո խնայեա՛ ԴՃ
յարարածս քո։ Մ՛արդասէր տէր։

---

Քարոզ՝ Երանեաւ և Իբրև կանոնացն։

Վասն ՚ի վերուստ խաղաղութեն՝ ԴԿ
և փրկութեն անձանց մերոց, զտէր ԵԿ
աղաչեսցուք։ Տէր ողորմեա՛։

Վասն լսելի լինելոյ տեառն ա՛յ ձայնի աղաչանաց մերոց, զտէր աղա։

Վասն քաւիչ և ներօղ լինելոյ ա՛յ ՚ի վերայ մեղաց մերոց, զտէր աղա։

Վասն թողլոյ մեզ զա՛մ յանցանս մեր, զկամայ և զակամայ, զտէր աղա։

Վասն զի մի ընդ խոտանսն դատա-նիցիմք յաւուրն պատասխանատուու-թեան, զտէր։

Վ՟ս հօգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի ք՟ս ննջեցին, զտէր աղա։

Եւևս՝ միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր աղա։

Զանձինս մեր՝ և զմիմեանս, տ՟ն ա՛յ ամենակալին յանձն արասցուք։

Ողորմեա՛ց մեզ տէր ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութե՟ քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ.

Տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛.

Աղօթք.

Տէր տունջեան՝ և գոյացուցիչ գիշերոյ. որ արարեր զտիւ ՚ի զբօսանս բարեգործութե՟՝ ՚ի փրկութի՟ անձանց մերոց, և զգիշեր ՚ի հանգիստ քնո՛յ տկարացեալ բնութեան մերոյ. Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն՝ ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ՝ Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ՚ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. և նովին կանոնիւս անդադար փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Խաղաղութիւն ամենեցուն.

Առ քեզ, որ յա՟մի գթած և մարդասէր տէրդ ես, աղաչեմք հանա-

պաղ, զի զօրացուսցես զմեզ օր ըստ օրէ կալ 'ի կարգի կրօնաւորութեան մերում։ Թեթևացո՛ տէր՝ զքաղցր լուծ քո՝ զոր եդեր 'ի վերայ մեր. զի կարասցուք կալ 'ի պատուիրանի քում, և զհաճոյսն առնել առաջի քո յամենայն ժամ, 'ի տուէ և 'ի գիշերի։ Հրեշտակային երգակցութ͞բ զքեզ օրհնել՝ զքեզ գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր տէրութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանք.

Սաղմոսիւք և օրհնութ͞բ՝ և երգովք հոգևորօք անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր յ͞ս ք͞ս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

---

Քարոզ՝ Երկնքայամէն, և Տէրապաւէն կանոնացն։

Սան 'ի գիշերի և 'ի տունջեան, աձ
և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան գձ

տեառն՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քի՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝ և երկնից արքայութեանն՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն հոգւոցն ։ Նու ես միաբան ։ Զանձինս ։ Ողորմեաց ։

Աղօթք ։

Ի գիշերի և 'ի տուընջեան և յամ ժամու զքեզ աղաչեմք, և 'ի քէն խնդրեմք մարդասէր տէր ։ Լո՛ւր մեզ ած փրկիչ մեր · խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս մեր · զի մի՛ ունայն լիցին վաստակք ծառայից քոց · այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր 'ի գործ արդարութեան, և 'ի պտուղ ածպաշ-

տութեան ։ Ընկա՛լ տէր՝ զաղօթս և
զերկրպագութի՛ւս մեր , և հաստա՛ մեզ
զողորմութի՛ քո առատապէս ։ Ծած-
կեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր
աջոյ քոյ ։ զօրացո՛ զմեզ տէր՝ զօրու-
թեամբ սբ՟ հոգւոյդ ։ պահեա՛ զմեզ
որպէս բիբ ական ։ Եւ արա՛ առ մեզ
նշան բարի , ՚ի գովեստ և ՚ի փառա-
բանութիւն անուանդ քում սրբոյ ։
Զի ՚ի քո փառս կատարի ամ՟ արա-
րածոց մշտնջենաւոր փառաբանութի՛
՚ի բարձունս , հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից ։ ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յա-
ւիտենական՝ նայեա՛ց և ա՛յց արա բա-
նաւոր հօտի քո , զոր ժողովեցեր առ
քեզ գթութե՛ քով ։ Զի ՚ի քո առաջի
կամք տէր , և առ ՚ի քէն ողորմու-
թեանցդ և գթութե՛ցդ ակն ունիմք ։
Զամենեսեան օրհնեա՛ , զամենես-
եան իմաստնացո՛ , զամենեսեան լու-
սաւորեա՛ ։ և ամենեցուն պարգևեա՛

զերկնից արքայութիւնդ ։ Վասն զի դու ես տէր կենաց, և ա̃ծ ողորմութեանց ։ և քեզ վայելէ փառք իշխանութի̃ւ և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։

Մաղթանք ։

Ի գիշերի և 'ի տունջեան և յա̃մ ժամու անդադար փառաւորեմք ըզ Հայր և զՈրդի և զՍուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։

---

Քարոզ և աղօթք՝ Մի նախանձիր, և Խոստովան կանոնացն ։

ա/ Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի
դկ ճանապարհս խաղաղութե̃՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն ցրելոյ 'ի մէնջ զա̃մ խորհուրդս չարին՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ զտ̃ր աղա ։

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ՝ զտէր ։

Վ̃ս խորտակելոյ զհակառակորդն

փաղփաղակի ընդ ոտիւք մերովք՝ զտ՟ր:
Վասն հոգւոյն: Եւ եւս միաբան:
Զանձինս: Ողորմեա՛ց:

Աղօթք:

Տէր երկնի եւ երկրի՝ արարիչ ամ՟ արարածոց երեւելեաց եւ աներեւութից: Առ քեզ կարդամք յամ՟ ժամ. զի ընդ ամ՟ տեղիս է տէրութի՟ քո, եւ արքայութի՟ քո ամենեցուն տիրէ: Շնորհեա՛ մեզ երկիւղիւ ՚ի պաշտօն քո կանխել հանապազ, սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ եւ ՚ի բովանդակ մտաց, եւ յամ՟ զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութի՟ առանց բարկութե՟ եւ երկմտութե՟, եւ գտանել ՚ի քէն զշնորհս եւ զողորմութի՟, եւ զառաքինասէր գործոցն յաջողութի՟: Վասն զի դու ես տէր կենաց եւ ամ՟ողորմութե՟ց. եւ քեզ վայելէ փառք իշխանութի՟ եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քում ամենազօր և յաղթօղ տէրութ՟եդ կրկնի ա՟մ ծունր յերկրպագութ՟ի . և փառաւորի յամենեցունց թագաւորութ՟ի քո : Նայեա՛ յերկրպագութ՟ես մեր , և ուսո՛ մեզ տանել զարդարութիւն ճշմարտութ՟ե : Վասն զի դու ես ա՟ծ խաղաղութ՟ե , որ բարձեր զթշնամութ՟ի ՚ի միջոյ , և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի . հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս քոյին բարեացդ : Որում և զմեզ մեծի շը-նորհացդ արժանաւորս արասցես , դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո , ա՟ծ մեր և տէր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս : Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ ս՟բ հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Մաղթանք :

Յերգս օրհնութ՟ե և՚ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Քարոզ և աղօթք՝ Ողորմեա՛, և ի նեղութեան կանոնայն։

Վասն դատանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն ՚ի բարերար տեառնէ մերմէ՝ զտէր աղաչեսցուք։ բձ / գձ

Վասն փրկելոյ զմեզ ՚ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի՝ զտէր աղաչեսցուք։

Վասն ա̃մ անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց՝ զտէր աղա։

Վասն որք ՚ի լերինս յայրս և ՚ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր՝ զտէր աղաչեսցուք։

Վասն որք սաղմոսիւք և օրհնութ̃բ կատարեն զա̃մ ժամանակս կենաց իւրեանց՝ զտէր աղաչեսցուք։

Վասն հոգւոցն։ Եւ ևս միաբան։ Զանձինս։ Ողորմեա՛ց։

Աղօթք։

Գոհանամք զքէն տէր ա̃ծ մեր, որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութ̃բ առ քեզ տէր ա̃ծ մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութի̃ քո։ Եկեսցէ և բնա-

կեսցէ առ մեզ ա՟ծութի՟ քո. և ողոր-
մութի՟ քո հովանի և պահապան լիցի
՚ի վերայ պաշտօնէից քոց. Եւ զմեզ
զծառայքս քո արժանի արա ՚ի տուէ
և ՚ի գիշերի և յա՟մ ժամու միշտ խոր-
հիլ ՚ի սէր պատուիրանաց քոց. Եւ
գոհանալով փառաւորել զհայր և զոր-
դի և զսուրբ հոգիդ, այժմ և.

Խաղաղութիւն ամենեցուն.

Կենդանարար զօրութի՟ և աղբիւր
անմահութե՟, դու ես ք՟ս ա՟ծ փրկիչ
մեր. Որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գի-
շերի յառնել և խոստովան լինել առ
քեզ վասն իրաւանց և արդարութե՟
քո. Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր
ա՟ծ մեր, արա զմեզ արթունս և պատ-
րաստս ՚ի ժամ առաւօտու ընդ ս՟բս
քո. Եւ ընդ նոսին գոհանալով փա-
ռաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգ-
ւոյդ սրբոյ, այժմ և.

Մաղթանք.

Գոհութի՟ և ճշմարիտ խոստովա-
նութի՟ անդադար փառաւորեմք զհայր
և զորդի և զս՟բ հոգիդ, այժմ և.

Թագաւորք ապաշխարութեան.

Թագաւոր յաւիտենական Քրիստոս Աստուածն . բհ
Լուր մեզ աստուածածին փրկչին մեր . և կեցո զմեզ, որ յամենայնի կարօտեալ եմք .

Լուր մեզ Աստուած փրկիչ մեր . յոյս աղ
ամենայն ծագաց երկրի . և որ ի ծով հեռաւորք .

Որ պատրաստես զլերինս զօրութեամբ իւրով . և զգեցեալ է զօրութիւն . և կեցո զմեզ, որ յամենայնի .

Լուր աղաչանաց մերոց տէր փ
մարդասէր, և գթա ի մեզ .

Մի զիս անտես առներ . թ
այլ օգնեա ինձ մարդասէր .

Մի ընկեներ զիս տէր յերեսաց աղ
քոց . և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն .

Այլ տուր ինձ զցնծութիւն փրկ-

կութն. եւ հոգւով պետութեան քոյ հաս-
տատեա զիս. այլ օգնեա ինձ։

փ Սիանտես անուներ զիս տէր աստ-
ուած փրկիչ իմ. այլ շնորհեա ինձ
թողութիւն բազմագութ մարդա-
սէր, եւ ը կեցո։

թ Երկինք եւ երկիր գոհանան ըզ-
քէն տէր. արարածք ամ քեզ երկիր
պագանեն. եւ հրեշտակք 'ի բարձունս
անդադարկեն եւ ասեն. ողորմեա գո-
ստեղծեր, մի կորուսաներ։

ող Երկինք երկնից, ջուրք որ 'ի վե-
րոյ քան զերկինս. օրհնեցէք զանու-
նըն տեառն։

Զի նա ասաց. եւ եղեն, հրա-
մայեաց եւ հաստատեցան. եւ հրեշ-
տակք 'ի։

փ Երկինք եւ երկիր հանապազ ըզ-
քեզ գովեն. թագաւոր փառաց.
սերովբէք եւ քերովբէք 'ի խոնարհ-
ունելով ըզդէմս իւրեանց. եւ
միաձայն բարբառով անդադարկեն եւ

ասեն . սուրբ . սուրբ . սուրբ . Տէր զօրութեանց ։

Երկայնամիտ ես Տէր առ ամե- ԳՀ
նեսեան . և գթած Տէր ի
վերայ մեր . որպէս և զյաւազա
կին փրկեց և զկեցո ։

Երկայնամիտ բազումողորմ և ճշ- ՍՂ
մարիտ նայեաց առ իս . և ողոր-
մեաց ինձ ։ Տուր զօրութիւն
ծառայի քո . կեցո զորդի աղախնոյ
քո . և արա առ իս զնշան բարու-
թեան . և գթա ։

Տէր որ գթացար յաւազակին Փ
խաչակից լինել քեզ . և մաքրեցեր
զաղտեղութիւն յանցանաց նորա
յաղերսէ կոչէ քո . գթա և յիս
ի մեղաւորս , որ ծարաւեալ եմ առ
քեզ . և փափագիմ ի գաւիթս քո
որպէս ըղձիւ ի յեղջերուաց ի յաղ
բերս ջուրց ։

Մարտեաւ ընդ իս թշնամին . հա- Թ
նապազ զիս կամի կորուսա

նել. այլ դու տէր իմ այց արա մոլո-
րեալ ոչխարիս, և ընկեցելոցս:

ադ Մարտեան ընդ իս 'ի տարապար-
տուց. և փոխանակ սիրոյ իմոյ մատ-
նէին զիս. այլ ես յաղօթս կայի:
Հատուցին ինձ չար փոխանակ բար-
ւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ
իմոյ. այլ դու տէր իմ այց ա:

փ Որ հովուեալ ես հօտից բանաւոր
կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց
ապաշխարութեամբ. և դարձո զմոլոր-
եալս 'ի հօտ քո քս, և ընկեցելոցս:

թ Մեղայ և աղաչեմ զքեզ. թո-
ղութիւն շնորհեա մեղաց ի-
մոց. քաւիչ իմ լեր քո գթութեամբդ.
որ միայն ես փրկիչ, և ընկե.

ադ Մեղայ տէր մեղայ. և զանօրէնութիւնս
իմ ես ինքնին գիտեմ: Աղաչեմ
և խնդրեմ 'ի քէն, թող ինձ տէր.
թող 'ինձ. և մի կորուսաներ զիս ընդ
անօրէնութեան իմոյ. քա.

փ Մեղայ քեզ տէր. մեղայ քեզ տէր.

մեղայ․ և քան զաւազ ծովու բազ-
ում են յանցանք իմ․ պատուիրանք
աշխարհիս խաբեցին զիս․ և եղէ
անպտուղ ՚ի կենաց յուսոյդ․ այլ
դու անոխակալ և անյիշաչար փըր-
կիչ․ խնայեա ՚ի մեղուցեալ ծա-
ռայս, և զիս կեցո։

---

Տէր իմ բազում են անօրէ- դշ
նութիւնք անձին իմոյ․ ոչ յի-
շեցի զահեղ ըզդատաստանն քո․
որդ անկեալ ըզ քեզ աղաչեմ․
շնորհեա ինձ ապաշխարութիւն․ տէր
և ողորմեա։

Անօրէնութիւնք իմ բարձրացան սղ
քան ըզգլուխ իմ․ և որպէս բեռըն
ծանր ծանրացան ՚ի վերայ իմ։
Նեխեցան և փտեցան վէրք իմ յե-
րեսաց անզգամութեան իմոյ․
ոչ յիշեցի զահեղ ըզդատ։

փ Պաղատանս մատուցանեմք քեզ
հայր երկնաւոր. մի անտես առներ
զաղաչանս մեր. այլ անցո զցասու-
մն քո ի մէնջ. և յիշեա զի պատ-
կեր եմք բարերարութեանդ.

թ Տէր իմ գթութիւնք քո բա-
զում են յոյժ. առ իս արա զբա-
րերարութիւնս քո. որպէս և ըմեք
սաւորին, և ինձ ողորմեա.

ող Գթութիւնք քո բազում են Տէր.
և ըստ իրաւանց քոց կեցո զիս.
Բազում են որք հալածեն և նեղեն
զիս. ի վկայութեանց քոց ես ոչ խոտո-
րեցայ. առ իս արա զբա.

փ Անոխակալ և անյիշաչար Տէր.
որ գթալով ի մեղաւոր շնորհե-
ցեր ապաշխարութիւն. արդ գթա և
յիս Տէր ի մեղուցեալս և յանօրէ-
նեալս քո ծառայս. և փոխարկեա
ըզգործօղս չարեաց ի զղջումն
ապաշխարութեան, և կեցո.

Ի տաճարի քում սրբութեան․ փա Թ
ռաւորելով ըզքեզ․ դու ունիս
իշխանութիւն, ողորմեա մեզ։

Բայց ես ըստ բազում ողորմութեան ող
քում մտից ՚ի տուն քո․ և երկիրպա
գից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ
քո։ Տէր առաջնորդեա ինձ յարդա
րութիւն քում վասն թշնամեաց իմոց․
և ուղիղ արա առաջի իմ ըզ ճանապար
հըս քո․ դու ունիս իշխանութիւն։

Ի տաճարի քում սրբութեան հա Փ
նապազ ըզքեզ գովեմք թագաւոր
փառաց․ որ ունիս իշխանութիւն
կենաց և փրկութեան, ողոր
մեա մեզ։

---

Ապաշխարութեան արտասուս ա եշ
ւազան լինի, և լուանայ ըզ բազ
մութիւն ըզմեղաց․ սովոր շնորհ
եա յառաջ քան ըզվախճան
ըզքաւութիւն և ըզմեծ քո ըզո
ղորմութիւն․

աղ Ծարաւեալ է անձն իմ առ քեզ ած
հզօր և կենդանի. երբ եկից երևե
ցայց երեսացդ աստուածոյ. Եղեն
ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ
և ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօր
հանապազ, թէ ուր է աստուածն
քո. սոսկալ շնորհ.

փ Յորժամ գաս փառօք հօր յահա
գին աւուրն ի դատել զերկիր. և
դողան սարսափմամբ երկրածինք
ամ ի յահէ քումմէ. ի նշոյլ
քո յաւիտենի դատաւոր ահեղ. և յահ
նարկել քո յարդարածու, յիշեա և զիս
ընդ բազմամբ. որ ընկղմեալս եմ
յանցանօք բանսարկուին խաբմամբ.
և հայցեմ զաւագակին, տէր և զիս
յիշեա. որ միայն ես փրկիչ։

թ Ես որ ի նուէր աշխարհի ա
լ կոծեն մեղաց իմ. նաւահան
գիստ ապաշխարութեան շնորհեա
ինձ բազմագութ տէր, և ընկեցոյ

Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք մինչև յանձն իմ. ընկղմայ ես 'ի խորս անդնդոց ուր ոչ գոյ ինձ հանգիստ. նաւահանգիստ ապաւէն: ադ

Նաւապետդ բարերարութեան քեզ ապաւինիմ. տուր ինձ ձեռն որպէս երբեմն պետրոսին 'ի վերայ ալեացն. որ ծփիմս ընկղմեալ յանցանօք մեղաց, և այլն. փ

Դու ես Տէր աղբիւր կենաց. բղխեա ողորմութիւն. շնորհեա փրկիչ անձանց մերոց ըզ թողութիւն մեղաց մերոց. թ

Ի քեզն է Տէր աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք ըզ լոյս: Ձգեա զողորմութիւնս քո որք ճանաչեն ըզ քեզ. զարդարութիւնս քո որք ուղիղ են սրտիւք. շնորհեա փրկիչ անձանց. սղ

Որ աղբիւրդ ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց. ճանապարհ մոլորելոց, և հովիւ հօտևոր բանա փ

ւոր հօտի. փառաւորողացս առ քեզ քո լեր նաւահանգիստ. և տուր մեզ ծարաւեալցս ըղձաժամ քո քաղցրութեն՝ յանըմպանու յաղբերէդ։

---

ուր Ի տաճարի սրբութեան քում լուր տէր ձայնի իմում. և աղաչանաց իմոց ժամանեսցեն յականջս քո տէր։

աղ Լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առաջի նր, մտցէ յականջս նորա. և աղաչանք։

փ աղց Որ լուսաւորես տիեզերաց քրիստոս աստուած. լուսաւորեա զիմ ըղ խաւարային խորհուրդս, և ը կեցո։

փ ննջ Օրհնեալ ես տէր, և փառաւորեալ է քո անուն մարդասիրութիդ. զաղաչանս մեր քեզ մատուցանեմք, որ թագաւորդ ես յաւիտենից։

զնընջեցեալըսըն մեր արժանի արա-
ր ընդունելի ՚ի կեանըդ յաւի-
տենից .

Արտասուս ինձ շընորհեա ՚ի յա- Թ
պաշխարութիւն տէր . ըզ ՚ի լուացից
ըզմեղս ամենայն կենաց որպէս պոռ-
նիկն արտասուօք, եւ ըզ կեցո .

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան ող
իմում . լուացի զամ գիշեր ըզ մա-
հիճս իմ . եւ արտասուօք իմովք զան-
կողինս իմ թացի : ըզ ՚ի լուացից
ըզ մեղս .

Որ աղբիւրդ ես անսպառական Փ
քրիստոս աստուած . զմարմնաւոր
եւ զանձն իմ ՚ի մեղաց . բըժըշկեա
տէր բըղխմամբ արտասուաց , եւ
ըկեցո .

Ողորմեալ ձայնիւս խընդըրե- Թ
եա տէր . եւ մի դատապարտեր
ըզիս ՚ի յաւուրըն յայտնութեան
քո մարդասէր .

ադ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ. եւ մի դատապարտեր զիս.

փ Որ մոլորեցայ ի հօտէ քումմէ հովիւդ բարի. խնդրեա զիս ընդ մոլորեալս. Եւ արժանաւորեա խառնիլ ի հօտ քո քրիստոս, եւ ընկեցո՛։

---

Թագաւորք Մարտիրոսաց.

Թագաւոր յաւիտեան.

աձ Նահատակութեամբ սրբոց (այս անուն). աղաչեմք ըզքեզ. Թողութիւն շնորհեա յանցանաց մերոց. բարերար մարդասէր քրիստոս։

Մերձ է տէր առ այնոսիկ որք մաշ- աղ
եալ են սրտիւք . և զխոնարհս հոգ-
ւով կեցուցանէ։ Բազում նեղութիւնք
են արդարոց . յամէ փրկէ զնոսա տէր . և
պահէ զամ ոսկերս նոցա . և մի ի նո-
ցանէ ոչ կործանեսցի . Թողութիւն շնոր։

Որ յաղթօղ զօրութեամբ ի հանդէս փ
ճըգնաւո…րա…կա…ն . ա…նա…րա…ա
պահե…ցե…ր զխոստովանօղ վըկայս
քո քո տէր . տո…ւր մե…ղ զօդ-
նութի… ի նեղութե մերում .
բարեխօսութեամբ սըրբոց մարտիրո
սա…ց , և …ըկե…ցո .
Թագաւոր յաւիտեա… ն .

Զօրութի քո տէ…ր ա… ակ
րա… ի մե…ղ . և բարեխօսութե
սըրբոյն (այս անուն) . մի կորուսաներ
ըզ ը մեզ . ե …րըողորդ…ութի…ն
սա…ւրբ ողորմեա…ց մեզ .

Փըրկութի արդարոց ի տեառնէ աղ
է . վերակացու է նոցա ի ժամանակս
նեղութե . Օգնեսցէ նոցա տէր և

փրկեսցէ զնոսա․ ապրեցուսցէ ի մե-
ղաւորաց․ և կեցուսցէ զնոսա զի
յուսացան ի նա և բա․

փ Որք ըղտանջանս և ըղմահ վա-
սըն քո յանձն առին․ և հեղին
զարիւնս իւրեանց վասն անուանըդ
քո սրբոյ․ բարեխօսութեամբ սոցա
մի կորուսաներ ըզըմեզ․ Տէր․

բձ Բարեխօսութեամբ սրբոցն (ա...
անուն)․ պարգևեա մեզ Տէր․ ա-
նուն մահուն և բաժին ընդ հրաւիրեա-
լսն ի կոչումն արքայութեան
երկնից․

սղ Սքանչելի է Աստուած ի մէջ սրբոց իւրոց
Աստուած իսրայէլի․ Նա տացէ զօրութիւն
հաստատութեան ժողովրդեան իւրում․
օրհնեալ է Աստուած․ անունն մեր․

փ Մարտիրոսք երանեալք և փառա-
ւորեալք․ որք բազում տանջանօք
համբերեցիք․ դուք ըղձալիսն կենաց
ըղձեցեալ ունիք․ և առ քո վասըն
մեր բարեխօսեսցէք․

Գուսեմ քո աղբիւր կենաց. բղխ Եկ
խոսման ողորմութեան. շնորհեցեր սուրբ
բոյն (այս անուն). յաղթող ընդհանամա
կռութեան. հալածել զխաւարն և
լուսաւորել զանձինս մեր.

Ած փառաւորեալ է ի խորհուր- Աղ
դըս սրբոց իւրոց. մեծ և ահաւոր ի
վերայ ամենեցուն որք շուրջ են զնովաւ.
Տէր Ած զօրութեանց ո նմանի քեզ.
հզօր ես դու Տէր, և ճշմարտութիւն քո
շուրջ է զքեւ. շնորհեցեր սուրբ
բոյն (այս անուն). յաղթող ընդհանամա
կռութեան հալածել զխաւարն և
լուսաւորել.

Որ շնորհօք սբ հոգւոյն յաղթե- Փ
ցէք թշնամւոյն. երանեալ սբ վը-
կայք քո. վասն ձեր տօնողացս հայ-
ցեցէք յայն զթողութիւն մեղաց.

Որ պսակ էք պարծանաց ամ Փ
նաքինեաց. նախաշաւիղ և առաջ-
նորդ կենացն յաւիտենից. ով սբ
վըկայք. առ պսակիչն սըրբոց

և փառացն մեր բարեխօսեսցէք ։ շնորհս
լոյս ողորմութեան յանըսպառ աղբե-
րէն կենացըն յաւիտենից ։
գձ Ողջընդունութի՝ սրբոց (այս անուն).
գկ բարեխօս ունիմք առ քեզ քրիս-
տոս ։ և աղաչեմք սոքօք ։ շնոր-
հեա ընդթողութիւն յանցանաց մե-
րոց ։ և ՚ի կեանսըդ յաւիտենից
նորոգեա և կեցո ։
ող Լոյս ծագեաց արդարոց ։ ուղղոց
սրտից եղև ուրախութիւն ։
Ուրախ եղերուք արդարք ՚ի տր ։ և
խոստովան եղերուք յիշատակի սրբու-
թեան նորա ։ և աղաչեմք սո ։
գկ Պատուական է առաջի տն մահ
սբց իւրոց ։ ո տէր ես ծառայ քո եմ ։
ծառայ և որդի աղախնոյ քոյ ։ Հատեր
ըզկապանս իմ ։ քեզ մատուցից պատա-
րագ օրհնութեան , և զանուն տն կար-
դացից ։ և աղաչեմք սո ։
փ Հանդիսացեալք ՚ի մարտըս պատե-
րազմի յաղթօղ դըրօշուք սուրբք վե-

կայք · քանզի ճանապարհ հոր դեցիք ը մեզ յերկնային քաղաքն յերուսաղէմ · ընդ անմարմնոցն դասս փառաւորելով ընդերրորդութենն ։

Որք ՚ի խորանին սրբութեան եւ մե ծողովեալ օրհնել ընդ քերովբէս տ. ս. աղաչանօք սրբոցն (այս անուն). զպաղատանօս մեր մի անտես առնել · որ միայնդ ես բաղումողորմ Թագաւոր փառաց քրիստոս ։

Մերձ է տէր առ ամենայն որք կար դան առ նա. առ ամենայն որք կարդան առ նա ճշմարտութեամբ ։ Ո կամս երկիւղածաց իւրոց առնէ տէր · աղօ-թից նոցա լսէ, և կեցուցանէ ըզնոսա։ աղաչանօք սրբոցն (այս անուն). և այլ սրբոց մարտիրոս ։ ող

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսիցին ձայնք նոցա։ Ընդ ամ երկիր ել բարբառ նոցա. և մինչև ի ծագս աշխարհի ելին խօսք նոցա. ամենօրհնեալ սրբոց առաքելոցն։

փ Նահատակք և վկայք քրիստոսի աստուածոյ. ընդ համբուր տիեզերաց քարոզք փրկութեան. որք զանձինս ձեր մատուցիք պատարագ. և զենումն աստուծոյ հօր ի հօտ անուշից. ժողովելոց ի կատարեալ զյիշատակ անուան ձերոյ. բարեխօսեցէք առ տէր վասն քաւութեան մեղաց մ[illegible]ց ը[illegible]։

դկ Օ երեքսրբեան տէրութիւնդ քո միաբան աղաչեմք, ը[illegible]ր. ամենօրհնեալ սրբոցն (այս անուն). խնամել ի մեզ, և ըստ կե[illegible]ց։

Ուրախ լիցին ամենեան որք յու-սացեալ են ՚ի քեզ. յաւիտեան ցըն-ծասցեն. և բնակեսցիս դու ՚ի նոսա։ Պարծեսցին ՚ի քեզ սիրե-լիք անուան քո. զի օրհնեսցես դու զարդարն տէր. որպէս զինու հաճու-թեամբ քով պսակեցեր ըզնոսա. աղաչանօք. սղ

Տօնէ այսօր եկեղեցի սուրբ զյիշա-տակըս ձեր սուրբ ըզվերնակայք. որք զօրութեամբ սուրբ հոգւոյն վանե-ցիք ըզպատերազմ չարին. և ՚ի կամա-րըս լուսեղէնըս թագաւորեալք. օրհ-նեն սուրբ ըզերրորդութիւն։ փ

---

Սրբոյն Ստեփաննոսի.

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ըզծընդ ընդու-թեան. այսօրն սըրբոյն Ստե-փաննոսի նախավկային ... յին.

Բանին զի ...

կեղեցի քո Տէր. սուրբ
ընդ ը յաղթամանակ մարտ հեղ
ման արեան որ մ. ... ի
վերայս. ը մեծի անուանն,.
ն ը քո. յ տէր.

Բազում համարձակութի է սուրբ
առաքելի աստուծոյ ի ձեռըն հեղման
ուե արեան անն իւրոյ. Քանզի
յօժարութեամբ մատնեաց զանձն
իւր չարչարանաց և դառըն տանջանաց
վասըն մեծի անըւանն մնըն ն.

Քանզի արհամարհեր անարգ
եաց զանցաւոր ըղկեանս աշխարհիս
և փափագեաց յաւիտենական կենա
ցըն. և միշտ և հանապազ ուրախա-
նայ ընդ տեառըն իւրոյ. յանըս
պառ. յուրախ. ութինսն.
Քանըզի գոչէ. ... ե
կեղեցի քո Տէր. սուրբ ընդ
ը յաղթամանակ մարտ հեղման
արեան որ մ. ... ի վե

մարդոյ ընծայեցին անճառաբար . Այն ըստ
քո . մայ տէր :

Փառք Հօրն էականին, Որդւոյն միածնին, և ամենասուրբ Հոգւոյն ի վայելչէ : Փառք պատիւ և իշխանութիւն . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն : Երգմն : Յայնժամ շարժին երկինք և երկիր ի յանհնէ փառաց քանին տեառըն ամ սա աստուածոյ :

Այնժամ նըստուցանէ ընդ աջմէ խորմէ ըզ սիրելիս անուան խորոյ ի լուսեղէն խորանսն զուարթու րելով :

Այսօր զօրք հրեշտակաց 'ի յերկինս ուրախ :

Ալէլուք գիշերայինք տէրունական տօնից կարգաւ։
Ալէլուիա Ճրագալուցի Ծննդեան.

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Առաքեաց զբան իւր, և բժշկեաց զնոսա. և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։ Խոստովան եղիցին տն՝ ողորմութեանց նր, և սքանչելեաց նորա որդւոց մարդկան.

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

փ Իջցէ որպէս զանձրև ՚ի վերայ գեղման, որպ ցօղ, զի ցօղէ յերկիր։ Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին։

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Ալէլուք Ծննդեան տեառն Յիսուսի.

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Տէր հովուեսցէ զիս . և ինձ ինչ ած
ոչ պակասեսցի : Ի տեղւոջ դալարւոջ
անդ բնակեցոյց զիս . և առ ջուրս
հանգստեան սնոյց զիս :

Ալէլուիա : Իջցէ որպէս անձրև փ
ի վերայ գեղման . որպէս ցօղ զի ցօղէ
յերկիր : Ծագեսցի յաւուրս նորա
արդարութիւն . բազում խաղաղութիւն
մինչև կատարեսցի լուսին :

Փառք և երկրպագութիւն . այժմ
և միշտ : ալէլուիա , Եւ :

---

Զկնի ածնոյն տէրունական տօնի որ աձ
չինի՝ շարականս ասա :

Պսակք հրեշտակաց օրհնեն ըզ
քեզ քրիստոս ալէլուիա .
մարդկային ազգք սաղմոսեն
քեզ . ալէլուիա :

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Լուր դուստր և տես . խոնար- ակ
հեցո ունկն քո . մոռա զժողովուրդ
քո , և ըզտուն հօր քո . զի ցանկացաւ
թագաւոր գեղոյ քո . Սա ինքն է

տէր քո՝ երկիրպագցես նմա. և դուստր Ծուրոյ երկիրպագցէ նմա. և պատարագօք զերեսս նորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց։

Փ Ալէլուիա. Նա կարդասցէ առ իս, Հայր իմ ես դու. Աստուած ընդունօղ փրկութեան իմոյ. Եւ ես անդրանիկ արարից զնա. և բարձր քան զամենայն թագաւորս երկրի։

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ. ալէլուիա, Եւ այլն։

—

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

ԲՁ Իջցէ որպէս անձրև 'ի վերայ գեղման. որպէս ցօղ որ ցօղէ յերկիր։ Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն. և բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսինն։

Փ Ալէլուիա. Ծանոյց տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր. Յիշեաց ողորմութիւն իւրով զյակոբ. ճշմարտութիւն իւրով զտունն իսրայէլի. և տեսին

ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Փառք և երկրպագութիւն․ այժմ և միշտ․ ամէն։ Ալէլուիա։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Նա կարդասցէ առ իս՝ Հայր իմ ես դու․ Աստուած ընդունող փրկութեան իմոյ։ Ես անդրանիկ արարից զնա․ և բարձր քան զամենայն թագաւորս երկրի։ ՁԸ

Ալէլուիա։ Ընդ քեզ է սկիզբն աւուրն զօրութեան․ ի վայելչութեան սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։ Երդուաւ տէր և ոչ ևս զղջասցի․ թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի․ և տէր ընդ աջմէ քումմէ։ ՃԹ

Փառք և երկրպագութիւն․ այժմ և միշտ։ Ալէլուիա։

—

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Ցոյց տէր զփրկութիւն իւր․ առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր։ Յիշեաց ողորմութեան ՂԷ

իւրով զյակոբ · Ճշմարտութե՛ իւրով զտունն իսրայէլի · և տեսին ա̄մ ծագք երկրի զփրկութիւն ա̄յ մերոյ ։

փ Ալէ՛լուիա ։ Յիշեա՛ [ամծ] տէր զդաւիթ , և զա̄մ հեզութիւն նորա ։ Որպէ՛ս [ամծ] երդուաւ տեառն , և ուխտս եդ ա̄յ յակոբայ ։

Փառք և երկրպագութի · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ·

դկ Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան · 'ի վայելչութի սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ ։ Երդուաւ տէր և ոչ եւս զղջասցի · թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի · և տէր ընդ աջմէ քումմէ ։

փ Ալէլուիա ։ Տէ՛ր ասաց ցիս որդի իմ ես դու · և ես այսօր ծնայ զքեզ ։ Խնդրեա՛ յինէն , և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութի · և իշխանութի քեզ ընդ ա̄մ ծագս երկրի ։

Փա՛ռք և երկրպագութիւն · ա՛յժմ և միշտ ։ ալէլուիա ։

—

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։
Յիշեա՛ տէր զդաւիթ, և զամենայն դձ
հեզութիւն նորա ։ Որպէ՛ս երդ-
ուաւ տեառն, և ուխտս եդ աստուծոյ յակոբայ։
Ալէլուիա։ Տէ՛ր հովուեսցէ զիս. փ
և ինձ ինչ ոչ պակասեսցի։ Ի վայրի՛
դալարւոջ անդ բնակեցոյց զիս · և
առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։
Փառք և երկրպագութիւն · այժմ և
միշտ ։ ալէլուիա ։

—

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։
Տէ՛ր ասաց ցիս որդի իմ ես դու · դկ
և ես այսօր ծնայ զքեզ։ Խնդրեա՛
յինէն, և տաց քեզ զհեթանոսս ՚ի
ժառանգութիւն · և իշխանութիւն քեզ
ընդ ամենայն ծագս երկրի։
Ալէլուիա։ Լո՛ւր դուստր և տե՛ս, փ
խոնարհեցո՛ զունկն քո · մոռա՛ զժո-
ղովուրդ քո և զտուն հօր քոյ · զի

ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո։
Նա ի՛նքն է տէր քո՝ երկիրպագցես
նմա. և դուստր Ծուրայ երկիրպագ-
ցէ նմա. և պատարագօք զերեսս սորա
պաշտեսցեն մեծամեծք ՚ի ժողովրդոց։
Փառք և երկրպագութիւն. այժմ և
միշտ. ալէլուիա, եւլ։

Ալէլուիա ՚ի տօնի քառասնօրեայ գալստեանն փ.ի
այ մերոյ ՚ի տաճարն։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Օրհնեա՛լ եկեալ յանուն Տն.
օրհնեալ որ գալոց ես։ Տէր ա՛ծ մեր
երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրա-
խութեան կանխաւ մինչև յանկիւնս
սեղանոյ։

Փ Ալէլուիա. Տէ՛ր ՚ի տաճար սուրբ
իւրում Տր յերկինս յաթոռ իւրում
Աչք նորա ՚ի տնանկս հային. արտևա-
նունք նր քննեն զորդիս մարդկա՛ն։
Փառք և երկրպագութիւն. այժմ և
միշտ. ալէլուիա։

Ալէլուիա ․ ալէլուիա ․ ալէ՛լուիա ։

Ողորմութե՛ք տեառն լի՛ եղև եր- աձ
կիր ․ և բանիւ տեառն երկինք հաս-
տա՛տեցան ։ Եւ հոգւո՛վ բերանոյ ն՟ր
զա՟մ զօրութի՛ւնք նոցա՛ ։

Ալէլուիա ։ Յարեա՛ւ ա՟ծ և ցրուե- փ
ցան ա՟մ թշնամի՛ք նորա ։ Փախեա՛ն
ատելիք նորա յերեսա՛ց նորա՛ ։

Փա՛ռք և երկրպագութի՟ ․ այժմ և
միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա ․ ալէլուիա ․ ալէ՛լուիա ։

Ծա՛փս հարէք ա՟մ հեթանոսք ․ ակ
աղաղակեցէք առ ա՟ծ ՚ի ձայն ցնծու-
թեան ։ Տէր՛ բարձրեալ և ահար-
կու ․ թագաւոր մեծ ՚ի վ՟ր ա՟մ երկրի ։

Ալէլուիա ։ Հաճեցա՛ր տէր ընդ փ
երկիր քո ․ և դարձուցեր զգերութի՟ն
յակոբայ ։ Թողե՛ր զանիրաւութիւն
ժողովրդեան քոյ ․ և ծածկեցեր զա՟մ
մեղ՟ս նոցա՛ ։

Փա՛ռք և երկրպագութի՟ ․ այժմ և
միշտ ։ ալէլուիա ։

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։

բձ Յարեաւ մ՛ ած · և ցրուեցան ամ
թշնամիք նորա ։ Փախեաւն ատելիք
նորա յերեսաց նորա ։

փ Ալէլուիա ։ Տէր թագաւորեաց · զվայելչութի զգեցաւ · զգեցաւ տէր զօրութի ընդ մէջ իւր էած ·

Փառք և երկրպագութի · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։

բկ Հաճեցար տէր ընդ երկիր քո · և
դարձուցեր զգերութիւնն յակոբայ ։
Թողեր զանիրաւութի ժողովրդեան
քո · և ծածկեցեր զամ մեղս նոցա ։

փ Ալէլուիա ։ Օրհնեցէք մանկունք զտէր · և օրհնեցէք զանուն տեառն ։ Եղիցի անուն տեառն օրհնեալ · յայսմհետէ մինչև յաւիտեան ։

Փառք և երկրպագութի · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Տէր թագաւորեաց. զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած. ղձ

Ալէլուիա. Գովեա երուսաղէմ զՏէր. և օրհնեա զԱծ քո սիոն. Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ի քեզ. փ

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ. ալէլուիա.

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմ հետէ մինչև յաւիտեան. դկ

Ալէլուիա. Կենդանի է Տէր, և օրհնեալ է Ած. և բարձր եղիցի Ած փրկութեան իմոյ. Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև. փ

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ. ալէլուիա.

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

դձ Գովեա Երուսաղէմ զտէր. և օրհնեա զած քո սիոն. Զի նա զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ.

փ Ալէլուիա. Ողորմութեամբ տն լի եղև երկիր. և բանիւ տեառն երկինք հաստատեցան. Եւ հոգւովն բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա.

Փառք և երկրպագութի. այժմ և միշտ. ալէլուիա.

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

դկ Կենդանի է տէր և օրհնեալ է ած. և բարձր եղիցի ած փրկութեան իմոյ. Աստուած է որ խնդրէ ըզ վրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև.

փ Ալէլուիա. Ծափս հարէք ամ հեթանոսք. աղաղակեցէք առ ած ՚ի ձայն ցնծութն. Տէր բարձրեալ և ահարկու թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի.

Փա՛ռք և երկրպագութի̄ն. ա՛յժմ և միշտ։ ալէլուիա։

Ալէլուք Համբարձմանն Քրիստոսի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ Թագաւո՛ր փառաց։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց. տէր հզօր զօրութե̄ իւրով. տէր կարօղ 'ի պատե՛րազմի։ աձ

Ալէլուիա։ Կա՛ռք այ̄ բիւրապատիկք. հազարք ուղղիչք. և տէր 'ի նոսա 'ի սինէ սրբութեա՛ն իւրոյ։ Ե՛լ 'ի բարձունս և գերեաց զգերութի̄. էառ աւար. բաշխեաց պարգևս, և ետ որդւո՛ց մարդկա՛ն։ փ

Փա՛ռք և երկրպագութի̄ն. ա՛յժմ և միշտ։ ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

Համբարձա՛ւ ա̄ծ օրհնութե̄. և ակ

տէր մեր ձայնիւ փողոյ։ Սաղմո՛ս ասացէք այ մերոյ. սաղմոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէ՛ք։

Փ Ալէլուիա։ Ո՛ր հովուե՛սդ Իսրայէլի. նայեա՛ց որ առաջնորդես որ̃պ խաշին յովսեփու։ Որ նըստի՛սդ ՚ի քրովբէս՝ յայտնեա՛ց առաջի եփրեմի բենիամինի և մանասէի՛։

Փա՛ռք և երկրպագութի՛ւն. այժմ և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

բժ Կա՛՛ռք այ բիւրապատիկք. հազարք ուղղինչք. և տէր ՚ի նոսա ՚ի սինէ սրբութեա՛ն իւրոյ։ Ե՛՛լ ՚ի բարձունս և գերեաց զգերութի՛ւն. էառ առաբաշխեաց պարգևս և ետ որդւո՛ց մարդկա՛ն։

Փ Ալէլուիա։ Ո՛ դնէ յամպս ըզգնացս իւր. և շրջի նա ՚ի վերայ թևո՛ց հողմոց։ Խոստովանութի՛ւն և մեծ վայելչութիւն զգեցար. արկեր զլոյս որ̃պ զօթոց. ձգեցեր զերկինս

որպէս խորան . և արկեր 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա ։

Փառք և երկրպագութիւն . այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

Որ հովուե՛սդ Իսրայէլի . նայեաց որ առաջնորդես ոպ խաշին զՅովսէփ ։ ըկ
Որ նստի՛սդ 'ի քրովբէս՝ յայտնեաց առաջի եփրեմի բենիամինի և մանասէի ։

Ալէլուիա ։ Մե՛ծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո . և մինչև յամպս ճշմարտութիւն քո ։ Բարձրեա՛լ ես դու յերկինս ած . և յամ երկրի են փառըք քո ։ փ

Փառք և երկրպագութիւն . այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

Ո՛ դնէ յամպս զգնացս իւր . և չոգի նա 'ի վր թևոց հողմոց ։ Խոստովանութիւն և զմեծ վայելչութիւն զգեցար . արկեր զլոյս որպ զօթոց . գձ

ձգեցեր զերկինս որպէս խորան . եւ ար-
կեր ՚ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։

Փ . Ալէլուիա։ Տէր խոնարհեցո զեր-
կինս եւ էջ . մերձեայց ՚ի լերինս եւ
ծխեսցին։ Փայլեա զփայլատակունս
քո եւ խռովեա զնոսա . առաքեա ըզ-
նետս քո , եւ ցրուեա ըզնոսա։

Փառք եւ երկրպագութիւն . այժմ
եւ միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա։

ԳԿ Աստուած եղեւ մինչեւ յերկինս ողոր-
մութիւն քո . եւ մինչեւ յամպս ճշմարտութիւն
քո։ Բարձրեալ ես դու յերկինս Աստուած .
եւ յամենայն երկրի են փառք քո։

Փ Ալէլուիա։ Խոնարհեցոյց զեր-
կինս եւ էջ . եւ մէգ ՚ի ներքոյ ոտից նորա։
Ել ՚ի քրովբէս եւ թռեաւ . սլացաւ
նա ՚ի թեւս հողմոց։

Փառք եւ երկրպագութիւն . այժմ
եւ միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա։

Յերեսա՛ց նո՛ր ելցեն հարուածք · դձ
և զհետ շաւղաց նորա երթիցեն մե-
ծամեծք ՚ի թըռչնոց։ Երի՛նք հա-
լեսցին և անտառք վառնեսցին · Ճա-
նապարհք որք ՚ի սկզբանէն էին կու-
րասցին · և ՚ի նմանէ դողասցի ամե-
նայն երկիր ·

Ալէլուիա։ Համբարձէ՛ք իշխանք փ
դրունս ձեր ՚ի վեր · համբարձցին
դրունք յաւիտենից և մտցէ Թագա-
ւո՛ր փառաց։ Ո՛վ է սա Թագաւոր
փառաց տէր հզօր զօրութեանց · սա
ինքն է Թագաւո՛ր փառա՛ց։

Փառք և երկրպագութի՜ · այժմ
և միշտ։ ալէլուիա ·

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա։

Խոնարհեցո՛յց զերկինս և էջ · և դէ
մէգ ՚ի ներքոյ ոտից նորա։ Ել ՚ի
քրովբէս և թռեաւ · սլացաւ նա ՚ի
թևս հողմոց ·

Ալէլուիա։ Համբարձա՛ւ ած օրհ- փ
նութբ · և տէր մեր ձայնիւ փողոյ ·

Սաղմոս ասացէք ո՛յ մերում․ սաղմոս ասացէ՛ք Թագաւորին մերում․ սաղմոս ասացէք։

Փա՛ռք և երկրպագութիւն․ ա՛յժմ և միշտ․ ալէլուիա։

Ալէլուք Հոգւոյն սրբոյ Գալստեանն․

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

ա՛ձ Յա՛նկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս բազումս, քաղցր է նա քան զմեղր խորիսխ․ Քա՛նզի ծառայ քո պահեսցէ զայս, ՚ի պահել նմա զհատուցումն բազում։

փ Ալէլուիա․ Թևե՛ք աղաւնոյ արծաթապատ․ և թիկնամէջ նորա ՚ի դո՛յն ոսկւոյ․ Ի դուամարե՛լ երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նորա․ ձիւնասցին ՚ի Սաղմո՛ն։

Փա՛ռք և երկրպագութիւն․ ա՛յժմ և միշտ․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Զսի՛րտ սուրբ հաստատեա՛ յիս ա՜ծ . և զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի՞ իմում: Մի՛ ընկենուր զիս տ՜ր յերեսաց քոց . և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէ՛ն : ակ

Ալէլուիա: Գտի՛ զդաւիթ ծա- փ
ռայ իմ . և իւղով սրբով իմով օծի՞ զնա : Ձեռն իմ ընկալցի զնա . և բազուկ իմ զօրացուսցէ՞ զնա՛ :

Փա՛ռք և երկրպագութի՛ն . այժմ և միշտ : ալէլուիա :

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Թևէ՛ք աղաւնոյ արծաթապատ . բձ
և թիկնամէջ նորա ՚ի գոյն ոսկւոյ : Ի գումարե՛լ երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նորա . ձիւնասցին ՚ի՞ սաղմո՛ն :

Ալէլուիա : Առաքե՜ս զհոգի քո և փ
ստանաս զնոսա և նորոգես զերեսս երկրի : Եղիցի՛ն փառք տեառն յաւիտեան . և տէր ուրախ եղիցի յարարածս իւր :

Փառք և երկրպագութիւն · այժմ
և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։
բկ Գտի զԴաւիթ ծառայ իմ · և
իւղով սրբով իմով օծի զնա ։ Զի ձեռն
իմ ընկալցի զնա · և բազուկ իմ զօրա-
ցուսցէ զնա ։
փ Ալէլուիա ։ Յայտնութիւն բա-
նից քոց լուսաւոր է · և իմաստուն
առնէ զտղայս ։ Զբերան իմ
բացի և առի զհոգի · ի պատուիրա-
նըս քո փափագէի անձն իմ ։
Փառք և երկրպագութիւն · այժմ
և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։
գճ Առաքեսցես զհոգի քո և ստանաս
զնոսա · և նորոգեսցես զերեսս երկրի ։
Եղիցի փառք Տեառն յաւիտեան · և Տէր ուրախ եղիցի յարա-
րածս իւր ։

Ալէլուիա. Հոգի՛ քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։ Վասն անուա՛ն քո Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։ փ

Փա՛ռք և երկրպագութիւն. այ՛ժմ և միշտ. ալէլուիա.

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Զբերա՛ն իմ բացի և առի ըզհոգի. ՚ի պատուիրանս քո փափագեցայ անձն իմ։ Նայեա՛ց առ իս և ողորմեա՛ ինձ ըստ իրաւունս սիրողաց անուան քո՛։ դկ

Ալէլուիա։ Ի սաստէ՛ քումմէ Տէր և ՚ի շնչել հոգւոյ բարկութեան քո. Առաքեաց ՚ի բարձանց՝ և ընկալաւ զիս. ընկալաւ զիս ՚ի ջրոց բազմա՛ց։ փ

Փա՛ռք և երկրպագութիւն. այ՛ժմ և միշտ. ալէլուիա.

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

դձ Որպէս եւ՛ղ զի իջանէ 'ի գլուխ
եւ 'ի մօրուսն Ահարօնի. եւ 'ի մօրուացն
իջանէ 'ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցօ՛ղ զի ցօղի 'ի Հերմօնէ 'ի
վերայ լերին Սիօնի։

փ Ալէլուիա։ Ի վայրի՛ դալարուոջ
անդ բնակեցոյց զիս. եւ առ ջուրս
հանգստեան սնոյց զիս։ Դարձո՛յց
զանձն իմ առ իս. եւ առաջնորդեաց
ինձ 'ի ճանապարհս արդարութեան
վասն անուան իւրոյ։

Փա՛ռք եւ երկրպագութի՛ւն. այժմ
եւ միշտ. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

դկ Ի սաստէ՛ քումմէ տէր եւ 'ի շնչել
հոգւո՛յ բարկութեան քոյ։ Առաքեա՛ց
'ի բարձանց, եւ ընկալաւ զիս. ընկա-
լաւ զիս 'ի ջրոց բազմա՛ց։

փ Ալէլուիա։ Օ՛ սիրտ սուրբ հաս-
տատեա՛ յիս ԱԾ. եւ զհոգի ուղիղ
նորոգեա՛ 'ի փորի՛ իմում։ Մի՛ ըն-
կենուր զիս տէր յերեսաց քոց. եւ

զհոգի քո սուրբ մի՛ հանե՛ր յինէ՛ն ։

Փա՛ռք և երկրպագութի · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

Ալէլուք խաչի ։

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։

Ցո՛ւպ քո և գաւազան, նոքա մխի- աձ
թարեցին զիս ։ Պատրա՛ստ արարեր
առաջի իմ զսեղան · ա՛յն յանդիման
նեղչա՛ց իմո՛ց ։

Ալէլուիա ։ Ետո՛ւր երկիւղածաց փ
քոց նշան · զի ապրեսցին յերեսաց
աղեղան ։ Որպէ՛ս փրկեսցին սիրելիք
քո · կեցո՛ աջով քո և լո՛ւր մե՛զ ։

Փա՛ռք և երկրպագութի · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։

Նե՛տք քո սրեալ են հզօր · և ժո- ակ
ղովուրդք ՚ի ներքոյ քո անկցին ·
՚ի սիրտս թշնամեաց թագաւորի ։
Աթո՛ռ քո ած յաւիտեանս յաւի-

տենից . գաւազան ուղղութեան , գա-
ւազան արքայութեան քո .

փ Ալէլուիա ։ Տէ՛ր զօրութեան ծա-
ռայի քո . կեցո զորդի աղախնոյ քո .
և արա առ իս զնշան բարութեան ։ Տես-
ցե՛ն ատելիք իմ և ամաչեսցեն . զի
դու տէր օգնեցեր ինձ և մխիթա-
րեցեր զիս ։

Փառք և երկրպագութիւն . այժմ
և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

բձ Ետո՛ւր երկիւղածաց քոց նշան .
զի ապրեսցին յերեսաց աղեղան ։ Որ-
պէ՛ս փրկեսցին սիրելիք քո . կեցո ա-
ջով քո և լուր մեզ ։

փ Ալէլուիա ։ Դո՛ւ պատրաստեցեր
զուղղութիւն և զիրաւունս . և զար-
դարութիւն յակոբայ դու արարեր ։
Բա՛րձր արարէք զտէր ած մեր . եր-
կիրպագէք պատուանդանի ոտից նր
զի սուրբ է ։

Փառք և երկրպագութիւն . այժմ
և միշտ ։ ալէլուիա ։

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ·

Տուր զօրութիւն ծառայի քոյ · կեցո՛ զորդի աղախնոյ քոյ · և արա՛ ինձ նշան բարութեան ։ Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու Տէր օգներ ինձ՝ և մխիթարեցեր զիս ։ բկ

Ալէլուիա ։ Ասա՛ց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ · մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։ Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ՚ի Սիոնէ · և տիրեսցես դու ՚ի մէջ թշնամեաց քոց ։ փ

Փառք և երկրպագութիւն · այժմ և միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ։

Դու Տէր պատրաստեցեր զուղղութիւն և զիրաւունս · և զարդարութիւն Յակոբայ դու արարեր ։ Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր · երկիրպագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է ։ գձ

Ալէլուիա ։ Յայտնեսցեն երկինք զվայելչութիւն փառաց նորա · և փ

օրհնութեամբ նորա լցան տիեզերք. Ճառագայթք որք ի լուսոյ հատան ի նմանէ. և եղջիւրք ի ձեռին նորա դտան. և անդ հաստատեցաւ զօրութիւն փառաց նորա.

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ։ ալէլուիա.

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

ճթ Ասացի տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ի սիօնէ. և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց.

դ Ալէլուիա։ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ գինոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա.

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Յայտնեսցեն երկինք զմայելչու- դձ
թիւն փառաց նորա . և օրհնութե
նդ լցան տիեզերք : Ծառագայթք
որպէս ՚ի լուսոյ հատան ՚ի նմանէ . և
եղջիւրք ՚ի ձեռին նորա գտան . և
անդ հաստատեցաւ զօրութիւն փա-
ռաց նորա :

Ալէլուիա : Ցուպ քո և գաւա- փ
զան, նոքա մխիթարեսցեն զիս : Պատ-
րաստ արարեր առաջի իմ զսեղան .
ակն յանդիման նեղչաց իմոց :

Փառք և երկրպագութի . այժմ
և միշտ . ալէլուիա :

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց դկ
քոց . և ետուր ուրախութի սրտից
մերոց : Ի պտղոյ ցորենոյ գինոյ և
ձիթոյ իւրեանց լցուցեր ըզնոսա :

Ալէլուիա : Նետք քո սրեալ են փ
հզօր . և ժողովուրդք ՚ի ներքոյ քո
անկցին . ՚ի սիրտս թշնամեաց թա-
գաւորի : Աթոռ քո ած յաւիտեանս
յաւիտենից . գաւազան ուղղութե,

գաւազան արքայութեան քո .

Փառք և երկրպագութի՛ւն . այժմ
և միշտ : ալէլուիա .

Աւերուք Եկեղեցւոյ .

Ալէլուիա : ալէլուիա . ալէլուիա .
աձ Լըսել ինձ զձայն օրհնութե քո .
և պատմել զամ սքանչելիս քո . Տէր
սիրեցի զվայելչութիւն տան քո . և
զտեղի յարկի փառաց քոց .
փ Ալէլուիա : Խորանի զոր ընտրեցեր
և ընկալար . և բնակեսցեն ՚ի գաւի-
թըս քո : Լցցուք մեք ՚ի բարութենէ
տան քո . սուրբ է տաճար քո սքան-
չելի արդարութեամբ .

Փառք և երկրպագութի՛ւն . այժմ
և միշտ : ալէլուիա .

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա .
ակ Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ .
՚ի քաղաքի այ մերոյ ՚ի լերան սրբ նր .
Հաստատարմատ ցնծութ ցնծացէ ամ

երկիր․ լերինք սիօնի՝ կողմանք հիւսի-
սոյ՝ ի քաղաքս թագաւորին մեծի։

Ալէլուիա․ Հիմունք նորա ի լերինս սուրբս նորա․ սիրէ Տէր ըզ-դրունս սիօնի առաւել քան զա՛մ յարկսն յակոբայ․ Փառաւորեա՛լ են խօսեցաւ վասն քո․ ահաւասիկ քա-ղաքդ աստուծոյ։ Ձ

Փա՛ռք և երկրպագութի՛ւն․ այժմ և միշտ․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Երանի՛ զոր ընտրեցեր և ընկա-լար․ և բնակեսցին ի գաւիթս քո։ Լցցո՛ւք մեք ի բարութեան տան քո․ սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեա՛մբ։ ԿԴ

Ալէլուիա․ Գո՛վ աներ յաւիտե-ան կաս․ և յիշատակ քո ազգէ մինչե-յազգս․ Գո՛վ յարուցեալ զթագաւո ի վերայ օրհնի․ ժամանակ զթագաւո նորա հասեալ է ժամ։ Փ

Փա՛ռք և երկրպագութի՛ւն․ այժմ և միշտ․ ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

բկ Հիմունք նորա ՚ի լերինս սուրբս նորա. սիրէ Տէր զդրունս Սիոնի առաւել քան զամ յարկսն Յակոբայ։ Փառաւորեալն խօսեցաւ վասն քոյ ահաւադիկ քաղաքդ Աստուծոյ.

փ Ալէլուիա։ Այսօր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։ Ի տեառնէ եղև այս. և է սքանչելի առաջի աչաց մերոց։ Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

դձ Դու Տէր յաւիտեան կաս. և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։ Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ Սիոնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

փ Ալէլուիա։ Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։ Զի լուար զբանս բերանոյ

իմոյ. երկիրպագից ՚ի տաճար սուրբ
քո. և խոստովան եղէց անուան քում
վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։
Փառք և երկրպագութիւն. այժմ
և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Այսօր է զոր արար Տէր. եկայք գկ
ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի
սմա։ Ի տեառնէ եղև այս. և է սքան
չելի առաջի աչաց մերոց։

Ալէլուիա։ Տէր ով կացցէ ՚ի խո- փ
րանի քում. կամ ով բնակեսցի ՚ի
լերին սրբ. քո։ Որ գնայ անբիծ.
գործէ զարդարութիւն. և խօսի զճըշ-
մարտութիւն ՚ի սրտի իւրում։

Փառք և երկրպագութիւն. այժմ
և միշտ. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ուրախ եղէ ես որք ասէին ցիս, գձ
՚ի տուն Տն երթիցուք մեք. Կա-

եա՛լ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։

փ Ալէլուիա։ Լըսե՛լ ինձ զձայն օրհնութեն քոյ. և պատմել զա̃մ սքան-չելիս քո։ Տէ՛ր սիրեցի զվայելչութի̃ տան քոյ. և զտեղի յարկի փառաց քոց։

Փառք և երկրպագութի̃ն. այժմ և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

դկ Տէ՛ր ո՛վ կացցէ 'ի խորանի քում. կամ ո՛վ բնակեսցի 'ի լեառն սբ քո։ Ո՛ր գնայ անբիծ. գործէ զարդա-րութիւն. և խօսի զճշմարտութի̃ 'ի սրտի իւրում։

փ Ալէլուիա։ Մե՛ծ է՛ տէր և օրհ-նեալ է յոյժ 'ի քաղաք ա̃յ մերոյ 'ի լեառն սուրբ նորա։ Հաստարմա ցընծութե̃ ցնծասցէ ա̃մ երկիր. Լե-րինք սիոնի՝ կողմանք հիւսիսոյ՝ 'ի քաղաք թագաւորին մեծի։

Փառք և երկրպագութի̃ն. այժմ և միշտ։ ալէլուիա։

Ալէլուիա 'ի տօնի Հրեշտակապետաց։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ո՛ արար զհրեշտակս իւր յոգիս, և ըզպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ. Հաստատեաց զերկիր 'ի վերայ հաստատութեան իւրոյ. զի մի սասանեսցի յաւիտեան։

Ալէլուիա։ Օրհնեցէք զտէր յերկինս. օրհնեցէք զնա 'ի բարձունս։ Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա։ Փ

Փառք և երկրպագութի. այժմ և միշտ։ ալէլուիա։

Գոհաք հրեշտակաց օրհնեն ըզքեզ քրիստոս ալէլուիա. մարդկան ազգք սաղմոսեն քեզ. ալէլուիա։

Դարձեալ։

Երկինք և երկիր գոհանան ըզքեն ամ. արարածք ամ քեզ երկիր պագանեն. և հրեշտակք 'ի բարձունս աղաղակեն և ասեն. օրհնեալ դու Թ

ստեղծեր , մի կորուսաներ ։

աղ Երկինք երկնից , ջուրք որ ՚ի վե-
րոյ քան զերկինս . օրհնեցէք զանու-
նըն տեառն ։

Զի նա ասաց . և եղեն , հրա-
մայեաց և հաստատեցան . և հրեշ-
տակք ՚ի բար ։

փ Երկինք և երկիր համապատ ըն-
քեզ գովեն . Թագաւոր փառաց .
սերովբէք և քերովբէք ՚ի խոնարհ
ունելով ընդդէմս իւրեանց . և
միաձայն բարբառով աղաղակեն և
ասեն . սուրբ . սուրբ . սուրբ . տէր
զօրութեանց ։

Ալէլուիա Ղազարու յարութեան .

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

աձ Բարձր առնեմ զքեզ տէր , զի ըն-
կալար զիս . և ոչ ուրախ արարեր ըղ
թշնամին իմ յիս ։ Տէր ած իմ կար-
դացի առ քեզ և բժշկեցեր զիս . տէր
հաներ ՚ի դժոխոց զանձն իմ . փրկե-

ցեր զիս յայնցանէ․ որք իջանեն ՚ի գո՞ւբ։

Ալէլուիա։ Եհա՛ն զիս ՚ի գբոյ տառապանաց․ ՚ի կաւոյ և ՚ի տղմոյ։ Հաստատեա՛ց ՚ի վերայ վիմի զոտս իմ․ և ուղղեաց զգնա՛ցս իմ։ փ

Փա՛ռք և երկրպագութի՛ւն․ այժմ և միշտ։ ալէլուիա։

Ալէլուիա Ծաղկազարդին ողորմեան։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Տէ՛ր ած մեր երևեցաւ մեզ․ արարէ՛ք տօնս ուրախութե՛ն կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։ Ա՛ծ իմ ես դու, և խոստովան եղէց քեզ․ ած իմ ես դու՝ և բարձր արարի՛ց զքե՛զ։ ալ

Ալէլուիա։ Լերի՛նք ցնծասցեն առաջի տեառն, զի գայ և հասեալ է տէր ՚ի դատե՛լ զերկիր։ Դատէ՛ զաշխարհս արդարութե՛ամբ․ և զժողովուրդս իւր ուղղութե՛ամբ։ փ

Փա՛ռք և երկրպագութի՛ւն․ այժմ և միշտ։ ալէլուիա։

Ալէլուք աւուրց Աւագ շաբաթուն։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

ԲՀ Զի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան։ Կարգեաց զնոսա յաւիտեան. սահման եդ որք ոչ անցանեն։

Փ Ալէլուիա։ Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա կորընչին. և դու կաս և մնաս յաւիտեան։

Փառք և երկրպագութիւն. այժմ և միշտ։ ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

ԳՀ Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։ Լուր դուստր և տես. խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո։

Փ Ալէլուիա։ Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. և զընկերս նորա տարցին նմա։ Ածցին ցըն-

ծութեամբ և ուրախութեամբ . և տարցին ՚ի տաճար թագաւորի . և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։

Փառք և երկրպագութիւն . այժմ և միշտ . ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

Որ ուտէր զհաց իմ . յաճախեաց առնել ինձ զխաբէութիւն։ Այլ դու տէր ողորմեա ինձ . և կանգնեա զիս . և ես հատուցից նոցա ։ դշ

Ալէլուիա ։ Խորհեցան և խօսեցան զչարութիւն . և զամբարշտութիւն ՚ի բարձունս խորհեցան ։ Եդին յերկինս զբերանս իւրեանց . և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ ։ փ

Փառք և երկրպագութիւն . այժմ և միշտ . ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ . և շուրջ եղէց զսեղանովդ քո տէր։ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո . և եշ

զտեղի յարկի փառաց քոց։

փ Ալէլուիա։ Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց։ Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Փառք և երկրպագութիւն, այժմ և միշտ։ Ալէլուիա։

---

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

ուր Զարթեաւ աղեղն քո, զնետս կապարճից քոց արբեցուցեր, զգետս ցրուեցեր, զերկիր դողացուցեր ի սաստկութենէ անձրևի, որք անցանեն ընդ սա։ Անդունդք աղաղակեցին մեծապէս, լոյս փայլման արեգականն արգելաւ, և ծագումն լուսնին դադարեցաւ։

փ Ալէլուիա։ Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։ Աղաղակեցի առ տէր զօր հանապազ, և համբարձի առ քեզ ըզձեռս իմ։

Փառք և երկրպագութիւն · այժմ և միշտ : ալէլուիա :

—

Ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա :

Եդի՛ն զիս 'ի գուբ ներքնումն · շաբ
'ի խաւարի և 'ի ստուերս մահու :
Յի՛ս հաստատեցաւ սրտմտութիւն քո ·
զա̅մ զբօսանս քո ածե՛ր 'ի վե՛րայ իմ :

Ալէլուիա : Եղէ՛ ես որպէս մարդ փ
առանց օգնականի · և 'ի մեռեալս
ազատ : Որպէ՛ս վիրաւորս որք ննջեն
'ի գերե՛զմանի :

Փա՛ռք և երկրպագութիւն · այժմ
և միշտ : ալէլուիա :

Յաջղ օրէնաչէ է այս :

Ի՛նքն 'ի գերեզմանի դընաց և 'ի
տապանի արքնեցաւ : Զա՛ զօրա-
ցա՛ն նմա խինձք հեղեղատի · և ըղձեա
նորա ա̅մ մարդ դընացէ՛ :

Փա՛ռք և երկրպագութիւն · այժմ
և միշտ : ալէլուիա :

Աւետիք Պայծառակերպութեանն Քրիստոսի , որ ասի Վարդավառ ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

ձը Քո են երկինք , և քո է երկիր . զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր ։ Զհիւսիս և զհարաւ դու արարեր . Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն ։

ղդ Ալէլուիա ։ Բարձրութիւնք լերանց նորա են . նորա է ծով և նա արար զնա . և զցամաք ձեռք նորա ստեղծին ։ Եկայք երկրպագեսցուք նմա . անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ ։

Փառք և երկրպագութիւն . այժմ և միշտ . ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։

ղը Բարձրութիւնք լերանց նորա են . նորա է ծով . և նա արար զնա . և զցամաք ձեռք նորա ստեղծին ։ Մովսէս և Ահարոն երիցունք նորա . սամուէլ ընդ այնոսիկ որք կարդան զանուն նորա ։

Ալէլուիա ։ Լե՛րի՛նք ցնծաս- փ
ցեն առաջի տեառն . զի գայ . եւ հաս-
եալ է տէր ՚ի դատե՛լ զերկիր ։ Դա՛տէ՛ զաշխարհս արդարութեամբ . եւ
զժողովուրդս իւր ուղղութեա՛մբ ։

Փա՛ռք եւ երկրպագութի՛ն . այժմ
եւ միշտ ։ ալէլուիա ։

---

Ալէլուիա . ալէլուիա . ալէ՛լուիա ։

Ի ձե՛ռս նորա են ա̃մ տիեզերք երկ գՂ
րի . եւ բարձրութիւնք լերանց նորա՛
են ։ Նորա՛ է ծով եւ նա՛ արար զնա .
եւ զցամաք ձեռք նորա ստեղծի՛ն ։

Ալէլուիա ։ Լերի՛նք որպէս մոմ փ
հալեսցին յերեսաց տեառն . յերե-
սաց տեառն ա̃մ երկրի ։ Պատմեսցե՛ն
երկինք զարդարութիւն նորա . եւ
տեսցեն ամենայն ժողովուրդք զփա-
ռս նորա՛ ։

Փա՛ռք եւ երկրպագութի՛ն . այժմ
եւ միշտ ։ ալէլուիա ։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտու ժամուն․ որ կատարի ՚ի դէմս որդւոյն Աստուծոյ․ որ երեւեցաւ իւղաբերիցն։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով․ ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, եւ ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեաց տէր ՚ի ծառայս քո եւ ՚ի գործս ձեռաց քոց, եւ առաջնորդեա որդւոց նոցա․ եղիցի լոյս տեառն Աստուծոյ ՚ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ՚ի մեզ տէր․ եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն։

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ․ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Օրհնութիւն երից մանկանցն Դանիէլի ։

Օրհնեալ ես տէր ա՟ծ հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան ։

Զիրաւունս անցուցեր զայս ա՟մ ընդ մեզ. արդար ես դու տէր, և ա՟մ գործք քո ճշմարիտ են ։

Ճանապարհք քո ուղիղ են, և ա՟մ դատաստանք քո արդար են ։

Դատաստան արդարութե՟ ածեր ՚ի վերայ մեր ըստ ա՟մի, զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր և քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի ։

Արդարու՟բ և յիրաւի ածեր զայս ա՟մ ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց ։

Անօրինեցաք և յանցեաք ապստամբ լինել ՚ի քէն, մեղաք յա՟մի և պատուիրանաց քոց մեք ո՛չ անսացաք ։

Ոչ պահեցաք և ո՛չ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ, զի զբարիս գտցուք մեք ՚ի քէն ։

Արդ՝ զա՟մ զոր արարեր և զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր, արդար դատաստանաւ արարեր ։

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց խստաց և ապստամբողաց։

Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զա̄մ երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ՝ ո՛չ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից։

Բայց մի՛ մատներ զմեզ իսպառ վ̄ս անուան քո, մի՛ ցրեր զուխտս քո, և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ։

Վասն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քո, և իսրայէլի սրբոյ քո։

Խոստացար նոցա և ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութե̄ և որպէս զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ տ̄ր՝ նուաղեցաք մեք քան զա̄մ ազգս, և եմք տառապեալ յա̄մ երկրի այսօր վասն մեղաց մերոց։

Ո՛չ գոյ 'ի ժամանակի յայսմիկ իշխան մարգարէ և առաջնորդ, ո՛չ ողջակէզք պատարագաց, ո՛չ խունկք օրի-

նաց, և ո՛չ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո, և զողորմութ͞ի գտանել 'ի քէն.

Այլ անձամբք խոնարհեալ՝ և հոգւով տառապանաց ընդունելի լիցուք մեք ո͞պ զողջակէզս խոյոց և զուարակաց, և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց.

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քո, զի կատարեալ գտցուք զկնի քո, և չիք ամօթ յուսացելոցս 'ի քեզ.

Եւ արդ՝ գամք զհետ քո ա͞մ սրտիւք մերովք, երկնչիմք 'ի քէն և խնդրեմք զերեսս քո, տէր մի՛ յամօթ առներ զմեզ.

Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութե͞ քում, և ըստ բազում ողորմութեան քում, փրկեա՛ զմեզ վասն սքանչելեաց քոց տէր, և փառաւորեսցի անուն քո յաւիտեան.

Յամօթ լիցին ա͞մքեան, որ չարչարեն զծառայս քո, ամաչեցեալ. լիցին բռնութի͞ք նոցա և ա͞մ զօրութիւնք նոցա խորտակեսցին.

Եւ ծանիցեն զի դու ես Տէր Ած միայն, որ փառաւորեալդ ես 'ի վերայ ամենայն տիեզերաց ։

Օրհնեալ ես դու Տէր Ած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և ։

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո, գովեալ և ։

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո, գովեալ և ։

Օրհնեալ ես որ նայիս 'ի քերովբէս և հայիս յանդունդս, գովեալ և ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ և ։

Օրհնեցէք ամ գործք տեառն զՏէր · օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան ։

Օրհնեցէք երկինք զՏէր · օրհնե·

Օրհնեցէք հրեշտակք տեառն, և ջուրք որ 'ի վերայ երկնից զՏէր · օրհ·

Օրհնեցէք զօրութիւնք տեառն, արեգակն և լուսին զՏէր · օրհ ։

Օրհնեցէք աստեղք երկնից՝ անձ

րեւք և ցօղք զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք ա՟մ հողմք հուր և ջեր զՏէր օրհ ։

Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաբեր զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք սառն և պաղ, եղեամն և ձիւն զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք տիւք և գիշերք, լ՟յս և խաւար զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք և երկիր զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք լերինք բլուրք, և ա՟մ բ՟յսք երկրի զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք աղբիւրք ծովք և գետք զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք կէտք և ա՟մ կայտառք, որ ՚ի ջուրս, և թռչունք երկնից զՏէր · օրհ ։

Օրհնեցէ՛ք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏէր · օրհ ։

Օրհնեսցէ՛ իսրայէլ զՏէր · օրհնեսցէ՛ և բարձր արասցէ զնա յաւիտեան ։

Օրհնեցէ՛ք քահանայք զՏէր օրհ ։

Օրհնեցէ՛ք ծառայք տ՟ն զՏ՟ր · օրհ ։

Օրհնեցէ՛ք անձինք, և շունչք ար-
դարոց զտէր • օրհ •

Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարհք
սրտիւք զտէր • օրհ •

Օրհնեցէ՛ք անանիա ազարիա և
միսայէլ զտէր • օրհ •

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն:

Մաղթանք •

Օրհնեցէ՛ք զա̃մ արարածք զարա-
րիչն արարածոց, զտէրն տերանց,
զթագաւորն թագաւորաց, զա̃ծն
աստուծոց: Օրհնեցէ՛ք՝ գովեցէ՛ք՝
բարեբանեցէ՛ք • զի քաղցր է, զի յա-
ւիտեան է ողորմութիւն նորա •

Կանոն որրդ Յարութեանն Քրիստոսի •

Հ Որ եկեր 'ի փրկութի՝ տիեզերաց
ա՛ձ թագաւոր յաւիտենից քրիստոս • ըզ
քեզ փառաւորեմք ա̃ըծ հարցըն մե
րոց • Յանձն առեր ըզ չարչարանըս
կամաւորապէս • և ըզմահ ճաշակեցեր
վասըն մեր • զքեզ փառաւո Աընկեցար

վերմով ՚ի գերեզմանի . և լուծեր ըզկնիք մահու յանցանաց . զքեզ :
Զտէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան : Օ յարուցեալն ՚ի մեռելոց քո աստուած . որ ըզ մահ խափանեաց յարութեն՝ նո-րով . բարձր : Օ ըսքանչելի յարու-թիւնըն քի այ . ամենայն ժողո վուրդք բարեբանելով . բարձր : Գ

---

Կանոն սրբոց Հրեշտակապետաց :

Անըսկիզբըն հայր . առաջին լոյս աննշմարելի . որ ՚ի լուսոյ լոյս ներ-գործեալ զիմանալեաց դասակսն . ըզ քեզ օրհնեմք աստուած հարցըն մերոց : Համակիցըդ հօր . ՚ի լուսոյ լոյս ծա-գումն որդի . որ արարեր ՚ի պաշտօն փառաց քոց զհրեղէնացըն զօրս . ըզ քեզ : Ի հօրէ բըղխումն փառակից որդւոյ հոգիդ անեղ . որ ըստեղծեր ՚ի յոդիս կատարեալ զհոգեղէնացըն Հ Գկ

Գ դամս · ընդ քեզ ։ Ողջոյն օրհնեցէք
բարձր արարէք զնա յաւիտեան ։
Երկնային զօրութիւնք հրեշտակք
և հրեշտակապետք · վերին պետու-
թիւնք · բարձր արարէք ընդ
հայրն երկնաւոր · Անմարմնոց բազ-
մութիւնք՝ իշխանութիւնք զօրութիւնք ·
անմահ աթոռութիւնք · բարձր արա
րէք զՔրիստոս թագաւորն ·
Վեցթևեան սերովբէք քառա-
կերպեան քերովբէք · աթոռք ան-
ղին · բարձր արարէք զՀոգին
ճշմարիտ ·

---

Կանոն սրբոց Մարգարէից ·

Հ Որ ընդ հողեղէն բնութեան մերոյ
գձ խառնեցեր ընդ բանական հոգիս ·
ունել զօրութիւն ընդունելոյ · զաս-
տուածային և զհոգևոր ընդ զշնորհս իմ-
եալ ՚ի վերուստ · օրհնեալ Տէր Աստ-
հարցն մերոց · Որ շնորհեցեր մա-
քուր հոգւոց պարգևել զհոգի մար

գովելութեն · որով ծանուցեր յա-
ւանդագոյն · բազմապատիկ օրինակօք
զանճառելի խորհուրդ քո մարդեղու-
թեանդ · օրհնեալ : Որ զանեղ գոյից
լինելութի իբրև զեղեալ տեսանէ-
ին · յառաջնորդան կան մտօք նոցա ·
տիպաւորեալ հոգիդ ընկերպարան
իւրին դերադոյն հրաշիւք ՚ի վերբան
ընդեան · օրհ : Իզօր օրհնեցէք բարձր
արարէք ընդ նմա յաւիտեան : Ընդ ա- գ
ւետաւորսն յառաջադոյն փրկութե-
մերոյ · ծափս հարէք եկեղեցիք հե-
թանոսաց աղաղակելով · ընդ տէր օրհ ·
Ընդ տեսանողաց մարգարէից հինն
նորոյին · քահանայք նորոյ ուխտին
սպասաւորք · ընդ տէր :

---

Կանոն Ապաշխարութեան :

Որ հայրն քաղցրութե յարարա- հ
ծոց քո հայր ամենակալ · օրհնեալ ես ած
ած հարցն մերոց : Որ իջեր ՚ի

փրկեալ զարարածս քո որդին միա-
ծին · օրհ ։ Որ խնամես անսպառ-
թեամբ զարարածս քո հոգին ճշմա-
Գ րիտ · օրհ · Ոզուէր Ամենայն գոր-
ծըք քո ընդ քեզ օրհնեն · Որ յոչըն-
չէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր ·
Յե չեալ զմեզ տէր մարդասիրու-
թեամբդ քո · ամէն · Որ անդադար
փառաբանիս 'ի քո յարարածոց ·
Ընկալ զաղաչանս սուրբ եկե-
ղեցւոյ քո · ամենայն ։

---

Կանոն համօրէն Առաքելոց ·

Հ [illegible]աւկեց բանդ հօր եւ հոգւոյն · որ
աձ իջեր 'ի յերկնից 'ի փրկութի՛ ազգի
մարդկան · ա՛ծ հարցըն մերոց · Որ
պահեցեր յաղթօղ ըղձըրդնութին
սրբոց առաքելոցն · այսօր եւ մեք ընդ
նոսին ցընծութեամբ օրհնեմք ըզ-
քեզ · ա՛ծ · Որ առաւել բարձրաց-
եալդ ես յաւիտենից · այսօր ընդ

դասս վերնայնոց քոց բարեբանեմք ըզ
քեզ․ Ած․ Ըզտէր օրհնեցէք բարձր գ
ձըր արարէք ըզնա յաւիտեան․ Ո՛ր
ընտրեաց զերանելին առաքեալսն եւ
նոքօք որսաց ՚ի հաւատս ըզտիեզերըս
Քրիստոս․ բարձր․ Ո՛րք ըզ խաւար
կռապաշտութեանցըն վանեցին եւ
ըզ լոյս գիտութեան ընդհանուր յերկիր
ծաւալեցին․ ընդ նոսին բարձր․

---

Կանոն համօրէն ննջեցելոց ՚ի Քրիստոս։

Օ՛րհնեալ ես դու Քս․ որ յար հ
եարդ ՚ի մեռելոց ողորմած եւ կոխե- ած
ցեր ըզմահ․ Տէր Աստուած հարցըն
մերոց․ Ո՛ր մահկանացուացս կեանքդ
ես․ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ-
տէր․ Ո՛ որս փոխեցեր յաշխարհըն
կենդանեաց․ հանգըստեան արժա-
նաւորեա․ տէր․ Ըզտէր օրհնեցէք․ գ
եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան․
Օրհնեցէք Ո՛ր դալոցն է զօրութեամբ

բազմաւ · ազդամամբ ձայնիւ կենագործ-
ծէ ըզընծեցեալսն · ընդունէր ծոց:
Ասցէ Աղաչեմք ընդ քեզ բարերար·
հանդերձ զհոգիս ծառայից քոց ընդ
սուրբըս քո · օրհնեսցուք և բարձր
արասցուք զանուն քո յաւիտեան:

---

Կանոն համօրէն Մարտիրոսաց·

հ Զքեզ արդար և ուղիղ դատա-
ած ւոր 'ի մէջ սրբոց քոց բարեբանիս·
հարցըն մերոց աստուած օրհնեալ ես
յաւիտեան: Զքեզ որ 'ի հնոցն է
ջեր ապաւէն · խնամարհեալ 'ի գուն-
դըս մարտիրոսաց գովիս · հարցըն:
Զքեզ որ ահաւոր Թագաւոր յա-
ւիտենից · այսօր ընդ դասս վկայից
գ քոց բարեբանեմք · հարցըն: Զտէր
օրհնեցէք · բարձր արարէք զնա յա-
ւիտեան: Անբաւելին երկնից և
հրեղինաց 'ի հողեղինաց հանձեցաւ
ընտրեալ խումբ զինուորս · բա: Աւսափ

և մեք հաւատացեալքս քրիստոսի աստուածոյ. ընդ նոսին խնդրելով զթողութիւն մեղաց մերոց բարձր արարէք ըղ։

Քարոզ՝ զկնի Հայրին։

Ընկեալքս ամենեքեան 'ի սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին այ, զտէրն մեր և զփրկիչն յի քի։ Որ էջ փառօք հօր 'ի մէջ հնոցին. և փրկեաց զերիս մանկունսն 'ի քաղդէացւոց անտի։ Լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր. զի մի երբէք խաբիցուք մեք 'ի մեղաց, և 'ի ցանկութէ աշխարհի։ Այլ արժանի եղիցուք պահել զպատուիրանս նր. առնուլ զպսակն լուսոյ և կենաց 'ի յանձինս մեր։ Որ խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն ած յի քի տէր մեր. կեցո և ողորմեա։ Տէր ողորմեա երիցս։

### Մաղթանք կիւրակէից, և այլոց տէրունական տօնից։

Հզօր՝ յաղթօղ՝ սքանչելագործ, սուրբ մեծի յարութեանն քի աստուծոյ մերոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

---

### Մաղթանք Մարտիրոսաց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողորմութեան քո ՚ի մեղուցեալ անձինս մեր. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ զմեզ ՚ի յաւիտենական հրոյն. Որ՛ արժանի ընդ երիս սբ մանկունսն՝ և ընդ երանելի սբ վկայսն՝ օրհնել զքեզ և գովել, և քեզ գոհութի և փառս մատուցանել հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

---

### Մաղթանք պահոց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողորմութեան քո ՚ի մեղուցեալ անձինս մեր. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մե-

րոց ․ և փրկեա՛ զմեզ 'ի յաւիտենական
հրոյն ։ Ո՛րս արժանի ընդ երիս ս̃բ
մանկունսն՝ և ընդ երանելի սուրբ
վկայսն՝ օրհնել զքեզ՝ գովել և ասել ։
Ա՛ստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ։
Ա՛ստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ։
Ա՛ստուած քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի
մեղաց , և կեցո՛ ։

Երգ Մարիամու աստուածածնին ։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր , և
ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկ-
չաւ իմով ։

Ա՛յց արար 'ի վերայ խոնարհութե̃
աղախնոյ իւրոյ , այսուհետև երանի-
ցեն ինձ ամենայն ազգք ․

Ա՛րար ընդ իս մեծամեծս հզօրն ,
և սուրբ է անուն նորա ։

Ողորմութի̃ արար ազգաց յազգս
երկիւղածաց իւրոց , արար զօրութի̃
բազկաւ իւրով ։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց
սրտից , և քակեաց զհզօրս յաթոռոց ․

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

---

Օրհնութիւն Զաքարիայի հօրն Յովհաննու մկրտչի։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի որ յայց ել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանովք սրբոցն որ յաւիտենից մարգարէքն էին։

Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։

Առնել ողորմութիւն առ հարսն մեր, և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ՝

Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ՚ի թշնամեաց մերոց՝

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի Նորա, զա՟մ աւուրս կենաց մերոց ։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսցիր, գնասցես առաջի տ՟ն պատրաստել զճանապարհս Նորա ։

Տալ զգիտութի՟ փրկութե՟ ժողովրդեան իւրոյ, ՚ի Թողութիւն ա՟մ մեղաց մերոց ։

Վասն գթոյ ողորմութե՟ տեառն ա՟յ մերոյ՝ որով երևեցաւ մեզ արեգակն ՚ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր ։

Ծագել լոյս ՚ի վերայ այսոցիկ, որ նստէաք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան ։

---

Աղօթք Սիմէոնի ծերունւոյն ։

Արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութի՟, զի տեսին աչք իմ զփրկութի՟ քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց ։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և
փառք ժողովրդեան քում իսրայէլի։
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն։

մ Յանձառ փառաց խոնարհեցար
աձ ՚ի մեր բնութիւնս · բանդ արծ [?] և
մարմնացար ՚ի սրբոյ կուսէն։ Եւ
ծնար ՚ի սբ կուսէ անապական մարմ
նով · ըզքեզ ՚ղ անդադար բարեբան
եալ · մեծացուցանեմք · Այսօր զեկ
եալդ ՚ի փրկութիւն ազգի մարդ-
կան · միաբանութե̄ ամենեքեան ·
մեծացուցանեմք ·

մ Մայր և կոյս աղախին քրիստոսի·
դկ որ բարեխօսդ ես միշտ աշխարհի ·
քեզ երանեն ամենայն ազգինք [?]։ Մա-
քուր աղաւնի և հարսն երկնից
Մարիամ · տաճար և աթոռ այ բանին·
քեզ երանեն։ Եւ հաձեցան իմա
նալեքն ընդ հողեղէնքս · և քեւ մեր
ձեցաք ՚ի փայտին կենաց · քեզ·

Անարատ կոյս ածածին մարիամ մ
սրբուհի և մայր քի․ յարգանդի դձ
տարար զանտանելին ամենեցուն․
օրհնութեամբ ընդ քեզ ածածին մե
ծացուցանեմք ։ Ընդ քեզ երկնային
գունդքն զոր ետեսն եզեկիէլ․ և
ամորըն զոր ծանեաւ գեդէոն․ սե-
րովբէք հողեղէն վեհագոյն քերով-
բէից․ օրհ․ Սրբոյ խորհրդոյս սոս
կալի ի քեզ տեսանի ածածին․
Կուսութիւն անսերմնական․ ծնունդ
անարատ․ կուսութի յետ ծննդեան
մնալով անապական․ օրհ․

Ընդ քեզ երեւեալ դուռն ան- մ
կիելի ըստ մարգարէին․ ընդ որ ոչ աձ
ոք էանց եթէ ոչ ած միայն․ ածա
ծին կոյս․ օրհնութեամբ մեծացուցա
նեմք․ Ընդ քեզ որ ի մորենւոջն առ
մովսէսի ըստ մարգարէին․ ընդ նոր խոր
հուրդ կուսի յայտնեցեր մարդկան
ազգի․ օրհ․ Ընդ քեզ որ ի հօրէ ան
ժամանակապէս և ի մօրէ անթարգ-

մանաւբար . ի ժամանակի ծննդեան
ի բոլորից փրկութեան յայտնեցար
որդի բարձրելոյն . օրհ .

Մ Այսօր ընտիր ժողովուրդք . ցըն
աձ ծացէք ընդ գալուստ հոգւոյն
սրբոյ . մեծացուցանելով զելողն
ի հօրէ ։ Այսօր ցնծան առա
քեալքն . զարդարեալք ի շնոր
հաց հոգւոյն սրբոյ . մե ։ Այսօր ըզուար
ճացան արարածք . ճշմարիտ
գալստեամբ հոգւոյն սրբոյ . մե ։

Մ Յարուցելոյն ի մեռելոց բնակա
աձ րան մայր եւ կոյս . որ ըզնընջեցեալսն
յադամայ կենագործէ անապական .
զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ
ես ի կանայս ։ Որ արարողին երկնի եւ
երկրի եղեր տաճար եւ առագաստ .
որ ըզնընջեցեալսն մեր հրեղէն նո
րոգէ . զքեզ մեծ ։ Կերակրողին ամ
եղերաց արբուցեր ըզքո սուրբ ըզ
կաթն . որ ըզնընջեցեալսն մեր վե-
րստին նորոգէ . զքեզ մեծ ։

Ի զուարճալից ողջոյն ՚ի հրեղէն ՚ի հրեշտակէն ընկալար. ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ մարիամ ամենահրաշանացեալ. Անսկիզբըն բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն ըսկիզբն ՚ի կուսէդ. քրիստոս աստուած թագաւորն յաւիտենից. Աղաչեմք ընդ քեզ սուրբ ածածին. առ քո բարեխօսեա փրկել ըզ ժողովուրդս իւր. զոր գնեաց արեամբն իւրով. մ աճ

---

Քարոզ՝ զկնի Մեծացուսցէին.

Սուրբ զածածինն՝ և զամ մեզ բարեխօս արարցուք առ հայր ՚ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ տէր ած մեր կե.

Աղօթք Մարտիրոսաց և Պահոց.

Ընկալ տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութբ սուրբ ածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո. և աղաչա

նովք ամ սրբոց քոց. և որոց այսօր է յիշատակ: Տուր մեզ տէր, և ողորմեա: Ներեա քաւեա և թող զմեղս մեր: Արժանաւորեա գոհութե փառաւորել ըզ քեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և.

Քարոզ՝ զկնի Մեծացուցէին կիւրակէից աւուրց:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա:

Վասն սուրբ տեղւոյս շինութե, և բարեկարգութեան զտէր աղա:

Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ զտէր:

Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի ողորմութե իւրում զտէր:

Եւ ևս: Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Դու ես թագաւոր յաւիտեանս յաւիտենից քս ած մեր: Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Երգ Իւղաբերից Աւետարանին.

Եղիցի անունն տեառն օրհնեալ. 'ի յայսմ հետէ. մինչև 'ի յաւիտեան.

Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհնեցէք զանունն տեառն.

Եղիցի անունն տն օրհնեալ յայսմ հետէ մինչև 'ի յաւիտեան.

Յարևելից մինչ 'ի մուտս արևու օրհնեալ է անունն տեառն. 'ի յայսմ հետէ.

Փառք և երկրպագութիւն հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. 'ի յայսմ հետէ. մինչև 'ի յաւիտեան.

Արի տր օգնեա մեզ, և փրկեա զմեզ. վասն անուան քո.

Արի և մի մերժեր ըզ

մեզ ք ի սպա ցյ ա.
վասն անուան:

Թագաւորեսցէ տէր յաւիտեան
Ա . Աստուած քո Սի
ոն յազգէ յ
ազգ:

Օրհնեա անձն իմ զտէր
ր. Օրհնեցից զտէր
տէր կենդանութեան իմ
յ:

## Օրթի.

սրկ
քհ Խաղաղութիւն ամենեցուն.
դպ Եւ ընդ հոգւոյդ քում:
սրկ Երկիրպագութեամբ լուարուք.
քհ Սրբոյ աւետարանիս որ ըստ Մատթէոսի.
դպ Փառք քեզ տէր աստուած մեր.
սրկ Պռօսխումէ.
դպ Ասէ աստուած.

Աւետարան ըստ Մատթէոսի։

Յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն մարիամ մագդաղենացի, և միւս մարիամն՝ տեսանել զգերեզմանն։ Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ տն իջեալ յերկնից՝ մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրաց անտի, և նստէր ՚ի վերայ նորա. և էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս. Պատասխանի ետ հրեշտակն՝ և ասէ ցկանայսն. մի՛ երկնչիք դուք, գիտեմ զի զյս զխաչելեալն խնդրէք. չէ՛ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն։ Եկա՛յք տեսէ՛ք զտեղին ուր կայր։ Եւ վաղվաղակի երթա՛յք ասացէ՛ք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ ՚ի գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Եւ ելեալ վաղվաղակի ՚ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ըն-

Թանային պատմել աշակերտացն։ Եւ ահա պատահեաց նոցա Յս՟ եւ ասէ. ողջ էք։ եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա՝ եւ երկիրպագին նմա։ Յայնժամ ասէ ցնոսա Յս՟. մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէ՛ք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ՚ի Գալիլեայ, եւ անդ տեսցեն զիս։ Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն՝ եւ պատմեցին քահանայապետիցն զամ՟ որ ինչ եղեւն։ Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն, եւ ասեն. ասասջի՛ք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաւանեցուցուք ըզնա՝ եւ զձեզ անհոգս արասցուք։ Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպ՟ ուսանն. եւ ել համբաւս այս ՚ի Հրէից մինչեւ ցայսօր.

Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի Գալիլեայ ՚ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յս՟։ Իբրեւ տեսին զնա, երկիրպագին նմա. եւ ոմանք յերկուա-

ցան. Եւ մատուցեալ յս՟ խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. տուաւ ինձ ամ՟ իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամ՟ հեթանոսս. մկրտեցէք զնս՟ յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն սբյ՟։ Ուսուցէք նց՟ պահել զամ՟՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ՟ աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի։

---

Աւետարան ըստ Մարկոսի.

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ էր՝ որ 'ի շաբաթն մտանէր, եկեալ յովսէփ որ յարիմաթեայն էր՝ այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակնունէր արքայութեանն այ՟. համարձակեցաւ՝ եմուտ առ պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն յսի՟։ Եւ պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա եւ ասէ՝ թէ արդարեւ այնչափ վաղ մեռաւ։ Եւ

իբրև ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ. Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց կտաւովն, և եդ 'ի գերեզմանի, զոր էր փորեալ 'ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակոբայ՝ և Յովսեայ, տեսին զտեղին ուր եդաւ. Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակովբայ և Սաղոմէ՝ չոգան պատրաստեցին խունկըս, զի եկեսցեն օծցեն զնա.

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արևագալն, և ասէին ցմիմեանս, ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին. Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ. Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան. Եւ նա ասէ ցնս. մի՛ երկնչիք, զՅս խնդրէք զնազովրեցի

զխաչելեալն, յարեաւ՝ չէ՛ աստ․ ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա։ Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա՝ և ցպետրոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ՚ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ ոպ ասացն ձեզ։ Եւ իբրև լուան՝ ելին և փախեան ՚ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին․ և ո՛չ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։

---

Աւետարան ըստ Ղուկասու։

Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար․ սա չէ՛ր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա․ յարիմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակնունէր արքայութեան այ։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն յի․ և իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ, և եդ ՚ի կռածոյ գերեզմանին․ ուր չէր բնաւ ոք եդեալ։ Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։ Եւ երթային զհետ նր կա-

նոյք՝ որ եկեալ էին ընդ նմա 'ի Գա-
լիլեէ . տեսին զգերեզմանն , և որպ՟
եդաւ մարմին նորա ։ Դարձան , և
պատրաստեցին խունկս և իւղս . և 'ի
շաբաթուն հանգարտեցին վասն պատ
ուիրանին ։

Բայց 'ի միաշաբաթուն վաղքաջ
ընդ առաւօտն եկին 'ի գերեզմանն .
բերին զխունկսն զոր պատրաստեցին .
և այլ կանայք ընդ նոսա . և գտին ըզ
վէմն թաւալեցուցեալ 'ի գերեզմանէ
անտի ։ Եւ մտեալ 'ի ներքս՝ ոչ գտին
զմարմինն տեառն յի՟ ։ Եւ եղև ընդ
հիանալն նոցա վասն այնորիկ , և ահա
արք երկու հասին առ նոսա 'ի հան-
դերձս լուսաւորս ։ Եւ իբրև զահի
հարան , և խոնարհեցուցին զերեսս
իւրեանց յերկիր , ասեն ցնոսա . զի՞
խնդրէ՛ք զկենդանին ընդ մեռեալս ։
Չէ աստ՝ այլ յարեաւ . յիշեցէ՛ք՝ որպ՟
խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գա-
լիլեայ , և՛ ասէր՝ թէ պարտ է որդւոյ
մարդոյ մատնիլ 'ի ձեռս մարդոց մե-
ղաւորաց , և 'ի խաչ ելանել՝ և յեր-
րորդ աւուր յառնել ։ Եւ յիշեցին

զբանսն նորա. Եւ դարձան պատմեցին զայս ամ մետասանիցն, և այլոցն ամենեցուն. Եւ էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակովբեայ, և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն. Եւ երևեցան առաջի նոցա շաղփաղփուն բանքն նոցա՝ և չհաւատային նոցա. Իսկ Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց՝ ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղև.

---

Աւետարան ըստ Յովհաննու.

Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս Յովսէփ, որ յԱրիմաթեայ էր աշակերտ յի 'ի ծածուկ՝ վասն ահին հրէիցն, զի բարձցէ զմարմինն յի. և հրամայեաց պիղատոս. եկն և եբարձ զնա. Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալ էր առ յս 'ի գիշերի զառաջինն. և եբեր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լիտրս հարիւր. Առին զմարմինն յի, և պատեցին կտաւովք՝ խնկովք հան-

դերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։ Եւ էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և 'ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ. Անդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅս.

Եւ 'ի միաշաբաթոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն 'ի գերեզմանն անդր, և տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրաց գերեզմանին. Ապա ընթանայ՝ և գայ առ Սիմովն Պետրոս և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յս, և ասէ ցնոսա. բարձին զտէր 'ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա. Ել Պետրոս և միւս աշակերտն՝ և գային 'ի գերեզմանն. Ընթանային երկոքեան 'ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղվաղակի քան զՊետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն. Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ. Եկն և Սիմովն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա. և եմուտ 'ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝ զի

կային անդ. և վարշամակն որ էր 'ի գլուխ նր̃՝ ո՛չ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն: Յայն ժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւատաց. զի չև ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա 'ի մեռելոց յառնել: Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն: Իսկ Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն յի̃. Եւ նոքա ասեն ցնա. կին դու զի՞ լաս: ասէ ցնոսա. զի բարձին զտէրն իմ 'ի գերեզմանէ աստի, և ո՛չ գիտեմ՝ ո՛ւր եդին զնա: Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և տեսանէ զյս̃ զի կայր. և ո՛չ գիտէր թէ յս̃ իցէ. Ասէ ցնա յս̃. կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. տէ՛ր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա՛ ինձ ուր եդիր

զնա, զի ես առից զնա։ Ասէ ցնա Յս. Մարիամ։ Եւ նա դարձաւ, եւ ասէ ցնա եբրայեցերէն. Ռաբբունի, որ թարգմանի՝ վարդապետ։ Ասէ ցնա Յս. Մի մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս իմ, եւ ասա ցնոսա. Ելանեմ ես առ Հայրն իմ՝ եւ առ Հայր ձեր, և Ածն իմ՝ եւ Ած ձեր։ Գայ Մարիամ Մագդաղենացի՝ եւ պատմէ աշակերտացն, եթէ ետես նա զՏէր, եւ զայս ինչ ասաց ցնա։

---

Երգ՝ զկնի Խաչաբերից աւետարանին։

Փառք յարութեան՝ քոյ Տէր. որ չդադարեցայց Քրիստոս օրհնել ըզքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ։

Փառք յարութեան՝ քոյ Տէր. որ չդադարեցայց Յս գովել ըզքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ։

Ես ոչ դադարեցայց փրկիչ փառաւորել ըզքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ։

Երգ՝ աղուհացի կիւրակէին · երիցս կրկնեա · և զվերջինն բարձր ասա։

Զամենայն աւուրս ... սուրբ
կենաց մերոց ի մեղաց · ...
... դադարեցուցեց ... օրհնեալ զ...
քեզ ... քո փառաց ... ամեն
... օրհնեմ ...։

Զամենայն աւուրս։

Ի գիշերի համբարձէք՝ զձեռս ձեր ի սրբութիւն · և օրհնեցէք զՏէր։

Ահա օրհնեցէք ամենայն · ծառայք Տեառն զՏէր ի սրբութիւն · և օրհնեցէք զՏէր։

Գալստեան ...։

Պայծառ լուսեղէն զուարթնոցն սպասեցին մեծի գալստեանն ...ն։ Առ ... երգէին երգ նոր օրհնեալ քո սուրբ գալստեանդ։

Լուսապայծառ հրեշտակն նման ... ի կենսատու գերեզմանին։

Եւ աւետէր կանանցն՝ յարեաւ
անստուածն։

Հմբ Համբարձէք իշխանք ըզդրու-
նըս ձեր ի վեր․ Եւ գայ մըտա-
նէ փառօք ի փառս։

Հգլ Իջեալ Հոգին յառաքեալսն. և
հրագինեաց զընտրեալսն անկէզ ի
սուրբ վերնատանն։ Եւ հանգեա-
նորօք յազգըս մարդկան զանազան
լեզուաց բաժանմամբ։

Վար Ցընծայ թաբօր հերմոնիւ. և
առաքեալքն ի հայրական ձայնէն
թըմբրեալք․ Եւ կենդանեաց և
մեռելոց տէր ծանուցին ըզ.քեզ մով-
սէս և եղիաս։

Խչ Այսօր եկեալ կամաւ տէրն
ի խաչս․ և տարածեալ ձեռս զա-
մենեսին կոչէ իւր ի նմանն։

Ծնն Հոյլք հոգեղէնք ընդ հովի-
ւսըն քարոզէին ի յանբանից մըսու-
ր զբանըն բանըմեան․ Եւ մոգքըն ա-
ներըն գուշակեալ մատուցին զըն

ծայրըն խորհրդոյ։

Քառասնօրեայ տղայ և տէրն օրէնադիր անօրինաբար եկն 'ի տաճարն։ Եւ սիմէօն գըգուէր գըրկօքն. և յօրինաց կապից՝ լուծումն հայցէր 'ի կեանս աւետարանին։

---

Քարոզ՝ զկնի Իւղաբերից աւետարանին, և Երգոյն։

Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ աւետեօք յարութեան տեառն մերոյ և փրկչին յի քի։ Որ եղև պտուղ և անդրանիկ ամ ննջեցելոց. խորտակեաց զդրունս դժոխոց. և եհերձ զբռնութիւն մահու. և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամ մարդկան։ Խնդրեսցուք հաւատով 'ի փրկչէն մերմէ յէ քէ. զի զմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ. կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոյ։ Վասն զի զայս խոստացաւ, զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրել-

եաց իւրոց ճշմարիտն ած յս քս տէր մեր. կեցո՛ և ողորմեա։

աղ Ամենակեցոյց ճշմարիտ՝ որ մեծի յարութեանն քն այ մերոյ, վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և։

Ե. տաղ փոխ։

Ողորմեա՛ ինձ ած ըստ մեծի ողորմութե քում. ըստ բազում գթութե քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութէ իմմէ. և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի.

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դատել գաս.

Անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաս-

տութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ եւ ս̃բ եղէց, լուա՛ եւ քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զուրախութի̃, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց։ եւ զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ ս̃բ հաստատեա՛ յիս ա̃ծ, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մ՚ի՛ ընկեներ զիս տէր յերեսաց քոց, եւ զհոգի քո ս̃բ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութի̃ փրկութեան քո՛յ, եւ հոգւով պետութեան քո՛յ հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, եւ ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ ա̃ծ ա̃ծ փըրկութեան իմոյ։ ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութի̃ս քո։

Թ՚է կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք։ բայց դու ընդ ողջա-

կէղս խակ ոչ հաճեցայր ։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ , ըզ սիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ արհամարհէ ։

Բարի՛ արա տէր կամօք քովք սիօնի , և շինեսցին պարիսպքն երուսաղէմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան . յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ։

---

ո Բանդ որ ՚ի հօրէ իջեալ մարմնա-
ա̃ծ ցար ՚ի կուսէն . խաչեցար կամաւ հօր մահն մեր ըզմեզս ըսպաներ . սուրբ ա̃ծ ողորմեա մեզ ։ Որ յարարածոց ես անբովանդակելի . ՚ի խաչափայտին բեւեռելով ըզմահ կոխեցեր . սուրբ ։ Որ ՚ի նախնումն զանկեալն ՚ի ծառայութ̃է մահու . պատուական մարմնով և արեամբըդ քո ազատեցեր . սուրբ ։

Որ ի հրեղէն զօրաց երկնից փա- ո
ռաբանիս աստուած. որով զերկնային դձ
անմարմնական աստուածային ընդ շնորհս հե-
ղեր յորդիս ադամայ. աղաչանօք սո-
ցա ողորմեա մեզ աստուած։ Լրբե-
լով հոգեղինացս անհիւթականքն ի
ձև մարմնոյ. որք և ծանուցին մար-
գարէիցն. ընդ խորհուրդ քո գալըս-
տեանդ բազմապատիկ տեսլեամբ օրի-
նակելով. աղաչա։ Անճառելի սո-
րէնութերդ քո աւետաբերք առաքե-
ցան. գաբրիէլ և միքայէլ. անմարմ-
նական դասուքն խորեանց յերկրի
սպասաւորելով. աղաչա։

Որ աւետաւոր քում գալըստեանդ ո
առաքեցեր յաշխարհ ընդ սուրբ մարգա- դձ
րէս. և եկեալ խոնարհութեամբ նոր
օրինօք զթերին լցեր ի դիրս օրի-
նաց և մարգարէից. բարեխօսութեամբ սո-
ցա քրիստոս ողորմեա մեզ։ Որ կո-
չեցեր մարգարէիւք յառաջագոյն ընդ
հեթանոսս քեզ նոր ժողովուրդ.

և ընդ դուստըր սիովնի զեկեղեցի հե
թանոսաց հարսըն սիրելի անմահ փե
սային. բարե. Որ ընդ փառս տա-
ճարիս զոր շինեցեր շինօղդ էից 'ի
վերայ վիմին. բարձրացոյն քան զա
ռաջինն. և դերաղամրդ վայելչութե
տեսանօղքըն ծանուցին նմանութիւք
հոգւոյն. բարեխօ.

ո Հայր բազումողորմ. խոստովանիմ
ած առ քեզ որպէս զանառակ որդին.
Թող ինձ ընդ մեղս իմ. և ողորմեա.
Տէր որ դըթացար 'ի կինըն քանանա
ցի. դութ և յիս 'ի մեղաւորս. և ող
Տէր որ դարձուցեր ըզմաքսաւորն 'ի
գիտութիւն ճշմարտութե. դարձո
և զիս ընդ մոլորեալս. և ող.

ո Տէր որ զդըթութիւնդ քո զառա
ած ւելէր յերկնից 'ի մէջ մերոց առա
քելոց քոց. աղաչանօք սոցա ողորմեա
Որ 'ի ձեռըն սոցա ըզփրկեցան շը-
նորհք հոգւոյդ սրբոյ ընդ ամ եր-
կիր. աղա. Որ սոքօք լուսաւորեցեր

մկրտութեամբ աւազանին զեկե-ղեցի քո սուրբ արա.

Ո՛ր ստեղծմամբ ըստ պատկերի քո տէր պատուեցեր զմեզ. ընկալ եւ այժմ զհանգուցեալսն ՚ի քեզ ուղիղ հաւատով. ըստ մեծի քում ողոր-մութեն. Ո՛ր շնորհօք սուրբ հոգւոյն լուսաւորեցեր. յիշատակի իւրեանց զհոգիս նոցա ընկալ մարդասէր. ըստ մե. Ո՛րք հաղորդեցան մարմնոյ եւ արեան քո տէր. հանգո զհոգիս նց ընդ սուրբս քո քս ած. քանզի գինք սուրբ արեան քո են.

ո

ած

Ժողովեալքս ՚ի յիշատակի սրբոց քոց քրիստոս. աղաչեմք զքեզ. սոցա բարեխօսութեամբ ողորմեա. Երկրպագեմք առաջի բեմի քո քրիս-տոս. ընկալ քո գթութեամբ զա-ղաչանս մեր. սոցա. Ո որս հոգւով եւ մարմնով որպէս զանմարմինս. անա-րատ ՚ի գնացս քո պահեցեր մարդասէր փրկիչ. սոցա.

ո

ած

Քարոզ՝ զկնի Ողորմեայն։

Երկրպագեմք քեզ տէր ած մեր՝ անցելալքս ընդ երկարութն գիշերիս · և կանխեալքս 'ի տեղւոջ խոստովանութն · մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր։ Զքեզ տէր օրհնեմք և փառաւորեմք, և զքեզ տէր գոհանամք · որ արժանի արարեր զգիշերս խաղաղութբ անցուցանել և հասանել 'ի ժամ առաւօտուս։ Արժանաւորեա զմեզ տէր անձառ խոստմանց քոց · զոր խոստացար սիրելեաց քոց ճշմարիտ ած՝ յս քս տէր մեր · կեցո՛ և ողորմեա՛։ Ողորմեա՛ց մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմութն քում · ասասցուք ամենեքեան միաբանութբ · Տէր ողորմեա՛ · տէր ողորմեա՛ · տէր ողորմեա՛։

Մաղթանք Յարութեան։

Ողորմած՝ գթած՝ ճշմարիտ՝ ած մեծի յարութեանն քի տն մերոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ · այժմ և ։

Մաղթանք Պահոց։

Ողորմութեամբ և գթութբ քով՝

լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛ . Ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր : Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ . այժմ և միշտ :

Մաղթանք Մարտիրոսաց :

Բարեխօսութ՟բ և աղօթիւք ս՟բց մարտիրոսացն, որոց այսօր է յիշատակ՝ և ա՟մ սրբոց քոց . լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛ . Ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ ըղ զմեղս մեր : Արժանաւորեա՛ գոհութ՟բ փառաւորել զՀայր և զՈրդի և :

Ալէլուիա ալէլուիա .

Օրհնեցէ՛ք զտէր յերկնից . օրհնեցէ՛ք զնա ՚ի բարձանց :

Օրհնեցէ՛ք զնա ա՟մ հրեշտակք նր՟. օրհնեցէ՛ք զնա ա՟մ զօրութի՟ք նորա :

Օրհնեցէ՛ք զնա արեգակն և լուսին . օրհնեցէ՛ք զնա ամենայն աստեղք և լոյսք :

Օրհնեցէ՛ք զնա երկինք երկնից . և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս ,

օրհնեցէ՛ք զանուն տեառն։

Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ոչ անցանէին։

Օրհնեցէ՛ք զտէր յերկրէ՝ վիշապք և ամենայն խորք։

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկք, որք առնեն զբան նր̃։

Լերինք՝ և ա̃մ բարձունք՝ ծառք պտղաբերք և ամենայն մայրք։

Գազանք՝ և ա̃մ անասունք. սողունք, և ա̃մ թռչունք թեւաւորք։

Թագաւորք երկրի և զօրք իւրեանց. իշխանք և ամենայն դատաւորք երկրի։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէ՛ք զանուն տեառն։

Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութի̃ նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութի̃ նմա յա̃մ սրբոց նորա. յորդւոցն իսրայէլի ժողովրդեան՝ որ մերձ է առ տէր։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութի̃ ՚ի

նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց.

Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց.

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ. սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս երգեսցեն նմա.

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ. և բարձր առնէ զհեզս 'ի փրկութեան.

Պարծեսցին սուրբքն փառօք՝ և ցնծասցեն 'ի հանգիստս իւրեանց. և բարձր արասցեն զաստուած բերանոց իւրեանց.

Սուր երկսայրի եռ 'ի ձեռս նոցա, առնուլ զհատուցումն 'ի հեթանոսաց, 'ի յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց.

Ի կապել զթագաւորս նոցա կապանօք. զզօրաւորս նոցա ձեռնակապօք երկաթեօք.

Առնել նոցա դատաստանս ըստ գրոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա.

Օրհնեցէք զԱստուած 'ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա.

Օրհնեցէ՛ք զնա ՚ի զօրութեն նր․ օրհնեցէ՛ք զնա ՚ի բազում մեծութեան նորա ։

Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն օրհնութեան․ օրհնեցէ՛ք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ։

Օրհնեցէ՛ք զնա ցնծութբ, գովեցէ՛ք զնա ուրախութեամբ ։

Օրհնեցէ՛ք զնա ՚ի բանս քաղցր․ գովեցէ՛ք զնա ՚ի բարբառ լսելի ։

Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն գոհուե․ ամ հոգիք օրհնեցէ՛ք զտէր ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ։

---

ա
աձ
Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ՚ի գերեզմանն․ ՚ի խնկել զանապական մարմինն․ Նա գտին ըզ վէմն բարձեալ ՚ի դրանց գերեզմանին․ և լուեալ բարբառ ՚ի հրեշտակէն․ եթէ յարեաւ քս և խափանեաց ըզ մահ․ Նա հանդիպեալ քս տէր առաքելոցն և տուեալ ողջոյն կենդանարար․ ուր

քեցեր զնա ՚ի փրկութի՝ տիեզերաց։
Անմահ արքային ամնարուեստ տ
ամթուք. բանակչեալ քերովբէք սրբ դձ
բանակաց ձայնիւ սրովբէք. առաջին յեր
կինս քահանայապետք. բարե
խօս լերուք առ տէր վասն եկեղեց
ւոյ։ Արարչին փառաց բարձող
տէրութիք. անյաղթելի զօրութիք
վեհագոյն իշխանութիք. երկրորդին
դասուք քահանայապետք. բարեխ։
Պերագոյն էին պետութիք վերին.
հրեշտակապետք երկնաւորք հրեշ-
տակաց զինուորութիք. երրորդ յեր
կինս քահանայապետք. ձեզ հա
մաձայնեալ երգեմք ընդ փառս ՚ի
բարձունս։

Այսօր ժողովեցարուք որք ՚ի հեթա տ
նոսաց. հրաւիրեալք յառաջագոյն դձ
մարգարէիւք. գալ առ ած աբրա
համու յերկրպագութի. օրհնե
ցէք զտէր յերկինս ընդ երկնաւո-
րացն։ Այսօր որդիք դըստեր վերին

սիրովին · շինեալք ՚ի վերայ հիման ա-
ռաքելոց և մարգարէից · որք և
ըմպէք զառատաբուղխ վտակ հոգ-
ւոյն ՚ի յաղբերացն խորայելի յեկեղե-
ցիս սրբութեանց · օրհնեցէք զտէր
յօրհնութիւն ՚ի նոր ։ Այսօր վերին
զօրացըն համաձայնեալ · դասք նահա-
պետաց և մարգարէից · երգեն ընդ
զերգըս հոգևորս · ՚ի յիշատակի
սոցա երգեմք և մեք զփառս ՚ի
բարձունս ։

տ Տէր որ ՚ի վերայ քերովբէից փա-
ած ռաբանիս · քաղցրութեամբ խոնարհ-
եալ ընկալ զաղաչանս մեր · Տէր
որ շնորհեցեր ողորմութիւն ազգի
մարդկան · քաղց ։ Տէր որ ուսու-
ցեր մեզ ՚յամ ժամ փառըս տալ ան-
ուանդ քում սրբոյ · քաղց ։

տ Որք ՚ի սկզբանէ պատուեալ ե-
ած ղեն ՚ի սէր բոլորից հօր · առաքելական
կոչմամբ զտիեզերս հրաւիրեցին
յուսով հաւանել միասին · վարդա-

պետութե՛ սոցա ամենեքեան օրհ-
նեսցուք ըզտէր։ Որք ականատեսք և
սպասաւորք եղեն մարմնացելոյ բա-
նին. գեր 'ի վերոյ անմարմնոց դա-
սուցն հանդիպելով շնորհի. վարդա։
Որոց դատողական աթոռ ահեղ ա-
տենին հանդերձեալ մնայ. կատա-
րել 'ի մեզ դատաստան ըստ գրեալսն.
առ սոսա անկցուք զղջացեալ ան-
ձամբ պաղատելով. հաշտեցուցանել
աղօք ընդ ըմեզ զահաւոր ԶԶ. իւր
զդատաւորն.

Առաքեալք այս սիւնըք հաստատոյ տ
կաթուղիկէ եկեղեցւոյ. Քի այ ած
երկնաւոր վարդապետին աշակերտք.
բարեխօսեցէք շնորհել զխաղաղութի
ամ աշխարհի. Բարեկամք Քի և
հաղորդակիցք ածային խորհրդոցն.
ընդունողք ըզ բանըն կենաց և
լուսաւորիչք տիեզերաց. բարե.
Կատարողք ահեղ ատենին և դատա
պարտողք ըզքո ոչ խոստովանողաց.

աղաչեմ իմք ըզձեզ․ բարի․

ա Քեզ վայելէ ամ օրհնութի․ որ
աՃ յարութիւդ ես ձայնիւ յաւիտենից
նընծայեցելոցն․ Թագաւոր եւ իշխան
վեր օրհնեմք ըզքեզ․ Ի միասնագամ
գալըստեանն ըն քո քո փառաց թագա-
ւոր․ ՚ի ձայն փողոյ նորոգեսցին հոգիք
նընծայեցելոցն․ եւ յառնեն ՚ի մեռելոց
անապական մարմնով․ Այս որոյ եւ
մեք ըզքեզ աղաչեմք հայր երկնա-
ւոր․ գամաւորեա ըզնընծայեցեալսն
մեր ՚ի վերինն ըզ քո եղեմ․ ՚ի ժողովս
անդրանկաց գրելոց ՚ի յերկինս․

ա Ձայն արկեալ կենարարին ամենա-
աՃ յին բարբառովն․ ասէ եկայք օրհնեա
լք հօր իմոյ ժառանգեցէք․ պատրաս
տեալ ձեզ ըզկեանսն ՚ի հանդերձեալ
երկրին․ Ընդ առաջ ելանել քեզ հա
ւատով ՚ի յօդս վերինս․ ամենա-
գեղոյ լուսով պայծառացեալ ՚ի դասս
անմարմնոցն․ ՚ի լսել ըզձայն երանա
ւէտ կոչմանն․ Ընդ առաջ քումդ կա

ցո ընդ իմաստուն սե կուսանսն . ՚ի
լուսեղէն առագաստին պայծառացել
՚ի դասս անմարմնոցն . ՚ի ժողովս անդ
րանկաց գրելոց ՚ի յերկինս .

Ողորմեալքս ՚ի յիշատակ սրբոց ա
մարտիրոսացըն . մնաքեալ նուիրեալ եր աձ
գելով . Օրհնութի ՚ի բարձունս երկնա
ւոր թագաւորին : Բանից հեղմամբ
արեան սոցա պարտեցաւ թշնամին .
Եւ մեծարեալ պարծի սոին երգե
լով . Օրհ : Պսակեցելոցն ընդ զօրըս
վերին զուարթնոցն . յիշատակա
բերկրեալ ՚ի սրբութի սոցա եր
գեսցուք . Օրհ :

Սրբք ըզ հանդէս նահատակութե
ան բռնաւորացն ցուցին . Եւ յաղթե ա
ցին հաւատով երրեակ լուսոյն եղեն աձ
մեզ առիթ . աղաչանօք սոցա կեցո
ըզմեզ : Սրբք ըզխաւար կռապաշտու
թեանն վանեալ հերքեցին . Եւ կանգ
նեցին մեզ նշան յաղթօղ ընդդէմ
թշնամւոյն . աղա : Ահա հրաշափառ

Ճըգնութբ պատերազմեալք ՚ի յերկրի · վեր համբարձեալք երկնայնոց դասուցն եղեն երգակից · այժմ։

Ձայնէ Տէրերկնիցին՝ առ Օրհնութի- ասասութան՝ առաջեալ յանձնարարնոց, այլև ի հրաշանդնուագօղութ որբոց ծուղծուցն ձշ Հայրապետացն։

Փառք ՚ի բարձունս այ · և յերկրի խաղաղութի՝ ՚ի մարդիկ հաճութի · Եւ օրհնութի քեզ ՚ի բարձունս · օրհնեալ ես տէր այ մեր · օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք տէր զքեզ և երկրպագանեմք քեզ․ փառաւորեմք զքեզ · գոհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոյ · Տէր թագաւոր սուրբ երկնային · այ և հայր ամենակալ։ Տէր և որդի հօր միածին յս քս և սուրբ որդի · Տէր այ գառն այ և որդի հօր · որ առեր զմըրմ ՚ի կուսէն · Ողորմեցար, բարձեր ըզմեղս աշխարհի · և արդ ընկալ զաղաչանս մեր · Սուրբ որ նստիս ընդ

աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ։ Զի դու միայն սբ՝ դու միայն բարձրեալ ես՝ դու միայն տէր մեր յս քս. Տէր և Հոգիդ սուրբ՝ որ 'ի փառս ած ընդ Հօր. ամէ՛ն.

Եւ յա՜մ ժամ օրհնեմք զքեզ. տէր և գովեմք զանուն սուրբ քո՝ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա՛ տէր զօրս զայս խաղաղութե. և առանց մեղաց պահեա՛ զմեզ։ Օրհնեալ ես տէր ած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն սբ քո յաւիտեանս. ամէն։ Օ՛րհնեալ տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիս քո. (ԵՐԻՑՍ ԿՐԿՆԵԱ)։ Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ տէր ողորմեա՛ ինձ և բժշկեա՛ զանձն իմ. ես մեղայ քեզ։ Ցո՛յց մեզ տէր զողորմութիս քո. և զփրկութիս քո տո՛ւր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս քո՝ զի դու ես ած իմ։ Ի քէն է տէր՝ աղբիւր կենդանութե. և լուսով ե-

րեսաց քոց տեսանեմք զլոյս․ Ձգեա՛
զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն ըզ
քեզ տէր․

մաղ Փառք պատիւ և երկրպագութի՛ւն
ի բարձունս հօր և որդւոյ և հոգւ-
ւոյն սրբոյ․ այժմ և միշտ և․

Առաւօտու երգք Յարութե՛ կարգաւ, զկնի փառք
ի բարձունսն․

աձ Զյարութիւն ըզ փրկչին օրհ-
ակ նեսցուք․ զփրկչին մերոյ օրհնես-
ցուք զյարութիւն․

Յարեաւ աստուած․ ցրուե-
ցան թշնամիք նորա․

բձ Զյարութիւն ըզ փրկչին օրհնես
բկ ցուք․ զփրկչին մերոյ օրհնես․

Զյարուցեալն ըզ քրիստոս
օրհնեսցուք․ և զյարութիւն նորա
փառաւորեսցուք․

գձ Զյարութիւն զփրկչին օրհնես․
գկ Որ էին ի բարձունս․ և գերեաց
ըզ գերութիւն․ էառ աւար բաշ-

խեանց պարգեւս եւ ետ որդւոց ը
մարդկան։

Օ յարութիւն ընդ փրկչին օրհնես։ դձ
Որ համբերեաց խաչին եւ եդաւ ՚ի դկ
նորափոր վիմի։ եւ ածայլն յա-
րութեամբ ընդ մահացեալսն վերաբեր
եանց ՚ի կեանս։

---

Երգ Համբարձմանն Քրիստոսի։

Օ յարութիւն ընդ փրկչին օրհ
նեսցուք. զփրկչին մերոյ օրհնես-
ցուք զյարութիւն։

Համբարձաւ աստուած օրհնու-
թեամբ. եւ տէր մեր ձայնիւ փողոյ։

Օ գալուստ հոգւոյն օրհ հդլ
նեսցուք. զհոգւոյն սբր-
բոյ օրհնեսցուք ընդ գալստեանն.
ուստ։ Յերկրպագեցէք.
բարեբան նեցէք զաստուածն
մ. եւ ընդ տէր յառաքելոցն
խորայն։

Առաւօտու երգք աղուհացից՝ և այլոց աւուրց պահոց։

ԲՀ Լոյս տուր տէր աչաց իմոց։ … զի մի երբէք ննջեցից ի մահ։

Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

ԳՀ Ի քեն է տէր աղբիւր կենաց։ Եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ձգեա զողորմութիւն քո որք ճանաչեն զքեզ. զարդարութիւն քո որք ուղիղ են սրտիւք։

ԴՀ Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ ես մեղայ քեզ։

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա տէր։

ԵՀ Ես առ քեզ տէր աղաղակեցի … առաւօտու

աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէր տէր մերժես զանձն իմ.
կամ դարձուցանես զերեսս քո յի-
նէն ։

Մնացեն աղօթք իմ առաջի քո ուր
տէր . խոնարհեսցի ունկն քո ՚ի
խնդրուածս իմ։

Տէր ած փրկութեան իմոյ , ՚ի
տուէ կարդացի և գիշերի առաջի
քո։

Տէր հաներ ՚ի դժոխոց զանձն ուղ
իմ . փրկեցեր զիս յայնցանէ .
որք իջանեն ՚ի գուբ ։

Բարձր առնեմ ըզքեզ տէր զի
ընկալար զիս . և ոչ ուրախ արարեր
զթշնամիս իմ յիս ։

Յօր մտանէ թագաւորն ծող
ըն մեր քրիստոս ՚ի յերուս-
աղէմ ըն նոր քաղաք դաւթի ։

Ընդ առաջ ելին ծերքն ոս-
տովք ձիթենեաց . և զսաղմոսաւ
մծ որդին փառաւորէին ։

ԲՂ Ի սկզբանէ տէր զերկիր հաստատեցեր. եւ գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա կորնչին եւ դու կաս եւ մնաս յաւիտեան։

ԳՂ Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա։

Տարցին ցնծութեամբ եւ ուրախութեամբ. եւ տարցին ի տաճար թագաւորին։

ԴՂ Խորհեցան եւ խօսեցան ըզչարութիւն. եւ զապիրատութիւն ի բարձունս խորհեցան։

Եդին յերկինս զբերանս իւրեանց. եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ։

ԵՂ Որսացան զանձն արդարոյ. եւ զարիւն անբիծ պարտաւոր առնէին։

Եղեւ տէր ապաւէն իմ. ած օգնական յուսոյ իմոյ։

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք ուր
իմ տկարացան յաղքատութենէն.

Աղաղակեցի առ տէր զօրհանա
պազ. և համբարձի առ քեզ ըզ
ձեռս իմ.

Փոխանակ սիրոյ իմոյ մատ-ուղ
նէին զիմ [illegible]
[illegible]ս. այլ ես յաղօթս կայի
մ[illegible].

Մատուցից օրհնութիւն իմ
[illegible]ր. զի երեան մե-
ղաւորի. երեան ննդաւորի բացա-
ի վերայ իմ.

Զ. ձայն չափ աաա.

Եդին զիս ի գբի ներքնոյ շաղ
[illegible]ւմն. ի խաւարի և ի ստուե
րս մահու.

Յիս հաստատեցաւ սրտմտութի
քո զամենայն ըզբօսանս քո ածեր
ի վերայ իմ.

Եդին զիս ի գբի. ներքնոյ ուղ
[illegible]ւմն. ի խաւ

ւարի եւ ՚ի սուերըս մա-
հոմու:

փ Տէր ած փրկութեն իմոյ
՚ի տուէ. կարդացի եւ գիշերի ա-
ռաջի քո:

Օ փոխն ըմն ասա:

մահ Պարծ անձն իմ ՚ի հանդի-
ստ քոմ ... ումմ. զի տէր

փ կոչեաց ըղքե մեղ. Սիրեցի
զի լուիցէ տէր զձայն աղօթից ի-
մոց. զի խոնարհեցոյց զունկն
իւր առ իս. եւ ես յաւուրս իմ կար-
դացի առ նա:

Օ փոխն եւ ըմն ասայէ:

եկղ Տան քում ըվայելէ սրբութիւն
տէր ... ընդ
երկայն աւուրս:

Տէր՝ թագաւորեաց վայելչու-
թիւն ըզգեցաւ. զգեցաւ տէր զօ-
րութիւն ընդ մէջ իւր էած:

Արի տէր ՚ի հանգիստ քո. դու
և տապանակ կտակի սրբութեան քո։

Յիշեա տէր ըզդաւիթ և զամե
նայն հեզութիւն նորա։

Քո են երկինք և քո է եր-
կիր. զաշխարհս լրումն իւրով դու
հաստատեցեր։

Զհիւսիս և զհարաւ դու արա
րեր. Թափօր և Հերմոն յանուն
քո ցնծասցեն։

Իջցէ որպէս զանձրև ՚ի վերայ
բրդոյ դեղմանն. որպէս ցօղ զի ցօ-
ղէ յերկիր։

Ած զիրաւունս քո արքայի տո
ւր. և զարդարութիւնս քո որդ
ւոյ թագաւորի։

Ետուր երկիւղածաց քոց նշան խա
չին. զի ապրեսցին յերեսաց ա-
ղեղան։

Որք փրկեցան սիրելիք քո.
կեցո աջով քով և լուր ինձ։

Հրշ Օրհնեցէք զտէր յերկինս. օրհնեցէք զնա ի բարձունս.

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա.

առք Չեն բանք և ոչ են խօսք. որոց ոչ լսին ձայնք նոցա.

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. և մինչև ի ծագս աշխարհի ելին խօսք նոցա.

մրդ Յեկեղեցիս բարեբանեցէք զաստուած. և զտէր յաղբերացն իսրայէլի.

Հյր Քահանայք քո զգեցցին զարդարութի, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն.

Յիշեա տէր զդաւիթ, և զամ հեզութիւն նորա.

մրտ Պարծեսցին սուրբքն փառօք. և ցնծասցեն ի հանգիստս իւրեանց.

Օրհնեցէք ըզտէր յօրհնութիւն
նոր․ օրհնութիւն նորա յեկեղե-
ցիս սրբոց։

Առաքեա տէր ըզլոյս քո մրտ
և զճըշմարտութիւնըն քո․ ցոյց տուր
մեզ տէր զողորմութիւն․ եւ տուր քո
ծառայիցըս լեր օգնական ն․
բարեխօսութեամբ սրբոց մարտիրոսա-
ցըն․ որոց այսօր է յիշատակ
կ․ Օ է սուրբք առաջնորդ-
եալ եկեղեցւոյ ի լեառըն մէ և ի յար-
կըս քո․ մըտից առաջի սեղանոյ
այ առ այծ․ որ ուրախ առնէ զման-
կութի իմմ։ ցոյց մեզ տէր։

Արեգակն արդարութեան [illegible]
ն․ այսօր յայտնեց[illegible]
ցա [illegible] զ[illegible]
մա րդկան ն․ մարդ․ որդ ե մղեա
պ․ ըղեա սըր [illegible] րըբեց [illegible] ցե ր
զջուրս վերա ծընեա ու ըզ ըմեզ

մըկըրտութեամբըն սըրբոյ ցըղյ հոմմաւդ ըդուսոյն :

Ի վայելըչութիւն փառաւ ցի սըրբ բըղութեամն քո բ մայ · Ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծընայ ըզքեզ գ :

Սարդ ես մղեաւ ·

---

Քարոզ՝ Կիրակամտից , Կիւրակէից , և Տօնից ·

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ · տէր ողորմեա :

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ , զտէր աղաչեսցուք ·

Վասն ա̄մ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց , զտէր աղաչեսցուք ·

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին , զտէր աղաչեսցուք ·

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց , և ա̄մ ուխտի մանկանց եկեղեցւոյ , զտէր աղա ·

Վասն բարեպաշտ թագաւորաց և մեծամեծ իշխանաց՝ զօրավարաց և զօրաց նոցին , զտէր աղաչեսցուք ։

Վասն զի տէրն ամենակալ հնազանդեցուսցէ առաջի նոցա զամենայն պատերազմունս թշնամեաց , զտէր աղաչեսցուք ։

Յաղագս հարց և եղբարցն մերոց՝ որք ՚ի գերութեան են և ՚ի չար ծառայութեան , զտէր աղաչեսցուք ։

Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝ խաղաղութե̃ հասանիլ ՚ի նաւահանգիստն բարութեան , զտէր աղաչեսցուք ։

Յաղագս հիւանդաց և ամ̃ վշտացելոց՝ փութապէս առողջութեան , զտէր աղաչեսցուք ։

Յաղագս բարեխառնութե̃ օդոց՝ անձրևաց քաղցրութեան , և պտղոց առատութե̃ , զտէր աղաչեսցուք ։

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ՚ի սուրբ եկեղեցի աստուծոյ , զտէր աղաչեսցուք ։

Եւ յաղագս այնոցիկ , որք մատնեալք են ՚ի ձեռս անօրինաց վասն

անուանն քո, զոր աղաչեսցուք։

Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ ի ք̅ս ննջեցին, զոր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զմեզ տեառն ա̅յ՝ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, զոր աղաչեսցուք։

մաղ Բարեխօս ունիմք սուրբ զՄարիամ զա̅ծածինն զփառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն, սուրբ զՅովհաննէս մկրտիչն, սուրբ զՍտեփաննոս նախավկայն, սուրբ զԱռաքեալսն և զՄարգարէսն, զոր և ըդ յաղթօղ սուրբ զվկայսն։ Եւ զմեծ խոստովանողն քո զհայրապետն մեր զսուրբն Գրիգորիոս լուսաւորիչն հայաստանեայց աշխարհի։

Յիշեսջիք և զա̅մ սուրբս և ըդ նոքօք, զոր աղաչեսցուք։

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ օրս խաղաղութե̅ անցուցանել՝ հաւատով՝ ի տեառնէ խնդրեսցուք։

Զհրեշտակ։ Զքաւութիւն։ Զսրբոյ։ Եւ ևս միա։ Զանձինս։ Ողորմեաց։

Քարոզ՝ ՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն մերմէ ասացեալ վասն սրբոց Հռիփսիմեանցն · այլ և վասն Առաքելոց և Մարգարէից ։

Աստուած մեծ հզօր և փառաւորեալ · լուսաւորիչ սրբոց՝ և ՚ի սբս հանգուցեալ · զճգնութիւն սրբոց առաքելոցըն բարեխօս ունիմք առ քեզ · աղաչեմք ։

Լուր տէր մեր և ողորմեա ։

Որ անդադար օրհնաբանիս ՚ի դասուց հրեղինաց երկնաւոր զուարթնոցն · արժանաւորեա ըզմեզ ուղիղ փառաւորութեամբ ընդ սուրբըս քո երկրպագել մեծի և ահաւոր տէրութեանըդ քո · աղաչեմք ։

Օրհնեմք ըզքեզ միաբան սիրով ՚ի յիշատակըս վկայից քոց · որք հետևօղք եղեն լուսազարդ ճանապարհաց քոց տէր · որ վասըն մեր յանձն առեր զչարչարանըս խաչի և մահու · աղաչեմք ։

Կատարիչք հաճոյից կամաց ածութեանդ քո · զանձինս իւրեանց պատարագեցին ՚ի վկայութիւն ճշմարիտ սիրոյ քոյ · և բուրեցին զհոտ անու-

շից տէրութեանըդ քո՛յ . աղաչեմք ։

Սրբեցի՛ն զանձինս իւրեանց տա-ճար անուանըդ քում սրբո՛յ . մաք-րեալք զմիտս՝ և զխորհուրդս իւ-րեանց երկիւղիւըդ քո՛վ սրբով . և դասակցե՛ցք եղեն հոգեղինաց երկնա-ւոր զուարթնո՛ցն . աղաչեմք ։

Բա՛րեխօսութե՛ամբ սրբուհւոյ աստուածածնին . և այլն ։

---

Քարոզ՝ Հայրապետաց , և Վարդապետաց ։

Առաջնո՛րդք եղեն մեզ ուղիղ գնացիւք 'ի շաւիղս արքայութե՛ երկ-նի՛ց . մեծապայծառ ջահիւ՝ հաւատո՛վ և սիրո՛վն իւրեանց , ծագեցի՛ն ըղ լոյս ա̃ծգիտութեան 'ի սիրտս մե՛ր . աղաչեմք ։

Պա՛հպանութե՛ խորհրդոց բանից և գործոց մերո՛ց . սրբութե՛ փառա-ւորել զամենասուրբ զերրո՛րդութի՛ն , զՀա՛յր և զՈրդի և զսուրբ Հոգին յա-ւիտեանս ամէ՛ն . աղաչեմք ։

Զճգնութի՛ւն սրբո՛ց մարտիրոսացն բարեխօս ունիմք առ բարերար որդիդ ա՛յ. զի շնորհեսցես աշխարհի զանշարժ զխաղաղութիւն. և պահեսցես հաստատուն սուրբ զեկեղեցի, հաստատեա՛լ ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէի՛ց. աղա՛չեմք:

Զճգնութի՛ւն սրբո՛ց մարտիրոսացն բարեխօս ունիմք առ բարերար որդիդ ա՛յ. զի խաղաղասցին խռովութի՛ւնք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. անկեսցի՛ սէր և արդարութիւն ՚ի յերկրի՛. աղա՛չեմք.

Աղաչանօ՛ք սրբո՛ց մարտիրոսացն տէ՛ր, որք ճգնեցան վասն անուանդ քում սրբո՛յ. նայեա՛ց յերկրպագութիւն ժողովելոցս. և շնորհեա՛ մեզ զթողութիւն. և հա՛ն մասն և բաժին ընդ սուրբս ա՛մ. աղա՛չեմք.

Աղաչանօ՛ք սրբո՛ց արեամբ նահատակեա՛լ վկայիցն տէ՛ր, որք զանձինս իւրեանց տաճար մաքրեցին հոգւոյդ քում սրբո՛յ. պարգևեա՛ յերկրի մե-

րում գքաղցրախառն օդ . և ըղձուար ձայն ըզգեւոյս . առ ՚ի լցուա̆ծն լինիլ ամենայն հարկաւոր պիտոյից մերոց . աղաչեմք ։

Բարեխօսութե՛ սրբուհւոյ ա̃ծածնին , և յովհաննու կարապետի՛ն , սրբոյն ստեփաննոսի նախավկայի՛ն , և ա̃մեց առաքելոց մարգարէից և մարտիրոսա՛ց , և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին ։ Բարեխօսութե̃ և աղօթիւք սրբոցն (այս անուն) որոց այսօր է յիշատակ ։ Նաև ա̃մ սրբոց քոց տէր՝ որք միացան ՚ի սէր ա̃ծութեա՛ն ըն̃դ քո՝ յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց, և մեզ արա ՚ի քում գալստեա՛ն ն̃դ . աղաչեմք ։

Նաև ես առաւե՛լ զյորդորումըն սիրոյ, և զգործըս բարեաց պարգևել մեզ խնդրեմք ։

Զ ա՛նձինս ։ Ողորմեա՛ց ։

Վարդ՝ Ծննդեանն քրիստոսի, և Աւետեաց, և Փոխման սուրբ Աստուածածնին, և Տեառն ընդ առաջին:

Այր սուրբ սքանչելի լուսոյն. որ զա̃ծն ամենայն յաւիտենից յո-րովայնի քում կրեցեր՝ և ցընծու-թիւն աշխարհի ծնար զբանն աս-տուած. աղաչեմք:

Այր սուրբ բարեխօսեա:

Աղաչեմ վասն մեր զառ՚ի քէն ընդ մարմնացեալն ա̃ծ. որ խոնարհե-ցաւ ՚ի հայրական ծոցոյ. էառ մար-մին ըստ մարդկային բնութեան՝ առ-նել խաղաղութիւն յերկինս և յերկրի. աղաչեմք.

Աղաչեմ. Ներել մեզ անտես առ-նել զյանցանս մեր. և տալ օգնակա-նութիւն ընդդիմակաց լինել հակառա-կամարտին ՚ի պատերազմի. աղաչեմք.

Աղաչեմ. Ո՛ է լռեսցին պատե-րազմունք. դադարեսցին յարձակմու-նք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն ՚ի յերկրի. աղաչեմք.

Աղաչեմ. Անցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց.

զառա՛տ պտղաբերութի՛ բուսոց՝ և՛ տընկոց · առ ՚ի զուարճալի՛ լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց · աղաչեմք ։

Աղաչեմ ։ Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սբ · շինեա՛լ ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէից · պահե՛լ անարատ մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ · աղաչեմք ։

Աղաչեմ վասն մեր սրբուհի զմիածին քո զորդին · և վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունի՛լ յարքայութիւնն երկնից · և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն · աղաչեմք ։

Յիշեա՛ տէ՛ր և ողորմեա՛ ։

Նոյնս առաւե՛լ զյորդորումն սիրոյ և զգործըս բարեաց պարգևել մեզ խնդրեմք ։

Տո՛ւր մեզ տէ՛ր աստուա՛ծ ։

Զա՛նձինս մեր և զմիմեանս ա՟ծ ։

Քե՛զ տ՟ր յա՛նձն եղիցո՛ւք ։

Ողորմեա՛ց մեզ տէր ա՟ծ մեր ըստ մե ։

Տէր ողորմեա՛ · տէր ողորմեա՛ · տո՛ւր տէր և ողորմեա՛ ։

Փառաւորեսցուք զամենակալն ած՟ զհայր տեառն մերոյ յի՟ քի՟, գոհանալով զնմանէ՝ որ պահեաց զմեզ խաղաղութ՟ ՚ի գիշերիս յայսմիկ։ Եւ առաջնորդեաց մեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս. ՚ի մահուանէ ՚ի կեանս. յապականութ՟է յանապականութ՟ի. յանգիտութ՟է ՚ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ. Աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի նմանէ, զի զերկարութիւն տունջեանս խաղաղութ՟ և ամ՟ մտադիւր զուարթութ՟ արասցէ անցուցանել ՚ի մէնջ. Եւ պարսպեալ պահեսցէ զժողովուրդըս իւր ած՟ային զօրութ՟ն. որ ՚ի վերոյ ամ՟ի բարերարութ՟ն իւրով իշխանութ՟ի ունի։ Ամենակալ տէր ած՟ մեր. կեցո՛ և ողոր՟։ Ո՜ առաւօտալուսոյ և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ՚ի տեառնէ խնդրեսցուք։ Ո՜ հրեշտակ խաղաղութ՟ն պահապան։ Ո՜ քաւութ՟ի և զթողութ՟ի յանցանաց։ Ո՜ սրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն. Եւ եւս միւս։ Ո՜ անձինս։ Ողորմեաց։

### Աղօթք.

Գոհանամք զքէն տէր ած՟ մեր. որ երևելի լուսով քով զուարճացուցեր զամ՟ արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս ՚ի քեզ. Օրացո՛ և զմեզ տէր՝ ՚ի պահպանութ՟ե պատուիրանաց քոց՝ ՚ի տուընջեանս յայսմիկ և յամ՟ ժամանակի. Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք. և հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամ՟ սուրբս քո. Շնորհօք և մարդասիրութ՟բ տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟. որում վայելէ փառք իշխանութ՟ի և պատիւ. այժմ և միշտ և.

### Խաղաղութիւն ամենեցուն.

Խաղաղութ՟ի մեր և կեանք՝ որ ՚ի հօրէ առաքեցար՝ միածին որդի այ՟. տէր մեր և փրկիչ յս՟ քս՟. Տուր մեզ զխաղաղութիւն քո՝ զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց. փչմամբ քո ՚ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգին քո սուրբ. Որպէս զի և մեք

խաղաղացեալք յա՟մ աշխարհական սա հեցմանց՝ լիցուք տաճար և բնակարան ա՟ծային շնորհացդ . և գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ ք՟ս ա՟ծ մեր . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .

---

Եւ ասի սուրբ աստուած ըստ պատշաճի . Յաւուր Աւետեաց , Ծննդեան , և Թլփատութեան զայս ասա ։

Սուրբ աստուա՛ծ . ս՟բ և հզօ՛ր . ս՟բ և անմահ . որ յայտնեցար վասն մեր . ողո՛րմեա մեզ ։

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի , և Ծաղկազարդին ։

Սուրբ աստուած . որ եկիր և գալոց ես . ողո՛րմեա մեզ ։

Ուրբաթու Մատնութեան գիշերին ։

Սուրբ աստուած . որ մատնեցար վասն մեր . ողո՛րմեա մեզ ։

Ուրբաթու ճաշուն՝ և յամենայն տօնից սրբոյ , խաչի և եկեղեցւոյ , այլ և յաւուրս պահոց ։

Սուրբ աստուած . որ խաչեցար վասն մեր . ողո՛րմեա մեզ ։

Ուրբաթու երեկոյին, և շաբաթու գիշերի։

Սուրբ աստուած • որ թաղեցար վա՛սն մեր • ողո՛րմեա մեզ։

Զատկի և ա՟մ յարութեան կիւրակէից։

Սուրբ աստուած • որ յարեար ՚ի մեռելոց • ողո՛րմեա մեզ։

Համբարձմանն Քրիստոսի։

Սուրբ աստուած • որ համբարձար փառօ՛ք առ հայր • ողո՛րմեա մեզ։

Գալստեան Հոգւոյն սրբոյ։

Սուրբ աստուած • որ եկիր և հանգեար յառաքեալսն • ողո՛րմեա մե՛զ։

Վարդավառին։

Սուրբ աստուած • որ յայտնեցար ՚ի Թաբօ՛ր լերինն • ողո՛րմեա մե՛զ։

Փոխման սուրբ Աստուածածնին։

Սուրբ ա՟ծ • որ եկիր ՚ի փոխումն մօ՛ր քո և կուսի • ողո՛րմեա մե՛զ։

Ծննդեան առաքելոյ աւուրն։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ ա՟մե-
կոյս ա՟ծածին մարիամ մայր քրիս-

տօսի , մատո՛ զաղաչանս մեր՝ որդւոյ
քոյ և աստուծոյ մերոյ ։

Փրկեա՛ զմեզ ՚ի փորձութենէ և յա̃մ մաղ
վտանգից մերոց ։

Եւ ես խաղաղութեն զօէր աղա ։

Վասն լսելի լինելոյ Տեառն այ քրղ
ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութ̃
սուրբ ածածնին ։ Եւ իջանելոյ ՚ի
վերայ մեր ողորմութեն և գթութեն
Տեառն այ ։ Ամենակալ տէր ած մեր ․
կեցո՛ և ողորմեա՛ ։

Օրհնութի՛ և փառք հօր և որդ ։ քհ

խաղաղութիւն ամենեցուն ,

---

Եւ ապա սաղմոս ձայնիւ յաւուր կիւրակէի յառաջ-
ընթաց աւետարանին ․

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեա՛լ , կգ
յայսմ հետէ մինչև յաւիտեան ։

Օրհնեցէ՛ք մանկունք զտէր ․ և ․ աղ
Տես ՚ի երեսն ․ 277 ։

Յաւուրս չորեքշաբթից ապա ընթերցեալ լինի
Աւետարան բժշկութեան ։ Եւ ՚ի պահս տէրու-
նականս Սաղմոս և Գիրք և Աւետարան ըստ
[illegible] ։

Եւ ելեալ անտի յի̃ գնաց 'ի կողմանս տիւրոսի և սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեա՛ց ինձ տէր որդի դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։ Եւ նա ո՛չ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ. ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. տէր՝ օգնեա՛ ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ. ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ. այո՛ տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա յիսուս և ասէ. ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս։ և բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմա-
նացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն 'ի
ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահ-
մանացն 'ի Դեկապօլիս։ Եւ բերին
առաջի նորա խուլ մի և համր. և ա-
ղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նր̅։
Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ
անտի, արկ զմատունս իւր ընդ ական
ջս նորա՝ և եթուք անդր. և կալաւ
զլեզուէ նորա. Հայեցաւ յերկինս՝
յոգւոց եհան՝ և ասէ. Եփփաթայ՝
որ է բացի՛ր։ Եւ նոյնժամայն բացան
լսելիք նորա, և լուծան կապանք լեզ-
ուի նորա. և խօսէր ուղիղ։ Եւ պատ
ուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասի-
ցեն. և որչափ նա պատուիրէր նոցա,
նոքա ևս առաւել քարոզէին. և ևս
քան զևս զարմանային և ասէին. զա-
մենայն ինչ բարւոք գործեաց սա, զի
խլեց լսել տայ՝ և համրոց խօսել։

Եւ եղև ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ․ վարդապետ աղաչեմ զքեզ հայեա՛ց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա այս հարկանէ ՚ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ զնա և թաւալեցուցանէ և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ՚ի նըմանէ խորտակեալ զնա․ և աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ո՛չ կարացին։ Պատասխանի ետ յս̃ և ասէ․ ո՛վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ․ մատո՛ այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն՝ և շարժլեաց։ Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց ըզմանուկն․ և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան ՚ի վերայ մեծամեծացն աստուծոյ։

Եկն դարձեալ ՚ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի Կափառնայում։ Նա իբրև լուաւ եթէ Յս̃ եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա. եկն առ նա՝ և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ՚ի մեռանել։ Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանիցէք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն. Տէր՝ էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. Երթ՝ որդին քո կենդանի է։ Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յս̃, և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ։ Եւ ասեն ցնա. Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յս̃՝ թէ որդին քո կենդանի է. և հաւա-

տաց ինքն և ամ տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յս եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա։

Երգ առաջնոյ աւուր միաշաբաթին, և ՚ի խորհուրդ արարչութեանն, և ՚ի յարութիւնն քրիստոսի։

կեր Նորաստեղծեալ բանն յանէից խորհրդեանէ զերկինս երկնից. և զերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց. և ըղձալի տարերց քառից հակառակաց միաբանից. որով յաւէտ փառաբանի երրորդութիւնն անձառելի։

Երեքսրբեան մի տէրութի միով բնութբ ածութի. լոյսն որ անեղ արարչական սաստ լինել լոյս եղական. զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին. որով յաւէտ փառաբանի երրորդութիւնն անձառելի։

Բարբունորէն բացատրեսցուք ըղ ծածկեալ խորհուրդըն ծանիցուք.

զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգ-
ւոց տեսանելի. ՚ի սոյն ծագեաց միա-
շաբաթ մեզ յարութեն սուրբ ճառա-
գայթ. Եկայք փրկեալք ընդ զուարթ-
նոյն տուք օրհնութիւն յարուցելոյն.

Սէրդ սիրով խոնարհեցար ՚ի փըր-
կութիւն մեր մարմնացար. Նովին մարմ-
նովըն խաչեցար ՚ի գերեզման մահու
եդար. այսօր յարեար աստուածաբար ՚ի
հրեշտակաց քարոզեցար. Եկայք.

Երեւեցար խընկաբերիցն յողջոյն
կենացն ուրախալից. եւ ՚ի լերինն
գալիլեայ առաքելոց մետասանից. ար-
ժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տե-
սանել յօրըն վերջին. Եկայք.

Սիոնի որդիք զուարթիք հարսին
լուսոյ տուք աւետիք. Եթէ փեսայն
քո յարուցեալ յաղթեաց մահու իշ-
խանութեան. գայ պսակէ ըզքեզ
փառօք եւ ընդ առաջ պըճնեալ զար-
դուք. Երգեա երգ նոր յարուցելոյն
ննջեցելոց կենարարին պարգեւատուողին.

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի տեառնէ՝ զի զողորմութեն զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր. Տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի. Կեցո՛ տէր.

Տէր ողո՛րմեա՛. գ.

Աղօթք.

Քում ամենազօր և հրաշալի յարուենդ քս̃ ած̃ մեր՝ երկիր պագանեն զօրք հրեշտակաց. զի դու միայն ունիս զանմահութի՟ բնակեալդ ՚ի լոյս անմատոյց. Եւ մեք հողեղէն արարածքս՝ խոնարհեալք երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. Եւ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս՝ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃. ամէն.

Հայր մեր որ յերկինս ես.

Քարոզ յորժամ ՚ի Թափօր ելանեն·

Եւ եւս խաղաղութե ըզ տէր աղա- սրկ
չեսցուք· Տէր ողորմեա· դպ
Վասն ՚ի վերուստ խաղաղու- սրկ
թեան եւ փրկութե անձանց մե-
րոց· ըզտէր աղաչեսցուք·

Տէր ողորմեա· դպ

Ողորմեա մեզ տէր ա՛ծ մեր· ըստ սրկ
մեծի ողորմութե քում· ասասցուք
ամենեքեան միաբանութեամբ·

Տէր ողորմեա· տէր ողորմեա· դպ
տէր ողորմեա·

Օրհնութի եւ փառք հօր եւ որդ- քհ
ւոյ եւ հոգւոյն սբյ· այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից·

Ամէն· Ալէլուիա· ալէլուիա· դպ
ալէլուիա·

Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նա քհ
խախնամեալ պահեսցի արեւելեան
կողմ աշխարհիս, եւ հայրապետութի
հայոց, որս նշանաւ սբ խաչիւս եւ սբ
աւետարանաւս, եւ աւուրս շնորհիւ,
անուամբ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն
սրբոյ· այժմ եւ·

Եւ դարձուցանեն զերեսս յարեւմուտս։

Դպ. Ամէն։ Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Քհ. Օրհնեցի եւ պահպանեցի եւ նախախնամեալ պահեսցի՝ արեւմտեան կողմ աշխարհիս, եւ թագաւորութիւն քրիստոնէից, այս նշանաւ սբ. խա։

Եւ շրջելով դառնան ՚ի հարաւ։

Դպ. Ամէն։ Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Քհ. Օրհնեցի եւ պահպանեցի եւ նախախնամեալ պահեսցի՝ հարաւային կողմ աշխարհիս, երկիրս անդաստանս եւ պտղաբերութիւն տարւոյս, այս նշանաւ սուրբ խաչիւս եւ։

Եւ դառնան դէպ ՚ի հիւսիս։

Դպ. Ամէն։ Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Քհ. Օրհնեցի եւ պահպանեցի եւ նախախնամեալ պահեսցի՝ հիւսիսային կողմ աշխարհիս, վանքս անապատս քաղաքս եւ գիւղս, եւ բնակեալ ժողովուրդս ՚ի սմա, այս նշանաւ սբ.

Դպ. Ամէն.

Եւ դառնան 'ի բեմն · և ասեն դարձեալ ։

Օրհնութի՛ւն և փառք հօր և որդ ։ քհ

Քարոզ Թափօրի և Խաչի ։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր · զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ · Ամենակալ Տէր Աստուած մեր · կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք ։

Պահպանեա՛ զմեզ Քս ած մեր՝ ընդ հովանեաւ սբ և պատուական խաչիդ քո 'ի խաղաղութեան · փրկեա՛ յերևելի և աներևոյթ թշնամւոյն ։ Արժանաւորեա՛ գոհութբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ · այժմ և ։

Օրհնեալ Տէր մեր յս քս · ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես ։

Խաչ շալ առնուն չէ Աստուածածնին , և Քարոզին , առ առջեւ 'ի բեմ ։

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր · և օրհնեցէ՛ք զանուն տեառն ։

Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան.

Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արե-ւու՝ օրհնեալ է անուն տեառն.

Բարձր է ՚ի վերայ ամ ազգաց տէր. և յերկինս են փառք նորա.

Ո՞վ է որպէս տէր Ած մեր ՚ի բար-ձունս բնակեալ. և զխոնարհս տե-սանէ յերկինս և յերկրի.

Յարուցանէ զաղքատ յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղ-բեաց.

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ.

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ.

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն.

---

Մլ Երկնաւոր հօտ ընտրեալ. զոր
սող հովիւն քաջ թողեալ յերկինս. և
դկ եկեալ ՚ի խնդիր մեզ մոլորելոցս.
որով լցեալ զթիւ հարիւրոցդ. ա
րար ուրախութի ՚ի յերկինս երկնա

ւորացդ. աղաչեմք ըզ ձեզ բարեխօս
լերուք առ տէր վասն քաւութեան
մեղաց մերոց. Տեսանողք անտե
սին. խորհրդածուք խորոցն աս-
տուծոյ. որք իջեալ ընդ միածնին
սպասաւորել տնօրէնութեանն. Ի
ծննդեանն աւետաւորք հովուա
ցըն. և կանանցն իւղաբերից կենաց
քարոզք ըզ կենդանութեանն. ա՛ղ. Պահա
պանք աշխարհի. բանակք տեառն
շուրջ զերկիւղածովք. բարեկամք
աղքի մարդկան միջնորդք մահու և
յարութեան. միքայէլ և գաբրիէլ
մեծք. որ կայք միշտ առաջի ամենա
սուրբ երրորդութեան. ա՛ղ.

Այսօր ցնծայ զուարճացեալ ե- մկ
կեղեցի հեթանոսաց. տօնելով զյիշա դկ
տակ մեծի նահատակին և հօրըն հա-
ւատոյ աբրահամու. օրհնեցէք ման
կունք սիոնի զհայրըն լուսոյ անլը
ռելի. Այսօր նոր իսրայէլ կոչեց-
եալ մարգարէիւքն առ ած. տօնեա

ցնծութե ընդ տօն հովուացն լուսոյ
ելին առաջնոյ . գովելով ըզգլուխ
անկեան երկուց որմոց յարմարութե:
Այսօր 'ի գլուխ լերանց տուն այ
հաստատեալ . որ և յաւէտ ոռոգի
յամպոց հոգւոյն ածաբուղխ առա-
տահօս անձրևօք . բարեբանեալ զաղ-
բիւրըն կենաց զարբուցանօղըն ծա-
րաւեաց .

Մլ / աձ Առաւօտու զօրհներգութիւն
մարդասիրութեամբդ քո ընկալ Թա-
գաւոր փառաց . և զմանկունս ե-
կեղեցւոյ քո պահեա 'ի խաղաղու-
թեան . Ո՛ր տեսօղդ ես խոնարհաց
յերկնից 'ի յերկիր . և տուօղ ողոր-
մութեան ազգի մարդկան . ընդ մանու.
Ընդ սերովբէսըն սրբասաց համա-
ձայնեալ քեզ երգեմք . երեքսրբեան
տէրութե խնայեա քաղցրութեամբ
յարարածըս քո . և զմեզ :

Մլ / ակ Աշակերտըք քո . և առ ա̃մ տի
զերս առաքեալք բարեխօսեցէք առ

տէր վասըն մեր ։ Որք առնէք ըզպատ
ուէր. քարոզել աներկիւղ ըզ բանըն
կենաց յաշխարհի ։ բա ։ Որք արժա
նի եղէք տեսանել մարմնով զորդին
այ յայտնապէս ։ բա ։

Ըզօրըգնութի ց մեզ քոյ քո տօ-
նելով այսօր ընդ զօրս անմարմնոց ։
քեզ երգե մք անլռելի զօրհնա
բանութի ։ Մերկացեալ ցլք ըզմարդ
կային տկարութե ըզգեստ ։ հաւատոյ
վառեալ ըզգեստուք ։ յաղթեալ
լք հականակամարտիցն ի պատե
րազմի ։ Մըկըրտեալ ցլք ընդ քի հեղ
մամբ արեան ի մահ ։ անծութե ն գո-
րով հրաշակերտք ։ շինեալ լք
ի վայելչութի մբ արքայութե ն ։

Քաղաք՝ զինի Մանկանցն ։

Վասն խաղաղութե ամ աշխար-
հի, և հաստատութե սրբոյ եկեղեց-
ւոյ, զտէր աղաչեսցուք ։ Ըսասցուք
ամենեքեան միաբանութեամբ ։
Տէր ողորմեա ։ Է ։

Աղօթք․

Սուրբ ես տէր ա̅ծ մեր հզօր և փառաւորեալ․ որ նստիս ՚ի կառս քրովբէականս և լոյս ծագես յարարածս քո։ Լուսաւորեա՛ զմեզ տէր ՚ի ժամ առաւօտուս․ որպէս զի ՚ի ծագել լուսոյ տունջեանս՝ ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութե̅ քոյ։ Հեռացո՛ ՚ի մէնջ տէր զխաբէութիւն սատանայի․ և զբռնութի̅ նորա խորտակեա՛ աղօթիւք և բարեխօսութե̅ ա̅մ սրբոց։ Որմ՛ և զերկիրս պտղաբերս ՚ի սնունդս ծառայից քոց։ Յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ երրորդութիւնն․ այժմ և միշտ և ։

Յաւուրս աղուհացից ասա ասէ՝ Տէրամնական, և չէր նորա՝ Ինանից իմոց, և չայլ աւուրս պահոց միայն՝ Ինանից իմոցն․ ուր գտանես 295 երեսն։ Իսկ ՚ի տօնս սրբոց Աստծնա այս ասէ։

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց․ զի խոնարհեցոյց զունկն

իւր առ իս, և ես յաւուրս իմ կար-
դացի առ նա :

Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս :

Զնեղութի̃ և զանձկութի̃ գտի, և զանուն տեառն կարդացի :

Ո՜ տէր՝ փրկեա՛ զանձն իմ. ողոր-
մած աստուած մեր ողորմի՝ և պահէ զտղայս տէր :

Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցո՛յց զիս. դա՛րձ անձն իմ ՚ի հանգիստ քո. զի տէր օգնեաց քեզ :

Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ՚ի գայթակղութէ̃. հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց :

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ :

Ես ասացի ՚ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է :

Զինչ տաց տրիտուր տեառն ընդ-
ամենայնի՝ զոր և ետ ինձ :

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից :

Զաղօթս իմ տեառն տաց՝ առա-

ջի ամենայն ժողովրդեան նորա.

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. Ո՛ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ.

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից.

Զուխտս իմ տեառն տաց առաջի ամ ժողովրդեան նորա. 'ի գաւիթս տան տեառն, և 'ի մէջ քո Երուսաղէմ.

Օրհնեցէք զտէր ամ ազինք. գովեցէք զնա ամ ժողովուրդք.

Զի զօրացաւ ողորմութիւն նորա 'ի վերայ մեր. և ճշմարտութիւն տեառն մնասցէ յաւիտեան.

Ած յանուան քում կեցո զիս, և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ.

Ած լուր աղօթից իմոց, ունկնդիր լեր բանից բերանոյ իմոյ.

Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ ած առաջի իւրեանց.

Ահա ած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ.

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս

իմ, ճշմարտութ͞ք քո՛վ սատակեա՛ զն͞ս ։

Այս կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է ։

Յ͞մ նեղութ͞է իմմէ փրկեցեր զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Տո՛ւր զօրութ͞ի ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո . և արա՛ առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու տէր օգնեցեր ինձ ։ և մխիթարեցեր զիս ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ ։

---

Մաղթանք ՚ի տօնի ամենայն սրբոց ։

Քրիստոս ա͞ծ մեր՝ վասն խաչի քոյ պատուականի զխաղաղութ͞ի քո տո՛ւր մեզ տէր ։

Վասն սրբուհւոյ ա͞ծածնին, և յովհաննու կարապետին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, զխաղաղութիւն քո տո՛ւր մեզ տէր ։

Վասն սրբոց քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրո-

սաց , հայրապետաց , Ճգնաւորաց , կուսանաց , միանձանց , և երկնային զօրացն , զխաղաղութիւն քո տուր մեզ տէր .

Եւ վասն նախկին լուսաւորչացն մերոց Թադէոսի և բարդուղիմէոսի , և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին , և սրբոց յակոբեանց երջանիկ առաքելոցն , և սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին , մարուդէի Ճգնաւորին , և մելիտոսի եպիսկոպոսին , և դէորգայ զօրավարին .

Բարեխօսութ̃բ յիշատակս և աղօթիւք ս̃բցն (այս անուն) որոց այսօր է յիշատակ , զխաղաղութիւն և զմեծ ողորմութիւն քո պարգևեա՛ մեզ մարդասէր տէր .

Քարոզ Առաքելոց , և ամենայն Սրբոց.

Սուրբ Ճգնաւորքն աղաչեսցուք զտէր . որք զչարսն պարտեցին , նեղութեանցն համբերեցին . Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն : Աղօթիւք նոցա և բարեխօսութ̃բ մեզ ողորմեսցի . Ամենակալ տէր ա̃ծ մեր . կեցո՛ և ողորմեա՛ .

Աղօթք՝ ՚ի տօնի Առաքելոց, և Մարգարէից, և Հայրապետաց, և Վարդապետաց։

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի զվկայսն քո (այս անուն) ք͞ս ա͞ծ մեր. և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չարչարանաց քոց։ Նոքա՝ բարեխօս առ քեզ ունիմք, որք աստ, և ընդ ա͞մ տիեզերս սուրբք լցեն։ Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսութե͞բ խաղաղացուսցես զկենցաղավարութիս մեր, փրկելով զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Շնորհեա մեզ տէր ըստ օրինակի նոցա կեալ, և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութե͞բ ՚ի լոյս կենացն յաւիտենից։ Զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ, և ժառանգել զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի ս͞բց քոց զարքայութիւնդ։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի տօրկուադ վարդապետէն ասացեալ.

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս քո. Օ ծնօղսն մեր. Օ վարդապետս. Օ եղբարս. Օ ընկերս. Օ կերակրիչս. Օ ուխտաւորս. Օ ճանապարհորդս. Օ հանգուցիչս. Օ վաստակաւորս. Օ խոստովանօղս. Օ ապաշխարօղս. Օ գերիս. Օ հիւանդս. Օ նեղեալս. Օ իշխանս. Օ չարարարս. Օ բարերարս. Օ թշնամիս. Օ ատելիս. Եւ որք պատուիրեցին մեզ հաւատով.

Յիշեա՛ տէր և ողորմեա՛.

Բարերար և բազումողորմ աստուած՝ քո անմոռաց գիտութէդ և անքաւ մարդասիրութեամբդ՝ յիշեա՛ զամենայն հաւատացեալս ՚ի քեզ, և ողորմեա՛ ամենեցուն. Օգնեա՛, և փրկեա՛ յիւրաքանչիւր վտանգից և՚ի փորձութեանց. Արձանաւորեա՛ գոհութէ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Պսակիչ սրբոց քո, որ պսակես զսուրբս քո, և առնես զկամս երկիւղածաց քոց, և նոյնս սիրով և քաղցրութբ յարարածս քո։ Տուր մեզ յերկնից ՚ի սրբութէ քումմէ բարեխօսութբ սուրբ աստուածածնին, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ։ Տուր մեզ տէր և ողորմեա՛․ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Յիշեա՛ տէր զպաշ, և այլն։

Բարերար և բազումողորմ ած։
Օրհնեալ տէր մեր յս քս․ ամէն։
Հայր մեր որ յերկինս ես։

### Աղօթք Մանասէի թագաւորին ։

Տէր ամենակալ ա̃ծ աբրահամու իսահակայ յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց . ամենակալ տէր՝ թող ըզ մեղս իմ ։

Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և զա̃մ զարդ նոցա . ամենա ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո . փակեցեր զխորս , կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով . ամենա ։

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո . ամենա ։

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո . սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւորաց . անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց . ամենա ։

Դու տէր բարձրեալ՝ գթած , երկայնամիտ , բազումողորմ . և զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան . ամենա ։

Դու տէր՝ ո՛չ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ աբրահամու իսահակայ և յակոբայ, որք ո՛չ մեղան քեզ. ամէն.

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամէն.

Չեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձրութիւնս երկնից, ՚ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամէն.

Կորացեալ եմ ես ՚ի բռնութենէ կապանաց երկաթից. և ո՛չ գոյ ինձ հանգիստ. ամէն.

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն. ամէ.

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ ՚ի քաղցրութենէ քումմէ. ամէն.

Մեղայ տէր՝ մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամէն.

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն՝ թո՛ղ ինձ տէր, թո՛ղ ինձ. և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամէ.

Մ՚ի յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ՚ի ներքոյ երկրի չարեօք. ամէն.

Զի դու ա՟ծ՝ ա՟ծ ապաշխարողաց ես. և յիս ցոյց զբարերարութիւն քո, որ անարժան եմ. ամէն.

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զա՟մ աւուրս կենաց իմոց. ամէն.

Զքեզ տէր՝ օրհնեն ա՟մ զօրութիւնք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն.

Փառք հօր և որդւոյ և.

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէր, թո՛ղ ինձ զմեղս իմ.

Բազումողորմ տէր, ողորմեա՛ ինձ.

Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս ՚ի մեղաց, և կեցո՛.

Արարիչ իմ և յոյս ա՟ծ, գթա՛ յիս ՚ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս.

Ամենօրհնեալ օրբուհի՝ և միշտ կոյս ա՟ծածին մարիամ. բարեխօսեա՛

առ տէր վասն իմ մեղաւորիս ։

Ամենայն սուրբք այ̃՝ բարեխօսեցէք առ Հայր 'ի յերկինս վասն մեր մեղաւորացս ։

Քս̃ որդի այ̃ անոխակալ, ընկա՛լ զաղաչանս մեր · զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր ։

Յաղթօղ զօրութբ̃՝ սուրբ և կեն դանարար և պատուական խաչիւ քո տէր՝ պահպանեա՛ զմեզ ։

Առաքեա՛ տէր զհրեշտակ խաղաղութեան քո · որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի ·

Աւ մարդասիրութ̃ քո յիշեա՛ զմեզ տէր՝ յիշեա՛ զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քո, և ողորմեա՛ մեզ ։

Քարոզ ։

Անկեալքս 'ի խոստովանութի̃ ապաշխարութե̃՝ հաւատով զայս միածնի որդւոյն այ̃ դիցուք 'ի սիրտս մեր, խնդրելով 'ի նմանէ զքաւութի̃ և զթողութի̃ յանցանաց մերոց ։ Վասն զի նա ինքն է նախախնամօղն ամ̃ յաւիտենական · որ եկն կամաւ հօր 'ի փըր-

կել զարտորածս . և ասաց՝ զինքն լինիլ քաւիչ մեղաւորաց , յոյս ապաշխարողաց , շնորհելով զհանգիստ աշխատելոց , ընդունելով զծանրաբեռնեալս և զտաժանեալս մեղօք յապաշխարութ̃ի քաւութեան : Արդ՝ եկա՛յք ամենեքեան խոնարհեալ անձամբք՝ բեկեալ սրտիւք անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ . զի անցուսցէ ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութ̃ն իւրով : Ամենակալ տէր ա̃ծ մեր . կեցո՛ և ողորմեա՛ :

Աղօթք :

Տէր ա̃ծ փրկութեան մերոյ՝ որ ողորմած ես և գթած . երկայնամիտ բազումողորմ , և զղջանաս ՚ի վր̃ չարեաց մարդկան . որ ո՛չ կամիս զմահ մեղաւորին , այլ դառնալ նորա ՚ի չար ճանապարհէն և զկեալն : Դու տէր՝ ըստ ողորմութեանց քոց մխիթարեա՛ զծառայս քո . և տո՛ւր սոցա տեղի ապաշխարութ̃ն : Հաշտեա՛ մարդասիրութ̃բ քով . և արա՛ զսոսա

անդամս եկեղեցւոյ քում սրբոյ ։ Որպէս զի առողջացեալք հոգւով՝ խոստովանութ՟բ և ապաշխարութ՟բ մտցեն յեկեղեցի քո սուրբ. Նա ընդ ժողովրդեան քում, քեզ հանցեն զօրհնութ՟ի և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և ։

Սաղմոս. Ե.

Զբանից իմոց ունկնդիր լեր տէր, և՛ի միտ առ զաղաղակ իմ.

Նայեա՛ ՛ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և ա՟ծ իմ.

Զի առ քեզ աղաչեմ տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց, յանդիման լինիլ առ քեզ.

Ո՛չ թէ դու ա՟ծ կամիս զանօրէնութ՟ի. և ո՛չ բնակին առ քեզ չարք, և անօրէնք մի՛ բնակեսցեն առաջի աչաց քոց.

Ատեցեր զայնոսիկ, որք գործեն զանօրէնութ՟ի. կորուսանես զամե-

նեսեան որք խօսին զսուտ ։

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր ։ այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից 'ի տուն քո ։ և երկիրպագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո ։

Տէր առաջնորդեա ինձ յարդարութեան քում ։ վասն թշնամեաց իմոց՝ ուղի՛ղ արա առաջի իմ զճանապարհս քո ։

Զի ոչ գոյ 'ի բերանս նոցա ճշմարտութիւն ։ և սիրտք նոցա նանրեալք են ։

Որպ̃ գերեզմանք բաց են կոկորդք նոցա ։ և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն ։

Դատեա զնոսա ա̃ծ՝ զի անկցին 'ի խորհրդոց սրտից իւրեանց ։ ըստ բազում ամբարշտութե̃ նոցա մերժեա զնոսա ։ զի դառնացուցին զքեզ ։

Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յուսացեալ են 'ի քեզ ։ յաւիտեան ցնծասցեն ։ և բնակեսցես դու 'ի նոսա ։

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո , զի օրհնեսցես դու զար-

դարձ․ տէր որպէս զինու հաճութե՟ քո պսակեցեր զնոսա ։

Լցաք առաւօտու ողորմութե՟ քով․ ցնծացաք և ուրախ եղաք զա՟մ աւուրս կենաց մերոց ։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս ։

Հայեաց տէր 'ի ծառայս քո և 'ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛ որդւոց նոցա․ եղիցի լոյս տեառն ա՟յ 'ի վերայ մեր ։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ՝ արա 'ի մեզ տէր․ և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ ։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր՝ տէր՝ լուր ձայնի իմում ։

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց ։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր՝ տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո․ զի 'ի քէն է քաւութիւն ։

Վասն անուան քո համբերի տէր․ համբերեր անձն իմ բանի քում․ յուսացաւ անձն իմ 'ի տէր ։

Ի պահէ առաւօտու՝ մինչև յերե-կոյ. 'ի պահէ առաւօտու՝ յուսացաւ իսրայէլ 'ի տէր։

Ի տեառնէ է ողորմութի՟ բազում. 'ի նմանէ է փրկութի՟, և նա փրկեաց զիսրայէլ յա՟մ նեղութ՟եց նորա։

Լսելի արա ինձ առաւօտու զո-ղորմութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Յո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնա-ցից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ՟ր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր՝ կեցուս-ցես զիս, արդարութ՟բ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ՟բ քով սատակեա՛ զթշնա-միս իմ. և կորո՛ զա՟մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս, և 'ի

զօրութեան քում իրաւ արա ինձ։

Ա՜ծ լո՛ւր աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ ա՜ծ առաջի իւրեանց։

Ահա ա՜ծ օգնական իմ, և տէր ընդունօղ հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է։

Յա՜մ նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՜բյ։

Երգ տեառն Ներսէսի՝ վասն երկրորդի աւուր ա-
րարչութեանն, և վասն երկնային զօրացն։

ԲՀ Որ արարչական բանիւն հրաման ՚ի յերկրորդումն աւուր սկզբեան․ ընդ ջուրսն ՚ի ջուրցն բաժանեաց հաստատուն պարունակեաց․ որով զաշխարհս հողեղինաց անջրպետեաց ՚ի հրեղինաց․ ընդ նոսին որդիք լուսոյ տուք օրհնութիւն երրեակ լուսոյն։

Նախագահեալ հոյլք քրովբէից երեքսրբեանըդ սրովբէից․ աթոռք անեղ ածութեանն համագոյ երրորդութեանն՝ բարեխօս լերուք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ․ ընդ․

Գերադոյն իշխանութիւնք և անփոփոխ միշտ տէրութիւնք․ անյաղթելի և զօրութիւնք ՚ի յարարչին փառաւորուն․ աղաչեցէք զտէրն ողորմած անտես չառնել զգործս ձեռացն․ ընդ․

Դասք անմարմնոցն պետութեանց հրեշտակապետք բարձրութեանց. հոգիք հրեղէնք և սպասաւորք հրեշտակաց զինուորութիւնք. մաղթեցէք զտէրն տերանց վասն մարդկան երկրաւորաց. ընդ.

Երկնաւորաց դասուց վերնոց օրհնաբանից քոց զուարթնոց. քաղցրասցին առ քեզ գթած որ վասն մեր ձայն մաղթանաց. զորս և տայցես մեզ պահապան յայսմհետէ մինչ ՚ի վախճան. ընդ.

Զօրութիւնք և տէրութիւնք իշխանութեանց և պետութեանց. Եւ ամ̅ անուանելոց որ ՚ի յերկինս պաղատանօք. ընկալ քո ուրախութբ զմեզ յօր մահու և յարութե. ընդ նոսին օրհնել հոգւով ըզքեզ ընդ հօր փառաւորեալդ.

Երգ վասն երրորդի աւուր արարչութեանն, և վասն երրորդի դարուն, և ՚ի Յովհաննէս Մկրտիչն։

ԳՀ Էական բանն որ ընդ հօր արարչակից և համագործ · յերրորդ աւուր զջուրսն զատոյց ըզ բոյս և զտունկըս բըղխեցոյց · Իսկ ՚ի յերրորդ դարուն դարձեալ զջուրսն հեղեղ ցամաքեցոյց · զնոյն տապանաւն իւր ապրեցոյց ըզ կենդանեաց սեռս աձեցոյց · տուք օրհնութիւն անձառ լուսոյն հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն ·

Ընդ ծառոց երկրի զգալեաց տընկեաց և զտունկս իմանալեաց · զհեղեղ մեղացըն ցածուցեալ զդասս որ դարոց բազմացուցեալ · յորոց և մեծն ՚ի ծնունդս կանանց միջնորդ շնորհաց և օրինաց · տուք ·

Թագաւորին երկնից զինուոր արքայութեան աւետաւոր · խընդրեա դըրնել ելս ՚ի սըրտէ առ ՚ի հովտէս տըրտմականէ · յուխտեալ տեղին տէրունական ՚ի խոստացեալն որդ-

ւոց մարդկան . տուք .

Քառանդին հօր ըստամսաւոր և յորդանանու երկրպագող . կարապետ և մկրտիչ այնմ որ մեղաց մերոց քաւիչ . լեր բարեխօս առ նոյն գթած ջնջել զգիր մեր յանցանաց . տուք .

Ի հօրէ լոյս ծագեցար մեռեալ բնութեանս կենդանարար . առաքեցեր յառաջընթաց զյովհաննէս քարոզ կենաց . սորին հայցմամբն ամենակալ զպաղատանս մեր ընկալ . տուք .

Լուսաշաւիղ յերկինս ելին հողանիւթեայ ու հրեշտակին . արժանացո զմեզ նորին նեղ և անձուկ ճանապարհին . զի հետևող գոլով նորին հօր քո վերին օթևանին . և երգեսցուք ընդ երջանկացն որդւոց լուսոյ քեզ երրորդ փառաց .

Երգ վասն չորրորդի աւուր արարչութեանն, և վասն չորրորդի դարուն, և վասն Աւետմանց աստուա-ծածնին.

ԴՀ Լուսաւորն անդոյ և սկզբնածին հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն պայծառ յօր չորրորդին յարմարական նիւթ հաւաքեալ. լուսինն ՚ի տիպ լուսոյ ստեղծեալ և աստեղաց պարք յօրինեալ. որով օրհնի ստեղծօղն էից ՚ի բանաւոր պաշտօնէից.

Ծածկեալ խորհուրդըն ծանուցաւ չորրորդ դարուն խաչակաւ. ՚ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն եւ զաւետիս ըն կուսական. Թէ լոյսն որ ոչ բովանդակի ՚ի քեզ մարմնով պարունակի. յոր օրհնեցաք ազգ երկրածինք տուք օրհնութիւն պրողի կուսին.

Կուսի նախնոյ մօրն եւայի յորմէ ադամըն հին պարտի. բարձան անէծքըն տրտմական քո սուրբ ծննդեամբ կոյս մարիամ. աղաչեա զէ"

միածինն թողուլ ըզմեղս որդւո՛ց նոցին · յո՛ր ։

Զօրսն ընծայեա՛լ յե՛րկրէ յեր-կի՛նս յոր հա՛մբառնամք առ քե՛զ զհո-գիս · յո՛ր լուսելո՛յ քո զա՛ւետիս խընդ-րեա՛ լի՛նել մեզ լը՛սելիս · զձա՛յն ա-ւետեա՛ց քո մի՛ածնի՛ն եթէ ե՛կայք օրհնեա՛լք հօր իմ · յո՛ր ։

Զա՛յնժամ առ քե՛զ տէր պա՛ղատի՛մք և առա՛ջի քո ա՛նկանի՛մք · ա՛ղաչանօք Ա՟ծածնի՛ն շիջի՛ ՚ի՛ մէնջ ըղձո՛ց հնո-ցի՛ն · տո՛ւր արտասուօք զմեղս ջնջե՛լ և վե՛րը՛ստին զմեզ նո՛րոգե՛լ · յո՛ր ·

Պե՛կաւա՛ր ճարտա՛րապե՛տ անցե՛ր ը՛նդ ծով կե՛նցա՛ղս անհե՛տ · վե՛րա-բերեա՛ ընդ պե՛տրոսի՛ զմեզ ՚ի՛ յա՛լ-եաց մեղա՛ց ծովէ՛ս · պա՛ղատանօ՛ք գե-րա՛դունի՛ն անապա՛կան քո՛ւմ ծը՛նո-ղի՛ն · յո՛ր օրհնեցա՛յք ազգ ե՛րկրա-ծի՛նք տուք օ՛րհնու՛թիւն պը՛տղո՛յ կու՛սի՛ն ·

Նորդ վասն հինգերորդի աւուր արարչութեանն, և վասն հինգերորդի դարուն, և 'ի նր առաքելոյն քն.

եշ Ճառագայթեալ բանն 'ի հօրէ յօր հինգերորդըն հրամայէ. բըղխեալ 'ի ջրոց սեռք կայտառաց և թեւաւորս օդականաց. իսկ 'ի դարուն հինգ մըկըրտին յամպն և 'ի ծովն իսրայէլ հին. տացուք հրաշից նորագործողին պատիւ և փառք անեղ բանին.

Սաքրապէս օրինակի առաքելոցըն քո. որք 'ի ծովէն տիեզերական 'ի յերկնայինսըն կոչեցան. անցին ընդ ծով աշխարհական և 'ի հոգին մըկըրտեցան. տա.

Ուրախութեան անզրաւական 'ի հարսանիսն անապական. զձեզ առաքեալք հայրըն փառաց հրաւիրատուք տըրամականաց. սուրբ հարսանեաց այն հայցեցէք ընդ ձեզ լինել մեզ պարակից. տա.

Նորոգօղք տիեզերաց 'ի նախահօր

ըն յանցանաց . նորափետուր զարդա-
րեցէք զեկեղեցիս հեթանոսաց . պա-
շտեցէք առ նոյն գըթածն զմեզ նո-
րոգել ՚ի հնոյ մեղաց . տա՛:

Շինօղ էիցս համայնից արարա-
ծոց ՚ի յանգոյից . նոյն շինեցեր զե-
կեղեցի վէմդ ՚ի վերայ վիմին բանի .
ընդ եղեալ հիմունս ՚ի նոր սիոն ըզ-
մեզ յօդեա շինմամբ ՚ի նոյն . տա՛:

Ուրախացեալ գնացիւք գետոց
քաղաք ՚ի քէն շինեալ յա՛ . յորձ-
վտակք շնորհաց հոսեն զոգիս մարդ-
կան առոգանեն . որբս և զմեզ ՚ի
ջրոյն կենաց հայցմամբ հոգւոյն մա-
տրուակաց . զի բանաւոր երկիրըս
քո պտղաբերէ ՚ի փառս քո:

---

Երգ վասն վեցերորդի աւուր արարչութեան , և վասն վեցերորդի դարուն , և ՚ի խաչելութիւնն քրիստոսի .

Զըհանդուրժեալ ընութե՛ բար- ուր
ւոյն ունել միոյն զանձառ բարին .
այլ ստեղծեալ մարդ յիւր պատկե-

րին ՚ի վեցերորդն առաւօտին. և՛ ՚ի
յերրորդ ժամ զկողածինն ՚ի յօգ-
նութի եւ հողածնին. զօրս ՚ի դրախ
տին եդ վայելել բայց ՚ի պտղոյն
մահու արգելեալ.

Պապանձեալ առ դատողին յետ
յանցանացն ադամըն հին. զկինըն
պատճառ եդեալ խաբմանն և կինըն
զօձըն դաւաճան. որով երկիրս այս
անիծեալ փուշ և տատասկ ՚ի սմա բու-
սաւ. վերջին մահու մարդոյն տըւա-
դատնայ ՚ի հող ուստի ստեղծեալ էր.

Ընջել փութայր հայրըն փա-
ռաց ըղձիր պարտեաց մեր յանցանաց.
որով զգեցաւ որդին դըթած ՚ի վեց
դարուն զմարմին մեղաց. հօր հա-
ճութբ ՚ի մահ խաչին եկըն կա
մաւ ՚ի յուրբաթին. գառըն զենաւ
՚ի հին զատկին փոխան դառանցն
օրինականին.

Աւահիւ լուսոյ պատուիրանին ար
դարութե ճանապարհին. բարձրանա

Որով քո 'ի խաչին բարձրացուցեր զմեզ
'ի յերկինս . քո անպատում խոնար-
հութեամբ և կամաւոր խաչելութեամբն .
հաշտեա ընդ մեզ տէր գթութեամբ և
թող ըզ մեղս ողորմութեամբ :

Սոսկալիդ սերովբէից և ահաւոր
ըդ քերովբէից . խոնարհեցար 'ի չարչա-
րանս չարչարելի բնութեամբ մարդկան .
'ի խաչին զմեղս սպաներ և զդատա-
նիք մահու լուծեր . հաշ .

Վեհագոյն բնութեանց էից և
արարիչդ բոլորից . յորժամ ծագեաս
զխաչիդ նշան 'ի դալարստեան քո մի-
անգամ . զերկրպագուս այժմ հաւա-
տով լուսաւորեա նորին լուսով . զի
համաձայն խաչազդեցին ըղ քեզ օրհ-
նեմք յաւիտենից :

---

Երգ մն եօթներորդի աւուր արարչութեանն, և մն եօթներորդի դարուն, և 'ի խորհուրդ հանգստեանն,

Տէրն յետ ստեղծմանն արարածոց շաբ
հանգեաւ յեօթն օրն 'ի գործոց . այն
որ հանգիստ աշխատելոց և կամք ըն

գործ է եղելոց . ուստի և մեզ յոյս հաստատուն ետ հանդերձեալքն շաբաթուն . թէ՞ սա գործել զգործս այս անդ է հանդերձել ընդ աստուածոյ։

Ռաբունաբար վարդապետիմք յորինակէ տեառն խրատիմք . որ ՚ի յերկրորդ արարչութեան յետ կատարման անօրէնութեանն . յեօթներորդ օր հանգըստեան իջեալ մարմնով ՚ի գերեզմանն . զկապեալ հոգիսն վերածեաց զանանց հանգիստըն պատրաստեաց։

Յօղդ որ ՚ի քումդ կողէ ցօղեալ երժըշկեսցէ ըզհանդուցեալսն . իջցէ ՚ի հող մահու նոցին և բուսուսցէ յօրըն վերջին . կենդանարար ձայնիւդ քո կոչեա զնոսա ՚ի կեանս քո . և դասեսցես ընդ արդարոցն երգել քեզ փառս ընդ զուարթնոցն ։

Ներուծեալ զբնութիւն կենաց ունօղ դարձոյց յանցանքն ՚ի մահու հող . իսկ անմահին մեռելութիւն շնորհեաց դարձեալ զանմահութիւն . զօրս են ընդ քեզ թաղեալ մահուամբ աւազանին

մկրտութե. յորս ընդ քեզ քոյին փառօք արեգական նման լուսով։

Փայլին արդարքն յարքայութեն և ճգնաւորքն 'ի հանդերձեալն. մօր տիրոջըն պսակին և կուսանաց լապտերք վառին. դասեցո տէր ընդ նոսին որք զքեզ ած խոստովանին. որ դարութե մի դատեսցին այլ դթութե քո քաւեսցին։

Քո անպատում խոնարհութեդ որ թաղեցար մեռելութե. և յարուցեր յորդւոց մարդկան որք հաւատով 'ի քեզ անկան. յորս և զմեզ արդարութե և զնորընծայեալսն ողորմութե. զե կենդանեացս բերանով տացին քեզ փառս ընդ հօր հոգւովդ։

---

Մաղթանք պահոց՝ յետ Արարչականին։

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն տէր յս. յորժամ երևիս փառօք հօր ընդ ամպս լուսաւորս։ Յայնժամ մեք մի ամաչեսցուք յուսացեալքս 'ի քեզ. այլ ողորմութե քով մեծաւ բերկրեսս-

ցուք ընդ այժմէ քումմէ՝ որպէս զոր-
դիս լուսոյ և որդիս տունջեան ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ած, զի պահպանեսցէ զժողովուրդս իւր ընդ հովանեաւ սբ. և պատուական խաչին իւրոյ ՚ի խաղաղութե. Ամենակալ տէր ած մեր. կեցո և ողորմեա։

Աղօթք սկահոյ։

Օգնեա մեզ տէր. օգնեա մեզ ած փրկիչ մեր՝ վն մեծի փառաց անուանդ քո. տր փրկեա զմեզ, և քաւեա զմեղս մեր վն անուան քոյ սբյ։ Պարսպեալ պահեա զառ ՚ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո՝ ընդ հովանեաւ սբ. և պատուական խաչիւդ քով ՚ի խաղաղութե. Փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. Արժանաւորեա գոհութե փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ.

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ած։

Օրհնեալ տէր մեր յս քս, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտուն ժամուն. որ կատարի ՚ի դէմս հոգւոյն սրբոյ, այլև ՚ի դէմս յարութեանն քո, և երևման աշակերտացն։

Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարև է անուն նորա։

Ի նա օրհնեսցին ա̃մ ազգք երկրի, և ա̃մ ազինք երանիցեն նմա։

Օրհնեալ տէր ա̃ծ իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ա̃մ երկիր. եղիցի եղիցի։

Փառք հօր և որդւոյ և։

Եւ ևս խաղաղութե̃ զտէր աղաչես։

Օրհնութի̃ և փառք հօր և.

Երգ առաւօտին։

Յարևելից մինչ ՚ի մուտս. ՚ի հիւսիսոյ և ՚ի հարաւոյ. ա̃մ ազգ և ազինք. յօրհնութիւն նոր օրհ-

նեցէք զարարիչն արարածոց . որ
ծագեաց ընդ լոյս արեգականն այ-
սօր յաշխարհս .

Եկեղեցիք արդարոց . փառաբա
նիչք ամենասուրբ երրորդութեան .
յառաւօտուս լուսոյ զառաւօտ խաղա
ղութեան քո գովեցէք ընդ հօր և
հոգւոյն . որ ծագեաց ընդ լոյս գիտու
թեանն իւրոյ ՚ի մեզ .

Յորդորակ .

Յարևելից յարևմուտս մանկունք
սիոնի . օրհնեցէք միշտ անդադար
ընդ ծագօղըն լուսոյ .

Եկեղեցիք արդարոց և փառաբա
նիչք . բարեբանեցէք որ ետ զիմաս
տըս լուսոյ .

Քարոզ .

Յարևելից մինչև ՚ի մուտս արե-
ւու ընդ ամ տեղիս քրիստոնէութե ,
ուր և կարդան զանուն տեառն սըր-
բութբ՝ տէր աղօթիւք նոցա և բարե
խօսութբ մեզ ողորմեսցի . Ուխտիւք

զա՟ծ աղաչեսցուք · զի նա փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և ՚ի ցանկութենէ աշխարհի · Ընկալցի զուխտս և զխնդրուածս սրտից մերոց · և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ ա՟մ սուրբս իւր · Ամենակալ տէր ա՟ծ մեր կեցո՛ և ողոր ·

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ օրս խաղաղութբ՟ անցուցանել՝ հաւատով ՚ի տ՟նէ խնդրեսցուք · Զհրեշտակ · Զքաւութ՟ի · Զսրբոյ · Եւ ևս միա · Զանձինս · Ողորմեա՛ց ·

Աղօթք ·

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալ ես տէր · վասն զի թագաւոր քաղցր ես · և անուն քո ահեղ է ընդ ա՟մ տիեզերս ։ Քաղցրասցին սաղմոս երգութ՟ք մեր առաջի քո · ելցեն իրաւունք յարդարութ՟է քումմէ ՚ի տկարութ՟իս մեր , և փառաւորեսցի ամենասուրբ անուն քո։ Եւ մեք արժանի՛ եղիցուք կալ ՚ի պատուիրանի քում · և քեզ երգել զօրհնութ՟ի և զփառս հօր և որդւոյ . և հոգւոյդ սրբոյ · այժմ և միշտ և ։

Խաղաղութիւն ամենեցուն.

Ա՟ծ մշտնջենաւոր՝ ա՟ծ յաւիտենական. որ ՚ի սուրբն աշխարհս լոյս ծագեցար՝ և լուսաւորեցեր զմեզ ՚ի խաւարային մեղաց մերոց. Որ վասն մեր ՚ի չափաւորութի՟ եկիր անչափդ ա՟ծ. և հեղեալ ծաւալեցեր զշնորհս հոգւոյդ սրբոյ յարարածս քո. Այժմ և յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես ամենամեծդ ա՟ծ, ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ. այժմ և.

Սաղմոս. 99:

Աղաղակեցէ՛ք առ տէր ա՟մ երկիր. ծառայեցէ՛ք տեառն ուրախութ՟բ.
Մտէ՛ք առաջի նորա ցնծութ՟բ. ծանիրո՛ւք զի նա է տէր ա՟ծ մեր.
Նա՛ արար զմեզ, և ո՛չ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա.
Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութ՟բ, և օրհնութ՟բ ՚ի յարկս նորա.
Խոստովա՛ն եղերուք տեառն, և օրհնեցէ՛ք զա՛նուն նորա.

Քաղցր է տէր, յաւիտեան է ողոր
մութիւն նորա . ազգէ մինչև յազգէ
ճշմարտութիւն նորա ։
Փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ.

Երգ.

Որդնաւորք աստուծոյ . և ժառ
անգորդք երկնից արքայութեն .
որք փոխանակեալք զանցաւորս
առիք զանանցըն բարութիւնսն .
բարեխօսեցէք առ տէր վասըն ման
կանց եկեղեցւոյ ։

Նահատակք պանծալիք . և սի
րեցեալք ՚ի յերկնաւոր Հօրէն . որ
ք մկրտեցայք ընդ քի արեամբ
ձերով ՚ի մահ խաչին . բարեխօ ։

Մարտիրոսք ցանկալիք . և օթե
վանք Հոգւոյն ճշմարտութեանն .
որք յաղթեցիք Հոգւով կարեաց
և ցանկութե . բարեխօ ։

Գովելիք աշխարհի . և բաղձա
լիք վերնոցըն պետութեց . որ
ք երանութեան մասին հասիք քան զա

մենայն որդիս մարդկան • բարեխօս։

Կամաւոր պատարագք • ման-կունք տիօք և կատարեալք իմաս-տութեամբ • որք փոխանակ կաթին արբին զդինին զմայլեցուցիչ • բա-րեխօս։

Յորդորակ։

Զինաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի • բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սի-րով Քրիստոսի • որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն։

Մարտիրոսք ցանկալիք մարդ-կան ըղձալիք • հայցեցէք ի սբ հոգ-ւոյն տալ մեզ զբարիս։

Պսակեալք վերնոց դասուց • պար-ծանք աշխարհի • խնդրեցէք զխա-ղաղութիւն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր սբ պատարագք հասա-կաւ մանկունք • հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակիցս։

Մաղթանք:

Աղաչեմք ողորմեա՛ց տ՟ր բարերար. աղաչեմք ողորմեա՛ց. վ՟ն աղօթից մ՟եց Ճգնաւորացն՝ աղաչեմք ողորմեա՛ց:

Ք. արոզ:

Սուրբ Ճգնաւորքն աղաչեսցուք զտէր. որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին: Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութ՟ե մեզ ողորմեսցի: Ամենակալ տէր ա՟ծ մեր. կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Սուրբ ես տէր, և՛ի սուրբս հանգուցեալ. և մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ. բարեխօսութ՟ե սուրբ ա՟ծածնին՝ և աղաչանօք ա՟մ սրբոց քոց. մի՛ մերժեր զմեզ յողորմութ՟է քումմէ. այլ կեցո՛ զմեզ աղօթիւք նոցին. զի դու ես բազումողորմ ա՟ծ. և քեզ վայելէ փառք իշխանութ՟ի և պատիւ. այժմ և:

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս քո:

Բարերար և բազումողորմ ա՟ծ:

## Սաղմոս · 62։

Ա̃ծ ա̃ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ. քանի՞ պատիկ եւս եւ մարմին իմ։

Որ̃պ երկիր անապատ եւ անջուր, ուր ո՛չ գոյ ՚ի նմա ճանապարհ.

Այսպէս ՚ի ս̃բս երեւեցայց քեզ, տեսանել ինձ զզօրութիւն քո եւ զփառս քո.

Քան զի լաւ է ինձ ողորմութի̃ քո քան զկեանս իմ. եւ շրթունք իմ գովեսցեն զքեզ.

Այսպէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ, եւ յանուն քո համբարձից զձեռս իմ.

Որպէս ՚ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ, շրթամբք ցնծութե̃ օրհնեսցէ զքեզ բերան իմ.

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ։

Զի եղեր իմ օգնական, ՚ի հովանի թեւոց քոց ցնծացայց.

Ակն զկնի քո անձն իմ. եւ զիս ընկալաւ աջ քո. եւ նոքա ՚ի նանիր

խնդրեցին զանձն իմ։

Մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկ-րի. մատնեսցին 'ի ձեռս սրոյ, և բա-ժինք աղուեսուց եղիցին.

Թագաւոր յուսացաւ 'ի տէր. գո-վեսցին ամենեքեան՝ որք երդնուն նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ որք խօսէին զանիրաւութիւն.

Լուր ած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ։

Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չա-րաց. 'ի բազմութենէ՝ որք գործեն զանօրէնութիւն.

Որք սրեցին որպէս սուսեր զլե-զուս իւրեանց. լարեցին զաղեղունս իւրեանց յիրս դառնութե.

Ձգել 'ի գաղտնիս այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք. յանկարծակի ձը-գեսցեն 'ի նոսա, և մի երկիցեն.

Որք զօրացուցին յանձինս իւր-եանց զբանս չարութե. խորհեցան թագուցանել ինձ որոգայթ. և ասա-ցին ոչ տեսանէ զայս տէր.

Քններցին զանօրէնութի, պատ-

բաստեցան ՚ի քննել զքննութիւն։
Մատիցէ այր ՚ի խորութիւն սրտի
խորոյ, և բարձր եղիցի ա̃ծ։
Նետք տղայոց եղեն վէրք նոցա.
տկարացան ՚ի նոսա լեզուք նոցա, և
խռովեցան ամենեքեան՝ որք հայէին
ընդ նոսա։
Երկեաւ ամենայն մարդ. ՚ի պատ-
մել զգործս այ̃, և զարարածս նորա
՚ի միտ առին։
Ուրախ եղիցի արդար ՚ի տէր, և
յուսասցի ՚ի նա. նովաւ գովեսցին
ամենեքեան, որք ուղիղ են սրտիւք։

Երգ.

Լոյս արարիչ լուսոյ առաջին
լոյս. բնակեալդ ՚ի լոյս յանմատոյց
հայր երկնաւոր. ՚ի դասուց լուսե-
ղինացն օրհնեալ. ՚ի ծագել լուսոյ
առաւօտուս. ծագեա ՚ի հոգիս մեր
զլոյս քո իմանալի։
Լոյս ՚ի լուսոյ ծագումն արե-
գական արդար. անճառու ծնունդ
հօր որդի. յառաջ քան զարև անուն

քո դասեալ ընդ Հօր . Ի ծագել:

Լոյս ի Հօրէ բղխումն աղբեւր բարութեան . Հոգիդ սբ այ . մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս երգ քեզ բարեբանեն . Ի ծագել:

Լոյս երրեակ և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն . զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք . Ի ծագել:

Յորդորակ:

Անեղանելիդ ած Հայր ամենակալ . ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից:

Ի Հօրէ ծագումն անճառ որ արեգակն արդար . ծագեա ի յանձինս մեր զլոյսդ ողորմութեան:

Ի Հօրէ բղխեալ Հոգի աղբիւր բարութեան . լուսով քով լցո ըզ մեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք և մի բնութիւն . մի ածութիւն . զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւն:

Մաղթանք։

Լուսովդ քո քս ամենեքեան լուսաւորեցաք . և ՚ի ձեռ խաչի քո փրկիչ հաւատացեալքս ապաւինեցաք։ Լուր մեզ ած փրկիչ մեր . տուր մեզ զխաղաղութի քո . և արա առ մեզ զողորմութիւն քոյ մարդասէր տէր։

Քարոզ։

Եւս և խաղաղութե զտէր աղա։

Փառաւորեսցուք զամենակալն ած՝ որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր . ծագեսցէ և այժմ զառատ ողորմութի իւր ՚ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ։ Ամենակալ տէր ած մեր . կեցո և ։

Աղօթք։

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս՝ ընկա՛լ ամենակալ ամենամեծդ ած ՚ի քո անապական և յերկնային խորանսդ ։ Ծագեա՛ առ մեզ զարդարութե և զիմաստութե զլոյս քո . արա՛ զմեզ որդիս լուսոյ և որդիս տուընջեան . որպէս զի ՚ի գալ ա-

ւորս երկիւղածութե՟ վարեսցուք զկեանս մեր . և առանց գայթակղութե՟ կատարեսցուք ։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր . և քեզ վայելէ փառք իշխանութիւն և ։

Սաղմոս . 22 ։

Տէր հովուեսցէ զիս . և ինձ ինչ ո՛չ պակասեսցի ։

Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց զիս . և առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։

Դարձոյց զանձն իմ առ իս . և առաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհս արդարութե՟ վասն անուան իւրոյ ։

Թէպէտ և գնացից ես ՚ի մէջ ստուերաց մահու , ո՛չ երկեայց ՚ի չարէ , զի դու տէր ընդ իս ես ։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս ։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց ։

Օծեր իւղով զգլուխ իմ . բաժակ

քո որպէս անապակ արբեցոյց զիս ։

Ողորմութիւն քո տէր զհետ իմ եկեսցէ՝ զա՟մ աւուրս կենաց իմոց ։ բնակել ինձ 'ի տան տեառն ընդ երկայն աւուրս ։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից ։ զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ՟ր ։ զի զքեզ ապաւէն ինձ արարի ։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո ։ զի դու ես ա՟ծ իմ ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։

Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս , արդարութ՟բ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ ։

Ողորմութ՟բ քով սատակեա՛ զթշնամիս իմ ։ և կորո՛ զա՟մ նեղիչս անձին իմոյ , զի ես ծառայ քո եմ ։

Ա՟ծ մեր ապաւէն և զօրութ՟ի ։ օգնական 'ի վերայ նեղութ՟նց , որք գըտին զմեզ յոյժ ։

Վասն այսորիկ ո՛չ երկիցուք մեք 'ի խռովիլ երկրի ։ 'ի փոփոխել լերանց

'ի սիրտս ծովու.

Գոչեցին և խռովեցան ջուրք նց̃. խռովեցան լերինք 'ի զօրութենէ նորա:

Գնացք գետոց ուրախ առնեն զքա- ղաքն ա̃յ. և սուրբ արար զյարկս իւր բարձրեալն.

Ա̃ծ 'ի մէջ նորա, և նոքա մի՛ սասանեսցին. օգնեսցէ նոցա ա̃ծ 'ի վաղոր դենէ մինչև 'ի վաղորդեան.

Խռովեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք. ետ զձայն իւր բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր:

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր ա̃ծ յակոբայ.

Եկա՛յք և տեսէ՛ք զգործս ա̃յ, որ արար զնշանս և զարուեստս 'ի վերայ երկրի.

Ե՛հար զպատերազմ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զասպարս այրեաց հրով.

Անխեցէ՛ք և ծաներո՛ւք, զի ես եմ ա̃ծ. բարձր եղէց 'ի հեթանոսս, և բարձրացայց 'ի վերայ երկրի.

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդու-

նելի է մեր աստուած յակոբայ ։

Աստուած յօգնել ինձ նայեաց . և տէր յընկերել ինձ փութա ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին , որք խնդրէին զանձն իմ . դարձցին յետս և ամաչեսցեն , որք խորհէին ինձ չար ։

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք . որք ասէին ինձ վա՜շ վա՜շ ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան , որք խնդրեն զքեզ տէր ։

Ասասցեն յա̃մ ժամ , մեծ է ա̃ծ . և որք սիրեն զփրկութիւնս քո ։

Ես աղքատ և տնանկ եմ , ա̃ծ օգնեա՛ ինձ . օգնական և փրկիչ իմ ես . և դու տէր իմ՝ մի՛ յամենար ։

Տուր զօրութի̃ ծառայի քո . կեցո՛ զորդի աղախնոյ քո . և արա՛ առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն . զի դու տէր օգնեցեր ինձ , և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Ս̃բյ ։

Երգ.

Ամենասուրբ պարծ. և ճշմար-
տութին. և կեանք քրիս-
տոս. առաջնորդեա հոգւոց
մերոց. յերկրէ երան եւ յերկինս.

Պտուղն կենա-
ց մըտից յոյս. մոյծ և
ըզմեզ առ հայր քո և հոգւով. եր-
գել մեզ ըզփառս.

Յորդորակ.

Ամենապարծ բարի քո և ճշ-
մարտութիւն. առաջնորդ հոգւոց
մերոց յերկրէ ՚ի յերկինս.

Պտուղն կենաց մըտից յոյս. ած
ճշմարիտ. մոյծ և զմեզ առ հայրըդ
քո. հոգւովըդ սրբով.

Մաղթանք.

Տէր ուղղեա զգնացս մեր ՚ի ճա-
նապարհս խաղաղութեան. տէր ուղ-
ղեա և առաջնորդեա հոգւոց մերոց
և ամ հաւատացելոց՝ գնալ յարդա-

րութեան ճանապարհն և 'ի կեանս յաւիտենից ։

Քարոզ.

Աղաչեսցուք զամենակալն Տէր՝ զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց 'ի բարի և 'ի խաղաղութիւն։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք.

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան քս՟ ած՟ մեր . առաջնորդեա՛ մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութե՟ . և խաղաղութե՟ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութեան քո . զի դու ես օգնական և փրկիչ մեր . և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և.

Աղօթք աւուրց պահոց . յորս տօն ոչ լինի.

Օրհնեալ ես տէր ած՟ փրկիչ մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես , և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմար-

տութեամբ կարդան առ քեզ։ Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն տէր, Ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբդ՝ պահելով 'ի խաղաղութե. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութեամբ և խնդութե հասանիլ յիւրաքանչիւր 'ի բնակութիս 'ի քս յս 'ի տէր մեր։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն․ որ կատարի ՚ի դէմս իջման հոգւոյն սրբոյ, և՚ի դէմս Նախամօրն Ճաշակման, և ազատութեանն քի՟։

Օրհնեալ հոգին սուրբ ա՟ծ ճշմարիտ․ ամէն․

Սաղմոս․ 50։

Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում․ ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ․ և՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի․

Որպ՟ արդար երիցիս ՚ի բանս քո, և յաղթօղ ՚ի դատել գաս։

Անօրէնութեամբ յղացաւ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրե-
ցեր, զանյայտս և զծածկեալս իմաս-
տութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ և ս̃բ եղէց,
լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն և
զուրախութի̃, և ցնծասցեն ոսկերք
իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց.
և զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա՛
յինէն։

Սիրտ ս̃բ հաստատեա՛ յիս ա̃ծ, և
հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում
Մ՛ի ընկենուր զիս տէր յերեսա
քոց, և զհոգի քո ս̃բ մի՛ հաներ յինէն
Տո՛ւր ինձ ցնծութի̃ փրկութե
քոյ, և հոգւով պետութեան
հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապա
քո, և ամբարիշտք առ քեզ դար
Փրկեա՛ զիս յարենէ ա̃ծ ա̃ծ
կութեան իմոյ. ցնծասցէ լեզ
յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ
բերան իմ երգեսցէ զօրհն

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք․ բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ այ հոգի խոնարհ, ընդ զխիրտ սուրբ և զհոգի խոնարհ ած ոչ արհամարհէ։

Բարի արա տր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան․ յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ

…րդ երրորդի ժամու աւուրն՝ զկնի ողորմեայն։

Օրհնեմք ըզքեզ հայր անըս-
…ըն էից էակ ՚ի յանդոյից․ բարձեր
…զբ նիւթ ՚ի հողոյ և ստեղծեր
…՚ի պատկեր քո․ զդըրախտն ոտից
…որհեցաւ զի զպատուիրան քո մո-
…ւ․ դարձեալ ասեմք սատանայա
…․ հայր մեղայ քեզ ՚ի յերկինս
…ւորայցն անքըննելի եղեր
…եսանելի․ զգեցար պատկեր

հողե՛ղի՛նի պատկերըդ հօր անփոխե լի. Ե՛լե՛ր յերրո՛րդ ժամ 'ի խա՛չին վս ադամայ նախաստեղծին. ըՙնդ աւա զակին քո՛ւմ խա՛չակցին արժա՛նացո ըզ մե՛զ դրախտի՛ն.

Թագաւո՛ր Թագաւո՛րաց առատա՛ բուղխ հոգի շնորհաց. ժողովելոցն 'ի վե՛րնատա՛նն առաքե՛լոցն երկո՛տա սա՛ն. 'ի՛ հրո՛յ լեզո՛ւս երևե՛ցար յո գիս նո՛ցա վերանըստա՛ր. լո՛ւր յանուն քո ժողո՛վելո՛ցս էջ ե՛ առ մեզ յեր րո՛րդ ժամո՛ւս.

Մաղթանք.

Յամ ժամու աղաչանք իմ այս են, 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր. և յօտարէն պահեա զծառայս քո մար դասէր տէր.

Նաւ ես խաղաղութե՛ան զտէր աղա չեսցուք. ընկա՛լ կեցո՛ և ողորմեա.

Օրհնութի և փառք հօր և.

Քարոզ մեծ պահոցն ՚ի Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ։

Միաբան ամենեքեան գոհացարուք զմարդասիրէն ա̃յ և զփրկչէն մերմէ յէ̃ քէ̃։ Որ ազատեաց զազգս մարդկան ՚ի դառնապարտութէ անիծիցն. և եբարձ զմեղս աշխարհի ՚ի ժամուս յայսմիկ խաչիւն իւրով. և շնորհեաց առատապէս զպարգևս հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն։ Խնդրեսցուք հաւատով զի զմեզ զամենեսեան՝ արասցէ հաղորդս մեծամեծաց և ա̃ծային բարեացն այնոցիկ. աղօթիւք և բարեխօսութեամբ ա̃մ սրբոց. որք աստ և ընդ ա̃մ տիեզերս։ Որպէս զի անարատ վարուք, և ճշմարիտ առաքինութեամբ կացեալք ըստ կամաց նորա յայսմ աշխարհիս, զմասն և զվիճակ ժառանգութե̃ ընկալցուք ընդ ամենայն սուրբս նորա. զքնակութիւն յաւիտենական և երկնային խորանացն։ Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա̃ծ յ̃ս ք̃ս. տէր մեր կեցո՛ և ողորմեա՛։

Զժամս և զառաջակայ օրս խա-

ղորութե՛ անցուցանել հաւատով ՚ի
տեառնէ խնդրեսցուք ։ Ով հրեշտակաց
խաղաղութեան ։ Ով քաւութիւն ։
Ով սրբոց խաչին ։ Դու ես միաբան ։
Ով անձինս ։ Ողորմեա՛ց ։

Աղօթք ։

Ո՛ր ՚ի քրովբէական և յանպատում
հանգուցեալ ես յաթոռ . և այցելու
ես միշտ արարածոց քոց ։ Որ և ՚ի
ժամուս յայսմիկ հեղեր յերանելի ա-
ռաքեալսն զշնորհս հոգւոյդ սրբոյ ։
Դու տէր յառաջակայ ժամուս՝ և
յաւէտ մինչև ՚ի կենցաղոյս աւար-
տումն՝ տպաւորեալ միացո՛ զմեզ ընդ
ամ՟ բարեգործութե՟ յորդորմունս .
և խոստացելոց բարեացդ հաղորդս
լինիլ զմեզ արժանի արա՛ . տէր մեր
և փրկիչ յս՟ քս՟ ։ Որ ես օրհնեալ
ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ , այժմ
և միշտ և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս
բանդ ա՟ծ . էակից հօր և արարչակից
սուրբ հոգւոյդ ։ Որ և զնախաստեղ-

ծին պատուիրանազանցութ՟ե պտղոյն
ճաշակման՝ նշանաւ ամենայաղթ խա֊
չիւ քո 'ի ժամուս յայսմիկ ենթադրը
եալ՝ 'ի կենդանութ՟ի փոխեցեր ․ և
զանօրէնութիւն մեր 'ի նմա բևեռեալ՝
կեանք անապական , և նորոգումն կե֊
նաց յուսացելոց 'ի քեզ խոստացար ։
Որոց մասնաւորիլ և զմեզ արժանի՛
արա տէր մեր յս՟ քս՟ ․ որ ես օրհնեալ
ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ , այժմ
և միշտ և ։

ող Տէր ա՟ծ օրհնեալ ․ օրհնեալ է
տէր զօրհանապազ ․

Աստուած մեր՝ աստուած կենա֊
րար ․ և նա փրկեսցէ զմեզ ․

Տէր ա՟ծ օրհնեալ ․ օրհնեալ տէր
զօրհանապազ , առաջնորդեսցէ մեզ
աստուած փրկիչ մեր ։

Քարոզ ․

Խնդրեսցուք հաւատով՝ 'ի տնէ վս՟
ճանապարհորդաց հարց և եղբարց
մերոց , որք ընդ ծով և ընդ ցամաք
գնասցեն ․ որպէս զի առաջնորդեսցէ
նոցա , խաղաղութ՟ե պահեսցէ , և

տարեալ հաստուցէ յիւրաքանչիւր տե-ղիս տէր ա̃ծ մեր. Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց, և յոյս փրկու-թեան. որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութե̃ հասանիլ 'ի նաւահան-գիստն կենաց և փրկութե̃ն։ Ամենա-կալ տէր ա̃ծ մեր. կեցո՛ և։

Աղօթք.

Առաջնորդեա՛ մեզ տէր ա̃ծ մեր, և ուսո՛ մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութե̃, պահեա՛ 'ի խաղաղութե̃ զկեանս մեր, և զգնացս 'ի հաճոյս քո. ժամանեցո՛ զհոգևոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանա-պարհաւդ յաւիտենական 'ի կեանսդ։ Շնորհօք միածնի քոյ տեառն մերոյ և փրկչին յի̃ քի̃. որ եղև մեզ առաջ-նորդ կենաց և յոյս փրկութեան։ Ընդ որում օրհնեալ ես հայր ամենա-կալ հանդերձ կենդանարար և ազա-տիչ սուրբ հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ա̃ծ։

Սաղմոս . 22։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ո՛չ պակասեսցի։

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցո՛յց զիս, և առ ջուրս հանգստեան սնո՛յց զիս։

Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ըստուերաց մահու, ո՛չ երկեայց 'ի չարէ՝ զի դու Տէր ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցո՛յց զիս։

Ողորմութի̅ քո Տ̅ր զհետ իմ եկեսցէ զա̅մ աւուրս կենաց իմոց, բնակիլ ինձ 'ի տան Տ̅ն ընդ երկայն աւուրս։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց Տ̅ր,

զի զքեզ ապաւէն ինձ արարի ։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո , զի դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ . և կորո՛ զամ նեղիչս անձին իմոյ , զի ես ծառայ քո եմ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա .

Գոհաբանելով աղաչեսցուք զբարերար հոգին ած, և խնդրեսցուք զողորմութիւն ՚ի նմանէ . զի անցուսցէ ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով . Ամենակալ տէր ած մեր . կեցո՛ և .

Աղօթք։

Խաղաղութեամբ քով հոգիդ սբ ած ճշմարիտ՝ որ ՚ի վեր է քան զամ միտս և զխորհուրդս , մխիթարեա՛ զանձինս

ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութ՟ քով: Ներեա՛ և լո՛ւր մեզ, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր. արժանաւորեա՛ գոհութ՟ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ որդւոյն միածնի, այժմ և:

Օրհնեալ տէր մեր յս քս, ամէն:

Հայր մեր ր յերկինս ես.

Կարգաւորութիւն հաստարակաց աղօթից վեցերորդի ժամուն. որ կատարի ՚ի դէմս Հօր այ, այլև ՚ի դէմս չարչարանաց և խաչելութեան որդւոյն այ:

Օրհնեալ հայր սուրբ աստուած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս. 50:

Ողորմեա՛ ինձ այ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութե քում քաւեա՛ զանօրէնութիս իմ:

Բազում լուա՛ զիս յանօրէնութէ իմմէ. և այլն: տես ՚ի թ-ն. 332:

Փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սբյ:

Երգ վեցերորդի ժամուն։

Խաւարեցաւ լոյսն արեւուն ՚ի վեց
երորդ ժամու ուրբաթուն. ծանոյց թէ
լոյսն արարչական նսեմացոյց զլոյսն
եղական. կախեալ ընդ քեզ մերկ ՚ի
խաչին քօղով ստուերաւորն ծածկէ-
ին. հերքեա ՚ի մէնջ ըզծանրութի՛
շրջօղ դիւին մէջօրէի։

Զանձրութն մարտո այսոյն չարի որ
յայսմ ժամու պատերազմի. զօրեալ
յօգնութ մեր հերքեսցի քո նշանաւ
սրբոյ խաչին. ճշմարտութե՛ քո ճա
ռագայթ զոր ՚ի յերկնից անկեալ
փայլակն. մերժեալ ՚ի մէնջ հալածեսս-
ցէ եւ զմեզ լուսով քո վառեսցէ։

Յայս միջօրեայ տուընջեան ժա-
մու վայելչական աչաց մարմնոյս. նե՛տ
իւք դաղձնեաց մի խոցեսցուք ՚ի խա
ւարէն որ ՚ի ծածուկ. շուրջանակի
բանակեսցեն ըզմեօք բանակք հրեշ
տակաց. որք պարակից մեզ լինելով
ըզքեզ ընդ հօր փառաւորելով։

## Մաղթանք.

Յամենայն ժամու աղաչանքիմ այս են, 'ի մեղաց իմոց սուրբ ա.
Լու եւս խաղաղութն զուէր աղա.
Օրհնութիւն եւ փառք հօր եւ.

## Քարոզ մեծի պահոյն.

Արթուն մտօք եւ անզբօս խորհրդով կացցուք միաբան յաղօթս առաջի տեառն մերոյ եւ փրկչին յի քի. Հաւատով խնդրեսցուք 'ի նմանէ ըզ հրեշտակ խաղաղութն պահապան անձանց մերոց. որ եկեալ բնակեսցէ շուրջ զմեօք, եւ աներկիւղ պահեսցէ զմեզ յամ հրեղէն նետից սատանայի, որ թռչի 'ի տուէ. յերաց խաւարային գնացից՝ 'ի դայթակղութէ դիւին 'ի հասարակ աւուր. Յորմէ զգուշուէ պահելով աղօթիւք եւ բարեխօսութբ ամ սրբոց, շնորհեսցէ մեզ մարդասէրն ած կեալ առաքինուէ 'ի փրկութիւն անձանց մերոց, 'ի պատիւ եւ 'ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ. Յոյս հաղորդութեան ընկալցուք 'ի յայտնուէ միածնի որդւոյն այ, կեր-

պարանակից առնել զմարմին խոնարհութեն մերոյ՝ ըստ նմանութեն մարմնոյ փառաց իւրոց։ Վասն զի զայս խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա͠ծ յ͠ս ք͠ս տէր մեր․ կեցո՛ և ողորմեա՛։

Զժամս և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ՚ի տ͠նէ խնդրեսցուք։ Զհրեշտակ։ Զքաւութի։ Զսրբոյ։ Եւ ևս։ Զանձինս։ Ողորմեա՛ց։

Աղօթք։

Զգեցո՛ մեզ տէր ա͠ծ մեր զէն արդարութե․ զօրաւոր և յաղթօղ լինիլ ընդդէմ սատանայական պատերազմաց․ և զա͠մ հրեղէն նետս նե͠ր շիջուցանելով՝ անկասկած լիցուք յիրաց խաւարային գնացից՝ ՚ի գայթակղութե͠ դիւին ՚ի հասարակ աւուր։ Եւ զգաստացեալք վայելչական տունջեամբս՝ առաքինութե͠բ կացցուք ՚ի փրկութի անձանց մերոց․ ՚ի պատիւ և ՚ի փառս սրբոյ երրորդութեդ, այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնաւոր խաղաղութե͠դ քո՛վ պարսպեալ պահեա՛ զանձինս մեր տէր զօ-

րութեանց։ Վասն զի դու ես Աստուած խաղաղութեան, և բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո ամենազօր՝ կարդամք յօգնականութիւն անձանց մերոց։ Նայեաց յերկրպագութիւնս մեր. և ուսո մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան։ Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին, այժմ և միշտ և։

աղ Տէր՝ մի յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր. զի աղքատացաք յոյժ։

Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր՝ վասն փառաց անուան քո։

Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քո։

Քարոզ։

Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս. զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութեամբ հասուսցէ զամենեսեան 'ի մշտնջենաւոր և յա-

նախտ կեանս․ Որ առաքեցաւ 'ի հօրէ 'ի բժշկութի՟ ազգի մարդկան՝ միածին որդին ա՟յ․ տէր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս․ կեցո՛ և։

Աղօթք․

Փարատեա՛ զցաւս և բժշկեա՛ զհիւանդութիւս 'ի ժողովրդենէ քումմէ տէր ա՟ծ մեր․ և շնորհեա՛ ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչիւ քով․ որով բարձեր զտկարութի՟ ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Դու ես կեանք մեր և փրկութիւն՝ բարերար և բազումողորմ ա՟ծ․ որ միայն կարօղ ես թողուլ զմեղս՝ և մերժել զախտս և զհիւանդութիւս 'ի մէնջ․ որում յայտնի են պէտք կարեաց մերոց․ պարգևիչդ բարեաց՝ պարգևեա՛ զառատ ողորմութի՟ քո 'ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից․ յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ երրորդութիւդ, այժմ և։

Օրհնեա՛ տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ա՟ծ։

Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տր։

Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ, երանելի առնէ զնա ՚ի վր երկրի, եւ ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց, զամ անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութեն նորա։

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. բըժշկեա զանձն իմ, եւ մեղայ քեզ։

Որ բնակեալն է յօգնութի բարձրելոյն, ընդ հովանեաւ Այ յերկնից հանգիցէ։

Ասասցէ Տեառն՝ ընդունող իմ ես, ապաւէն իմ Ած, եւ ես յուսամ ՚ի նա։

Նա փրկեսցէ զքեզ յորոգայթէ որսողին, եւ ՚ի բանից ՚ի խռովութէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ՝ ՚ի հովանի թեւոց նորա յուսասցես։

Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ՝ ճշմարտութիւն նորա։

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի, եւ ոչ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ։

Յիրէ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի դիպ-

Թակղուէ դիւին ՚ի հասարակ աւուր։
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հա-
զարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ.
և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, և
տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ
է վասն քո, ՚ի պահել զքեզ յամ
ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ
քեզ. զի մի՛ երբէք հարցես զքարի
զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնաս-
ցես դու. և առ ոտն կոխեսցես զառ-
իւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկե-
ցից զնա. հովանի եղէց նմա, զի ծան-
եաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց
նմա. և առ նմա եղէց ՚ի նեղութեն.

Փրկեցից և փառաւոր արարից

զնա․ երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս̃բյ։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե̃ զտէր աղա։

Խնդրեսցուք հաւատով ՚ի Հօրէ վասն քաւութե̃ մեղաց և թողութե̃ յանցանաց, փրկելոյ զմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութե̃ց, իջանելոյ ՚ի վերայ մեր ողորմութե̃ և գթութե̃ տեառն ա̃յ ամենակալին․ կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթք։

Հայր գթութե̃ց և ա̃ծ ա̃մ մխիթարութե̃ց․ որ մխիթարես զմեզ յա̃մ նեղութեան մերում․ լո՛ւր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր․ անցո՛ ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա՛ և լո՛ւր մեզ․ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր․ արժանաւորեա՛ գոհութե̃ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և․

Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս․ ամէն։

Հայր մեր որ յերկինս ես․

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից իններորդի ժամուն․ որ կատարի ՚ի դէմս որդւոյն աստուծոյ․ այլև մահուանն՝ և բանական հոգւոյն աւանդմանն։

Օրհնեալ որդիդ սուրբ ած ճշմարիտ․ ամէն։

Սաղմոս․ 50․

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում․ ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ․ և այլն։ տես ՚ի բին․ 332։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ։

Երգ իններորդի ժամուն․

Զորչարակցեա՛լ քեզ ահիւ լուսոյ երեք ժամու խաւարելոյ․ պայծառացեալ յիններորդին ՚ի տիպ լերման մահու սատուերին․ Ջահէդ լուսոյ մեծապայծառ աւանդեցեր զհոգիդ առ հայր․ ուստի կցորդ քեզ ՚ի յեր-

կենս ընդ մեզ ուղղեա հոգւովդ քոյին։

Անդարամերք սարսեցին զկապեալ հոգիս արձակեցին. վէմք ՚ի վեմէդ պատառեցան ՚ի տապանաց մեռեալք յարեան. տարերք երկրի տատանեցին և աշխարհի սիւնք դողային. ըմեալքս առ քեզ պաղատեցուք զի ընդ արդարսըն դասեսցուք։

Ցուցեր յայնժամ ըսքանչելիս և այժըմ մեզ ողորմեսցիս. ւիւծեալ բնութիս քո ողջացաւ շնորհեա և մեզ լինել անցաւ. փոխան մահու քո կենարար կեցո ընդ մեզ տէր բարերար. քեզ պաղատիմք ստաւազակին յիշեա ընդ մեզ յօրն ահագին.

Մաղթանք.

Յամենայն ժամու աղաչանք իմ
այս են, ՚ի մեղաց իմոց սուրբ ա.
Լուես խաղաղութեան զտէր.
Օրհնութի և փառք հօր և.

Քարոզ մեծի պահոց.

Սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս ա-

ռաջի տեառն մերոյ և փրկչին յի̃ քի̃, յիշելով զմեծամեծս նորա զանչափ շնորհս, զհամբերութիւն կենսատու խաչին, և զհեղումն ազատեցուցիչ արեան նորա, և զսոցին նմանս՝ որ յայսմ ժամու վասն մեր մեղաւորացս կրեաց նա։ Նաև մեք զայս ա̃մ զմտաւ ածելով՝ սրբեսցուք 'ի մեղաց զխորհուրդս՝ զբանս՝ և զգործս մեր. կատարեսցուք զսրբութի̃ անձանց մերոց ահիւն ա̃յ. Մի՛ յապաղիցուք խոստովան լինիլ նմա զմեղս մեր և խնդրել զթողութի̃ մեղաց մերոց. զի մի̃ կորիցեմք անապաշխար՝ զյաւիտենական կորուստն. Այլ մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է, գործեսցուք ըզբարիս 'ի կեանս յայսմիկ, օրինակ վարուց մերոց ունելով զա̃մ սուրբս և զյաղթօղ նահատակսն. որք միանգամ 'ի սկզբանէ հաճոյ եղեն տեառն և փրկչին բոլորեցունց. Որոց աղօթիւք և բարեխօսութեամբն՝ շնորհեսցէ մեզ մարդասէրն ա̃ծ՝ զհաճոյսն իւր և զօգուտն մեր խորհիլ միշտ և առնել, և անպատում պարգևացն

հաղորդս գտանիլ. Ո՜ որ խոստացաւ-սիրելեաց իւրոց ճշմարիտն ած՝ յս քրիստոս տէր մեր. կեցո՛ և ողորմեա՛. Ո՜ ժամս և զառաջակայ օրս խաղա, Ո՜ հրեշտակ. Ո՜ քաւութի՟. Ո՜ սրբոյ. Եւ ես։ Ո՜ անձինս. Ողորմեա՛ց։

Աղօթք.

Տէր զօրութեանց՝ որ կամաւոր մահուամբ քով ՚ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ՚ի մեռելութէ մեղաց մերոց. և բեւեռեցեր զկնիք դատապարտութեն մերոյ ՚ի խաչին. և շնորհեցեր ազատութի՟ ազգի մարդկան ՚ի ծառայութէ ապականութեն՝ յաղթութի՟ փառաց՝ հեղմամբ արեան քոյ սրբոյ. Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր. և յաջողեա՛ մեզ՝ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք՝ կեալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինել յաւիտենական և երկնային ուրախութեանցն ընդ ամ սուրբս քո. Եւ գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և սբ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Բազումողորմ ած և հաստիչ խաղաղութե՝ հաստատեա՛ զանձինս մեր քոյով խաղաղութեմբդ. որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամ արարածս քո՝ ուղիղ հրամանաւդ մատակարարելով. վասն զի՝ այդ իսկ է կամք քո՝ խաղաղական և հոգևոր սիրով կալ մեզ առ միմեանս, և սպասել արթուն մտօք յայտնութեան միածնիդ ոյ և փրկչիդ մերոյ յի քի. Որում արժանաւորք եղիցուք հանդիպիլ ամպովք ընդ առաջ տեառն յօդս. զուարթերես կացցուք յաջմէ քումմէ ընդ ոբս և ընդ սիրելիս անուանդ քո սրբոյ. և ժառանգեսցուք զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ. Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ամենասրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և.

Տէր մի՛ մատներ զմեզ իսպառ վն ող անուանդ քում սրբոյ. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ.

Վասն աբրահամու սիրելւոյ քոյ, իսահակայ ծառայի քոյ, և իսրայէլի սրբոյ քոյ.

Տէր մի մատներ զմեզ իսպառ վասն անուանդ քում սբյ. մի ցրեր զուխտս քո. և մի ՚ի բացերայ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ.

Երգ տեառն Ներսիսի.

Նահապետին աբրահամու հայցմամբ ընկալ տէր զաղաչանս. Եւ ծառային քում սահակայ խընդրուածովք ՚ի մեզ դթա. Րեննամեսին իսրայէլի. Սիրով սրբոյն ՚ի մեզ խնայեա. Երեքսրբեան երիւք սոցին. Սրբեա զհոգի զմիտս և զմարմին.

Քարոզ.

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր քս՝ որ կամաւոր խաչելութեն իւրով զարարածս փրկեաց. և հեղմամբ արեան իւրոյ՝ զթողութի շընորհեաց յուսացելոց իւրոց. Ամենակալ տէր ած մեր. կեցո և.

Աղօթք.

Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Տէր՝ աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զգթութիւն ՚ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր՝ զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ ՚ի հօրէ, տացի ձեզ. Շնորհեա և այժմ հաւատացելոցս ՚ի քեզ՝ և կատարեա ՚ի բարի զխնդրուածս մեր. զի ՚ի քեզ եմք ապաւինեալ. Դու քո առատ ողորմութեամբ մխիթարեա զմեզ ՚ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո յանձառ երկնից արքայութիւն, ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենասուրբ երրորդութեան. այժմ և միշտ և.

Յիշեա տէր զպաշտօնեայս քո.

Բարերար և բազումողորմ Տէր.

Սաղմոս. 114.

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա.

Շրջեցան զինեւ երկունք մահու, և վիշտք դժոխոց գտին զիս.

Զնեղութիւն և զանձկութիւն գտի, և զանուն տեառն կարդացի.

Ո՜ տէր՝ փրկեա՛ զանձն իմ. ողորմած աստուած մեր ողորմի՝ և պահէ զտղայս տէր.

Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց զիս. դա՛րձ անձն իմ 'ի հանգիստ քո. զի տէր օգնեաց քեզ.

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ 'ի գայթակղութենէ, հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց.

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ.

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է.

Զինչ տաց տրիտուր տեառն ընդ ամենայնի՝ զոր և ետ ինձ.

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից.

Զաղօթս իմ տեառն տաց՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա.

Պատուական է առաջի տեառն մահ

սրբոց խորոց․ Ո՛վ տէր ես ծառայ քո
եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ․
Հատեր զկապանս իմ․ քեզ մատու-
ցից պատարագ օրհնութեան, և զա-
նուն տեառն կարդացից․
Զաղօթս իմ տեառն տաց առաջի
ա̃մ ժողովրդեան նորա․ 'ի գաւիթս
տան տեառն, և 'ի մէջ քո Երուսաղէմ։
Օրհնեցէ՛ք զտէր ա̃մ ազինք․ գո-
վեցէ՛ք զնա ա̃մ ժողովուրդք։
Զօրացի՛ ողորմութիւն նորա 'ի
վերայ մեր․ և ճշմարտութի̃ տեառն
մնացէ յաւիտեան․
Փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն ս̃բյ․

Շարական Տէրունեաց և Մարտիրոսաց։

Ո՛ր ստեղծմամբ ըստ պատկերի քո
տէր պատուեցեր զմեզ․ ընկալ և
այժմ զերգ ննջեցելոյն 'ի քեզ ուղիղ
հաւատով․ ըստ մեծի քում ողորմու-
թեան․ Ո՛ր շնորհօք սուրբ Հոգւոյն
լուսաւորեցեր․ յիշատակի խորեանց
զհոգիս նոցա ընկալ մարդասէր․
ըստ մե։ Որք հաղորդեցան մարմնոյ

Եւ արեան քո տէր · հանգո զհոգիս
նոցա ընդ սուրբս քո քո տէր ·
քանզի գնեալք մեք արեան քո եմք ։
Միայն օրհնեալդ ի կանայս · մայր
և միշտ կոյս և իմանալի լոյս · ծնող
արարչին մերոյ անդադար բարե-
բանեսցուք ։

ակ Արարիչ տէր և ըստեղծիչ ազգի
մարդկան · մի անտես առներ զմեզ
ննջեցեալսն մեր · այլ հանգո զհո-
գիս նոցա ընդ սուրբս քո ։ Որդիդ
միածին յարութիւն տիեզերաց ·
մի անտես առ ։ Հոգիդ ճշմարիտ մ
խիթարիչ սգաւորաց · մի անտես
առ ։ Հոգւոյն ընդ քեզ հովանացեալ
միայն սրբուհի · ծնար ընդ բանն
տէր զանճառելւոյ հօր ծնունդ ·
և յայտնեցաւ միութիւն երրորդու-
թեանն ։

բձ Որ կոչեցեր առ քեզ տէր զտիե-
զերս ամենայն · ընկալ զմեր զննջե-
ցեալսն ի գոգ հայրապետին աբրա

համու․ ողորմած տէր փրկիչ և բա-
րերար։ Ո՛վ թողութեանց ես տուօղ
ա՛ծ․ թող ըզ մեղս մեր ննջեցե-
լոցն․ կարօղ յամն և հզօր․ ողոր։
Ո՛վ լուսատու ես տիեզերաց քս
ա՛ծ․ լուսաւորեա և զմեր ըզ նն-
ջեցեալսն լուսով երանաւէտ զը-
ւարթնոցն․ ողոր․ Յոյս մեր և ա-
պաւէն մայր ա՜ծն և կոյս սուրբ․ որ
հօր ա՜ծութեն ոչ բոցակիզեաց զքո
ա՜է զորովայն․ բարեխօսեա առ տէր
վասն մերոյ փրկութեն։

Ո՛վ որդիդ ես և բանդ ա՜յծ․ հա- բկ
ւասարակից ընդ հօր յէութեն․ առ քեզ
կարդամք մարդասէր․ հանդերձ զհո-
գիս ննջեցելոց մեր ընդ սրբոց քո։
Ո՛վ իջեր յերկնից վասն մեր․ զա-
ռաջինն առեր զյանցանսն ադամայ․
մերով բնութբ բարձեր ՚ի վերայ խա-
չին անմարմին ձեռօք․ հանդերձ։ Ո՛վ
լուծեր զիշխանութի մահու․ կամա-
ւորական մահուամբ քո քս․ բա

նաւուորաց զաղաչանս առաջի քո հեղ-
եալ մաղթեմք . հանդո՛ . Տիրուհի
անարատ մայր ա՟ն և կոյս մարիամ .
քրովբէական աթոռ ըզ քեզ տեսաք
'ի յերկրի . բարեխօսեա առ տէր վա-
սըն մերոյ փրկութեան .

գ.ձ Հայր բարերարութ որ գըթացար 'ի
յազգս որդւոց մարդկան . առաքեցեր
ըզ միածինդ 'ի փրկութիւն . յիշեա
զհօտքս նընջեցելոց մերոց . և հանդե
ընդ ա՟րբս քո . Որդի միածին որ
յարեար 'ի մեռելոց . 'ի միւսանգամ
գալըստեանըն քո յարութիւն մեզ խոս
տացար . յիշ . Հոգի ճըշմարիտ մը
խիթարիչ սըրբարորաց . աղաչանօք ա՟բ
ա՟ծածնին և ա՟մ քոց սրբոց . յիշ .
Ի բարեխօսութ փութացիր մեզ ա՟բ
ա՟ծածին . առ 'ի փրկել ըզ ծնող-
ներս 'ի մեղաց և յապականութ .

գ.կ Յանըսկըզբնական ծոցոյ հօր խո
նարհեալ բանըդ մարմնացար 'ի կու-
սէն վասըն փրկութեան մերոյ . աղա-

չեմք ընդ քեզ · զնորոգեցեալսն մեր ՚ի քեզ ուղիղ հաւատով · յիշեա տէր յորժամ գաս թագաւորութեամբ քո · Անոխակալ քաղցրութեան որդի այ · հանձնեցար բառնալ ըզմեղս աշխարհի քո խաչելութեամբն · ողմ · Ամաւորական մահուամբ քո լուծեր զերկունս մահու · և արժանի արարեր թողութեան յանցանաց քաւիչ քո արեամբ · ողմ · Որ փոխանակ մեղաւորաց ընդմեռանիլ յանձն առեր · իջանելով ՚ի դժոխս փրկեցեր ՚ի մեղսամեր բանտէն ըզգերեալսն · ողմ · Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրութիդ · որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութի պարգևեցեր աշխարհի · ողմ · Մաքուր և անբիծ ծ կոյս յետ ծննդեան · որ մարմնով ծնար զարձակօղն ՚ի կապից մահու · բարեխօս լեր վս անձանց մերոց · փրկել ՚ի սպառնալեաց գեհենոյն ·

Յորժամ հարկանի փող ՚ի գալստա- դձ

եան քո տէր. յայնժամ զարհուր-
եալ դողան արարածք ՚ի յահէ քում
մէ. աղաչեմք ըզքեզ փրկիչ. հանգո
և ըզմեր ըզ նընջեցեալսն ընդ սուրբս
քո. որ միա՚յնդ ես բազումողորմ.
Յահաւորեկ լուսոյ ծագման քո տէր.
ցընծան դասք առաքինեացն ՚ի մե-
րայ լուսեղէն ամպոյն. աղաչեմք.
Աննախակալ բազմագութ ողորմած
տէր. մի անտես առներ ըզմեղուց-
եալքըս յահագին աւուրն. որ մի.
Որ իջեր ՚ի յերկնից և մարմնացար
՚ի սուրբ կուսէն. անճառելի քոյին
ծնընդեամբդ. և զիս մի անտես առ-
ներ. այլ պահեա պատուականն և
սուրբ խաչիւ քո.
դկ Որ թագաւորդ ես յաւիտենից
քս ած. ընկալ ըզծառայս քո ՚ի
բարի. եւ շնորհեա ՚ի յաջակող-
մեան քում դասին. Որ ունիս իշ-
խանութիւն մահու և կենաց. հան-
գո ըզհոգիս քոց ծառայից. եւ.

Յորժամ կարդի՝ աթոռ տէրութեն՝ ընդ քո. և հաստատէ ատեան դատաստանին. յայնժամ խնայեա՛ ի ծառայս քո. Եւ. Ամենօրհնեալ ծնամայր մարիամ. քերովբէական աթոռ արարչին մերոյ տնօրէնութեն. զոր երանեցին ամ ազինք հանապազ.

Հոգւոցն հանգուցելոց քս տծ՝ արա՛ հանգիստ և ողորմութի. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա՛ զթողութիւն յանցանաց. մաղ

Եւ ես խաղաղութե զտէր աղաչես.

Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր քս՝ զի ընդ նոսա ընդ արդարսն դասեսցէ. և ընդ մեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ. Ամենակալ տէր ած մեր. կեցո՛ և ողորմեա՛. քրղ

Տէր ողորմեա. Երէցս.

Աղօթք.

Քս որդի այ անոխակալ և բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ

՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութե՟ քո։ Արա՛ արժանի ողորմութե՟՝ քաւութե՟ և թողութե՟ մեղաց։ Պասաւորեալ պայծառացո՛ ընդ ս՟րբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես տէր և արարիչ ամենեցուն․ դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Մաղթանք։

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն ա՟ծ, ՚ի հաճոյս բարերար կամաց իւրոց․ մեր մեղացն և բազում յանցանացն թողութի՟ շնորհեսցէ․ ՚ի չարեաց փրկեսցէ․ ՚ի մեղաց պահեսցէ․ և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Օրհնեալ թագաւորութի՟ն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Նուագ ժամանակաց ըստ չորից տարւոյս պահոց, և տօնից տէրունականաց, և ամ՟ սրբոց։

Որ ՚ի հօրէ առաքեցար փրկել և պահ
մարմնացար ՚ի սրբոյ կուսէն. որ վասն բՀ
մեր ՚ի յերկնից իջեր և լուսաւորե- գՀ
ցեր զտիեզերս. Զխաղաղութի՟ քո եՀ
տուր մեզ տէր, որ խաղաղութեանց ես
թագաւոր. զխաղաղութի՟ և զողոր-
մութի՟ որ յամենայնի ես դու կարօղ
մարդասէր։

Որ ըստ ամ՟ միտս անցանես, զխա- գՀ
ղաղութի՟ քո ած՟ տուր մեզ հանա- ուր
պազ՝ զքեզ աղաչեմք.

Միածին որդի և բանդ ած՟ և ան- կլր
մահ էութի՟, որ յանձն առեր մարմ-
նանալ ՚ի սրբուհւոյ ածածնէն և ՚ի
միշտ կուսէն. անփոփոխելի մարդ
եղեալ խաչեցար քս՟ ած՟ մեր. մահ-
ուամբ զմահ կոխեցեր. մինդ ՚ի սրբոյ
երրորդութեն՝ փառաւորակից ընդ
հօր և սրբոյ հոգւոյն՝ կեցո՛ զմեզ։

Աստուածածին անհարսնացեալ՝ ծնն
զբանն անսկիզբն յղացար և զած՟ն ա-

նիմանալի ծնար․ զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր․ նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց․

ծնն Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց․ քանզի՝ ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրանիւթք և վեցթևեան սերովբէքն նոյիւ ոչ իշխեին, կրեցեր անսերմնապէս զանպականունն 'ի յարգանդի քում որպէս աղախին զտէր․ և ծնար որդ̃ զմարդզա̃ծն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն զանճառ զբանն 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց․

ծնն Աղաչեմք զքեզ սբ̃ կոյս մարիամ ա̃ծածին՝ բարձրելոյն զօրութե̃ն հովանաւորեալ և սուրբ հոգւոյն եկաւորութե̃ն լուսաւորեալ, որ զա̃մ գոյութեց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս․ մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր․

տ̃ն.ը Ծերունին այսօր սիմէօն՝ հոգ-
տ̃ն.է ւովն գայր 'ի տաճարն՝ երևելով քերովբէիցն վեհագոյն, զի որոց թևօքն

տուառնեալ ոչ իշխէին հայիլ 'ի յա-
հեղ փառացն, սա 'ի գիրկս իւր բարձ
եալ համբուրէր համարձակապէս և
գգուէր որպէս զմանուկ. և աղեր-
սելով հայցէր արձակիլ 'ի խաղաղութի:

Անկզբնական բանդ ա͞ծ. 'ի վեր- տն͞ը
ջին աւուրս յանձն առեր լինիլ մարդ առ͞ջ
'ի կուսէն. և արարիչդ յաւիտենից՝
փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ
տէր սրբութեց և անկարօտ մաքրու-
թեանց. եկիր 'ի տաճարն քառասնօր-
եայ, զօրինացն կատարեցեր զարդա-
րութիւն: Ո՜ որ բարձեալ սիմէօնի
զանպարագրելիդ 'ի գիրկս իւր հայ-
ցէր, որ արձակիչդ ես կապելոց՝ ար-
ձակեա զիս 'ի խաղաղութի: Վասն
որոյ՝ ընդ ծերունւոյն սիմէօնի վերա
գոչեմք առ քեզ տէր, փ͞ք՝ փ͞ք՝ փ͞ք՝
տէր զօրութեանց, լի են երկինք և
երկիր փառօք քովք 'ի փրկութի մեզ
ք͞ս ա͞ծ փառք քեզ:

Ո՜ ղազարու ննջումն՝ որպէս կան- ղ͞ող
խագէտ յառաջ ասէիր. որ և 'ի բե-
թանիա յառաջէիր՝ զի յարուսցես ըզ
սիրելին քո: Որդ՝ և մեք գոչելով

ասեմք , օրհնեալ որ գաս 'ի չարչա-
րանս կամաւ հօր՝ 'ի փրկութիւն ան-
ձանց մերոց ։

ղաղ Յորժամ եկեալ կենարարդ 'ի գե-
րեզմանն ղազարու . յորժամ եկեալ
կենարարդ 'ի գերեզմանն ղազարու .
աւետաւոր ձայնիւդ աղաղակէիր ա-
սելով՝ ղա՛զարէ՝ արի ե՛կ արտաքս ։
Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յար-
եաւ . և նոյն ինքն զանմահութեան
պարգևսդ ետուր սիրելւոյդ , և ա̃ծ-
ային ձայնիւդ 'ի գերեզմանէն կոչե-
ցեր ։ Վասն որոյ՝ և մանկունք եբ-
րայեցւոց ոստովք օրհնէին զանմահ
թագաւորութի̃ քո ։ Ընդ նոսին և
մեք ասեմք , ովսաննայ՝ օրհնեալ է
գալուստ քո . օրհնութիւն 'ի բար-
ձունս , օրհնեալ որ գալոցդ ես ան-
ուամբ տեառն ։

ծաղ Ցնծա՛ երուսաղէմ և զարդարեա՛
զառագաստ քո սիօն . քանզի՝ ահա
թագաւոր քո քս̃ նստեալ 'ի յաւանա
կի նորոյ՝ հեզութի̃ ցուցանելով գայ
մտանէ յառագաստ քո ։ Եւ մեք աղա
ղակեմք , ովսաննայ օրհնեալ եկեալ

'ի յանուն տեառն. որ ունի զմեծ զօ-
զօրութիւն.

Ք՟ս յարեաւ 'ի մեռելոց. մահ- զատ
ուամբ զմահ կոխեաց. և յարութե՟ն
իւրով մեզ զկեանս պարգևեաց. նմա
փառք յաւիտեանս, ամէն.

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ- յինա
փրկութեան մերոյ. որ անսկիզբն 'ի
հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի կու-
սէն. խաչի համբերելով և կամաւոր
մահուամբն իւրով զկենդանութեան
մեզ պարգևեաց շնորհս.

Քանզի յարեաւ 'ի մեռելոց ք՟ս յինա
ա՟ծ յաւիտենից՝ արարիչ և յարութի
ազգի մարդկան. զոր օրհնեն անդա-
դար զինուորութիւնք հրեշտակաց և
ա՟մ զօրութիւնք երկնից. Ընդ որս
գոչելով ասեմք փառք սոսկալի յա-
րութեան քո տէր.

Ուրախացան վերնական բազմութիւնքն հմբ
տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս
բազմեալ՝ սարսեալ ասէին. ո՞վ է սա
որ դիմեալ գայ յեդովմայ. և եկ-
եալ մտանէ փառօք 'ի փառս. տէր
փառք քեզ.

Հմբ Որ յանպատում աթոռ նստիս և յանմարմնոցն վերօրհնիս, անհասանելի բանդ ած ՚ի յերկրի երևեցար ճշմարիտ մարդ · զանօրէնութեն կատարեալ զխորհուրդ, խաչի և մահու համբերեցեր · և զհրաշալի զյարութիդ քո ցուցեր հզօր զօրութէ · այսօր համբարձար փառօք ՚ի յերկինս և ըղ կուսածին մարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր · զոր տեսեալ եսայիաս՝ նախաձայնեալ ասէր, ո՞վ է սա որ դիմեալ գայ յերկրէ · Հիացեալ պետութեանց երկնից գոչէին առ միմեանս, համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր և մտցէ թագաւոր փառաց : Արդ՝ որ յամենայնի կարող ես և հզօր, շնորհեա և մեզ հանդիպիլ քեզ ամպովք ՚ի միւսանգամ քո գալստեանդ · որ միայնդ ես մարդասէր :

Հոգ Ած զքեզ խոստովանիմք զսբ հոգիդ և երկրպագանեմք · որ ես պատճառ կենդանութե եղելոցս և խաղաղարար աշխարհի · որ զտխրութի աշակերտացն բազում ուխութէ լցեր ·

և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ անճա-
ռելեօք ցուցար նոցա . աղաղակեմք
առ քեզ խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժան- բհ
եալ հանդերձ յառաքեալսն՝ լուսա-
ւորելով զնոսա . և այժմ աղաչեմք ըզ
քեզ տ̃ր հոգիդ ա̃ծ , որ ես պատճառ
կենդանութ̃ե եղելոց և խաղաղարար
աշխարհի , խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

Վասն որոյ և մեք զհոգիդ տ̃ր ա̃ծ գհ
ընդ հօր և ընդ որդւոյ միասնական
խոստովանիմք . և հայցեմք մեզ 'ի վեր-
նատուողէդ զհոգևորական խաղա-
ղութիւնդ . տէր փառք քեզ ։

Երևի տէրդ այսօր աշակերտացն վար
'ի թաբօրական լերինն . և աշակերտա
ցըդ զարհուրեալք աղաղակէին ասե-
լով . արասցուք երիս տաղաւարս՝ մի
տեառնդ , և մի մովսիսի և մի եղիայի ։
Արդ՝ և մեք բանաւոր հօտքս երգեմք
ընդ քո ճշմարիտ վկայիցդ . առաքեա՛
'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւ-
սանգամ գալստեանդ և կեցո՛ ։

Առաջի պատուական ամենայաղթ խո
խաչի քոյ անկանիմք երկրպագելով և

խնդրեմք զթողութի՜ յանցանաց մե-րոց ։ քանզի սովաւ բարձեր զդառա-պարտութիւն ազգի մարդկան ։ Եւ այժմ վասն սրբոյ ա̃ծային քո նշանի՛ շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւն ամենայն աշխարհի ։

Էջմի ածնի

Տէր մեր և փրկիչ յի̃ քի̃, որ աղօ-թիւք և միջնորդութե̃ բազմաչար-չար վկային քո և հօրն մերոյ սրբոյն գրիգորի լուսաւորչին, մեծաւ փա-ռօք և բազմութե̃ զօրացդ լուսեղի-նաց իջեր յերկնից 'ի դաշտն արարատ եան, 'ի յայցելութի փրկու հօտիդ քո ազգիս հայոց՝ և 'ի ցուցումն յաւ-կական սիրոյդ և մեծի ողորմութեդ ։ և ոսկեուռամբ բաղխեցեր զխորս ան-դնդոց, և հալածեցեր զդունդս սան-դարամետականաց ։ ուր և լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցեր զմայր ա-թոռն մեր զսբ էջմիածին ։ և արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհա-ցդ ա̃ծայնոց՝ 'ի լինիլ ծնօղ՝ դաստի-արակ և կատարելագործիչ ա̃մ եկե-ղեցեացս հայաստանեայց ։ Արդ՝ պահ-եա՛ զնա անարատ, հաստատուն և ա-

նաղօտ, 'ի պայծառազարդութն եկեղեց
եացս մերոց և մանկանցս սոցին մինչև
'ի կատարած աշխարհի. յորոց միշտ
փառաւորի ամենասուրբ անուն քո
յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Օ խաղաղութն շնորհեա եկեղեց եկղ.
ւոյ քում սրբոյ, զխաղաղութն և զան-
շարժութն 'ի թշնամեաց պատերազ-
մէ. և հաստատեա 'ի մի հաւատ զկա-
թուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովա-
նիմք տէր և ա͞ծ կեցո՛ զմեզ։

Օ յառաջընթացութն քո և զկա յօհն.
րապետութիւն ո͞յ բանին խափանել
կարծելով՝ որ 'ի ձեռն կնոջն զնա-
խաստեղծն 'ի դրախտէն արտաքս ըն-
կէց. Նա՛և այժմ զհռօդիադա անօ-
րէնութե͞ բորբոքեալ. և բազմերոցն
հերովդիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն
հաճոյացոյց՝ զի զքոյդ հատցէ զգլուխ
որ զամենեցուն ձեռնադրեցեր ըզ-
գլուխն քո։ Ա՛յլ դու որ յանապա-
տէ բարբառոյ ձայն, գոչեմ որում
ձեռնադրեցեր պարգևել զխաղաղու-
թիւն և զմեծ զողորմութիւն։

Օ նծամ այսօր ցնծամ և զուարճա- ըստնե

ցի՛ր կաթուղիկէ եկեղեցի որ՝ յիշա-
տակաւ սրբոյն ստեփաննոսի նախա-
վկային քի վկայեցելոյ հօր։ Որ ա-
ղօթիւք բանայր զերկինս զոր փակ-
եաց ադամ. և հրեշտակակերպ տես-
լեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի
կերպի ադամայ նստեալ 'ի յաթոռ
փառաց։ Որ զբազմութիւն քարանցն
որպէս զծաղիկս հաւաքելով բոլորէր
պսակս փոխանակ փշոցն և եղէգանն։
Եւ զմարտիրոսական արիւնն իւր
խառնէր ընդ փրկական արեանն քի
հոսեցելոյն 'ի կողէն։ Ամ որոյ՝ դե-
րազանցեալ 'ի փառս առաւել քան
զամ սուրբս՝ հայցէ և վասն մեր 'ի
վերնատուողէն զպարգևս կենաց ան-
վախճանից և զմեծ զողորմութիւն։

ըստե Յորովայնէ ընտրեալ սուրբն ստե-
փաննոս, յորովայնէ ընտրեալ սուրբն
ստեփաննոս. վկայ ճշմարիտ առաքե-
լական քարոզութեանցն. որ 'ի վերայ
անօրէն քարաձգողացն աղօթէր առ
քս ածդ ասելով՝ մի համարիր սոցա
զայս մեղս։ Արդ՝ 'ի ձեռն սորին բա-
րեխօսութեանն շնորհեա մեզ տէր

զմեծ քո զողորմութիւնդ ։

Ընծայ այսօր ցնծայ և զուարճա- Լուսա
նայ եկեղեցի սուրբ՝ տօնելով մեծա-
հանդիսիւ զհանրատենչ յիշատակս
քո՝ ով գերազանցեալդ ՚ի հարս մ̃ե
հայրապետ և լուսաւորիչ տանս Թոր-
գոմայ սուրբդ Գրիգորիոս ։ Որ քո-
ով անտանելի չարչարանօքդ զաշխար-
հըս ա̃մ հիացուցեր ։ Աննօրինակ ճըգ-
նութեդ զհրեղէնսն զարմացուցեր ։
որք և դուն դուն յերկնից ՚ի յեր-
կիր խոնարհեալ՝ ՚ի տես հանդիսի նա-
հատակութեդ փութային ։ Նաև ան-
համեմատ համբերութեդ զդառնաց-
եալ արքայն իւրական զօրօքն ընդ-
ոտիւքդ նուաճեցեր ։ Նաև ա̃ծահաճոյ
աղօթիւքդ զկուրացեալ միտս նոցին
լուսաւորեցեր և աւետարանին քո
պաշտօնեայս արարեր ։ Ընդ նմին և
զազգս հայոց նորոգ հոգևոր ծնընդ-
եամբ ՚ի լոյս ա̃ծգիտութեան ածեր ։
Վասն որոյ և յատկապէս լուսափայ-
լեցար ՚ի մէջ ա̃մ սրբոց , և զառաքե-
լականն ընկալար զաթոռ և զպատիւ ,
և ընդ նոսին պսակեցար ՚ի քէ ո̃յ ։

Արդ՝ ով Հայր մեր և լուսաւորիչ հոգւոց մերոց. աղաչեմք զքեզ միաբան ուխտիւք եկեղեցւոյ քոյ, զի յաւուրս հրաշալւոյ տօնի քոյ՝ յատկապէս բարեխօսիցես առ քս̃ ա̃ծն մեր, զի զեկեղեցիս և զմնացորդս ժողովրդեան քոյ պահեսցէ ՚ի խաղաղութեան՝ փրկելով ՚ի հոգևոր և մարմնաւոր թշնամեաց. զի և մեք միշտ ընդ յիշատակս քո կատարելով՝ փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգին յաւիտեանս ամէն:

Լուսա Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր և զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն, պսակեցար յարքայութենն. արդ բարեխօս լեր առ տէր վասն մեր:

Առաք Առաքեալք և միաբանք քեզ ով ամենակալ հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդ հանուր յորդեգրութիւն կենաց կոչելով, միասնական սուրբ երրորդութեանն յորդորեցին երգել զփառս ՚ի յաւիտեանս, ամէն:

Այսօր ահաւոր ձայնք որոտման որոտ
հնչեցին յերկնից 'ի յերկիր՝ կոչելով
յորդեգրութ՟ի զմեզ վերնոյն սիօնի .
հաստատութիւնքն հաւատոյ և պար-
ծանքն եկեղեցւոյ . որք ցօղով արեան
իւրեանց մաքրեցին զտիեզերս յանօ-
րէն կռապաշտութ՟եց . և միշտ հայցեն
'ի քէ՟ զքաւութ՟ի տօնողացս անուանց
իւրեանց : Արդ՝ մաղթանօք սոցա
տէր՝ խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողո-
վուրդս որ միայնդ ես մարդասէր .

Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի մարդ
քո 'ի վերայ վիմի հաւատոյ , և կար-
գեցեր 'ի սմա առաքեալս և մարգա-
րէս , հովիւս և վարդապետս՝ առ 'ի
հաստատութ՟ի սրբոց . և ճգնութ՟ե
վկայից զթշնամին սորա վանեցեր . 'ի
խաղաղութ՟ե զսա պահեա՛ ա՟ծ որպէս
մարդասէր .

Ո հայրապետականն զարդարեցեր հայր
աթոռ 'ի յերկրի , առաքելական ա-
ւեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ քո .
ո՛վ երանելիդ 'ի հարս մե՟ հայրապետ։
Քանզի՝ քո վարդապետութ՟եդ սեր-
մունք՝ բարեպաշտութ՟ե բուսուցին

հասկս, ուրախութե պտուղ հատու-
ցանելով և հաւատացելոցս փրկութի
շնորհելով. վասն որոյ բարեխօսեա
առ տէր վասն անձանց մերոց։

Թագ. Որպէս յետ ա՟ծասէր Թագաւորին
իսրայէլի եզեկիա՝ յարոյց ա՟ծ զյովսէ՝
որ զա՟մ կռապաշտութիւն 'ի բաց ըն-
կէց, որպէս և զբարեպաշտն կոստան-
դիանոս, որ զարիոսի զմոլումն խա-
փանեաց. և զմեծն Թէոդոս յարոյց
ա՟ծային նախախնամուն վառեալ՝ ընդ-
դէմ այնոցիկ որք զսուրբ հոգին հայ-
հոյէին։ Նորդ՝ ով ա՟ծարեալ և ուղղա-
փառ սուրբ Թագաւոր՝ աղաչեա ըզ
տէր 'ի փրկել զմեզ 'ի մարդապաշտ
հայհոյութե. զի և մեք տօնեսցուք
զյիշատակս քո՝ խնդրելով 'ի քէ ըզ
հաշտութի և զմեծ զողորմութիւն։

Թագ. Որպէս յետ ա՟ծասէր Թագաւորին
իսրայէլի եզեկիա՝ յարոյց ա՟ծ զյովսէ՝
որ զա՟մ կռապաշտութիւն հնոյ ժողո-
վրդեանն 'ի բաց ընկէց, որպէս և 'ի
նորումս յարոյց զանդրանիկն Թագա-
ւորաց զբարեպաշտն աբգարիոս, որ
'ի հեռաստանէ ծանեաւ զերկնաւոր

Թագաւորն զՔ՟ս. եւ եղեւ քարոզ ա՟ծու-
թեան նորա ընդ ծագս տիեզերաց ։
Յետ նորին եւ զմեծն Տրդատիոս , որ
իսպառ հալածեաց զդիւամոլ կռա-
պաշտութիւնն յաշխարհէս հայաս-
տանեայց . եւ զարդարեաց ճշմարիտ
եւ ուղղափառ հաւատով ։ Արդ ո՛վ
ա՟ծարեալ եւ բարեպաշտ սուրբ Թա-
գաւոր , աղաչեմ զՏէր , 'ի փրկել
զմեզ յանօրէն բռնաւորաց . զի եւ
մեք տօնելով զյիշատակս քո՝ խնդրես-
ցուք 'ի ք՟է զխաղաղութիւն եւ զմեծ
զողորմութիւն ։

Ի տաճարի սրբոց եւ յիշատակի ս՟բց Մարտիր
մարտիրոսաց՝ զձեռս համբառնալով
աղաչեմք . բարեխօսութ՟ե սոցա եւ ա-
ղօթիւք՝ զկենդանութի՟ս մեր խաղա-
ղացո՛ ա՟ծ որպէս մարդասէր ։

Ճգնաւորք ք՟ի , որք տանջանաց Ճգնա
անօրինացն համբերեցիք եւ զմոլութ՟ի
կռոցն խափանեցիք . դասաւորեալք
ընդ հրեշտակս 'ի յերկինս . որք ու-
նիք զհամարձակութ՟ի 'ի ք՟է՝ բարե-
խօսեցէ՛ք կեցուցանել զանձինս մեր՝
զձեզ աղաչեմք ։

Հռիփ Որք ծագեցան մեզ յարեւմտից որպէս զարեգակն, եւ լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայաստանեայց. փարատեցին զխաւարն անգիտութեան կռապաշտութեան. եւ լուսաւորեցին զա՟մ հոգի հաւատով ա՟ծգիտութեամբ: Որոց բարեխօսութե՟ն ք՟ս ա՟ծ՝ պարգեւեա աշխարհի քում ըզ խաղաղութի՟, եւ անձանց մերոց զմեղաց թողութի՟, որ՟ մարդասէր ես:

Գայի Ո յաղթանակ ձեր զհանդէս զըւարձացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի սրբութե՟ ստացայք զկուսութիւն. եւ 'ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս.

Կուս Հարսնացեալք ք՟ի երկնաւոր փեսային դստերք վերին սիոնի. խնդրեցէք 'ի քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ զողորմութիւն:

Վար Յաշխարհական 'ի ճակատամարտին, յաշխարհական 'ի ճակատամարտին եւ 'ի մեծ պատերազմին ընդդիմամարտեալ լինէր անօրինացն պատերազմ: Իսկ երանելի նահատակքն՝ ըզ մոլութի՟ անօրինացն խափանեցին եւ

յաղթօղ դատան . քանզի՝ որոց ստաց-
եալ էր զա̃ծային զօրութի, ոչ ժուժ-
կալէր նոցա մարմնաւորական պատե-
րազմ : Արդ՝ քս̃ ա̃ծ՝ սոցա բարե-
խօսութ̃ն խնայեա՛ 'ի մեզ և ողորմեա՛ :

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ զինու
նահատակդ քո̃ սուրբդ (Նէ․․․) . որոց
որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգ-
ւոյդ քում փրկանս . և ո՛չ ածեր ըղ
մտաւ զպատառնալիսն անօրէն բռնա-
ւորացն : Այլ վերին ազդեցութ̃ն
դիտելով զայրեցումն հոգւոց նոցա,
վասն այնորիկ լուցեր զտաճար կռոցն
և անարգեցեր զպաշտամունս նոցա :
Արդ՝ 'ի յաղթօղ պատերազմի տօնո-
ղացս զօր նահատակութե̃ քո, բարե-
խօսեա՛ առ տէր վասն անձանց մերոց :

Պանծալով փառաց քոց 'ի փառս կա- քառ.
թուղիկէ եկեղեցի քո քս̃ մեծապէս
պայծառանայ . քանզի՝ թագաւորեալ
քըն 'ի քէն դիմեալք 'ի յերկինս, 'ի
սեբեստիոյ նահատակին՝ 'ի յամօթ և
'ի քարընկէց յերեսս բանսարկուին :
Որք և քաջալերէին զմիմեանս, զի մի
լուծեալ ոք բաղանեօք անցաւորիս

պականեցի · այլ դողալով առաջի
նորա՝ զինքն ընդերձեալ ՚ի յանխ-
աստուածային գանձուցն հոլովիցի աղաղա-
կելով առ քս։ Որդ՝ սոցա բարեխօ-
սութեամբն՝ ընկալ և զորդեգրութի-
ժողովոյս մերոյ ՚ի յոյս սիրողաց քոց
տէր փառք քեզ ·

Երից մանկ Որ ՚ի վերայ քերովբէիցն հանգչիս
և ՚ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս,
իջեր ՚ի բաբիլօն և փրկեցեր զերի-
մանկունսն ՚ի հրոյն բռնութենէ։
Որք աղաղակելով գոչէին երգ նոր·
ամենայն գործք օրհնեցէք և բարձր արա-
րէք։ Թագաւոր փառաց և արարի-
բոլորից, որ մարդասիրապէս գթացար
՚ի սուրբ մանկունսն և փրկեցեր ՚ի
բորբոքեալ բոցոյն · որք անարգեցին
զբռնութիւն թագաւորին և շիջուցին
զզօրութիւն հրոյն · ընդ նոսին և մեզ
քեզ վերագոչեմք, փրկեա զմեզ ՚ի
հրոյն յաւիտենից։ Զի դու միայն ես
բազմագութ տէր՝ քեզ փառք յա-
ւիտեանս ամէն ։

Հրեշ Զոր օրհնեն անլռելի ձայնիւ ի-
մանալի զօրութիւնք՝ երկնաւոր նահա-

պետութիւնք · հրեշտակք և հրեշտակա-
պետք · աթոռք և տէրութիւնք · իշխա-
նութիւնք և պետութիւնք · սերովբէք և
քերովբէք՝ և մեք օրհնեսցուք զնոյն
ամենասուրբ երրորդութիւնն և զմի
աստուածութիւնն ։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քա-
հանայապետութիւն ցնծայ հրաշա-
փառապէս՝ զերկնաւոր քահանայա-
պետութեանցդ կատարելով զտօնախմ-
բութեան տօնս։ Եւ ընդ անմարմնա-
կանաց և հոգեղինաց դասուցդ՝ և
մեք մարմնականքս և հողեղէնքս հա-
մաձայնեալ փառաւորեմք զփառաւո-
րեցեալն ՚ի ձէնջ ։ Արդ՝ ով սուրբ
գաբրիէլ և միքայէլ մեծ հրեշտակա-
պետք բարձրելոյն, և ա՟մ զինուորու-
թիւնք երկնից, որք կայք միշտ առաջի
աթոռոյ ա՟ծութեան, անդադար բա-
րեխօս լերուք վասն մեր առ տէր, վե-
րաբերել զմեզ զամենեսեան ընդ ձեզ
յերկնից արքայութիւնն, և միաձայն
բարբառով երգել զփառս ։

Բարեխօսութ՟ սրբուհւոյ ա՟ծած- ա՟մ
նին, սրբոյն յօհաննու կարապետին, որ՟ց

սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց և մարգարէից, հայրապետաց և վարդապետաց, մարտիրոսաց և թագաւորաց, ճգնաւորաց և կուսանաց, նահատակաց և միանձանց, և ա̃մ սրբոց քոց հնոց և նորոց, յայտից և անյայտից, որոց այսօր է յիշատակ, զխաղաղութի̃ և զերկնային ողորմութի̃ քո պարգևեա՛ մեզ մարգասէր տէր։

ժո̃ղ Լու և ես խաղաղութե̃ զտէր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛։

Օրհնութի̃ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

խորան՝ Աւետեաց, Ծննդեան, Տեառնընդառաջին, Վարդավառին, Վերափոխման, և ամ. տօնից Ածածնին՝ ճաշու փոխն այս է :

Մեծացուսցէ անձն իմ. և այլն, 203 :

Նուահայեն, Ծաղկազարդին, Հոգւոյ գալստեան, խաչի, Եկեղեցւոյ, և ամենայն Սերաբէից՝ ճաշու փոխն այս է :

*Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր էած :*

*Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի • պատրաստ է աթոռ քո ՚ի սկզբանէ յաւիտեանս դու ես :*

*Ամբարձան գետք տէր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց • և յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց :*

*Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու :*

*Սքանչելի ես դու տէր ՚ի բարձունս, վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք :*

*Տան քում վայելէ սրբութիւն տէր՝ ընդ երկայն աւուրս :*

*Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ :*

Զատկէն մինչեւ ՚ի Հոգւոյ գալստեան՝ այս է ճաշու փոխն.

Գովեա Երուսաղէմ զՏէր.
Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, եւ օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ.
Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութի՟, պարարտութե՟ ցորենոյ լցոյց զքեզ.
Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա.
Տանէ զձիւն որպէս զասր, եւ զմէգ որպէս մոխիր ցանեաց.
Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ.
Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա, շնչեսցեն հողմք եւ գնասցեն ջուրք.
Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայէլի.
Ո՛չ այսպէս արար ամ՟ ազգաց տէր, եւ զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նց՟.

---

Նմանայն Սրբոց տօնից՝ ճաշու փոխն այս է.

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. եւ այլն որպէս ՚ի Բ՟ն, 337.

Շաբաթապահոց յորս ասեն ոչ ասնի, և ամե-նայն Չորեքշաբաթի և Ուրբաթի յորս պահք լինին՝ ճաշու փոխն այս է ։

Օրհնեցէք զՏէր ամ ազինք · գո-վեցէք զնա ամենայն ժողովուրդք ·
Զօրացաւ ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր · և ճշմարտութի Տեառն մնացէ յաւիտեան ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Ս̃բյ ·

Եւ այս ասի շարական ըստ տօնից պատշաճից և կիւրակէի յարութեան ։

Զթագաւորըն փառաց Քրիս-տոս · որ վասըն մեր մարմնացաւ ՚ի Ճշ
Ս̃բյ կուսէն և խաչի համբերելով · ած
միաբանութե̃ երգով բարեբանես-ցուք · Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ՚ի մեռելոց ճշմարտութե̃՝ · մ՛ա ։ Ա՛րողապէս ըզդ-րունըս դըժոխոց խորտակեաց · եկե-ղեցւոյ իւրում զգեցոյց զմեծ վայ-ելչութիւն · մ՛ա ։

Հրեշտակապետաց:

Ձշ Դկ Այսօր ուրախացեալ սբ եկեղե-
ցի քո. տօնէ խնդութեամբ զտօն
վերինն երուսաղէմի. սրբասաց ձայ-
նիւ փառաւորելով ըզՔեզ: Այսօր
համաձայնեալ որդիք սիօնի երկ-
րայնոյ. տօնեն զուարճանան ի որդ-
ւոց անդրանկաց վերինն սիօնի. սրբ:
Այսօր դասք անմարմնոցն երգս առ-
եալ պարեն ընդ մարդկան. զեր-
գըս հոգեւորս յանմահ փեսայն յա-
ռագաստ. սրբ:

Մարգարէից:

Ձշ աձ Ճառագայթ անճառ լուսոյ ան-
քըննելի տէրութեան. յառաջագոյն
հրաշագործեցեր զտեսչութի մարգա-
րէիցն. ի ջանելով ի սուրբսն ամենայն
տնօրէնութե: Որք ըզտանջանս հա-
ւատոյ հիմնեցուցին շնորհօք սբ հոգ-
ւոյն. յոր եմուտ բանն ած եօթնար-
փեան ճառագայթիւք. ի ջա: Երեւ-
ցան յաշխարհի ճըշմարիտ մարգե-

ղութէ․ զոր քարոզեցին մեզ հրաշալի
բողքըն համագոյ հօր և հոգւոյն․
լուսաւորելով ըզտիեզերս աստուածային
տնօրէնութեամբ։

Ամենայն չորեքշաբաթի սրբոց և ուսուցչաց։

Փառաբանութի առաքելք քեզ դ-կ
հայր երկնաւոր․ յիշեա զննջեց-
եալսն մեր․ և հանգո ընդ սուրբս քո։
Որ էակից ես հօր և հոգւոյ որ-
դւոյդ միածնին․ յիշ։ Որ փառակիցդ
ես հօր և որդւոյ հոգւոյդ ճշմա-
րիտ․ յիշ։

Հինգշաբաթի առաքելոց։

Որ սիրօղդ էք արարչին արարա- ակ
ծոց քի սուրբ առաքեալք․ բարե-
խօսեցէք առ տէր վասն մեր․ Որ
քարոզդ էք ընդհանուր տիեզերաց․
քի մե առա։ Որ պսակդ էք ամ
եկեղեցեաց․ քի սուրբ առա։

Որ անսկիզբն յէութենէ եկիր ձշ
յաշխարհ․ մարմնացար ՚ի կուսէն յա- դ-կ
ղագս մերոյ պարտեաց․ հանգո ու-ր

զննջեցեալսն մեր · Որ ՚ի հօրէ
լուսոյ լոյս ծագեցար մեզ եւ կեանք ·
միածին որդի հօր համագոյակից ·
հանգո ։ Որ ՚ի վեր ես քան ըզ
միտս եւ զխորհուրդս · եւ խաչի համ-
բերեր ւ փրկեցեր ըզտիեզերս · հան ։

---

Շաբաթապահոց չորրորդ աւուրն որ զատկին՝
Երկուշաբթի , Երեքշաբթի , Հինգշաբթի
ձայն առաջ ։

գձ Բարեխօս մեզ · յիշեա Տէր զննըն
ջեցեալսն ՚ի տէր անուանդ քո · Ըզ
գինս արեան քո տէր · յիշեա Տէր եւ
հանգո ընդ սուրբս քո · Եւ ՚ի միւսան
գամ քո գալստեանն · ըզննջեց-
եալսն մեր · յիշ ։

ձշ Որ յանէից ստեղծող գոյ
գկ ից · արարչակից հօր բանդ ստոր-
ուր ուած · Թողութի շնորհեա ննջեցե
լոց քոց ծառայից · յորժամ գաս
դատել զոր անարատ ձեռօք
ստեղծեր ։ Որ ՚ի հօրէ առաքե

ցար. և մարմնացար ի սուրբ կու-
սէն. Թողութիւն. Որ ի խաչին ան-
շնչացար. զմահու լուծեր
զիշխանութիւն. Թողութիւն: Որ
պսակեցեր ես քոց սրբոց. և
անվախճան բարեաց բաշխող. Թո-
ղութիւն:

Մարտիրոսաց:

Զինուորք ճշմարիտք և վը-
կայք Քրիստոսի. որք զչարչարանս
և զմահ յանձն առիք վասըն նորա.
ընդ ձեզ ունիմք բարեխօս առ Քրիս-
տոս վասն անձանց մերոց: Քանզի
հեղմամբ արեան ձերոյ պայծառա-
ցան նոր եկեղեցիք. և զստուերա-
մած խաւար կռապաշտութեանն բար-
ձիք. ընդ ձեզ: Երկնային զօրքն իջ-
եալ ի պատիւ պատարագի մահու-
ան ձերոյ. և ընդ պսակս անապա-
կան առ բերելով ի հօրէ լուսոյ.
ընդ ձեզ:

Աւետեաց։

գկ Աստուածածին խորան լուսոյ ան
վայրափակ արփւոյն կենաց. որ ե-
ղեր արեւելք արեգականն արդա-
րութեան. եւ նստելոցս ի խաւարի
լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեք-
եան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։
Անապական տաճար. եւ մորենի ան-
կիզելի. որ զանշէջ հուր աստուա-
ծութեանն ի քեզ տարեալ կրեցեր.
որով բնութեամբ կիզեալ շիջաւ կրից
բոց. վասն որոյ։ Կենդանի տապա
նակ կտակարանաց նորոյ ուխտիս.
որովմեք յերկիր աւետեաց հորդ-
եալ. հոգւով ի քեզ տըպաւորեալ
բանին. վասն որոյ։

Ծննդեան։

գձ Զե զածածինն. օրհնութեամբ
մեծացուցանեմք։ Աւետաւոր հրեշ-
տակն աւետարանէր. ըզծըննեալ
փրկիչն ի սրբոյ կուսէն. Ասէ ու-
րախ լեր բերկրեալդ. քանզի տէր
տերանց է ընդ քեզ։

Տեառնընդառաջին։

Անըսկիզբըն բանըն յանըսկըզբը- դկ
նականն ՚ի Հօրէ . և սկըզբընաւորեալ
՚ի կուսէն մարմնոյ զգեցմամբ . բովան-
դակեալ ՚ի յորովայնի . և ընդ Հօր
գոլով . և սահմանեալ ժամանակա-
ծնեալ լինի . աստըւած և մարդ
Մըտեալ ընդ օրինօք անհիւթակա-
նըն հողանիւթ գոլով . զի զհողա-
ծնեալքըս Հօրն ընծայեսցէ . ածոր-
դին որ ՚ի ծոց Հօր . տղայ քառաս-
նօրեայ բառնի ՚ի գիրկըս ծերուն-
ւոյն . և յայտնապէս ծանուցանի ալ։
Վասն որոյ և սիմէօն ցընծայր հոգ-
ւով աղաղակէր ՚ի տաճարին . արդ-
արձակես ըզծառայս քո տէր ըստ բա-
նի քում ՚ի խաղաղութիւն . զի ընդ-
հանուր տեսի ըզփըրկօղդ . աստը։

Ծաղկազարդին։

Անըսկիզբըն բանըն Հօր որ ՚ի վե- դկ
րայ քերովբէիցըն հանգչի . այսօր
՚ի վերայ յաւանակի նորոյ նըստեալ .

օրհնեալ արքայ եկեալ անյաղթելի թագաւոր։ Յառաջ քան զյաւիտեանս որդին որ 'ի վերայ քառակերպին բազմի. այսօր 'ի ծերոց և 'ի տղայոց փառաւորեցաւ. օրհ։ Եկայք նոր ժողովուրդք ընդ անմարմնոցն դասս բազմութեան. ընդ սմա հրճուեմք երգով քաղցրը ձայնիւ փառաւորեսցուք. օրհ։

Զատկին։

աձ Յարեաւ քրիստոս. 'ի մեռելոց ալէլուիա։ Եկայք ժողովուրդք. երգեսցուք նմա ալէլուիա։ Յարուցելոյն 'ի մեռելոց ալէլուիա. որ զաշխարհս լուսաւորեաց ալէլուիա։

Համբարձման։

աձ Ս՛ր համբարձման այսօր ամենայն իշխանութիւնք 'ի հայրական 'ի կառս. սպասաւորելով 'ի հրեշտակական դասուցն. որք նուագէին անսելով. համբարձէք իշխանք

զդրունս ձեր 'ի վեր . և մտցէ թագաւոր փառաց։ Համբարձան վերնական իշխանութիւնքն և սոսկալի ձայնիւ . աղաղակէին առ միմեանս . ով է սա թագաւոր փառաց . եկեալ մարմնով և սքանչելի զօրութեամբ . համ. Աղաղակէին վերնական պետութիւնքն հրաշալի ձայնիւ . երգէին երգ նոր ասելով . սա ինքն է թագաւոր փառաց . որ եկն աշխարհի և ազատեաց զազգս մարդկան . համ։

Հոգւոյ գալստեան։

Որ 'ի հայրաշարժ 'ի յանքննելի գոյէ բձ րէն յառաջ բղխեալ անհամառօտ 'ի յանքննելի որդւոյ տիրապէս ընդ Հօրն աթոռ . 'ի յերկնից սաստիկ հեղեալ . 'ի դաս առաքելոցն լցուցիչ բոլորից . ընդ նմա օրհնեսցուք երկրպագելով։ Որ յանսկզբէն և 'ի մէջ 'ի յանքննելի էն . նոյնագոյ բնութեամբ անորոշ

բաժանմամբ ի յորդւոյ. որոր
չակից ընդ Հօրն Աստուծոյ. Հրով բա-
ժանեալ ի լեզուս քարոզիցն. ի
լոյս ածեալ զազգս մարդկան բա-
ժանմամբ պէս պէս շնորհաց. ընդ
նա: Որ ի վերայ ջուրցն դո
րով դիմացն զարարածս. անան
ջրպետ ի Հօրէ և յորդւոյ.
իշխանակից ընդ Հօրն Աստուծոյ. վե-
րածնեաց զազգս մեր. ջրոյ կեն-
դանւոյ բղխեալ յերուսաղէմ.
ընդ նա:

Վարդավառին.

գկ Ուրախացիր պսակ կուսութեան
ց տիրամայր Աստուծոյ որդւոյն
քո. զՀայրենի նման փայլեաց
ընդ փառս. Նովին յայսմ աւուր յան-
ձըն առաքելոց զամենեսին մեր.
Նովին Մովսէս և Հեղիա
սպասեն յանուն նորա. ցընծան
թագաւորն եմև Հերովին. նովին.
Եսայիա ընդ քեզ թեթեւ ա

մնմզ երտեւս ․ և ըՀայր յամամ-
պոյն զքո զորդին իմ ուր զամ
ւան նեաց ․ Նըման ։

Փոխման Աստուածածնին ։

Անթառամ ծաղիկ անդամա- բձ
պարտ շառաւիղ ․ վերաբուսեալ
յարմատոյն յեսսեայ ․ զքեզ եսայեան
կանխեալ վերադիտեաց ․ եօթնարփին
շնորհաց Հոգւոյն ընդունարան զոր
աստուածածին ես կոյս ․ զքեզ մե
մեծացուցանեմք ։ Համեղա ճաշակ
պտղոյն բանաւոր ը բարունակ ․
յորմէ կըթեցաւ մեզ ողկոյզն անըս
պառ յուրախութիւն տըրտըմեցելոց ․
Ի ճաշակմանէ ծառոյն գիտու-
թեան ․ սըրբուհի անարատ ա
մենեքեան ․ զքեզ ։ Թագաւորեալ
եալ ի մարմընի անարատ ըվա
րուք ․ այսօր յառաքելոցն ամփոփեալ
վերին անըկնարկութեըն վերափոխե
ցար յարքայութիւն ․ որդւոյ քո և

ւոյ ըմբռնողաց · բարեխօսութեամբ խոստովանողացս · զՔեզ:

Խաղն:

դկ Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք · Թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսաւորել զընտրեալ իւր զեկեղեցի · եւ պսակեաց մեծ խաչիւն · Նմա ընդ փառս երգեսցուք: Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին · եւ փրկչին մատուսցուք · փառք եւ պատիւ յաւիտեան ·

Տապանակին:

ակ Որ ի սկզբանէ իմաստութեամբ հաստատեցեր զեկեղեցի հօր իմաստութիւն · զոր նախանկար տեսութեամբ նշանակեալ Մովսէսի խորանաւն երկնահանդիսին ի Սինա լերին · լուսաւորեալ փառօքն Աստուծոյ: Որ ընդ խորհուրդ անապական տնօրէնութեանդ Քո ի սրբոյ կուսէն · տիպաւորելով տա-

պանական ածային ուխտին կատարա-
նաց բանիդ աստուածոյ. փառաց ա
նեղիդ տեղի համնդրստեան. Որ ՚ի
կեանս վերադարձի բնութե դարձ-
մամբ յորդանանու օրինակ կեցեր. եւ
ըղբըռնութիւն մահու եւ դըժոխոց
կործանմամբն երկրովլի տապանա-
կաւ խաչին հրաշագործեալ նոր խո-
րայելի. օրհնութի՛ քե՛զ տէր երգեսցեն մանկունք.

Եկեղեցւոյ.

Որ հաստատեցեր բանիւ. զեկե դձ
ղեցի քո Ք՛ծս. ՚ի վերայ առաքելոց
կան վիմի. Երգեմք ՚ի սմին զերգըս
հոգեւորս. Կանգնեալ ՚ի սմա սեղանն
սրբութեան. բաշխես զմարմին քո եւ
զարիւն. եւ տաս ՚ի սմանէ մեզ նորո
գութի՛. ՚ի թողութի՛ մեղաց մերոց.
Իջեալ հոգւոյն այ. աղաւնակերպ
երեւմամբ. ՚ի վերայ մարմնոյ եւ ար
եանըն տն. ՚ի բըժշկութի՛ հոգ-
ւոց մերոց.

դձ Այսօր երկնայնոցն ընդ մեզ. անախըմբելով զյիշատակ սուրբ վարդապետացն. որք լուսաւորեցին զհաւատոյ մանկունս. և ընդ հրեշտակացն դասս վերակարգեցան։

Այսօր առաքելոց և մարգարէիցն դասք. անձնակից գոլով դրատեր վերին սիոնի. ի յիշատակի սբ վարդապետացն. որք զիմաստից նոցին զխորոց յայտնեցին զխորհուրդ։

Այսօր քահանայք և պաշտօնեայք սբ եկեղեցւոյ. վերապատուեն զյիշատակ սբ վարդապետացն. որով զարդարեցան երկնային շնորհօքն. երգեն ընդ նոսին զփառըս յաւիտեան։

Սուրբ ա՟ծ, սուրբ և հզօր, սուրբ և անմահ ։ և այլն ըստ պատշաճի ։ Եւ երգե- ցէն ։

Եւ ևս խաղաղութեն զտէր աղա ։

Վասն խաղաղութեն ա՟մ աշխար- քրդ
հի, և հաստատութեն սրբոյ եկեղեց- ւոյ, զտէր աղաչեսցուք ։

Վասն ա՟մ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտէր աղաչեսցուք ։

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց և փրկութեն հոգ- ւոյ նորին, զտէր աղաչեսցուք ։

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ա՟մ ուխտի մանկանց եկեղեցւոյ, զտէր աղա ։

Վասն բարեպաշտ թագաւորաց՝ և ա՟ծասէր իշխանաց, զօրավարաց՝ և զօրաց նոցին, զտէր աղաչեսցուք ։

Վասն հոգւոցն ։ Եւ ևս միա ։ Զանձինս ։ Ողորմեա՛ց ։

Մաղթանք ։

Ով ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով. և քեզ վայելէ փառք իշ- խանութիւն և պատիւ. այժմ և ։

Սաղմոս ճաշու՝ որ առ շինանցն, յաւուրն ե֊
րեք ժամու. զի մինչեւ ՚ի Հոգեգալուստ կարգաւորն ճշ֊
ժամու սաղմոս դաւթի վճարելոյ է։ Իսկ ամէն ժա֊
մու վերջն՝ երեք ալէլու ասա։

Երանեալ է այր որ ո՛չ գնաց ՚ի խոր․ ալէլուիայ․ ալէլուիայ․ ալէ․

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք․ ալէլուիայ ալէ․

Տէր զի բազում եղեն նեղիչք իմ․ ալէլուիայ ալէ․

Համբարձմանն՝ ճաշու սաղմոս կցորդ․

Համբարձաւ ա̅ծ օրհնութ̅բ․ եւ տէր մեր ձայնիւ փողոյ․

Ծափս հարէք ա̅մ հեթանոսք, ա֊ղաղակեցէք առ ա̅ծ ՚ի ձայն ցնծու֊թեան․ եւ այլն․

Ընթերցուածս ՚ի գործոց առաքելոց․

Այնպէս պաշտեմ զհայրենի ա̅ծն․ հաւատացեալ ա̅մի՝ որ ինչ յօրէնս եւ ՚ի մարգարէս գրեալ է․ Ունիմ յոյս առ ա̅ծ․ որում եւ դոքա իսկ ակնունին՝ թէ յարութ̅ի լինելոց է արդարոց եւ մեղաւորաց․ Յորում եւ ես իսկ ճգ֊նիմ, անխիղճ միտս ունել առ ա̅ծ եւ

առ մարդիկ յամ ժամ։ Ի բազում ամաց ողորմութիւն եկն առնել յազգդիմ. և ետու պատարագիս. որովք գտին զիս սրբեալ ՚ի տաճարին.

Հոգւոյ գալստեան՝ ձայնու սաղմոս կցորդ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։

Տէր լուր աղօթից իմոց. և այլն «րդէ» ՚ի ըէ-ն , 23։

Տապանակին՝ ձայնու սաղմոս կցորդ։

Արի տէր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո.

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա. և այլն.

Վարդավառին՝ ձայնու սաղմոս.

Տէր ով կացցէ ՚ի խորանի քում, կիր կամ ով բնակեսցէ ՚ի լեառն սրբ. քո։

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ՚ի սրտի իւրում.

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, բշ և չար ընկերի իւրում ոչ արար.

Նախատինս 'ի մերձաւորաց նա ոչ առնու . արհամարհեալ է առաջի նր չարագործն ։

դշ Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ . որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ ։

Զարծաթ իւր 'ի վարձու ոչ տայ , և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ առնու . որ զայս արասցէ՝ նա մի սասանեսցի յաւիտեան ։

Վերափոխման Ածածնին՝ ձայն սաղմոս կցորդ ։

Արի տէր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութե քո ։

Յիշեա տէր զդաւիթ և ։ և այլն որպէս 'ի ճլա-ն , 405 ։

Սուրբ խաչին՝ ձայն սաղմոս կցորդ ։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և ետուր ուրախութի սրտից մերոց ։

Ի կարդալ իմում լուար ինձ . և այլն ։

Շողակաթին և այլոց եկեղեցեաց տօնի՝ ձայն սաղմոս կցորդ ։

Աստուած հիմունս էարկ նմա յաւիտեան . ընկալաք ած զողորմութի

քո ՚ի մէջ ժողովրդեան քոյ ։

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաք այ մերոյ, ՚ի լեառն սուրբ նորա ։ ԵՒ այլն ։

Աւետեաց Ածածնին՝ ձայնու սաղմոս կցուրդ ։

Տէր տացէ զբան, որք աւետարանեն զօրութեամբ բազմաւ ։

Յարիցէ ած՝ և ցրուեսցին ամ թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա ։ ԵՒ այլն ։

Ծննդեանն Քրիստոսի՝ ձայնու սաղմոս կցուրդ ։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ ։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք ․ և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս ։ ԵՒ այլն ։

Քառասնօրեայ գալստեանն Քի՝ ձայնու սաղ կցուրդ ։

Տեսին ամ ծագք երկրի զփրկութի աստուծոյ մերոյ ։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր ․ զի սքանչելիս արար ։ ԵՒ այլն ։

Մեծի ողոգոմեանն որ է Ծաղկազարդին՝ ձայնու սաղմոս կցուրդ ։

Լերինք ցնծասցեն առաջի տն,

զի գայ զի հասեալ է տէր 'ի դատել զերկիր ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր . զի ։ և այլն ։ օրհնէ ։ 'ի վերոյ ։

Հասարակաց կիւրակէից՝ ձայնս սաղմոս ․

։Քեզ վայելէ օրհնութիւն ած 'ի սիոն . և քեզ տացին աղօթք յեղէմ ։

Լուր աղօթից իմոց , զի առ քեզ ամ մարմին եկեսցէ ։

Բանք անօրինաց զօրացան 'ի վերայ մեր . և զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես ։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար , և բնակեսցին 'ի գաւիթս քո ։

Լցցուք մեք 'ի բարութենէ տան քո . սուրբ է տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ ։

Լուր մեզ ած փրկիչ մեր , յոյս ամենայն ծագաց երկրի , և որ 'ի ծով հեռի ։

Որ պատրաստէ զլերինս զօրութբ իւրով . և զգեցեալ է զօրութի ։

Որ խռովեցուցանէ զմեծութի ծովու , և զձայն ալեաց նր ցածուցանէ ։

Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն բնակիչք երկրի ՚ի նշանաց քոց։

Ելս առաւօտու՝ ընդ երեկոյս զուարճասցին. Հայեցար յերկիր՝ արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա։

Գետն ա̃յ լի եղև ջուրբք. պատրաստ արարեր զկերակուր նոցա, զի այսպէս է պատրաստութիւն։

Զակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա։

Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո։

Դաշտք քո լցցին պարարտութ̃բ. պարարտասցին գեղեցկութիւնք անապատի։

Բլուրք զցնծութի̃ զգեցցին, և զգեցցին խոյք մաքեաց։

Հովիտք բազում արասցեն զցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն։

Հրեշտակապետաց՝ ձայնու սաղմոս կցորդ։

Որարար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ։

Օրհնեա՛ անձն իմ զտէր. տէր ա՟ծ իմ մեծ եղեր յոյժ: և այլն:

Առաքելոց և Մարգարէից՝ ճաշու սաղմոս կցորդ:

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

Երկինք պատմեն զփառս ա՟յ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն: և այլն:

Հայրապետաց և Վարդապետաց՝ ճաշու սաղ կցորդ:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա՛ տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տ՟ն. և ուխտ եդ ա՟յ յակոբայ: և այլն:

Համօրէն Մարտիրոսաց՝ ճաշու սաղմոս կցորդ:

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո:

Հաւատացի զոր և խօսեցայ: և այլն որպէս 'ի Բէ-ն, 358:

Յօհաննու առաքելոյն 'ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Դ. 7.

Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱյ է. և ամ որ սիրէ՝ յԱյ է ծնեալ՝ և ճանաչէ զԱծ։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱծ, զի Ած սէր է։ Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Այ 'ի մեզ, զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱծ՝ այլ զի Նա սիրեաց ըզմեզ, և առաքեաց զորդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց։ Սիրելիք՝ եթէ Ած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել։ Զ Ած ուրուք երբէք չէ ոք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Ած 'ի մեզ բնակէ, և սէր նորա 'ի մեզ կատարեալ է։ Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի նմա բնակեալ եմք՝ և Նա 'ի մեզ, զի 'ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ։ Եւ մեք տեսաք՝ և վկայեմք զի Հայր առաքեաց զորդին իւր փրկիչ աշխարհի։ Որ ոք խոստովանեսցի՝ եթէ յիս է որդի Այ, Ած 'ի նմա բնակէ՝ և Նա յԱծ։

Եւ մեք հաւատացաք՝ եւ ծանեաք ըզ-
սէրն ա՟յ՝ զոր ունի առ մեզ։ Ա՟ծ սէր
է, եւ որ կայ 'ի սէրն՝ ընակեալ է յա՟ծ,
եւ ա՟ծ 'ի նմա ընակէ։ Յայսմիկ կա-
տարեալ է սէրն նորա 'ի մեզ. զի հա-
մարձակութ՟ի ունիցիմք յաւուրն դա-
տաստանի։ զի որպէս եւ նոյն է՝ նոյն-
պէս եւ մեք եմք յաշխարհի յայսմիկ։
Երկիւղ ո՛չ գոյ 'ի սէր, այլ սէրն կա-
տարեալ 'ի բաց մերժէ զերկիւղն. զի
երկիւղ ընդ տանջանօք է. իսկ որ եր-
կնչին, չէ՛ կատարեալ 'ի սէրն։ Մեք
սիրեսցո՛ւք զա՟ծ, վասն զի նա նախ
սիրեաց զմեզ։ Եթէ ոք ասիցէ՝ եթէ
սիրեմ զա՟ծ, եւ զեղբայր իւր ա-
տիցէ, սուտ է. որ ո՛չ սիրէ զեղբայր
իւր՝ զոր տեսանէ, զա՟ծ զոր ո՛չն ե-
տես՝ զիա՞րդ կարիցէ սիրել։ Եւ զայս
պատուէր ունիմք առ 'ի նմանէ, զի
որ սիրէ զաստուած՝ սիրէ նա եւ զեղ
բայր իւր։

Մեսեդիք՝ ճաշու կանոնին զկնի գործոյն, 'ի չորեք-շաբաթէն սկսեալ:

Գովեա երուսաղէմ զՏէր:
Եւ օրհնեա զԱստուած քո սիոն: դշ
և այլն 'ի բեւ-ն, 368: եշ
Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիրպագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է:
Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք՝ որ նստիս 'ի քրովբէս, սասանեցաւ երկիր: և այլն:
Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն: ուր
Օրհնեցէք զՏէր: այլ 'ի բեւ-ն, 407:
Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. շաբ
երևեցո զերեսս քո 'ի մեզ՝ և ողորմեա մեզ:
Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգս ամենայն զփրկութիւն քո: և այլն:
Քեզ վայել է օրհնութիւն: և այլն կիր
«ուղէ» 'ի բեւ-ն, 408:
Քեզ վայել է օրհնութիւն Աստուած 'ի բշ
սիոն: և այլն «ուղէ» 'ի վերայ:
Տէր որպէս զինու հաճութեան քով դշ
պսակեցեր զմեզ:

փ Բանից խմից ունի. Լայն 'ի Բէ-ն, 293:
Ընթեռնանէ շերկրորդ ծաշխաղարդին.
63, 1:

---

Ընթերցուած Յեսայեայ մարգարէէ.

Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յԵդովմայ · կարմրութիւն ձորձոց իւրոց 'ի Բոսորայ · գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ։ Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան։ Վասն էր կարմիր են ձորձք քո · և հանդերձք քո իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ։ Հնձան հարի միայն. և 'ի հեթանոսաց ո՛չ ոք էր ընդ իս · կոխեցի զնոսա սրտմտութեամբ՝ և ճմլեցի զնոսա բարկութեամբ՝ և իջուցի յերկիր · և զամ հանդերձս իմ թաթաւեցի։ Զի հասեալ էր 'ի վերայ նոցա օր հատուցման · և ամ փրկութեան եկեալ հասեալ։ Հայեցայ՝ և ո՛չ ոք էր որ օգնէր · զմտաւ ածի՝ և ո՛չ ոք էր որ 'ի թիկունս հասանէր · փրկեաց զնոսա բազուկ իմ և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ,

Կոխեցի զնոսա բարկութե֟ իմով. և զենի զնոսա սրտմտութե֟ իմով. և ի-ջուցի զնոսա յերկիր.

Մ՚եսեդիք՝ ճաշու շարաթափոխոց, նախ քան զգիրքն.

Արքայութի֟ քո արքայութի֟ ա֟մ ԲՀ
յաւիտենից. և տէրութի֟ քո ազգէ
մինչև յազգ.

Հաւատարիմ է տ֟ր յա֟մ բանս իւր, փ
և արդար է յամենայն գործս իւր.

Երկիրպագից ՚ի տաճար սուրբ քո՝ ԳՀ
երկիւղիւ քո տէր.

Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք ան- փ
ուան քո, զի օրհնեսցես դու զար-
դարն.

Կեցո՛ զծառայս քո ա֟ծ իմ, որ ՚ի ԴՀ
քեզ յուսացայ.

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ ա- փ
ղաղակեցի զօրհանապազ.

Բա՛րձր արարէք զտէր ա֟ծ մեր. ԵՀ
երկի՛րպագէք պատուանդանի ոտից
նորա՝ զի սուրբ է.

Տէր թագաւորեաց, բարկացան փ
ժողովուրդք՝ որ նստիս ՚ի քրովբէս,
սասանեցաւ երկիր.

ուր Տեսին ա̃մ ծագք երկրի զփրկու-
թիւն աստուծոյ մերոյ։

փ Օրհնեցէք զտէր յօրհնութիւն
նոր․ զի սքանչելիս արար։

Մեսեդիկ՝ ձայն․ աղցից։

բշ Դարձո զիս տէր 'ի մեղաց իմոց․ և
զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

փ Ողորմեա ինձ ա̃ծ ըստ մեծի ողոր-
մութեան քում․ ըստ բազում գթութե̃
քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

գշ Երանի ամենեցուն՝ որք երկնչին 'ի
տ̃նէ, և գնան 'ի ճանապարհս նորա։

փ Զվաստակս ձեռաց քոց կերիցես․
երանի է քեզ, և բարի եղիցի։

դշ Մի թողուր զիս տէր ա̃ծ իմ․ և մի
'ի բացեայ առնիր յինէն, հայեա
յօգնել ինձ՝ տէր փրկութեան իմոյ։

փ Տէր առաջի քո է ամենայն ցան-
կութիւն իմ․ և հեծութիւն իմ 'ի քէն
ոչ ծածկեցաւ։

եշ Մի ընկենուր զիս տէր 'ի ժամա-
նակի ծերութեան․ 'ի պակասել զօրու-
թեան իմոյ մի թողուր զիս։

փ Ի քեզ տէր յուսացայ, մի ամաչե-

ցից յաւիտեան . յարդարութիւն քում
փրկեա՛ և ապրեցո՛ զիս .

Մերձեսցին խնդրուածք իմ ա- ուր
ռաջի քո տէր . ըստ բանի քում իմաս
տո՛ւն արա զիս .

Ձայնի իմում լո՛ւր տէր՝ ըստ ողոր փ
մութեան քում . և յիրաւունս քո
կեցո՛ զիս .

Մեսեդիք՝ ձայնս Յարութեան.

Ամենայն երկիր երկիրպագցեն քեզ. ա̃
և սաղմոս ասասցեն քեզ.

Աղաղակեցէ՛ք առ ա̃ծ ա̃մ երկիր .
սաղմո՛ս ասացէք անուան նորա . և
տո՛ւք զփառս օրհնութիւն նորա .

Մե՛ծ արարէք զտէր ա̃ծ մեր . և ակ
բարձր արասցուք զանուն նորա 'ի
միասին .

Օրհնեցից զտէր յա̃մ ժամ , յա̃մ
ժամ օրհնութի̃ նորա 'ի բերան իմ.

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութի̃ նոր .

Օրհնեցէ՛ք զտէր ա̃մ երկիր . օրհ- բ̃ա
նեցէ՛ք զտ̃ր և օրհնեցէ՛ք զանուն նր̃ .

Օրհնեցէ՛ք զա̃ծ մեր . օրհնեցէ՛ք բկ
և սաղմո՛ս ասացէք տեառն ա̃յ .

Տէր ած օրհնեալ. օրհնեալ է տէր զօրհանապազ.

գձ Մեծ է տէր, և մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ո՛չ գոյ թիւ.

Օրհնեցէ՛ք զտէր՝ զի բարի է սաղմոս. աստուծոյ մերում քաղցր եղիցի օրհնութիւն.

գկ Սաղմոս ասացէք այ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէք.

Ձա՛յնիւ հարկէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէ՛ք առ ած 'ի ձայն ցնծութեան.

գձ Սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ.

փ Քեզ վայել է օրհնութիւն ած 'ի սիօն. և քեզ տացին աղօթք յեղէմ.

գկ Այսօր է զոր արար տէր. եկա՛յք ցնծասցուք և ուրա՛խ եղիցուք 'ի սմա.

փ Խոստովա՛ն եղերուք տեառն. զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա.

Մեսեդիք Ազգաց կիւրակէից.

Ո՛ւխտս դիք և կատարեցէ՛ք ան այ մերոյ ամքեան որք շուրջ էք զնովաւ.

Յայտնի է 'ի Հրէաստանի ա՟ծ , և յիսրայէլ մեծ է անուն նորա ։

Սաղմոսք մեծի Ուրբաթու ճաշուն ։
Առաջին սաղմոս · 34 ։

Յարեան 'ի վ՟ր իմ վկայք չարաց · և զոր ինչ ո՛չ գիտէի՝ հարցանէին ցիս ։

Պատեա՛ տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս · մարտի՛ր ընդ՚այնոսիկ , որք մարտնչին ընդ իս ։

Երկրորդ սաղմոս · 37 ։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ · և ցաւք իմ առաջի իմ են յա՟մ ժամ ։

Տէր մի՛ սրտմտութե՟ քով յանդիմաներ զիս · և մի՛ բարկութե՟ քով խրատեր զիս ։

Երրորդ սաղմոս · 40 ։

Մտանէր տեսանել զնանրութի՟ , խօսէր 'ի սրտի իւրում · և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր ։

Երանի որ խորհի զաղքատն և զտընանկն · յաւուր չարի փրկէ զնա տէր ։

Չորրորդ սաղմոս · 21 ։

Բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւրեանց · և 'ի վերայ պատմու-

ճանի իմոյ վրիժակս արկանէին ։

Ած ած իմ՝ նայեաց առ իս. ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ՚ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց ։

Հինգերորդ սաղմոս . 30։

Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ։

Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս ։

Վեցերորդ սաղմոս . 68։

Մտուն ՚ի կերակուր ինձ լեղի. և ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։

Ապրեցո՛ զիս Ած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղմայ ես ՚ի խորս անդընդոց, ուր ո՛չ գոյ ինձ հանդիստ ։

Եօթներորդ սաղմոս . 87։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ՚ի մեռեալս ազատ ։

Տէր Ած փրկութեան իմոյ, ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո ։

Ութերորդ սաղմոս . 101։

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալուսան անապատի ։

Տէր՝ լո՛ւր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.

---

Պօղոսի առաքելոյն 'ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս.

Պօղոս առաքեալ յի՟ քի՟՝ ըստ հրամանի փրկչին մերոյ այ՟՝ և քի՟ յի՟ յուսոյն մերոյ. Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ հաւատովք, շնորհք ողորմութի՟ խաղաղութի՟ յայ՟ հօրէ և 'ի տեառնէ մերմէ յէ՟ քէ՟. Որպէս աղաչեցի ըզքեզ կալ յեփեսոս՝ մինչ երթայի 'ի մակեդովնիա. զի պատուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս, և չըհայել յառասպելս և 'ի տոհմաթիւս անչափս. որ մանաւանդ խնդիրս յուզեն, և ո՛չ զտնտեսութի՟ այ՟ հաւատովք. Քանզի գլուխ պատուիրանին սէր է, 'ի սուրբ սրտէ՝ և 'ի մտաց բարեաց՝ և յանկեղծաւոր հաւատոց. Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնութի՟ բանից. Կամին լինել վարդապետք օրինաց. ինքեանք ո՛չ իմանան զինչ խօսին՝ և ո՛չ վասն որոց

պնդեալն են։ Գիտեմք՝ եթէ բարուք են օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն կրեսցէ. Այլ զայս գիտասցէ՝ զի ՚ի վերայ արդարոց օրէնք ո՛չ կան, այլ ՚ի վերայ անօրինաց և անհնազանդից՝ ամբարշտաց և մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, զհայր և զմայր անարգողաց, մարդասպանաց, պոռնկաց արուագիտաց՝ մարդեղուզաց ստաց ստերդմանց. և եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս. որ ըստ աւետարանի փառաց երանելւոյն այ է, որում եղէ ես հաւատարիմ։

Աւելուածք ճաշու աւուրց Պահոց, որք ասին ըստ ձայնից։

աձ Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։

կամ Վասն անուան քո Տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով։

ակ Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Զգնացս իմ ուղիղ արա ինձ ըստ կամ
բանի քում. եւ մի տիրեսցեն ինձ ա֊
մենայն մեղք։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եր֊ բձ
կիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։

Դարձ տէր եւ փրկեա զանձն իմ. բկ
կեցո զիս տէր ըստ ողորմութե քում։

Սաստ անուան քո տէր քաւեա գձ
զմեղս իմ, զի բազում եղեն յոյժ։

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ գկ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան
ոսկերք իմ։

Ցուցեա տէր զգթութիւս քո, եւ դձ
զողորմութիւս քո՝ որք են յաւիտենից։

Զմեղս մանկութե իմոյ՝ եւ զանգիտ կամ
ութեան իմոյ մի յիշեր. այլ յիշեա
զիս տէր ըստ ողորմութե քում՝ վասն
քաղցրութեան քո. զի քաղցր եւ
ուղիղ ես։

Տէր ողորմութի քո յաւիտեան. դկ
զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Զմեղս մանկութե իմոյ. ող 'ի վեր։ կամ

Աղաղակեցի առ քեզ տէր՝ եւ ա֊ կամ
սացի, դու ես յոյս եւ բաժին իմ յերկ
րին կենդանեաց։

Մեծ. պահոց շաբաթապահաց։ Երկուշաբաթի, Երեքշաբաթի և Հինգշաբաթի՝ երգ ած և գի չեն՝ շարայարէն ասա։ Իսկ եթէ շայլ ձայնէ՝ զերկրեանցն ասա։

ԲՀ Եկա՛յք ցնծասցուք ՚ի տէր, աղաղակեսցո՛ւք առ աստուած փրկչին մեր․

ԳՀ Երգեցէ՛ք տեառն երգ նոր․ երգեցէ՛ք տեառն ամ երկիր․ երգեցէ՛ք տն և բարձր արարէ՛ք զանուն նորա․

ԴՀ Բարձր արարից զընտրեալն ՚ի ժողովրդենէ իմմէ․ գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։

Ալէլուիայ աղցից Կիւրակեից․

Աղաղակեցէ՛ք առ տէր ամ երկիր․ ծառայեցէ՛ք տեառն ուրախութբ․
Մտէ՛ք առաջի նորա ցնծութբ․ ծա.

Զփոխն ըձան ասա։

Ալէլուիայ ճաշու Յարութեան ըստ ձայնին․

աՃ Դու յարուցեալ գթասցիս ՚ի սիօնի․ ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

կամ Աստուած մեծ ՚ի վերայ ամ երկրի ած է․ սաղմոս ասացէ՛ք նմա իմաստութբ․

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութին 'ի ակ
նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս
սրբոց։

Ուրախ հարէ՛ք ամ հեթանոսք, բձ
աղաղակեցէ՛ք առ ած 'ի ձայն ցնծութե։

Աստուած դու դարձեալ կեցուս- կամ
ցես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ
եղիցի 'ի քեզ։

Արի տէր ած իմ 'ի հրամանս քո՝ բկ
զոր պատուիրեցեր. և ժողովք ժողո-
վրդոց շուրջ եղիցին զքև. վասն այ-
սորիկ 'ի բարձունս դարձ տէր։

Ուրախ եղև իսրայէլ յարարիչ գձ
իւր. որդիք սիոնի ցնծասցեն 'ի թա-
գաւորն իւրեանց։

Եկայք և տեսէ՛ք զգործս այ, որպ գկ
զի ահեղ են խորհրդով՝ քան զամ
որդւոց մարդկան։

Հաճեցար տէր ընդ երկիր քո, և դձ
դարձուցեր զգերութիւն յակոբայ։

Յարեաւ ած՝ և ցրուեցան ամ դկ
թշնամիք նորա, փախիցեն ատելիք
նորա յերեսաց նորա։

Ձայնին։

Հասեալ կային ոտք մեր առ դըրունս քո Երուսաղէմ։

Աւելուիայք Ձայնի յարութեան քննանց ձայնս ա. ւետարանին։

զատ Գովեա՛ եղեմ զՏէր · և օրհնեա՛
կիր զԱծ քո Սիոն։ և այլն որպէս ՚ի Բ.Դ.Ն. 388։
ԲՀ Գովեա՛ Երուսաղէմ զՏէր · և այլն որպէս ՚ի վերոյ ·

ԴՀ Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն · ՚ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։ և այլն ·
ԴՀ. Քեզ վայելէ օրհնութիւն Այ ՚ի Սիոն ։ և այլն որպէս ՚ի Բ.Դ.Ն, 408։
ԵՀ Տէր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում։ և այլն ։
ուր Տէր Թագաւորեաց՝ վայելչութիւն։ և այլն որպէս ՚ի Բ.Դ.Ն, 387։
չաբ Ցնծացէ՛ք առ Այ, օգնական է մեր · աղաղակեցէ՛ք առ Այ յակոբայ։

Առէ՛ք սաղմոս, և տուք օրհնութիւն · սաղմոս ասացէ՛ք նմա ՚ի ձայն քաղցրութեան ։

Փո՛ղ հարէ՛ք ՚ի գլուխս ամսոց, յա-

ւուր նշանաւորի տարեկանաց մերոց:

Հրաման է այս իսրայէլի, և իրաւունք են աստուծոյ յակոբայ:

Վկայութ̃ին յովսեփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ:

Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նորա. և զձեռս նորա յորթ և 'ի թի ծառայելոյ:

Ի նեղութ̃ե կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտանութ̃է մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վերայ ջուրցն հակառակութեան:

Լ՛ուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և իսրայէլ՝ թէ լուիցես ինձ:

Մի՛ եւս եղիցին քեզ ա̃ծք առ ժամայնք. և մի՛ երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի:

Ես եմ տէր ա̃ծ քո՝ որ հանի ըզ քեզ յերկրէն եգիպտացւոց. բա՛ց զբերան քո՝ և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և իս̃էլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Բարձի թողի զնոսա երթալ զհետ

կամաց սրտից իւրեանց․ զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց․

Ո՜ ի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր․

Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նոցա, և ՚ի վերայ նեղչաց նոցա արկեալ էր զձեռն իմ․

Թշնամիք տեառն ստեցին նմա, և եղիցին ժամանակք նոցա յաշխարհի․

Կերակրեաց զնոսա ՚ի պարարտութենէ ցորենոյ, և ՚ի վիմէ մեղր յագեցոյց նոցա․

Նոր Կիւրակէին․

Գովեա՛ երուսաղէմ զտէր․ և օրհ․

Ի տօնին որպէս ՚ի վերայ մինչև ցհամբարձման․

---

Ալէլուիայք Համբարձման քրիստոսի ըստ աւուրց․

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր․ համբարձջիք դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց․

ուր Համբարձէք իշխանք զդրունս․

շաբ Համբարձէք իշխանք զդրունս․

կիր Համբարձէք իշխանք զդրունս․

Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ բշ
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ գշ
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ դշ
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ եշ
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ ուր
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ։ շաբ

Ալէլուիայք ճաշու Հոգւոյն սրբոյ գալստեան ։

Ողորմութ͞ե տեառն լի եղև եր- կիր
կիր, և բանիւ տեառն երկինք հաս-
տատեցան. և հոգւով բերանոյ նորա
ա͞մ զօրութիւնք նոցա ։

Եկա՛յք ցնծասցուք ՚ի տէր, աղա- բշ
ղակեսցուք առ աստուած փրկիչ մեր ։

Երգեցէ՛ք տեառն երգ նոր. ծա- գշ
ռայեցէ՛ք տեառն ուրախութեամբ ։

Վասն անուան քո տ͞ր՝ կեցուսցես դշ
զիս, արդարութեամբ քով հանցես
՚ի նեղութենէ զանձն իմ ։

Ողորմեա՛ ինձ տէր զի հիւանդ եմ եշ
ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովե-
ցան ոսկերք իմ ։

Յիշեա՛ տէր զդաւիթ, և զա͞մ հե- ուր
զութիւն նորա ։

Յեկեղեցիս օրհնեցէ՛ք զա͞ծ, և շաբ
զտէր յաղբերացն իսրայէլի ։

Ալէլուիայ · Տաղմանկին :

Արի՛ տէր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո :

Ալէլուիայ ձայնու Այլակերպութեանն քրիստոսի, որ կոչի Վարդավառ :

կիր Ամպ լուսաւոր հովանի լինէր նմա· ձայն եղև յամպոյն՝ որ ասէ, դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ :

բշ Բարձրութիւնք լերանց նորա են · նորա է ծով՝ և նա արար զնա, և ըզ ցամաք ձեռք նորա ստեղծին : եկայք երկիրպագցուք նմա · անկցուք և լացցուք առաջի տն արարչին մերոյ :

գշ Քո են երկինք՝ և քո է երկիր · զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր · զհիւսիս և զհարաւ դու արարեր · Թաբօր և Հերմոն յանուն քո ցնծասցեն :

Ալէլուիայ ձայնու Նաւակատեաց խաչի և եկեղեցւոյ :

շաբ Սիրեաց տէր ընդ սիոն և ընտրեաց բնակել 'ի նմա · ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից · 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա :

կիր Տո՛ւր զօրութիւն ծառայի քո · կեցո՛

զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան։

Լուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։ բշ

Սիրեաց Տէր զսիոն. և ընտրեաց զբնակիլ ՚ի նմա։ գշ

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։ դշ

Որպէս սիրելիք են յարկք քո Տէր զօրութեանց. ցանկայ և փափագի անձն իմ ՚ի գաւիթս քո։ սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցէ առ ա͞ծ կենդանի։ եշ

Լուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։ ուր

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քո, և լո՛ւր մեզ։ շաբ

Հիմունք նորա ՚ի լերանց սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս սիոնի առաւել քան զա͞մ յարկսն յակոբայ։ եկղ

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, ահաւադիկ քաղաքդ աստուծոյ։ եկղ

Տէր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լերին ս͞բ քո։ եկղ

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն խօսի զճշմարտութիւն ՚ի

սրտի խուրում։

Խաչի „Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և ետուր ուրախութիւն սրտից մերոց ։

Ալէլուիայ ձայնու Վերափոխման աստուածածնին [illegible]

Կիր Այսօր ծնաւ որ ՚ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդին . որ է օծ-եալ տէր ՚ի քաղաքի դաւթի ՚ի փայ-լչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յա-ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ՝

ԲՂ Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ . օրհնեալ ես դու ՚ի կանայս . և օրհնեալ է պտուղ որովայնի քո ։

ԳՂ Արի տէր ՚ի հանգիստ քո . դու և տապանակ կտակի սրբութեան քո ։

Ալէլուիայք ձայնու Աւետեաց աստուածածնին ։

Ուրախ լեր բերկրեալդ ։ որպէս ՚ի վերոյ ։

Ալէլուիայք ձայնու Ծննդեանն քառ աւուրց ։

Ձրդ Որդին սուրբ եկեսցէ ՚ի քեզ . և զօրութիւն բարձրելոյն հովանասցի քեզ ։

ա Այսօր ծնաւ որ ՚ի Հօրէ . և այլն որպէս ՚ի վերոյ ։

Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Բ
ստեփաննոս. և ընտրեալ յորովայնէ.
Ճշմարիտ վկայ. սիրող և առաքեալ
առաքողին. 'ի Քրիստոսէ ընկալար ըզ
զուարթնոցն զպսակ:

Կարապետն յովհաննէս զարհուր- Գ
եալ՝ 'ի յորովայնէ յորովայն երկրպա-
գէր. սպասաւոր եղև բանին այ. և
լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր
ասելով, ահա՛ գառն այ որ բառնայ
զմեղս աշխարհի:

Ուրախ լեր բերկ. և այլն որպէս 'ի Դ
վերոյ:

Դու մանուկ՝ մարգարէ բարձրե- Ե
լոյն կոչեցիր. գնասցես առաջի տն՝
պատրաստել զճանապարհս նորա:

Հան զիս 'ի գբոյ տառապանաց, Զ
'ի կալոյ և 'ի տղմոյ. հաստատեաց 'ի
վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց ըզ
գնացս իմ:

Դու ես քահանայ յաւիտեան ըստ Է
կարգին Մելքիսեդեկի. և տէր ընդ
աջմէ քումմէ:

Երդուաւ տէր դաւթի ճշմարտու- Ը
թե՛ և ո՛չ ստեաց նմա, 'ի պտղոյ որո-

վայնի նորա նստուցանել յաթոռ նր.

Ը Ուրախ լեր բերկ. և այլն որպէս ՚ի վերոյ.

Ալէլուիայ ձայնու Քառասնօրեայ գալստեանն Քրիս-
տոսի ՚ի տաճարն.

Տէր ՚ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում.

Մեծի ողորմութեան ձայնուն.

Տէր ած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ.

Ալէլուիայ ձայնու Հրեշտակապետացն.

Ողորմութիւն տեառն լի եղև երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա.

Յովհաննու կարապետին.

Դու մանուկ՝ մարգարէ. որպէս ՚ի վերոյ.

Յովհաննու գլխատման.

Կարապետն յովհաննէս. որպէս ՚ի վերոյ.

Համօրէն Մարգարէից.

Յեկեղեցիս օրհնեցէք զած, և զտէր յաղբերաց իսրայէլի.

Ամենայն Առաքելոց։

Կացուցեր զնոսա իշխանս ընդ ա՟մ երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ա՟մ ազգս ազգաց։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա՛, և մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Դաւթի և Յակոբայ։

Յիշեա՛ տէր զԴաւիթ, և զա՟մ հեզութիւն նորա։

Նախահարցն։

Պատմէ զբան իւր յակոբայ զարդարութի՟ և զիրաւունս իսրայելի։

Գրիգորի Լուսաւորչին։

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս. և լուաւ աղօթից իմոց։

Հայրապետաց և Վարդապետաց։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Ճգնաւորաց։

Երանելի են որք բնակեալ են ՚ի

տան անտառն . յաւիտենանս յաւիտե-
նից օրհնեսցեն զքեզ։

Կուսանաց։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ
'ի հանդերձս ոսկեհուռս զարդար-
եալ և պաճուճեալ։

Տարցին Թագաւորի կուսանք ըզ-
հետ նր . և զընկերս նր տարցին նմա։

Թագաւորաց։

Տէր 'ի զօրութեան քում ուրա՛խ
եղիցի Թագաւորն . 'ի փրկութեան
քում ցնծասցէ յոյժ։

Քառասնից՝ և երկուց բիւրուցն։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր,
և հաներ զմեզ 'ի հանգիստ։

Մեծի հինգշաբաթի։

Պատրաստ արարեր առաջի իմ զսե-
ղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

Այգուց։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք .
առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ալէլուիայ ձայնու Մարտիրոսաց։

 Տէր սիրէ զիրաւունս . և ոչ ընդ

վայր հարկանէ զսուրբս իւր · այլ յաւիտեան պահէ զնոսա ։

Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ կամ
է · վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան ։

Պարծեսցին սուրբքն փառօք՝ և ակ
ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց · և բարձր արասցեն զաստուած բերանօք իւրեանց ։

Լոյս ծագեաց արդարոց · ուղղոց կամ
սրտից եղև ուրախութիւն ։

Պարծեսցին սուրբքն փառօք և ։ բձ
որպէս 'ի վերոյ ։

Աղաղակեցին արդարքն առ տէր, և բկ
տէր լուաւ նոցա · յամ նեղութենէ նոցա փրկեաց զնոսա՝ ։

Վասն քո մեռանիմք զօրհանապա- գձ
զ · համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն ։

Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յու- գկ
սացեալ են 'ի քեզ · յաւիտեան ցնծասցեն · և բնակեսցես դու 'ի նոսա ։

Արդարքն որպ զարմաւենիս ծաղ- գձ
կեսցին · որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին ։

դկ Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա տէր. և պահէ զա͞մ ոսկերս նոցա. և մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ.

Յետ ընթեռնանի Աւետարան ըստ պատշաճին. և չէ տօն Հանգստեան ննջեցելոց.

Աւետարան՝ ըստ Մատթէոսի. 5. 1.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր։ Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի այնոցիկ՝ որ սբ͞ք են սրտիւք, զի նոքա զա͞ծ տեսցեն։ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք ա͞յ կո-

չեսցին։ Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութե, զի նոցա է արքայութիւն երկնից. Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամ բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։

Աւետարան ըստ Մարկոսի. Գ. ԺԳ.

Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չոգան առ նա։ Եւ արար երկոտասանս՝ զի իցեն ընդ նմա, և զի առաքեսցէ զնոսա քարոզել. և ունել իշխանութի բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ զդևս. Եւ եդ անուն սիմոնի՝ պետրոս. և յակոբու զեբեդեայ՝ և յովհաննու եղբօրն յակոբայ, եդ նոցա անուանս բանէրգէս, որ է՝ որդիք որոտման, և զանդրէաս, և զփիլիպպոս, և զբարդուղիմէոս, և զմատթէոս զմաքսաւորն, և զթովմաս, և զյակոբոս ալփ-

եայ, և զթադէոս, և զսիմովն կանանացի. և զյուդա իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։

Աւետարան՝ ըստ Ղուկասու. 14. 12։

Ասէ և ցկոչնատէրն. յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղբարս քո և մի՛ զազգականս քո, և մի՛ զդրացիս քո, և մի՛ զմեծամեծս. զի մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս։ Եւ երանելի լինիցիս. զի ո՛չ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուսցի քեզ փոխարէն ’ի յարութեան արդարոց։ Իբրև լուաւ զայս ոմն ’ի բազմականացն՝ ասէ ցնա. երանի՛ որ կերիցէ ճաշ յարքայութեան այ՟։

Աւետարան ըստ Յովհաննու։ 10. 11։

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ’ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ

ոչ իւր են ոչխարքն · իբրև տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն և փախչի · և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ · քանզի վարձկան է, և չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմսն՝ և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր · և զանձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց։ Եւ՝ այլ ևս ոչխարք են իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ · և զայն ևս պարտ է ինձ ածել այսր · և ձայնի՛ իմում լուիցեն, և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ ։

## Փառք քեզ տէր ած մեր ։

Հանգստեան Նիկիփորի ։

Հաւատամք ՚ի մի ած հայրն ամենակալ · յարարիչն երկնի և երկրի · երևելեաց և աներևութից · Եւ ՚ի մի տէր յիք քս որդին այ · ծնեալն յայ հօրէ միածին · այսինքն յէութենէ հօր։ Ած յայ · լոյս ՚ի լուսոյ · ած ճշմարիտ · յայ ճշմարտէ ։ Ծնունդ և ո՛չ արարած ։ Նոյն ինքն ՚ի բնութենէ հօր · ո-

րով ա՟մ ինչ եղև յերկինս և 'ի վերայ
երկրի · երևելիք և աներևոյթք ։ Որ
յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ
փրկութե՟ն՝ իջեալ 'ի յերկնից՝ մարմ-
նացաւ, մարդացաւ, ծնաւ կատարե-
լապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգ-
ւովն սրբով ։ Որով էառ զմարմին,
զհոգի, և զմիտ · և զա՟մ որ ինչ է 'ի
մարդ · ճշմարտապէս և ոչ կարծեօք ։
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ · յեր-
րորդ աւուր յարուցեալ · ելեալ 'ի
յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ
աջմէ հօր ։ Գալոց է նովին մարմնովն
և փառօք հօր 'ի դատել զկենդանիս
և զմեռեալս · որոյ թագաւորութեան
ոչ գոյ վախճան ։ Հաւատամք և 'ի ս՟բ
Հոգին · յանեղն և 'ի կատարեալն ։
Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս
և յաւետարանս ։ Որ էջն 'ի Յորդա-
նան · քարոզեաց զառաքեալսն · և բը-
նակեցաւ 'ի սուրբսն ։ Հաւատամք և
'ի մի միայն ընդհանրական և յառաքե-
լական եկեղեցի ։ Ի մի մկրտութի՟ ·
յապաշխարութի՟ · 'ի քաւութի՟ և 'ի
թողութի՟ մեղաց ։ Ի յարութի՟ն մե-

ռելոց ․ ՚ի դատաստանն յաւիտենից ․ հոգւոց և մարմնոց ․ Արքայութին երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս ։

Մինչև ցայս են հաւատոյ բանք ։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն , յորժամ ոչ էր որդի ․ կամ էր երբեմն , յոր ժամ ոչ էր սուրբ հոգի ։ կամ թէ՝ յոչէից եղեն ․ կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին այ՝ և կամ զսուրբ հոգին ։ և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք ․ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի ։

Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ ։

Իսկ մեք փառաւորեսցուք ․ որ յառաջ քան զյաւիտեանս ․ երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և միոյ ածութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և ։

Եւս ևս խաղաղութե զտէր աղաչես ։ բրդ

Եւս ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի տեառնէ այ և ՚ի փրկչէն մերմէ յէ քէ ՚ի ժամուս պաշտաման և աղօթից ։ Զի արժանի ըն-

դունելութն արասցէ․ լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց։ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց․ Թողցէ զյանցանս մեր․ ողորմեսցի 'ի վ̃ր մեր։ Աղօթք մեր և խնդրուածք յա̃մ ժամ մտցեն առաջի մեծի տէրութն նորա։ Եւ նա տացէ մեզ միաբան՝ միով հաւատով և արդարութն վաստակել 'ի գործս բարեաց։ Օ ի զողորմութն զշնորհն իւր՝ արասցէ 'ի վ̃ր մեր տէրն ամենակալ․ կեցուսցէ և ողորմեսցի։ Օ ժամս և զառաջակայ օրս խաղաղ։ Օ հրեշ։ Օ քաւութի։ Օ սրբոյ։ Եւ եւս։ Օ անձինս։ Ողոր։

Աղօթք։

Տէր մեր և փրկիչ յս̃ քս̃․ որ մեծդ ես ողորմութբ̃ և առատ պարգևօք բարերարութն քո։ Որ դու քոյին կամաւդ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու՝ յաղագս մեղաց մերոց։ Եւ պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի աւազակին։ Հաղորդըս արա և զմեզ տէր աղաչեմք զքեզ՝

ա՟ծային պարգեւացդ. Թողութե՟ն մեղաց եւ ընդունելութե՟ն հոգւոյդ սրբոյ։ Որպէս զի՝ արժանաւորք եղիցուք գոհութե՟ փառաւորել զքեզ ընդ հօր եւ ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ եւ.

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութե՟ քով ք՟ս փրկիչ մեր. որ ՚ի վեր է քան զա՟մ միտս եւ զբանս. ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա՛ յա՟մ չարէ։ Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո. որք հոգւով եւ ճշմարտութե՟ քեզ երկրպագանեն։ Վասն զի՝ ամենասուրբ երրորդութե՟դ վայելէն փառք իշխանութի՟ եւ պատիւ, այժմ եւ.

Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս։ Տէր ա՟ծ օրհնեսցէ զամենեսեանդ. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես սուրբ։

Միայն ս՟բ. միայն տէր. յ՟ս ք՟ս ՚ի դպ
փառս աստուծոյ հօր. ամէն։

Օրհնեալ հայր սուրբ՝ աստուած քհ
ճշմարիտ. Ամէն։ դպ

Օրհնեալ Որդիդ սուրբ՝ աստ- քհ
ուած ճշմարիտ. Ամէն։ դպ

քհ. Օրհնեալ Հոգիդ սուրբ՝ աստ-
դպ ուած ճշմարիտ. Ամէն։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և։

դպ Հայր սուրբ։ Որդիդ սուրբ։ Հո-
գիդ սուրբ։

քհ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և
Սրբոյ Հոգւոյն, այժմ և։

դպ Եղիցի անուն տեառն օրհնեալ՝
յայսմհետէ մինչև յաւիտեան։ Երկր-
կրկնեա՛։

քհ Աստուածն օրհնաց և մարգարէից
դու ես քն ած փրկիչ մեր. որ լցեր
զամ հայրական տնօրէնութիս քո.
լից և զմեզ հոգւովդ քով սրբով։

սրկ Օրհնեցից զտէր յամ ժամ. յամ
ժամ օրհնութի նորա ՚ի բերան իմ։

քհ Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց
սրբոյ հոգւոյն. երթայք խաղաղու-
թեամբ. և տէր եղիցի ընդ ձեզ և
ընդ ամենեսեան ամէն։

Օրհնութիւն սեղանոյ վասն ճաշակման կե-րակրոյ, և ըմպելեաց։

Պատրաստեն զսեղանն հացիւ, և զարդա-րեն կերակրօք. և կանգնին եղբարք ՚ի տեղիս իւրեանց. և գայ իշխանաւորն, կամ քահանայն, և ասէ, սաղմոս կցուրդ։

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նց ՚ի ժամու։

Բարձր առնեմ զքեզ Ած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւի-տենից։ դպ

Զօրհանապազ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութե նորա ոչ գոյ չափ։

Ազգք և ազգք գովեսցեն զգործս քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն։

Զմեծվայելչութի փառաց սրբ-բութեան քո խօսեսցին, և զսքան-չելիս քո պատմեսցեն։

Զզօրութի ահի քո ասասցեն, և զմեծութիւնս քո պատմեսցեն։

Զյիշատակ բազում քաղցրութե՟ քո բղխեսցեն, և արդարութե՟ք քո ցնծասցեն ։

Գթած ողորմած է տէր, երկայնամիտ և բազումողորմ ։

Քաղցր է տէր առ ամենեսեան, և գթութի՟ նորա ՚ի վերայ ա՟մ արարածոց իւրոց ։

Խոստովան եղիցին առ քեզ տէր ա՟մ գործք քո. և սուրբք քո օրհնեսցեն զքեզ ։

Զփառս արքայութե՟ քո ասասցեն, և զզօրութի՟ս քո պատմեսցեն ։

Ծանուցել որդւոց մարդկան զզօրութի՟ս քո, և զփառս մեծվայելչութեան արքայութեան քո ։

Արքայութի՟ քո արքայութի՟ ա՟մ յաւիտենից. և տէրութի՟ քո ազգէ մինչև յազգ ։

Հաւատարիմ է տէր յա՟մ բանս իւր, և արդար է յա՟մ գործս իւր ։

Հաստատէ տէր զամենայն գայթակղեալս, և կանգնէ զա՟մ գլորեալս ։

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նո՟ց ՚ի ժամու ։

Տաս դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսեան քաղցրութ՟բ կամօք քովք.

Արդար է տէր յա՟մ ճանապարհս իւր, և սուրբ է յա՟մ գործս իւր.

Մերձ է տէր առ ամենեսեան՝ որք կարդան առ նա, առ ամենեսեան՝ որք կարդան առ նա ճշմարտութ՟բ.

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա.

Պահէ տէր զամենեսեան որք սիրեն զնա, և զա՟մ մեղաւորս սատակէ տէր.

Զօրհնութիւն տեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ա՟մ կենդանի զանուն սուրբ նորա յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից.

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ.

Քահանայն.

Ողորմած գթած է տէր. կերակուր տայ երկիւղածաց իւրոց.

Սարկաւագն քարոզէ.

Եւ ևս խաղաղութ՟ն զտէր աղ՟ա.

Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ՝ զի պարգեւեսցէ մեզ կերակուր ուրա-խութե̃, եւ լցուսցէ զսիրտս մեր 'ի լիութե̃է արարածոց իւրոց։ Ամենա-կալ տէր ա̃ծ մեր։

քհ Օրհնեմ զքե̃ ա̃ծ մեր հոգեւոր օրհնութե̃ զկերակուրս եւ զըմպելիս ծառայից քոց. եւ շնորհեմ առողջութի̃ հոգւոյ եւ մարմնոյ։ Որպէս զի կրօ-նաւորական պարկեշտութե̃ վայելե-լով 'ի մարմնաւոր պիտոյից՝ անանց բարեացդ եւ երկնից արքայութեանդ հաղորդս լիցուք ընդ ա̃մ սուրբս քո։ Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ հօր եւ ամենասուրբ հոգ-ւոյդ, այժմ եւ.

Հայր մեր որ յերկինս ես։

Եւ օրհնող սեղանոյն կալով կանգնած՝ եւ առեալ զհացն բեկանէ ընդ պատուաւորացն, որք առ ընթեր կան. կամ զհետ այնորիկ, որ պատրաստօղն է ճաշոյն, եւ նոքա առ ամենե-եան. եւ ասէ, Ճաշակեցէ՛ք խաղաղութե̃. եւ նստին 'ի ճաշն։

Իսկ եթէ վանականք իցեն, կամ անապատա-ւորք, նստին մինն յեզերաց 'ի բարձրագոյն տեղւոջ, եւ առեալ ընթեռնուցու զգիրս աստ-

ուածոյին. և ամենեքեան անձին դիմեն ըն-
թերցմանն՝ անխափան ճաշակմամբ:

Եւ եթէ ոք խնդրեսցէ զըստ ծառայն ինչ պա-
րակոստանոց, ըստ ծոցեն՝ որք կարօղն իցեն. և
դարձեալ ճաշէսցեն ըմբեղեայն, և ոչ աղաղա-
կաւ: Եւ չեմ ցանկեղոյ ՚ի սեղանոյն, դարձ-
եալ կացցեն ՚ի տեղիս իւրեանց: Եւ աստոյէ
ժամանայն:

Տէր յոյս լցայք ՚ի բարութենց քոց: ՔՀ
Տացուք գոհութիւն տեառն այ մերոյ: ԴՊ

Աչք տեառն ՚ի վերայ երկիւղածաց իւրոց, և որք յուսան յողորմութիւն նորա.

Փրկել ՚ի մահուանէ զանձինս նց, և կերակրել զնոսա ՚ի սովու.

Անձինք մեր համբերեսցեն տն, զի օգնական և պաշտպան մեր է.

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և յանուն սուրբ նորա յուսասցուք.

Եղիցի ողորմութիւն քո տր ՚ի վերայ մեր, որպէս յուսացաք ՚ի քեզ.

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ:

Կերակրիչ և ուրախարար տէր, ՔՀ
փառք քեզ. լցուցանող քո գոհանամք զքէն.

Նա և ս խաղաղութե զոհէր ածա ։

սրկ Գոհացարուք 'ի վերայ լիութեց պարգևաց տեառն ա՟յ մերոյ ։ Որ կերակրէ զմեզ օր ըստ օրէ առատապէս քաղցրութ՟բ կամօք իւրովք ։ Զի հոգևոր բարութ՟ն և երկնից արքայութ՟ն հաղորդս արասցէ զծառայս իւր ըստ ակնկալութե յուսոյն մերոյ ։ Ամենակալ ։

Աղօթք ։

Օրհնեալ ես տէր ա՟ծ մեր՝ որ կերակրես զմեզ 'ի մանկութենէ ․ և տաս կերակուր ա՟մ մսեղեաց ․ լցո՟ ուրախութ՟բ և բերկրութ՟բ զսիրտս մեր ։ Որպէս զի զա՟մ բաւականութի ունիցիմք առաւելեալք 'ի գործս բարութեան 'ի ք՟ս յիսուս 'ի տէր մեր ։ Որում վայելէ փառք իշխանութի և պատիւ , այժմ և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Փառք քեզ տէր՝ փառք քեզ թագաւոր փառաց ․ որ ետուր մեզ կերակուր ուրախութե ․ և լցուցեր զսիրտս մեր 'ի լիութէ ամենաբաւա-

կան ողորմութեան քո․ լցո՛ և այժմ զմեզ հոգւովդ քով սրբով․ որպէս զի գտցուք առաջի քո հաճոյք, և մի՛ ամաչեցեալք, զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր․ և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և։

Օրհնեալ տէր մեր յս̅ քս̅, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Զկերօղքս ա̅ծ օրհնեսցէ․ սպասաւորացն և երախտաւորացն վարձս բարեաց պարգևեսցէ․ և օրհնեսցէ զամենեսեան։ Ք̅ս ա̅ծ որ զմեզ կերակրեաց և լիացոյց, նմա փառք յաւիտեանս, ամէն։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երեկոյի ժամուն․ որ կատարի 'ի դէմս որդւոյն Այ, որ էջ 'ի խաչէն և պատեալ պատանակալաւ՝ եդաւ 'ի գերեզմանի։

Ես առ Աձ կարդացի, և նա լը-ւաւ ինձ յերեկոյս՝ 'ի վաղորդայն՝ 'ի հասարակ աւուր։

Սպասէի Այ իմոյ, և ակն ունէի կենարարին․ որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ․

Եւ ես խաղաղութեն զոէր աղա։

Օրհնութիւն և փառք Հօր և․

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս․ 85․

Խոնարհեցո Տր զունկն քո և լուր ինձ․ զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա զանձն իմ սուրբ տէր․ և փրկեա զծառայս քո Աձ իմ որ 'ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ տէր զի առ քեզ ա-

ղաղակեցի զօրհանապազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ.

Ունկն դիր տէր աղօթից իմոց, և նայեա՛ ՚ի ձայն խնդրուածոց իմոց.

Յաւուր նեղութեն իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ.

Ոչ ո՛ք է նման քեզ յաստուածս տէր, և ո՛չ ոք է որպէս զգործս քո.

Զամ ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես ած։

Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի քում, և գնացից ՚ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ քումմէ.

Խոստովան եղէց առ քեզ տէր ած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւոր արարից զանուն քո յաւիտեան.

Մեծ եղև ՚ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկեցեր զանձն իմ ՚ի դժոխոց ներքնոց։

Ա͞ծ՝ անօրէնք յարեան ՚ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Ա͞ծ առաջի իւրեանց։

Այլ դու տէր Ա͞ծ իմ՝ գթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, նայեաց առ իս և ողորմեաց ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս͞բյ։

մաղ Փառք քեզ Ա͞ծ՝ փառք քեզ. յաղագս ամենայնի տէր փառք քեզ։

Եւ ևս խաղաղութե͞ն զտէր աղա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս · 139·

Ապրեցո՛ զիս Տէր ՚ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս։

Խորհեցան զանօրէնութի̃ ՚ի սիրտս իւրեանց, զօր ա̃մ պատրաստեցան ՚ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա՛ զիս Տէր ՚ի ձեռաց մեղաւորի, և ՚ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս։

Խորհեցան խափանել զգնացս իմ, թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ զգայթակղութիւն։

Ասացի Տէր ա̃ծ իմ ես դու, ո՛ւնկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց։

Տէր Տէր զօրութիւն փրկութե̃ իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս Տէր ՚ի ցանկութե̃ մեղաւորաց, ոյք խորհեցան վասն իմ՝

մի՛ ընդ վայր հարկաներ զիս ։

Ո՛չ է՛ մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին . վախճան կատարածի նոցա վասն շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա ։

Արկցես ՚ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնս՟ . ՚ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ ։

Այրդ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ՚ի վերայ երկրի . զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ՚ի կորուստ ։

Ծանեայ զի առնես տ՟ր դատաստան աղքատի, և իրաւունս տնանկի ։

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց ։

Տէր կարդացի առ քեզ և լո՛ւր ինձ, նայեա՛ ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ ։

Ուղի՛ղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տ՟ր . համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի ։

Դի՛ր տ՟ր պահապան բերանոյ իմոյ . և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարուե՟ ։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութի̅ . և ո՛չ եղէց կցորդ ընտրելոց նց̅ ։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ և յանդիմանս արասցէ , իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ , այլ աղօթք իմ ՚ի կամս նորա ։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա . լուիցեն բանից իմոց և քաղցրասցին ։

Ոպ̅ թանձրութի̅ հողոյ՝ զի սփռեալ է ՚ի վերայ երկրի . ցրուեցին ոսկերք նոցա մերձ ՚ի դժոխս ։

Առ քեզ տէր տր̅ են աչք իմ, ՚ի քեզ յուսացայ՝ մի՛ հաներ զհոգի յինէն ։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թագուցաւ ինձ, ՚ի գայթակղութ̅է գործողին զանօրէնութիւն ։

Անկցին ՚ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչև անցից ։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի , ձայնիւ իմով զտէր աղաչեցի ։

Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ , և զնեղութի̅ս իմ առաջի նորա պատմեցից ։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ , դու տէր ծանեար շաւիղս իմ , 'ի ճանապարհ յոր և գնայի , թագուցաւ ինձ որոգայթ ։

Հայեի յաջմէ և տեսանէի , և ոչ ո՛ք ճանաչէր զիս․ կորեաւ յինէն փախուստ իմ․ և ո՛չ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր և ասացի , դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց ։

Նայեա՛ տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ ․ ապրեցո՛ զիս 'ի հալածչաց իմոց , զի հզօրք եղեն քան զիս ։

Տէր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուանէ քումմէ ։

․ Զքեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

---

Երգ Կիրակամտից։

Ալէլուիա ․ Ալէլուիա ․

Լոյս զուարթ սրբոյ փառաց անմահի Հօր ․ երկնաւորի սըրբոյ կենարարի յիսուս քրիստոս ։

Եկեալքս 'ի մըտանել արեգա-
կանն, տեսաք ըզլոյս երեկոյիս։
Օրհնեմք ըզՀայր եւ զՈրդի եւ ըզՍբ
Հոգիդ աստուծոյ։ Եւ ամենեքեան
ասեմք ամէն։ Արժանաւորեալ ըզ
քեզ յամ ժամ. օրհնել ձայնիւ եր-
գով զանուն փառաց ամենասուրբ
երրորդութեանդ։ Որ տաս զկենդա-
նութիւն վասն որոյ եւ աշխարհս ըզ
քեզ փառաւորէ։

Մաղթանք։

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես
'ի բարձունս, եւ օրհնեալ են փառք
մեծութե քոյ. որ հաստատեցեր զլու-
սաւորս 'ի բարձունս. 'ի յերկնից լոյս
ծագեցեր ընդ ամ տիեզերս։ Արա-
րեր զարեգակն լուսատու տունջեան,
զլուսինն եւ զաստեղս՝ լուսատու գի-
շերոյ, եւ զլոյս Ճրագի. դու ես լոյս
գովելի. սբ եւ առաջին լոյսն. 'ի քէն
փախնու խաւարն. եւ զլոյս քո կեն-
դանի՝ տէր ծագեա 'ի սիրտս մեր։
Եւ մեք միաբան ասասցուք, օրհ-

նեալ է անուն սուրբ փառաց քոց ․ և քեզ երգեմք զօրհնութիւն և ընդ փառս հօր և որդւոյ և հոգւոյդ սբյ, այժմ և ։

Քարոզ ։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր՝ փառաւորեմք զքեզ տէր ած մեր ․ որ շնորհեցեր մեզ զտիւս խաղաղութե անցուցանել ․ և հասանիլ 'ի ժամ երեկոյիս ․ Արժանաւորեա զմեզ տէր՝ սուրբ սրտիւ, հրեշտակային երգով՝ գոհաբանութի մատուցանել տեառն այ ամենակալիդ ․ կեցո՛ և ողորմեա՛ ։ Ողորմեա՛ց մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմութե քում ․ ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

Տէր ողորմեա՛, գ ։

Մաղթանք ։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան՝ անդադար փառաւորեմք ընդ հայր և զորդի և զսբ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Մեսեդիք ծննդեանն Քրիստոսի, և Աւետման, և Վերափոխմանն, և այլոց տօնից Աստուածածնին։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, ա
և ես այսօր ծնայ զքեզ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և
ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։
Մեծացուսցէ անձն իմ զտէր. և բ
ցնծասցէ հոգի իմ ա̃վ փրկչաւ իմով։
Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն
աղախնոյ իւրոյ. ահա յայսմ հետէ
երանիցեն ինձ ա̃մ ազգք։
Իջցէ որպ̃ անձրև ՚ի վերայ գեղ- գ
ման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։
Աստուած զիրաւունս քո արքայի
տուր, և զարդարութ̃իս քո որդւոյ
թագաւորի։

Մեսեդիք Յարութեան։

Տէր կարող և հզօր. տէր կարող աձ
՚ի պատերազմի։
Տեառն է երկիր լրիւ իւրով. աշ-
խարհ և ամենայն բնակիչք նորա։
Աթոռ քո ա̃ծ յաւիտեանս յաւի- ակ
տենից, գաւազան ուղղութ̃ե՝ գա-
ւազան արքայութեան քո։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի. և ասեմ զգործս իմ թագաւորի.

բձ Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք.

Երևեցան փայլատակունք նր̅ տիեզերաց. ետես՝ և սասանեցաւ երկիր.

բկ Երգեցէք տեառն երգ նոր ա̅մ երկիր. ծառայեցէք տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութբ̅. ծաներուք զի նա է տէր ա̅ծ մեր։

գձ Եկայք և տեսէք զգործս ա̅յ, որ արար զնշանս և զարուեստս ՚ի վերայ երկրի.

Ա̅ծ մեր ապաւէն և զօրութիւն. օգնական ՚ի վերայ նեղութեանց, որք գտին զմեզ յոյժ.

գկ Ա̅ծ մեր յերկինս և յերկրի, զա̅մ զոր ինչ կամեցաւ և արար.

Յելանելն իսրայէլի յեգիպտոսէ. տանն յակոբայ ՚ի ժողովրդենէ այլազգեաց.

դձ Եղիցի ձեռն քո ՚ի վերայ առն, աջ քո ՚ի վերայ որդւոյ մարդոյ, զոր զօրացուցեր զնա ՚ի քեզ.

Որ հովուեաց իսրայէլի՝ Նայեաց, որ առաջնորդես ոպ խաշին յովսեփու։

Նստուած աստուծոց տէր խօսե- ցաւ, և կոչեաց զերկիր։ դկ

Յելից արեգական մինչև ՚ի մու- տըս արևու։

Մեսեդիք Գալստեան։

Օրհնեալ որ գաս յանուն տն. օրհնեալ որ գալոց ես։

Տէր ած մեր երևեցաւ մեզ. ա- ըարկէք տօնս ուրախութե կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։

Նա օրհնեցէք ամենայն ծառայք տեառն զտէր։ եկղ

Ո՛ կայք ՚ի տան տեառն, և ՚ի գա- ւիթս աստուծոյ մերոյ։

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն ա- ղօթից իմոց։ կիր մոխ

Զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Մեսեդիք Մարտիրոսաց։

Եղիցի ողորմութի քո տէր ՚ի վերայ մեր. որպէս յուսացաք ՚ի քեզ։ ած

Ցնծացէք արդարք 'ի տէր․ ուղղոց վայել է օրհնութիւն․

ա կ Տէր սիրէ զիրաւունս և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր․

Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է․ վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան․

բ ձ Սքանչելի է ա̃ծ 'ի վերայ սրբոց իւրոց, ա̃ծ իսրայէլի․

Տէր ա̃ծ օրհնեալ․ օրհնեալ է տ̃ր զօրհանապազ․

բ կ Օգնութ̃ի ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր․

Համբարձի զաչս իմ 'ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն․

գ ձ Ա̃ծ փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց․ մեծ և ահաւոր 'ի վերայ այնոցիկ որք շուրջ են զնովաւ․

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց տէր, և ճշմարտութ̃ի քո յեկեղեցիս սրբոց․

դ կ Սիրեցից զքեզ՝ տէր զօրութ̃ի իմ․ տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ․

Ա̃ծ օգնական իմ, և ես յուսամ 'ի

նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութե
իմոյ՝ ընդունելի իմ է.
Մերձ է տէր առ ամենեսեան, որք դձ
կարդան առ նա. առ ամենեսեան՝ որք
կարդան առ նա ճշմարտութեամբ.
Զկամս երկիւղածաց իւրոց առ-
նէ տէր. աղօթից նոցա լսէ՝ և կե-
ցուցանէ զնոսա.
Արդարքն որպ̃ զարմաւենիս ծաղ- դկ
կեսցին. որպէս զմայրսն լիբանանու
բազումք եղիցին.
Տնկեալք եղիցին ՚ի տան տեառն,
և ՚ի գաւիթս այ̃ մերոյ ծաղկեսցին.

Մեսեդիք Ապաշխարութեան:

Տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում աձ
առ նա:
Ի կարդալ իմում լուար ինձ ած̃ ա.չ
ըստ արդարութեան իմոյ.
Մի՛ ասասցէ թշնամին իմ թէ յաղ ակ
թեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծաս-
ցեն, թէ ես սասանեցայց.
Մինչև յերբ դարձուցանես զե-
րեսս քո յինէն. մինչև յերբ բարձ-
րանայ թշնամին ՚ի վերայ իմ. նայեա՛

և լո՛ւր ինձ տէր աստուած իմ։

բձ Բերան արդարոյ պատմէ զիմաստութիւն. և լեզու նորա խօսեսցի զիրաւունս։

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։

բկ Քաղցրութ̃ի արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում։

Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով խրատեա՛ զիս։

գձ Նայեա՛ և լո՛ւր ինձ տէր ա՟ծ իմ։

Մինչև յե՞րբ տէր՝ մոռանաս զիս իսպառ. մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

գկ Գթութ̃իք քո բազում են տէր, ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։

Տե՛ս զխոնարհութ̃ի իմ. և փրկեա՛ զիս. զի զօրէնս քո ես ո՛չ մոռացայ։

դձ Ա՟ծ յօգնել ինձ նայեա՛ց. և տէր յընկերել ինձ փութա՛։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրէին զանձն իմ։

դկ Լո՛ւր ա՟ծ աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամւոյն

փրկեա՛ զանձն իմ։

Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց. 'ի բազմութենէ՝ որք գործեն զանօրէնութիւն.

Ի մեծի Հինգշաբաթի։

Լուացից սրբութբ՟ զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո տէր.

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց.

Ի մեծի Ուրբաթու։

Եդուն 'ի կերակուր ինձ լեղի. և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, 'ի հատուցումն և 'ի գայթակղութիւն.

Ի տօնի սրբոյ խաչին։

Ետուր երկիւղածացդ քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան.

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քո և լո՛ւր մեզ.

---

Կարգ ուղիղեղիցեաց։

Ուղիղ եղիցին աղօթք իմ.
Որպէս խունկ առաջի քո տէր.

Համբարձումն ձեռաց իմոց․
Պատարագ երեկոյի ։

Յատուկ առաջակոչմանն ։

Ուղղեսցի աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր․ Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի ։

Տէր աղաղակեցի առ քեզ լուր ինձ ։

Նայեա՛ց ՚ի ձայն խնդրուածաց իմոց, յաղաղակել իմում առ քեզ ։

Ի մեծի Հինգշաբաթու ։

Ուղղեսցի աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր ։

Զերեկոյի աղօթս մեր ընկա՛լ Տէր․ և զտարածումն ձեռաց մերոց ։

Ի մեծի Ուրբաթու ։

Ուղղեսցի աղաչանք մեր որպէս խունկ առաջի քո Տէր․ Համբարձումն ձեռաց մերոց՝ պատարագ երեկոյի ։

---

Քարոզ կիւրակամտից, և ամ՚ աւուրց տէրունեաց ։

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ․ Տէր ողորմեա ։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի։ Եւ այլն։ որպէս ՚ի Ընէ-ն, 254։

Քարոզ ՚ի տօնի Սրբոց, և Պահոց։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զԹագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան. և վասն միայնոյ սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ. զի զբազում ամս խաղաղութիւն տացէ մեզ Տէր Աստուած մեր. և զԹագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ, վասն մեծի սուրբ և ահաւոր անուան իւրոյ. զպետս գաւառաց, զզօրաւարս, զզօրագլուխս, զժողովուրդս, զմուտս, և զելս մեր խաղաղութիւն պահեսցէ. և զամենայն պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ ՚ի մէնջ. Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։ Օ երեկս մերձեալ՝ և զառաջիկայ գիշերս խաղաղութիւն անցուցանել հաւատով ՚ի Տեառնէ խնդրեսցուք։ Օ հրեշտակ։ Օ քաւութիւն։ Օ սրբոյ խա։ Եւ եւս։ Օ անձինս։ Ողորմեա։

## Աղօթք։

Լուր ձայնից մերոց Տէր ած մեր. ընկա՛լ զաղաչանս մեր, զհամբարձումն ձեռաց մերոց՝ և զբանս աղօթից, սրբելով զերեկոյի պատարագս մեր ՚ի հոտ անուշից՝ ՚ի հաճոյս քեզ պատրաստել։ Յաւե՛լ ՚ի մեզ Տէր ամենակալ՝ զհաւատ, զյոյս, զսէր, և զամ գործս առաքինութե. որպէս զի ըստ կամաց քոց բարերարաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութե ՚ի տուէ և ՚ի գիշերի. և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութե. և վասն հոգևոր կենացդ աղաչել զքեզ Տէր. և գտանել ՚ի քէն զշնորհս և զողորմութի. և գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ և.

### Խաղաղութիւն ամենեցուն։

Քեզ երկրպագանելով Տէր ած մեր՝ գոհանամք զքէն յաղագս խաղաղութե անցուցանելոյ ՚ի մէնջ զերկարութի տունջեանս. Տուր մեզ Տէր աղաչեմք զքեզ՝ զերեկս և զա-

ռաջակայ գիշերս առանց մեղաց, և առանց գայթակղութե̃ն անցուցանել. հաստատուն կալ և մնալ 'ի հաւատ՝ 'ի յոյս՝ 'ի սէր՝ և 'ի պատուիրանապահութեան քո։ Խնդրելով զխաղաղութի̃ ա̃մ աշխարհի, և եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութի̃, և անձանց մերոց զփրկութի̃։ Որպէս զի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր՝ և զմեծ վայելչական փառաբանութի̃ միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ քո̃ ա̃ծ մեր. այժմ և միշտ և.

Եւ ասի Սուրբ աստուած՝ ըստ պատշաճի։

Սուրբ ա̃ծ. սուրբ և հզօր. սուրբ և անմահ. որ խաչեցար վասն մեր. ողորմեա մեզ։ Երիցս կրկնեա։ Եւ զկնի զփառաւորեալն՝ գտցես 'ի Եր-ն, 266.

Մաղթանք։

Փրկել զմեզ 'ի փորձութե̃ և յա̃մ վտանգից մերոց.

Եւ ևս խաղաղութե̃ն զտէր աղա.

Վասն լսելի լինելոյ տեառն ա̃յ քր̃զ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսու-

Թեամբ սուրբ ածածնին. Առ իջանելոյ 'ի վերայ մեր ողորմութեան և գթութե տեառն մոյ. Ամենակալ տէր ած մեր. կեցո և ողորմեա:

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և.

Խաղաղութիւն ամենեցուն:

---

Համբարձի զաչս իմ 'ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

Օգնութի ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր:

Մի տար 'ի սասանութի զոտն քո. և մի նինջեսցէ պահապան քո:

Որպէս ոչ նինջէ՝ և ոչ 'ի քուն երթայ պահապանն իսրայէլի:

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով:

Արեգակն 'ի տուէ քեզ մի մեղիցէ, և մի լուսին 'ի գիշերի:

Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ. պահեսցէ տէր զանձն քո:

Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ:

Այլ համբարձի շարական ըստ պատշաճի։
Կիրակամուտ զայս ասա։

Սուրբ ես տէր զօրութեանց որ բնակեալդ ես ՚ի յերկինս. և բարեբանիս ՚ի սրբոց քոց։ Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք. անդադար օրհնեն սուրբ զանունդ քո։ Պաշտօնեայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք. երկրպագեսցուք տէրութեանդ քո։ Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ՚ի հօրէ առաքեցար. և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։ Որ ըղ լոյսն խոկղբանէ հաստատեցեր վերըստին. և զխաւարն անդնդութեան յարութեամբդ քո հալածեցեր. օրհ։ Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն. երգեսցուք ցնծութե ՚ի յարութե երեկոյիս. օրհ։ ա՛ձ

Երկնաքաղաքացին յովհաննէս մեծ ՚ի ծնունդս կանանց. քարոզեր

յանապատի անդ արարող բարբառովն.
ըղձագունմըն լուսոյ արեգականն ար-
դարութեան։ Ճշմարիտ մարգարէ և
ձեռնադրող որդւոյն այ՝ . յառաջին
թագ կարապետ և պատմող ածային
օրինացն . Հորդէր ճանապարհս թա-
գաւորին յաւիտենից . Յանօրէն դի-
նարբուսըն մոլեգնեալ հերովդի-
դայ . ՚ի պարգեւ մասին խնդրէր
ըզգլուխ մարգարէին . չիջուցանել
զարուսեակն և զանաղօտ լապտերն .
Փառք . Սրբուհւոյ ածածնին բա-
րեխօսութեամբ պարգեւեա երկըր-
պագուացս ամնասուրբ երրորդու-
թեանդ՝ . զյարութի յուսոյ կենացըն
յաւիտենից . Ո. ժմ և ։ Օ հաւա-
տացեալ ժողովուրդս սուրբ երրոր-
դունդ . և զապաւինեալս ՚ի խորան
փառաց քոց . պահեա անխռով ՚ի
խաղաղութեան .

դկ Ըղքո յարուցեր օրհնեմք մար
դասէր . անդադկելով տէր փառք

քեզ։ Զոր օրհնեն սերովբէքն և
գովեն քերովբէքն. այլ։ Զանդա-
դար բերանով անհանգիստ բարբա-
ռով. այլ.

Զուարճացեալ եմք զօրհնութիւնս Հր- դկ
եշտակացն երգեմք. և անմեղք
փառաւորեմք յարութեան քո Տէր։ Որ խաչե-
ցար վասն մեր Թագաւորդ. և
յարեար փառաւորեցեր զմեզ։ Ամե-
նայն. սուրբ և հզօրդ. սուրբ
անմահ Թագաւոր.

Յայսօր մարտիրոսաց դասքն ցն- դկ
ծացեալ բերկրին. ընդ անուշահոտն.
քրիստոսի որդւոյն Այ։ Զայն ի
յերկնից վերկոչեալ ասէ. եկայք օրհ-
նեալք Հօր իմոյ. ժառանգորդք
երկնից խորանացն. Լուցէք ըղձեղի
ակելոցն. անպատմելի ողորմութեան
ւորյն. որ ի յերկնից վայր անկեալ.

Սրբոցն աղօթք իմ տէր ի տա- դկ
ճար սուրբ քո. և առաքեա ի մեզ
տէր ր զօգնութիւն ի լեռնէ սրբ-

բո՜յ քումմէ՛. Հովանասցի՜ աջ քո՛ տէ՜ր ՚ի՝ վերայ ստեղծուածոց քոց. և առաքեա՛ ՚ի մեզ տէ՛ր. Զերեկոյի՜ աղօ՛թս մեր ընկա՛լ տէ՜ր բարեխօսութեամբ ծնընողի քո. և առա՛ւ։

---

քրդ Վասն խաղաղութ՟ն ամ՟ աշխարհի, և հաստատութ՟ն սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք. Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ.

Տէր ողորմեա. գ.

ող Հայր գթած՝ բարեխնամօղ՝ արարիչ ամ՟ արարածոց. ընկա՛լ զպաղատանըս ծառայից քոց ՚ի ժամ երեկոյիս. որ առատ ես առ ամենեսեան՝ պարգևօք բարերարութ՟ն քո. Ողորմեա տէր ամ՟ աշխարհի, և եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց՝ վշտացելոց՝ Ճանապարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովանողաց՝ ապաշխարողաց՝ և հոգւոցն հանգուցելոց. Զի դու տէր ամենակալ՝ գիտես զպէտս մեր՝ և ըզկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. և քեզ ընդ որդւոյ և

ամենասրբոյ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և :

Յաւուրս աղուհացից առս առէ՝ Տէրամենակալն , և իւր Գթարողն և Աղօթքն , տե՛ս 'ի Բէ-ն , 290 յառաւօտու ժամուն , և յետ նորա՝ Որբնակեալն : Իսկ յայլ աւուրս պահոց , և'ի տօնս մարտիրոսաց՝ առէ փոխ Որբնակեալն : Նա 'ի Ճշրաշխնաւոռ՝ Սատօրհնեցէքն :

Արձակման փոխ :

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն : և այլն որպէս 'ի Բէ-ն , 348 :

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ . որ բնակեալդ ես 'ի յերկինս :

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ̃ն իւրոյ . և որպ̃ աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր ա̃ծ մեր . մինչև ողորմեսցիս 'ի մ̃զ մեր :

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ . զի բազում լցաք արհամարհանօք :

Առաւել լցան անձինք մեր նախատանօք , որք նախատէին զմեզ . և արհամարհանօք ամբարտաւանից :

Ա̃ծ յանուան քում կեցո զիս , և'ի զօրութեան քում իրաւ արա ինձ :

Ա՛ծ լո՛ւր աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ.

Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց:

Ահա՛ ա՟ծ օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ.

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտութ՟բ քով սատակեա՛ զն՟ս:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է.

Զա՟մ նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Փառք հօր և որդւոյ և.

Մաղթանք:

Զբարձրեալն զքրիստոս արասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք. և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս մեր.

Քարոզ:

Եւ մեք միաբան զողորմութի՟ 'ի տեառնէ խնդրելով, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ.

## Տէր ողորմեա՛ . Գ͞ .

### Աղօթք .

Յոյս կենաց՝ ընդունօղ աղօթից՝ քաւիչ մեղաց՝ և կատարիչ խնդրուածաց քո՛ ա͞ծ մեր . ընկա՛լ զպաղատանս մեր 'ի ժամ երեկոյիս՝ բարեխօսութե͞ ա͞բ ա͞ծածնին և աղաչանօք ա͞մ սրբոց քոց . Լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛ . ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր . արժանաւորեա՛ գոհութե͞ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ . այժմ և միշտ և .

Օրհնեա՛ տէր զպաշտօնեայս քո .

Բարերար և բազումողորմ ա͞ծ .

Հայր մեր որ յերկինս ես .

---

### Փոխ կիրակամտից .

Աստ օրհնեցէ՛ք ա͞մ ծառայք տ͞ն զտէր . ո՛ կայք 'ի տուն տեառն , և 'ի գաւիթս աստուծոյ մերոյ .

Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր 'ի սրբութի͞ . և օրհնեցէ՛ք զտէր .

Օրհնեսցէ զմեզ տէր 'ի սիօնէ .

որ արար զերկինս և զերկիր ։

Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ.

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիր պագից 'ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քում, վասն ողորմութե և ճշմարտութեան քո.

Մեծ արարեր յա͞մի զանուն սուրբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զօրութիւնս յանձն իմ.

Խոստովան եղիցին առ քեզ տ͞մ թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ քո, և օրհնեսցեն զճանապարհս քո ։

Մեծ են փառք տեառն. բարձր է տէր. զխոնարհս տեսանէ, և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ.

Եթէ գնացից ես 'ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս 'ի բարկութենէ թշնամւոյն.

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և տէր հատուսցէ ընդ իմ.

Տէր ողորմութի͞ քո յաւիտեան.

զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Աստուած յանուան քում կե։

և այլն որպէս ՚ի վերոյ։

Փառք Հօր և Որդւոյ և։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի տեառնէ՝ զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր։ Տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի։ Կեցո՛ տէր։

Տէր ողորմեա՛։ Գ։

Աղօթք։

Թագաւոր խաղաղութեան օգնական և փրկիչ անձանց մերոց քս ած մեր․ պարգևեալ պահեա՛ զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քո ՚ի խաղաղութեան։ Փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն․ արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ․ այժմ և միշտ և։

Քարոզ խաչի։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏր․ զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց՝ և

կեցուսցէ շնորհիւ ողորմութեա՟ն իւրոյ։
Մենակալ տէր ա՟ծ մեր . կեցո՛ և ո-
ղորմեա՛ ։

Աղօթք։

Պահպանեա՛ զմեզ ք՟ս ա՟ծ մեր՝
ընդ հովանեաւ սուրբ և պատուական
խաչիւդ քով 'ի խաղաղութե՟ն . փըր-
կեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամ-
ւոյն . Արժանաւորեա՛ գոհութեամբ
փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ
սրբոյ հոգւոյդ . այժմ և .

Խրատք վասն երկրպագութեան եկեղեցւոյ։

Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս ,
'ի տուն տեառն երթիցուք մեք։
Հաստատեալ կային ոտք մեր առ դը-
րունս քո Երուսաղէմ։
Երուսաղէմ շինեալ ո՟պ քաղաք.
և բնակութիւն իւր շուրջ զնովաւ։
Անդ ելանէին ազգք՝ ազգք տ՟ն .
'ի վկայութիւն իսրայէլի , խոստովան
լինել անուան տեառն։
Անդ արկեալ են աթոռք դատաս-

տանի · աթոռս արկեալ են 'ի տան Դաւթի ։

Հարցէ՛ք զողջունէ Երուսաղեմի, և զշինութենէ՝ որք սիրէք զտէր ։

Եղիցի խաղաղութիւն 'ի զօրութե՟ քում, և շինութի՟ յաշտարակս յամուրս քո ։

Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութի՟ · վասն քոյ և վասն տան տեառն այ՟ մերոյ խնդրեցաք զբարութիւն 'ի քէն ։

Տէր զօրութի՟ ծառայի քո · կեցո՛ զորդի աղախնոյ քո · և արա՛ առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու տէր օգներցեր ինձ, և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր և Որդւոյ և ։

Քարոզ եկեղեցւոյ ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց · և կեցուսցէ շնորհիւ ողորմութե՟ իւրոյ ։ Ամենակալ տէր ա՟ծ մեր՝ կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք։

Առ դրան սբ՟յ եկեղեցւոյս , և առաջի ա՟ծընկալ և պայծառացեալ սբ՟ նշանացս՝ խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք · զսուրբ և զհրաշալի և զյաղթօղ տէրութ՟իդ քո օրհնեմք և փառաւորեմք · և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ ։

Փոխ։

Աղաղակեցէ՛ք առ տէր ա՟մ երկիր · ծառայեցէ՛ք տեառն ուրախութ՟բ ։

Օ ֆոխն ըստն ասա՛ · և ֆառք փա՛ռք ·

Քարոզ։

Օրհնեսցուք զամենակալն ա՟ծ ըզ հայր տեառն մերոյ յ՟ի ք՟ի · որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջ փառաբանութ՟ե և երգել զերգս հոգևորս ։ Ամենակալ տէր աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք։

Ի մէջ տաճարիս , և առաջի ա՟ծընկալ և պայծառացեալ սուրբ նշանացըս , և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ

երկիւղիւ երկիրպագանեմք ․ զսուրբ և զհրաշալի և զյաղթօղ զյարութիւնդ քո փառաւորեմք ․ և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ , այժմ և ։

Աղօթք ․

Ի յարկի սրբութեան՝ և ՚ի տեղւոջ փառաբանութեան ․ հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս , և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ խորանացս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք ․ զսուրբ և զհրաշալի և զյաղթօղ զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք ․ և ընդ երկնային զօրսն քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս ։

Կարգաւորութի՟ հասարակաց աղօթից խաղաղական ժամուն. որ կատարի ՚ի դէմս հոգւոյն ս՟յ, այլև ՚ի դէմս բանին ս՟յ՝ որ եղաւ ՚ի գերեզմանի, և էջ ՚ի դժոխս, և խաղաղութիւն արար հոգւոյն.

Օրհնեցից զտէր յա՟մ ժամ, յա՟մ ժամ օրհնութի՟ նորա ՚ի բերան իմ.
Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք, և ուրախ եղիցին.
Մե՛ծ արարէք զտ՟ր ինև, և բարձ՛ր արասցուք զանուն նորա ՚ի միասին.
Խնդրեցի ՚ի տ՟նէ և լուաւ ինձ, յա՟մ նեղութե՟ իմմէ փրկեաց զիս.
Մատի՛ք առ տէր՝ և առէ՛ք զլոյս, և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն.
Նա՛յս աղքատ կարդաց առ տէր, և տէր լուաւ սմա. յա՟մ նեղութե՟ սորա փրկեաց զսա.
Բանակէք հրեշտակաց տ՟ն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա.

Փառք հօր և որդւոյ և.
Նուէս խաղաղութե՟ զտէր աղա.
Օրհնութիւն և փառք հօր և.

Երգ աստիճանաց։

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ, տէր փրկեա զանձն իմ 'ի շրթանց նենգաւորաց և 'ի լեզուէ չարէ.

Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի՛ լեզու՛ նենգաւոր.

Զ՝յանոնն բովանդակ սաղմ։ Բայց սկսանի ասելոյ չասէն. զի երգ աստիճանաց է։

Սաղմոս. 87.

Տէր ա̃ծ փրկութ̃ե իմոյ, 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո.

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր, խոնարհեցի ունկն քո 'ի խնդրուածս իմ։

Փառք Հօր և Որդւոյ և.

Եւ ևս խաղաղութ̃ե զտէր աղա.

Օրհնութիւն և փառք Հօր և.

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս. Դ.

Ի կարդալ իմում լուար ինձ ա̃ծ ըստ արդարութ̃ե, 'ի նեղութ̃ե ինձ անդորր արարեր. ողորմեա՛ ինձ և

լո՛ւր աղօթից իմոց :

Որդի՛ք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք . ընդէ՞ր սիրէք զունայնութիւն , և խնդրէք զստութիւն :

Ծանիրո՛ւք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում . և Տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առ նա :

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք . զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք :

Մատուցէ՛ք պատարագս արդարութեան , և յուսացարո՛ւք ՚ի Տէր :

Բազումք ասեն թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութ̃ի տեառն . նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց , և ետուր ուրախութիւն սրտից մերոց :

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա :

Խաղաղութ̃ե յայս և ՚ի սոյն ննջեսցուք և զարթիցուք . զի դու Տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ :

Տէր՝ մի՛ սրտմտութ̃ե քով յանդիմաներ զիս , և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս :

Ողորմեա՛ ինձ տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ.

Դա՛րձ տէր և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս տէր ըստ ողորմութե̃ քում։

Զի ոչ ո՛ք է որ ՚ի մահու յիշէ ըզ քեզ, կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Աշխատեցայ ես ՚ի հեծութեան իմում, լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես ՚ի վերայ ա̃մ թշնամեաց իմոց։

Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր ըզ խնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա̃մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Մ՛ինչեւ յե՞րբ Տէր մոռանաս զիս իսպառ, մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Մ՛ինչեւ յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, եւ ցաւք սրտի իմոյ զաւուրս։

Մ՛ինչեւ ցե՞րբ բարձրանայ թշնամին ՚ի վերայ իմ. Նայեա՛ եւ լո՛ւր ինձ Տէր աստուած իմ։

Լո՛յս տուր Տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ։

Մ՛ի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

Ես յողորմութիւն քո Տէր յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ ՚ի փրկութեն քում. օրհնեցից զՏէր զբարերարդ իմ։

Պահեա՛ զիս ա̅ծ իմ զի ես ՚ի քեզ յուսացայ. ասացի տեառն, տէր իմ ես դու, եւ բարիք իմ ինձ ՚ի քէն են։

Սրբոց քոց որք են յերկրի քում. սքանչելի արարեր զամենայն կամս իմ ՚ի նոսա։

Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա վաղվաղեսցին։

Ո՛չ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա

յորեանց , և ո՛չ յիշեցից զանուանս նոցա 'ի շրթունս իմ։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ . դու ես որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս։

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս , և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։

Օրհնեցից զտէր որ իմաստուն արար զիս , մինչ 'ի գիշերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ , զի է ընդ աջմէ իմմէ զի մի սասանեցայց ։

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ , և ցնծացաւ լեզու իմ , ևս՝ և մարմին իմ բնակեսցէ յուսով։

Զի ո՛չ թողցես զանձն իմ 'ի դժոխս , և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն ։

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց , լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութեան վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ ։

Լո՛ւր տէր արդարութեան . և նայեա՛ 'ի խնդրուածս իմ . ո՛ւնկն դիր աղօթից

իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք։

Յերեսաց քոց իրաւունք ինձ ել-ցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր 'ի գիշերի, փորձեցեր զիս՝ և ոչ գը-տաւ յիս անիրաւութիւն։

Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շըր-թանց քոց ես պահեցի զճանապարհս խիստս։

Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանա-պարհի քում, զի մի՛ գայթակղեսցին գնացք իմ։

Ես առ քեզ տէր կարդացի՝ զի լուար ինձ ա͞ծ, խոնարհեցո՛ առ իս զունկն քո և լո՛ւր բանից իմոց։

Սքանչելի արարեր զողորմութի՜ս քո. ո՛ փրկես զայնոսիկ որք յուսաց-եալ են 'ի քեզ. յայնցանէ որք հակա-ռակ կան աջոյ քո։

Պահեա՛ զիս որպէս բիբ ական. ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց՝ որք տառա-պեցուցին զիս։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին,

և 'ի ճարպս իւրեանց արգելին , և
բերանք նոցա խօսեցան զամբարտա-
ւանութիւն ։

Մերժեցին զիս և այժմ դարձեալ
պատեցան զինև ․ ուշ եդին խոնար-
հեցուցանել զիս յերկիր ․

Համարեցան ինձ որպէս առիւծ զի
պատրաստի յորս , և որպէս կորիւն
առիւծու զի նստի դարանեալ ․

Արի՛ տէր ժամանեա՛ նոցա և խա-
փանեա՛ զնոսա ․ փրկեա՛ զանձն իմ
յամբարշտաց 'ի սրոյ և 'ի ձեռաց թշ-
նամւոյն ։

Տէր կորո՛ զն̃ս յերկրէ , բաժանեա՛,
և խափանեա՛ զն̃ս 'ի կեանս իւրեանց ։

Գաղտնեօք քովք լցան որովայնք
նոցա, յագեցան կերակրովք և թողին
զմնացուածս տղայոց իւրեանց ․

Ես արդարութ̃բ երևեցայց երե-
սաց քոց ․ և յագեցայց՝ յերևել փա-
ռաց քոց ։

Դա՛տ արա ինձ տ̃ր , և իրա՛ւ արա
ինձ 'ի դատաստանի իմում ։

Յազգէ որ ո՛չ է սուրբ , 'ի մարդոյ
մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս ։

Դու ա՟ծ հզօրիչ իմ ես՝ ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութի՟ քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ,

Խոստովան եղէց քեզ օրհնութե՟ աստուած աստուած իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեսցի՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Աստուած յօգնել ինձ նայեա՛ց. և տէր յընկերել ինձ փութա՛։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար։

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք. որք ասէին ինձ վա՛շ վա՛շ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։

Ասասցեն յա՟մ ժամ, մեծ է ա՟ծ. և

որք սիրեն զփրկութիւնս քո ։

Ես աղքատ և տնանկ եմ, ա͞ծ օգնեա՛ ինձ. օգնական և փրկիչ իմ ես. և դու Տէր իմ՝ մի՛ յամենար ։

Տուր զօրութի͞ն ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո. և արա՛ առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր և Որդւոյ և ։

Երգ․

Շնո՛րհեա՛ մեզ Տէր, ՚ի գիշերի՛ զերկնային զխաղաղութիւն քո՛. և պահեա՛ զմեզ ՚ի պատրանա՛ց թշնամւոյն՝ ամենայա՛ղթ զօրութե͞՛ սուրբ խաչի՛ քո՛յ. Տէր ա͞ծ՛ փրկութե͞ իմոյ ՚ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի՛ քո՛յ. Մտցե՛ն աղօթք իմ առաջի քոյ Տէր. խոնարհեսցէ՛ ունկն քո ՚ի խնդրել ուա՛ծս իմ. Եկեսցէ առ մե՛զ Տէ՛ր պահապան ՚ի քէն, և պահեսցէ զմե՛զ յա͞մ

ժամ։ Առաքեա՛ ՚ի մեզ տէր զզօրութիւն սրբոյ խաչին որ պահեսցէ զմեզ յա̃մ ժամ։ Արժանի՛ արա տէր զերեկս զայս խաղաղութեամբ. և առանց փորձութեան անցո՛ ընդ մեզ։ Արժանաւորեա՛ տէր զգիշերս զայս խաղաղութեամբ. և առանց մեղաց պահելով ըզմեզ։ Ընդ մեզ տէր ա̃ծ՝ գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք. զի ա̃ծ ընդ մեզ է։ Եւ լուարուք զայս ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի. զի ա̃ծ։ Եւ հզօրացեալքդ պարտեցարուք. զի։ Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ ՚ի պարտութիւն մատնեսջիք. զի։ Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ տէր. զի։ Եւ զբանն զոր խօսիք՝ մի մնասցէ առ ձեզ. զի։ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք, և ոչ խռովեսցուք. զի։ Եւ զտէր ա̃ծ մեր փառաւոր արասցուք, և նա եղիցի մեզ յերկիւղ. զի։ Եւ յուսացեալ եղիցուք մեք ՚ի նա, և նա եղիցի մեզ ՚ի սրբութիւն. զի։ Եւ յուսացեալ ե-

ղիցո՛ւք մեք 'ի նա, և նա եղիցի մեզ 'ի փրկութի՛ւն. զի: Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ե՛տ ինձ ա՛ծ. զի. Եւ ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ետես լո՛յս մե՛ծ. զի: Եւ որ բնակեալդ էք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. լոյս ծա՛գեսցի առ ձե՛զ. զի: Եւ քանզի մանո՛ւկ ծնա՛ւ, որդի և տուա՛ւ մե՛զ. զի: Եւ որոյ իշխանութի՛ իւր 'ի վերայ ուսո՛ց իւրո՛ց. զի. Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդո՛յ հրեշտա՛կ. զի. Եւ սքանչելի խորհրդակի՛ց. զի: Եւ ա՛ծ հզօ՛ր իշխա՛ն. զի: Եւ իշխան խաղաղութե՛ Հայր հանդերձելոյ յաւիտենի՛ն. Տէր ա՛ծ ընդ մե՛զ է:

Եւ փա՛ռք Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբո՛յ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէ՛ն:

Մաղթանք.

Ի մերձենալ երեկոյիս՝ համբառնամք զձեռս մեր 'ի սրբութիւն. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով՝ բանիւ,

կամ գործով՝ 'ի յանկողինս մեր զղջա-
նալով. խոստովան լինելով զգաղտնիս
սրտից մերոց ծածկագիտիդ այ. յու-
սալով յողորմութի քո։ Նու մեք միա-
բան գոչեսցուք. յիշեա զմեզ տէր՝
յորժամ գաս արքայութեամբ քով.
և ողորմեա մեզ։

Քարոզ.

Նու ևս խաղաղութե զտէր աղա։

Գոհացարուք զտնէ, որ իւրով
ողորմութբն առաջնորդեաց մեզ 'ի
գործս տունջեան. և շնորհեաց մեզ
միաբան գալ հասանիլ 'ի հանդիստ
գիշերիս։ Նու մեք յամ ժամ աղաչես
ցուք զմարդասէրն այծ, լինիլ պահա-
պան անձանց մերոց. և նա իւրով ո-
ղորմութբն պահեսցէ զմեզ. և առաջ-
նորդեալ հասուսցէ յիւր բարութե
հանգիստն. զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց Ճշմարիտն այծ յս քս. տէրն
ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։
Ո հանգիստ գիշերիս։ Ո հրեշտակ։
Ո քաւութի. Ո որյ իմա։ Նու ևս։
Ո անձինս։ Ողորմեայց։

Աղօթք։

Տէր բարերար, որ մեծաւ գթութե՟ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն արքայութե՟ աշխատելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք, հանգիստ նոցա խոստանալով։ Շնորհեա՛ և մեզ տէր՝ անխռով խաղաղութե՟ զգիշերս անցուցանել. և՛ի ծանրութէ՟ մեղաց զաշխատեալքս՝ ապահովեա՛ ողորմութե՟ քով. և արժանաւորեա՛ մշտնջենաւոր հանգստեանն ընդ ամ՟ սուրբս քո։ Եւ գոհանալով փառաւորեսցուք ըզ քեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և.

Խաղաղութիւն ամենեցուն։

Պարգևատու բարեաց, և աղբիւր խաղաղութե՟ տէր ա՟ծ մեր. յամենայն սատանայական խռովութե՟ց խաղաղացո՛ զմիտս մեր, և զխորհուրդս՝ ՚ի գիշերիս յայսմիկ, և յա՟մ ժամանակի. Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտե-

նական երկնից արքայութեն քո․ զոր պատրաստեցեր ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց․ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և․

Սաղմոս․ 26․

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յումմէ երկեայց․ տէր ապաւէն կենաց իմոց՝ ես յումմէ դողացայց․

Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ՝ նոքա տկարացան և անկան․

Թէ պատրաստեսցի ՚ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ․ և թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ՚ի քեզ տէր յուսացայ․

Զմի խնդրեցի ՚ի տեառնէ, և ըզայն աղաչեմ․ բնակել ինձ ՚ի տան տ̃ն զա̃մ աւուրս կենաց իմոց․

Տեսանել ինձ զվայելչութի տ̃ն, և հրաման տալ ՚ի տաճարի նորա․

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի․ ընդ յարկաւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում․

Ի վիմի բարձր արարեր զիս. և այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց:

Շուրջ եղէց՝ և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութե̃. օրհնեցից և սաղմոս ասացից տեառն:

Լուր տէր ձայնի իմում, զի կարդացի առ քեզ. ողորմեա՛ ինձ և լո՛ւր ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո տէր խնդրեցին:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ խոտորեր բարկութե̃ ՚ի ծառայէ քումմէ:

Օգնական իմ լե՛ր տէր՝ մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս աստուածփրկիչ իմ:

Հայր իմ և մայր իմ թողին զիս. և տէր իմ ընկալաւ զիս:

Օրէնսդրեա՛ արա զիս տէր ՚ի ճանապարհի քում. և առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս:

Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:

Յարեան ՚ի վերայ իմ վկայք մե-

ղաց . և ատեցին ինձ յանօրէնութեն իւրեանց :

Հաւատացի տեսանել զբարութիւն տեառն՝ յերկրին կենդանեաց, համբեր տեառն և քաջալերեաց . զօրասցի սիրտ քո և համբեր տեառն :

Փառք Հօր և Որդւոյ և :

—

Երգ տեառն Ներսեսի :

Նայեա սիրով հայրենի գթած ՚ի քո ստեղծեալ գործս ձեռաց . և ըղձանակս հրեշտակաց տուր պահապան մեզ տըկարացս . փրկեա զանձինս ՚ի փորձանաց ՚ի խաւարին շրջօղ դիւաց . զի ՚ի տուընջեան և գիշերի տայցուք քեզ փառս անլռելի :

Նոյն անեղ անըսկըզբան ծնունդ անճառ որդի և բան . որ արարեր ըզտիւ գործոյ և ըզգիշեր ՚ի հանգիստ քնոյ . տուր ՚ի ննջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ . զի :

Րաբուն հոգւոց բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց. ի փակել դրանց բնութեանց մարմնոց լոյս տուր աչաց սրտից մերոց. ի գիշերաց տուր քեզ կանխել ընդ հրեղինացն օրհնաբանել. զի ի տուրն.

Սուրբըդ մեծ Երրորդութիւն ըզմեզ մաքրեա քեզ բնակութիւն. շնորհեա ընդ մանկանցն առագաստի հանգչել ընդ քեզ ի յանկողնի. տուր ըզ հայցուած բարեկամին ընդ փոխ երից նկանակին. զի:

Աներեւելի լոյս ըստեղծեր զտիւ եւ զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ որ ի գիշերի ըզճառագայթս իմանալի. տուր յամ ժամանակի զպահպանող աջ քո հովանի. զի ի տուրն.

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր բորբոքեսցի ի հոգիս մեր. զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ զլոյս գիտութեան քո փայլեսցէ. ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ զմիտս բոցով քո

վառեսցէ․ զի՛ ՚ի տուրն։

Ի՛ քեզ նայիմք լոյս անմահոյց ՚ի զգայական ծածկեալ լուսոյ․ որ վասըն մեր եղար ՚ի դըբի և նընջեցեր ՚ի տապանի․ առ մեզ նընջեա արթուն բնութի՛ հերքեալ զչարին ներգործութիւն․ զի՛ ՚ի տուրն։

Որդ լուսոյ անըստուերի պայծառտանօք կամք առաջի․ որ փակեալ դըրամբք յերեկոյին երևեցար մետասանին․ ընդ թովմայի առ քեզ գոչեմք Տէր և Ա՟ծ զքեզ դաւանեմք․ Է՟ջ և առ մեզ յերեկոյիս և տուր զողջոյն քո ՚ի հոգիս․

Բամեալքս ըզ քեզ Տէր աղաչեմք մեզ յօգնութի՛ նայեա հայցեմք․ պահպանող խորհըրդեալ անձանց մերոց լեր հովանի․ օթեան առ մեզ խաղաղարար և նընջեցուցը անխռովաբար․ զի՛ ընդ առաւօտըս կանխեսցուք օրհնել ըզ քեզ ընդ Հօր Հոգւով։

Գոչման փողոյն դատըրիչէն որ ՚ի

վե՛րջնումըն գիշերի · լը՛սեւ ա՛րա՛ զմեզ արժա՛նի եւ ա՛ջակո՛ղմն ծ՛ղեաց դասի · ա՛նչէջ վառեալ լոյս լապտե՛րաց ըստ իմաստո՛ւն հինգ կուսանաց · զի՛ ընդ փեսայի՛դ 'ի յառա՛գաստ հա՛րսանիք հոգւով մը՛տցուք 'ի փա՛ռս ·

Հա՛լածեա 'ի՝ մէ՛նջ տէ՛ր նըշա՛նաւ խաչի քո · զը՛նդդիմամա՛րտ եւ զանե՛րե՛ւոյթ գազա՛նն · Եւ՛ մի՛ տար յապակա՛նութե՛ն զքո ժա՛ռանգութի՛ւն ·

Բա՛րեխօսեա՛ վա՛սըն մեր ա՛ծածի՛ն մարիա՛մ · ո՛ր ծընա՛ր զտէր ա՛ծ ո՛ր հով ուերը՛ն զիսրայէլ · ա՛ ամենա՛զօր ըս-քա՛նչելի փա՛ռօքն ի՛ւրովք ·

Մաղթանք ·

Տէր՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն · տէր բարերար՝ աղաչեմ ըզ-քեզ, օգնական իմ լե՛ր · Տէր՝ մի՛ ա-նարգեր զիս · եւ մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ ·

Քարոզ ·

Աղաչեսցուք զամենակալն ած · եւ խնդրեսցուք 'ի նմանէ · զի առաքես-

ցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, 'ի դիւական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց ։ Ամենակալ տէր ։

Աղօթք ։

Շնորհատու բարեաց՝ յամի առատ անմահ տէր, աղաչեմք զքեզ՝ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին, և զխաւարային խորհուրդս ։ Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ ։ և շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ՝ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգիդ ։ այժմ և ։

Յաւուրս աղուհացից ասա այս Անբիծքն՝ իսկ յայլ աւուրս՝ Հայր մեր որ յերկինս ։

Սաղմոս ։ 118 ։

Երանեալ են անբիծք 'ի ճանապարհի, և որք գնան յօրէնս տեառն ։ Երանի՜, որք քննեն զվկայութիւ

նորա․ բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։

Մի թէ ոչ գործեն զանօրէնութիւն, ՚ի ճանապարհս նորա գնասցեն։

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ՚ի պահել ինձ յոյժ։

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ՚ի պահել ինձ զարդարութիւնս քո։

Յայնժամ ես ոչ ամաչէի, ՚ի զգուշանալ ինձ ՚ի պատուիրանս քո։

Խոստովան եղէց քեզ տէր յուղղութիւն սրտի իմոյ․ որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։

Զիրաւունս քո պահեցից․ մի թողուր զիս մինչ իսպառ։

Ո՞ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ՚ի պահել զբանս քո։

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ․ մի մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց։

Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ։

Օրհնեալ ես դու տէր․ ուսո ինձ զարդարութիւնս քո։

Շրթամբք իմովք պատմեցից զա̃մ իրաւունս բերանոյ քո։

Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ, որ̃պ յա̃մ ՚ի մեծութե̃ն։

Ի պատուիրանս քո հոգացայ. և զգուշացայ ՚ի ճանապարհս քո։

Զիրաւունս քո խօսեցայ, և ո՛չ մոռացայ զբանս քո։

Հատո՛ ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թագուցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափագեաց անձն իմ, ՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո յա̃մ ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ՝ որք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց։

Ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութի̃ս քո խնդրեցի։

Քանզի նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի փրկութիւնք քո խօսք իմ էին․ և խորհուրդք իմ արդարութիւն քո։

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող․ տէր կեցո՛ զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ․ և լուար ինձ․ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։

Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստո՛ւն արա զիս․ և քննեցից զսքանչելիս քո։

Տքնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալ․ հաստատեա՛ զիս ՚ի բանս քո։

Զճանապարհս մեղաց ՚ի բա՛ց արա յինէն․ և յօրէնս քո ողորմեա՛ ինձ։

Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի․ և զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ։

Մերձեցայ ես ՚ի փրկութիւն քո, տէր մի՛ յամօթ առներ զիս։

Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ․ զի անդորր արարեր սրտի իմոյ։

Օրէնսդէ՛ր արա զիս տէր, ՚ի ճանապարհս իրաւանց քոց․ և խնդրեցից զնա յամենայն ժամ։

Իմաստուն արա զիս . և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով.

Առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց . զի ընդ նս՟ հաճեցայ:

Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն.

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնանրութի՟ . 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս.

Հաստատեա՛ ծառայի քում՝ զբան քո յերկիւղ քո .

Հա՛ն յինէն զնախատինս, զոր և կարծեցի . զի դատաստանք քո քաղցր են.

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութե՟ քում կեցո՛ զիս.

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութի՟ քո տէր . և փրկութիւն քո ըստ բանի քում.

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք . զի ես 'ի բանս քո յուսացայ .

Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութե՟ մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ .

Պահեցի զօրէնս քո յա՟մ ժամ, յա-

ւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու · զի զպատուիրանս քո խնդրեցի ։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց , և ոչ ամաչէի ։

Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր սիրեցի ։

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի · և խորհէի յարդարութեան քում ։

Յիշեա՛ զբան ծառայի քո , յոր և յուսացուցեր զիս ։

Սա մխիթարեացէ զիս ՚ի խոնարհութեան իմում · զի բան քո կեցոյց զիս ։

Ամբարտաւանք անիրաւեցան յոյժ , այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր , և մխիթարեցայ ։

Տրտմութ͞ի կալաւ զիս ՚ի մեղաւորաց , և որք թողին զօրէնս քո ։

Գովելի էն ինձ իրաւունք քո , ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ ։

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տ͞ր · և պահեցի զօրէնս քո ։

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի:

---

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո:

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում:

Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո:

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. զի պահեցի զպատուիրանս քո:

Չուանք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ, վասն իրաւանց և արդարութեան քո:

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց. որոց պահեալ էին ըզ պատուիրանս քո:

Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր. զարդարութիւնս քո ուսո ինձ:

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում:

Զքաղցրութի̃, զխրատ, և զգիտութիւն ուսո՛ ինձ. զի ՚ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչչև խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։

Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։

Բազմացան յիս անիրաւութի̃ք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո։

Մածան որպ̃ կաթն սիրտք նոցա. այլ ես զօրէնս քո խօսեցայ։

Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս. որպ̃ ուսայց զարդարութի̃ս քո։

Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։

Ձեռք քո արարին՝ և ստեղծին զիս իմաստո՛ւն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո։

Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և ուրախ եղիցին. զի ես ՚ի բանս քո յուսացայ։

Ծանեայ տէր զի արդարութի̃ են

դատաստանք քո. յիրաւի խոնարհե-
ցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո ՚ի մխիթարել
զիս։ ըստ բանի քում, զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և
կեցից. զի օրէնք քո խօսք իմ են։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք ՚ի
տարապարտուց անիրաւեցան յիս. այլ
ես հոգացայ ՚ի պատուիրանս քո։
Խառնեսցեն զիս երկիւղածք քո,
և որք ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու-
թեան քում. զի մի ամաչեցից։
Վարատեցաւ անձն իմ ՚ի փրկութիւն
քո. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Ապասեցին աչք իմ բանի քում.
ասացի՝ երբ մխիթարեսցէ զիս։
Եղէ ես որպէս տիկ ՚ի պարզի. զի
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի
քո. երբ արասցես ինձ իրաւունս ՚ի
հալածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխոր-
հուրդս. այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմա-

րիտ են․ ՚ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ։

Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս յերկրի․ այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։

Ըստ ողորմութե՟ն քում կեցո զիս․ և պահեցից զվկայու՟թիս բերանոյ քո։

Յաւիտեան տէր՝ բան քո կայ յերկինս․ ազգէ մինչև յազգէ ճշմարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։

Հրամանի քում մնայ տիւ․ զի ամենեքեան ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ես արդեօք կորուսեալ էի ՚ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարու՟թս քո․ զի նոքօք կեցուցեր զիս։

Քո եմ ես, և կեցո զիս․ զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորուսանել․ զի զվկայութիւնս քո ես ՚ի միտ առի։

Ա՟մ կատարածի տեսի զվախճան․ յոյժ անդորր էին ինձ պատուի-

բանք քո։

Որպէս սիրեցի զօրէնս քո, զօր- հանապազ խօսք իմ էին։

Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս ՚ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին։

Քան զա̄մ ուսուցիչս իմ իմաստուն եղէ, զի վկայութիւնք քո խօսք իմ էին։

Քան զծերս իմաստուն եղէ, զի զպատուիրանս քո քննեցի։

Յա̄մ ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ, ո̄պ զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Որպէս զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զա̄մ ճանապարհս չարաց, զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց։

Երդուայ և հաստատեցի, զի պահեցից զա̄մ իրաւունս արդարութե̄ն քո։

Խոնարհ եղէ մինչև յոյժ, տէր կեցո զիս ըստ բանի քում։

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեա՛ց տէր. եւ զիրաւունս քո ուսո՛ ինձ։

Անձն իմ 'ի ձեռս քո է յա̃մ ժամ. եւ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Եդին ինձ մեղաւորք որոգայթ. 'ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։

Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան. զի ցնծութի̃ է սրտի իմոյ։

Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման։

Զանօրէնս ատեցի, եւ զօրէնս քո սիրեցի։

Օգնական եւ փրկիչ իմ ես դու. եւ ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք. եւ քննեցից զպատուիրանս ա̃յ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ, եւ ապրեցո՛ զիս. եւ խորհեցայց յիրաւունս քո յա̃մ ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբեք եղեն յարդարութե̃ց քոց. զի անիրաւութի̃ էին խորհուրդք ն̃ց։

Յանցաւորս համարեցայ զա՛մ մեղաւորս երկրի · վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո ։

Ունեւեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ · զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ ·

—

Արարի իրաւունս և արդարութի՛ · մի մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց ։

Ընկա՛լ զծառայս քո 'ի բարի · զի մի ամբարտաւանք զզուեսցեն զիս ։

Ապաւեցին աչք իմ փրկութեան քում տէր , և բանից արդարութե՛ քո ։

Արա՛ ընդ ծառայի քում տէր ըստ ողորմութե՛ քում · զարդարութիւնս քո ուսո՛ ինձ ։

Ծառայ քո եմ ես , իմաստո՛ւն արա զիս , և ծանեայց զվկայութի՛ս քո ։

Ժամ է պաշտել զտէր · խափանեցին զօրէնս քո ։

Վա̃ այսորիկ սիրեցի զպատուիրանս քո , քան զա՛մ ոսկի և զտպազիոն ։

Մինոյն պատուիրանք քո յաջողեցան ինձ · զի ատեցի ես զճանապարհս չարաց ։

Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այնորիկ սիրեաց զնոսա անձն իմ.

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է, և իմաստուն առնէ զտղայս.

Զբերան իմ բացի, և առի զհոգի. ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ.

Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քո.

Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք.

Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ մարդկան. և պահեցից զպատուիրանս քո.

Երեւեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո.

Ակունք ջուրց իջին յաչաց իմոց. զի ո՛չ պահեցին զօրէնս քո.

Արդա՛ր ես դու Տէր, և ուղիղ են դատաստանք քո.

Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց. և ճշմարիտ են յոյժ.

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ.

Նորեալ է բան քո յոյժ, և ծառայ

քո սիրեաց զսա ։

Տնանուկ եմ ես եւ արհամարհեալ. եւ զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։

Արդարութիւն քո՝ արդարութիւն յաւիտենից . եւ օրէնք քո ճշմարիտ են։

Նեղութիւնք եւ վիշտք գտին զիս . եւ պատուիրանք քո խօսք իմ էին ։

Արդարութիւն են վկայութիւնք քո յաւիտեան . իմաստո՛ւն արա եւ կեցո՛ զիս ։

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով . լո՛ւր ինձ տէր , զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Աղաղակեցի առ քեզ՝ եւ փրկեա՛ զիս . եւ պահեցից զվկայութիւնս քո։

Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի . եւ ես ՚ի բանս քո յուսացայ ։

Կանխեցին աչք իմ առաւօտու ՚ի խօսիլ ինձ զբանս քո ։

Ձայնի իմում լո՛ւր տէր՝ ըստ ողորմութեան քում . եւ յիրաւունս քո կեցո՛ զիս ։

Մերձեցուցին զիս հալածիչք իմ զանօրէնութիւն . զի յօրինաց քոց հեռի եղեն ։

Մերձ ես դու տէր․ և ա̃մ պատուիրանք քո ճշմարիտ են։

Իսկզբանէ ծանեայ 'ի վկայութե̃ց քոց․ զի յաւիտեան հաստատեցեր զն̃ս։

Տես զխոնարհութի̃ իմ, և փրկեա՛ զիս․ զի զօրէնս քո ես ո՛չ մոռացայ։

Դատեա՛ զդատաստանս իմ, և փըրկեա՛ զիս․ և ըստ բանի քում կեցո՛ զիս։

Հեռի է 'ի մեղաւորաց փրկութի̃, զի զիրաւունս քո ո՛չ պահեցին։

Գթութի̃ք քո բազում են տէր, և ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։

Բազում են որք հալածեն և նեղեն զիս․ 'ի վկայութե̃ց քոց ես ո՛չ խոտորեցայ։

Հայէի յանադորոյնս՝ և մաշէի, զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին։

Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի․ տէր՝ ողորմութ̃բ քո կեցո՛ զիս։

Սկիզբն բանից քոց ճշմարտութի̃ է․ յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քո։

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր․ և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։

Ցնծացայ ես 'ի բանս քո որպէս

ոյն , որ գտանէ աւար բազում ։

Զմեղս ատեցի եւ անարգեցի , եւ զօրէնս քո սիրեցի ։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ վն̄ իրաւանց եւ արդարութե̄ն քո ։

Խաղաղութի̄ բազում է այնոցիկ , ոյք սիրեն զօրէնս քո ․ եւ ոչ գոյ ՚ի նոսա գայթակղութիւն ։

Սպասեցի փրկութե̄ն քում տէր , եւ զպատուիրանս քո սիրեցի ․

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո , եւ սիրեաց զնոսա յոյժ ։

Պահեցից զպատուիրանս՝ եւ զվկայութի̄ս քո ․ զի ա̄մ ճանապարհք իմ առաջի քո են ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր ․ ըստ բանի քում իմաստո՛ւն արա զիս ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̄ր ․ եւ բանիւ քո փրկեա՛ զիս ․

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո ․ յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո ․ զի ա̄մ պատուիրանք քո արդարութ̄ե են ․

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս . զի զպատուիրանս քո ընտրեցի։
Յանկացայ փրկութեան քում տէր , և օրէնք քո խօսք իմ էին ։
Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։
Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ . խնդրեա զծառայս քո , զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

Փառք Հօր և Որդւոյ և ։

Եւ այժմ . Շարական։

Ի քէն հայցեմք հայր գթութեանց և ած մխիթարութեանց . ՚ի տըխրական գիշերային մերձեալ ժամուս . մխիթարեա զմեզ ՚ի տրտմութեանց մեղաց . և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան . աղաչանօք մաքուր աստուածածնին և ամենայն արդարոց .

Ըստ քաղցրագոյն ձայնին քո հրամանի կոչման որդւոյ աստուծոյ . եկեալ եմք առաջի քո յերեկոյիս ան- [illegible] և ծանրաբեռնեալք թե-

թեւոց 'ի ծառայութեանց մեղաց զան-
ձինս. եւ զօրացո բառնալ կամաւ ըզ-
քաղցր լուծ քոց պատուիրանաց.
աղաչանօք մեր Տէր սուրբ.

Պաղատիմք առ քեզ հոգւոյ 'ի
հանդըստեան հասեալ ժամուս մեր
դասելր հոգի աստուածոյ. յորժամ նո-
րոգես զերեսս երկրի. եւ վերստին
ստանաս զհոգիս մարդկան. նորոգե-
ալ զարդարեա ըզննջեցեալսն մեր
ըզծնեալսն 'ի քէն ի սուրբ աւազանաւն.
աղաչանօք մեր Տէր սուրբ.

Օ կենդանագիր անարատ ծնըն-
դի Ծ քո. արկանեմք առաջի անոխակալ
տէրութեանդ քո. յորժամ գաս փա-
ռօք հօր դատել ըզթշնամին խա-
չի քո. ներեա յանցանաց մերոց բա-
րեխօսութեամբ մօր քո եւ կուսի. ա-
ղաչեմք ըզքեզ տէր պահպանեա ըզ-
մեզ ընդ հովանեաւ խաչի քո տէր.

Զարդարս այսօր եւ ըզմեզ Ծր. ընդ
սրբոց քոց առաքելոցն. որք արժա-

նի եղեն տեսանել զքեզ ՚ի յարութեան քո. արժանաւորեա Տէր մեզ տեսանել զքեզ ՚ի միւսանգամ քո գալըստեանն. օրհնութիւն անուաքողին ՚ի բարձունս.

Ի նընջմանէ քո յատենի դատաւոր ահեղ. աղաչանօք սուրբ տեառնածնին. յիշեա զննջեցեալսըն մեր. յորժամ գայցես մեծաւ փառօք. քանզի քո են փառք մեծ[illegible]ուք յաւիտեանս ամէն.

Սրբուհի մարիամ. սափոր ոսկի եւ տապանակ կտակարանաց. որ զ՚ի վերուստ զհացըն կենաց պարգեւեցեր քաղցրաւըն բնութեանս. առ նա միշտ բարեխօսեա վասըն քաւութեան մեղաց ծնողաց մերոց. ԴՀ

Զուարթք անմարմնոց հրեշտակաց. քեզ երանեն ամենօրհնեալ կոյս մարիամ. որ զէակից բանն որ ընդ հօր կրեցեր ՚ի քեզ անսերմնապէս. առ նա միշտ բարեխօսեա. վասըն

քաւութեան ։

Սման որոյ և մեք հաւատացեալ-
քըս քեզ երկրպագեմք քո և ար-
տասուօք հայցեմք 'ի քէն ․ բարե-
խօսութբ ածածնին զածայնին լոյս
քո ծագեա յանձինըս մեր ․ օրհնեմք
ըզ քեզ 'ի յարութեան երեկոյիս ա-
հաւոր թագաւոր ։

եշ Հաւաքեալք աստուծոյ ․ ընտ-
րեալք 'ի սկզբանէ նախ քան զաշ-
խարհս ․ որք արժանի եղէք տե-
սանել զանտեսըն հրեղինաց ․ բա-
րեխօսեցէք առ տէր վասըն ման-
կանց եկեղեցւոյ ․

Բարեկամք քրիստոսի ․ հազա-
րապետք ամենայնին խորհրդոցն ․
որք 'ի հոսանուտ մեղաց ծո-
վէս վերածիք զմարդիկ 'ի կեանս
անմահս ․ բարեխօս ։

Գերագոյն քան ըզբընաւս ․
անճառելւոյն հասիք երանութե ․
որք 'ի դաստեան տըն նըստիք

յերկնաւորսն մթութեն քրիստոս .
բարեխօ :

Պարունակեալ պահէին յանե-ուր
զաշէն դրախտին ըղձանապարհս
ծառոյն կենաց . քրովբէականն
հուրքըն բոցեղէն սրովբէիւք . այսօր
արտափայլեալ ցուցար յերկրի ծա-
ղիկդ փայտ կենաց և փրկութեն .
զքեզ օրհնեն մանկունք սուրբ
եկեղեցւոյ .

Սաբեկայ ծառոյն վերաբերեալ
խոյ յողջակէզ փոխանակ իսա-
հակայ . այլ ի վերայ քո զենաւ
գառն անարատ . ի հաշտութի հօր և
ի բառնալ ըզմեղս մեր . զքեզ օրհ :

Պարծանք պօղոսեան . դաւան-
եալ ըզքեզ ծայրին բանին տեղի և
զենարան . քանզի քեզն ապրեցաք
ի խածանօղ և յանմարմին գազա-
նէն . և ի վերայ քո հեղեալ շիթք
անապական արեանն ըզկողածնին
ջնջեաց ըզմեղս . զքեզ օրհ .

ԲՀ Երկնաւոր հօտ ընտրեալ. զոր
հովւըն քաջ թողեալ յերկինս. և
եկեալ ի խնդիր մեզ մոլորելոցս.
որով լցեալ զթիւ հարիւրոցդ. ա-
րար ուրախութիւն յերկինս երկնա-
ւորացդ. աղաչեմք ընդ ձեզ բարեխօս
լերուք առ տէր վասըն քաւութեան
մեղաց մերոց.

Տեսանօղք անտեսին. խոր-
հըրդածօղք խորոցն աստուծոյ. որք
իջեալ ընդ միածնին սպասաւորել
տնօրէնութեանն. ի ծննդեանն
աւետաւորք հովուացն. և կանան-
ցըն իւղաբերից կենաց քարոզք ըզ
կենդանւոյն. աղ.

Պահապանք աշխարհի. բանա-
կըք տեառն շուրջ զերկիւղածովք.
բարեկամք աղքատ մարդկան միջնորդք
մահու և յարութե. միքայէլ և գաբ-
րիէլ մեծք. որ կայք միշտ առաջի
ամենասուրբ երրորդութեն. աղա.

ԳՀ Երկնաւոր փեսայ անըստուեր

լոյս իմանալի . որ ՚ի յերկնից իջեր . ՚ի սէր հարսին քո եկեղեցւոյ . զոր խօսեցաւ քեզ . բարեկամն և փեսաւէրըն քո յովհաննէս . սուրբն մաղթանօք ողորմեա .

Քառակերպեանցըն անհաս և անտես ՚ի սերովբէից . սրբութեանց սուրբ և տէր բոլորից . խոնարհեցար ՚ի յորդանան . հայցելով ՚ի ծառայէն . մկրտութիւն ջրոյ ՚ի լուանալ ըզմեղս ադամայ . սուրբն .

Որ յամլըրդութեան վերկայեցար գառն այ բարձօղ մեղաց . զոր գերադոյն արդարոց . ծանուցեր մեզ ՚ի ծնունդըս կանխանանց . և ճրագ օրինաց . որ և ՚ի դըժոխս ըզփըրկական գալըստըն քո քարոզեցաց . սուրբն .

Մաղթանք ։

Հոգւոցն հանգուցելոց քոց ած՝ արա հանգիստ և ողորմութիւն . և մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց ։

Քարոզ.

Այլ եւս խաղաղութեան զՏէր աղա.

Վասն հանգուցեալ հոգւոցն ա-ղաչեսցուք զփրկիչն մեր Քս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. եւ զմեզ կե-ցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ տէր ած մեր կեցո՛ եւ ողոր-մեա՛. Տէր ողորմեա՛. Գ.

Աղօթք.

Քրիստոս որդի այ անոխակալ եւ բարեգութ՝ գթա՛ քո արարչական սի-րովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառա-յից քոց. Յիշեա՛ յաւուր մեծի գալըս-տեան արքայութեան քոյ. Ըստ արժանի ողորմութեան՝ քաւութեան եւ թողութեան մեղաց. Պասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն. Զի դու ես տէր եւ արարիչ ամենե-ցուն. դատաւոր կենդանեաց եւ մե-ռելոց. Եւ քեզ վայելէ փառք իշխա-նութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ.

Օրհնեալ տէր մեր յս քս, ամէն.

Հայր մեր որ յերկինս ես.

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից հանգստեան ժամուն. որ կատարի 'ի դէմս հօր այ. զի պահպանողական աջով միածնին պահեսցէ զմեզ 'ի խաւարային գիշերիս.

Առաքեա տէր զլոյս քո՝ և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո.

Մտից առաջի սեղանոյ այ առ ած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ.

Խոստովան եղէց քեզ օրհնութե ած ած իմ.

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ած է.

Փառք հօր և որդւոյ և.

Եւ ևս խաղաղութն զտէր աղա.

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր. և փրկութիւն քո ըստ բանի քում.

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ.

Մի ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ.

Պահեցից զօրէնս քո յամ ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից.

Գնայի ես յանդորրու. զի զպատուիրանս քո խնդրեցի.

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի.

Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր սիրեցի.

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում.

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս.

Այս մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս.

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր, և մխիթարեցայ։

Տրտմութ̃ին կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո։

Գովելի էին ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պանդխտութ̃են իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տ̃ր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութ̃իս քո խնդրեցի։

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս ա̃յ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս. և մի յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և խորհեցայց յիրաւունս քո յ̃ամ ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ա-

պատամբք եղեն յարդարութեանց քոց․ զի անիրաւութե̃ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զա̃մ մեղաւորս երկրի․ վասն այսորիկ՝ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ․ զի ’ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քո փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ա̃մ պատուիրանք քո արդարութի̃ են։

Եղիցի ձեռն քո ’ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութե̃ քում տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս ոչխար կո-

րուսեալ , խնդրեմ զծառայս քո՝ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամբարտաւանից , և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։

Անդ անկցին ամենեքեան որք գործեն զանօրէնութիւն , մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ։

Ես ՚ի տէր յուսացայ , ցնծացայց և ուրախ եղէց յա՟ծ փրկիչ իմ։

Տէր տէր ետ ինձ զօրութի՟ և կացոյց զոտս իմ ՚ի հաստատութեան , ՚ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս , և հանգոյց զիս երագ երագ ։

Որ բնակեալն է յօգնութի՟ բարձրե՟լոյն , ընդ հովանեաւ ա՟յ յերկինս հանգիցէ։

Ասասցէ տ՟ն՝ ընդունօղ իմ ես , ապաւէն իմ ա՟ծ , և ես յուսամ ՚ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին , և ՚ի բանիցն ՚ի խռովութ՟է։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ․ ՚ի հովանի թևոց նորա յուսասցիս ։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև՝ ճշմարտութիւն նորա ։

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշե-
րի, և ո՛չ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ։
Յիրէ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի դայ-
թակղուէ դիւին ՚ի հասարակ աւուր։
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հա-
զարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և
առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։
Զ բարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն. զի ո՛չ հասցեն առ քեզ չարք, և
տանջանք մի մերձեսցին ՚ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ
է վասն քո, ՚ի պահել զքեզ յամ
ճանապարհս քո։
Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ
քեզ. զի մի երբէք հարցես զքարի
զոտն քո։
Ի վերայ իժից և քարբից գնասցես
դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն
և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ, և փրկե-
ցից զնա. հովանի եղէց նմա, զի ծան-
եաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղեց ՚ի նեղութ̃ն.

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ.

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես ՚ի յերկինս.

Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տ̃ն իւրոյ. և որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ.

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր ա̃ծ մեր. մինչև ողորմեսցիս ՚ի վ̃ր մեր.

Ողորմեա՛ մեզ տէր ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք.

Յոյս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից.

Ա̃ծ յանուան քում կեցո՛ զիս, և ՚ի զօրութ̃ն քում իրա՛ւ արա ինձ.

Ա̃ծ լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկնդիր բանից բերանոյ իմոյ.

Օտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց.

Ահա՛ ա̃ծ օգնական իմ, և տէր

ընդունօղ հոգւոյ իմոյ ։

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտուե̃ քով սատակեա զն̃ս ։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ․ և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է ։

Յա̃մ նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ ։

Օրհնեալ ես դու տէր ա̃ծ հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և առաւել ։

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո, գովեալ և ։

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութե̃ քո, գովեալ և առաւել ։

Օրհնեալ ես որ նայիս 'ի քրովբէս և հայիս յանդունդս, գովեալ և ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ և ։

Օրհնեցէք զա̃ծ 'ի սրբութե̃ նր̃, օրհնեցէք զնա 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա ։

Օրհնեցէք զնա 'ի զօրութե̃ նորա,

օրհնեցէ՛ք զնա ՚ի բազում մեծութեան նր̃։

Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն օրհնութեան, օրհնեցէ՛ք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ.

Օրհնեցէ՛ք զնա ցնծութ̃բ, գովեցէ՛ք զնա ուրախութեամբ.

Օրհնեցէ՛ք զնա ՚ի բանս քաղցր, գովեցէ՛ք զնա ՚ի բարբառ լսելի.

Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն գոհութեան, ա̃մ հոգիք օրհնեցէ՛ք զՏէր.

Արդ արձակեա՛ զծառայս քո Տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութ̃ի, զի տեսին աչք իմ զփրկութ̃ի քո՝ զոր պատրաստեցեր առաջի ա̃մ ժողովրդոց։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում իսրայէլի.

Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զես աջ քո, և Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութի̃ քո յաւիտեան, ըզ գործս ձեռաց քոց մ̃ի անտես առներ։

Տէր հա՛ն ՚ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմ̃է.

Ինձ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես.

Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և

ցնծասցէ հոգի իմ ա̃վ փրկչաւ իմով։

Այց արար 'ի վերայ խոնարհութե̃ աղախնոյ իւրոյ, այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա։

Ողորմութի̃ արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութի̃ բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից, եւ քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութե̃, եւ զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութի̃ իւր։

Որ̃պ խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամու եւ զաւակի նո̃ր յաւիտեան։

Տո՛ւր զօրութի̃ ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քո, եւ արա՛ առ ի նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս։

Փառք հօր եւ որդւոյ եւ։

Մաղթանք։

Անձն իմ ՚ի ձեռս քո է յամ ժամ, և ՚ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ Թագաւոր երկնաւոր․ զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ։ Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ․ այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քով ՚ի խաղաղութեան։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ա՟ծ․ և խնդրեսցուք ՚ի նմանէ․ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութե՟ն, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ՚ի դիւական խռովութե՟ն ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց։ Ամենակալ տէր։

Ո՜ հանգիստ գիշերիս խաղաղուէ՟։ Ո՜ հրեշտակ խա։ Ո՜ քաւութի՟ և։ Ո՜ սրբոյ խաչին։ Աւ ևս միաբան։ Ո՜ անձինս։ Ողորմեա՛ց։

Աղօթք։

Տէր ա՟ծ մեր՝ դու պահեա՛ զմեզ խաղաղութե՟ ՚ի գիշերիս յայսմիկ և յա՟մ ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բերեալ պահեա՛ զմիտս և զխոր-հուրդս մեր։ Որպէս զի յա՟մ ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայթից թըշ-նամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհ-նութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և.

Խաղաղութիւն ամենեցուն.

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա՛ զանձինս մեր տէր զօրութե՟ց. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ և ՚ի գիշերի, յարթնութե՟ և ՚ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ՟ր ա՟ծ մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղա-ղութե՟ անցուցանել, և հասանել ՚ի պաշտօն առաւօտու յերկրպագութի՟ և ՚ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սաղմոս • Դ •

Խաղաղութե̃ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք • զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ •

Ի կարդալ իմում լուար ինձ Ա̃ծ ըստ արդարութե̃, 'ի նեղութե̃ ինձ անդորր արարեր • ողորմեա́ ինձ և լո́ւր աղօթից իմոց •

Որդի՛ք մարդկան՝ մինչև յե́րբ է՞ք խստասիրտք • ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն •

Ծանեարո́ւք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում • և տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա •

Բարկանայք՝ և մի́ մեղանչէք • զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարո́ւք •

Մատուցէ́ք պատարագս արդարութեան, և յուսացարո́ւք 'ի տէր •

Բազումք ասէին թէ ո́ ցուցցէ մեզ զբարութի̃ տեառն • Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց •

Ի պտղոյ ցորենոյ գինոյ և ձիթոյ

իւրեանց լցուցեր զնոսա ։

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք ․ զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ ։

Ալէլուիա Օրթի ․

Խաղաղութիւն ամենեցուն ։

Եւ ընդ հոգւոյդ քում ։

Երկիւղածութեամբ լուարուք ։

Սուրբ աւետարանիս՝ որ ըստ Յովհաննու ։

Փառք քեզ տէր Աստուած մեր ։

Պռօսխումէ ։

Ասէ Աստուած ․

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ․

Ամէն ամէն ասեմ ձեզ ․ եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ ․ ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա ․ և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա ։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ ․ և ուր

եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղի-
ցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատ-
ուեսցէ զնա Հայրն իմ։

Փառք քեզ տէր ա̃ծ մեր.

Քարոզ.

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտ̃ր.
զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց՝ և
կեցուսցէ շնորհիւ ողորմութե̃ իւրոյ։
Ամենակալ տէր ա̃ծ մեր. կեցո́ և
ողորմեա́.

Աղօթք.

Պահպանեա́ զմեզ ք̃ս ա̃ծ մեր՝
ընդ հովանեաւ սուրբ և պատուական
խաչիւդ քով 'ի խաղաղութե̃. փրր-
կեա́ յերևելի և յաներևոյթ թշնամ-
ւոյն։ Արժանաւորեա́ գոհութեամբ
փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ
սրբոյ հոգւոյդ. այժմ և.

Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես.

Անկանիմք առաջի քոյ սուրբ ա̃ծա մաղ
ծին և աղաչեմք զանարատ զկոյսդ,
բարեխօսեա́ վասն անձանց մերոց, և
աղաչեա́ զմիածին որդիդ փրկել զմեզ
'ի փորձութե̃ և յա̃մ վտանգից մերոց։

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոյ, ասաց եալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. ԺԷ

Ունկա՛լ քաղցրութեամբ տէր ա̃ծ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթութե̃՝ առ պատկառելոյ դիմօք. փարատեա՛ ամենապարգեւ՝ զամօթական տխրութի̃ս. բա՛րձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութի̃ս. անջըր պետեա՛ հնարաւոր՝ զմահացու կըրթութի̃ս. աւարեա՛ մի՛շտ յաղթօղ՝ ըզխաբողին հաճու̃իս. բացադրեա՛ վերնային՝ զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կե՛ցուցի՛չ զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին չար գտմունս. խորտակեա՛ անքննին՝ ըզմարտողին դիմեցմունս. Տեառնագրեա՛ քո անուամբդ զլուսանցոյց երդյարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կեր պացո՛ զքո նշանդ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտի. մաքրեսցե՛ս 'ի հաղբից ըզծածկարան անկողնոյս. պահեսցե՛ս քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս.

անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարդեասցես 'ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տուր հանգիստ բերկրութե՟ մահահանգոյնս նիրհման 'ի խորութե՟ գիշերիս, բարեխօսութբ՟ հայցուածոց սրբոյ ա՟ծածնիդ՝ և ա՟մ ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսուե՟ց զզայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովուե՟ց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին 'ի նինջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութբ՟՝ հոգենորոգ զուարթութբ՟ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Օ՛ ի դու փառաւորեալ ես յա՟մ արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Որդի ա̃յ կենդանւոյ օրհնեալ յամենայնի՝ հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ: Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութե̃ քոյ փառաց, հալին մեղք. հալածին դևք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութի̃ք. տեղի տան տխրութի̃ք. նահանջին հեծութի̃ք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութըն. գնայ գիշերն. տարադրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ա̃մ: Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել, թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ: Ո՜վ դու միայն ես յերկնի անձառ, և յերկրի անզննին. 'ի տարր դոյի, և յեզրս ծագաց աշխարհի.

աղբն ա՟մի, և յա՟մի • ա՟մ լրմամբ օրհնեալ 'ի բարձունս • և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս, ամէն •

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց 'ի քրիստոս, արարեալ սրբոյն Ներսեսի շնորհալւոյ հայոց կաթուղիկոսի ։

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ՝ Հայր և որդի և սբ՟ Հոգի, անեղ և անմահ բնութի՟, արարիչ հրեշտակաց և մարդկան և ա՟մ եղելոց • ողորմեա՛ քո արարածոցս •

Հաւատով խոստովանիմ, և երկիր պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն և մի ա՟ծութի՟, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի • հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե՟, և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ • ողորմեա՛ ինձ բազմամեղիս ։

Հայր երկնաւոր ա՟ծ ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խըն

դիր մոլորեալ ոչխարին , մեղայ յեր-
կինս և առաջի քո . ընկալ զիս որպէս
զանառակ որդին , և զգեցո ինձ ըզ-
պատմուճանն զառաջին զոր մերկա-
ցայ մեղօք . ողոր :

Որդի՛ այ՛ ած ճշմարիտ՝ որ խոնար-
հեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր
մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ վն
մերոյ փրկութն . խաչեցար և թաղե-
ցար և յարեար ՚ի մեռելոց՝ և համ-
բարձար փառօք առ Հայր , մեղայ յեր-
կինս և առաջի քո . յիշեա զիս որպէս
զաւազակն՝ յորժամ գաս արքայութբ
քով . ողոր :

Հոգի՛ այ՛ ած ճշմարիտ՝ որ իջեր ՚ի
յորդանան և ՚ի վերնատունն , և լու-
սաւորեցեր զիս մկրտութբ սուրբ ա-
ւազանին , մեղայ յերկինս և առաջի
քո . մաքրեա զիս վերստին ածային
հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք եբ
զառաքեալսն . ողոր :

Անեղ բնութի՛ մեղայ քեզ մտօք
իմովք , հոգւով և մարմնով իմով . մի՛
յիշեր զմեղս իմ զառաջինս վասն ա-
նուանդ քում սրբոյ . ողոր :

Տեսօղ ամ̃ի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ ՚ի դպրութեան կենաց. ողոր։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութբ̃ և անգիտութբ̃. թողութի̃ շնորհեա՛ մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ա̃ծութեանդ քո զգայարանօք իմովք, և ա̃մ անդամօք մարմնոյս. ողոր։

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ո՛չ ևս հայիլ յարատ, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութե̃, և բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսիլ զստութի̃, և սրտի իմոյ՝ ո՛չ խորհիլ զչարութի̃, և ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ո՛չ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութե̃. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. ողոր։

Հուր կենդանի քո՝ զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ

իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում․ ողոր։

Իմաստութիւն հօր յս՛ տուր ինձ իմաստութիւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յա՛մ ժամ․ 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս․ ողոր։

Կամեցօղ բարեաց տէր կամարար՝ մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ․ այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց․ ողոր։

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց․ և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո․ ողոր։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ․ ողոր․

Պահապան ամի քո՛՝ աջ քո հովանի

լիցի ’ի վերայ իմ ’ի տուէ և ’ի գիշերի. ’ի նստիլ ’ի տան, ’ի գնալ ’ի ճանապարհ, ’ի ննջել և ’ի յառնել՝ զի մի երբէք սասանեցայց. ողոր.

Աստուած իմ որ բանաս զձեռն քո, և լնուս զա՟մ արարածս ողորմութե՟ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. ողոր.

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո՛ զիս ’ի չար սովորութե՟ց իմոց ’ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ ’ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութե՟ն, զի զղջացայց ’ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. ողոր.

Աղբիւր անմահութե՟՝ աղբերացո՛ ’ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութե՟ որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. ողոր.

Պարգևիչ ողորմութե՟՝ պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան

քո հաղորդութե՟ գալ առ քեզ · ողոր·

Բարերար տէր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս քաղցրութե՟ ա-
ւանդել զհոգի իմ, և անխռով ան-
ցուցանել ընդ չարութիւն այսոցն որ
են 'ի ներքոյ երկնից · ողոր ·

Լոյս ճշմարիտ քո՝ արժանաւորեա՛
զհոգի իմ ուրախութե՟ տեսանել ըզ
լոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն,
և հանգչիլ յուսով բարեաց յօթևա
նըս արդարոց մինչև յօր մեծի գա-
լստեան քո · ողոր ·

Դատաւո՛ր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս և ըզ
մեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան
ընդ ծառայի քում · այլ փրկեա՛ զիս
'ի յաւիտենական հրոյն, և լսելի՛ արա
ինձ զերանաւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութե՟դ · ողոր ·

Ամենողո՛րմ տէր՝ ողորմեա՛ ա՟մ հա-
ւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց,
ծանօթից և անծանօթից, կենդան-
եաց և մեռելոց · շնորհեա՛ և թշնամ-
եաց իմոց և ատելեաց զթողութի՟ որ
առ իս յանցանաց, և դարձո՛ զնոսա 'ի

չարեացն զոր ունին վասն իմ, զի ողոր
մութե՟ն քում արժանի եղիցին ․ ողոր․

Փառաւորեա՛լ տէր՝ ընկա՛լ զաղա-
չանս ծառայիս քո, և կատարեա՛ 'ի
բարի խնդրուածս իմ՝ բարեխօսու՟ե
սրբուհւոյ ա՟ծածնին, և յովհաննու
մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նա-
խավկային, և սրբոյն գրիգորի մերոյ
լուսաւորչին, և սրբոց առաքելոց՝
մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրո
սաց, հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կու-
սանաց, և ա՟մ սրբոց քոց երկնաւորաց
և երկրաւորաց ․ Եւ քեզ փառք և
երկրպագութի՟ անբաժանելի սուրբ
երրորդութե՟դ յաւիտեանս յաւիտե-
նից, ամէն ։

Վասն սրբուհւոյ ա՟ծածնին բա- մաղ
րեխօսութե՟ն՝ տէր ընկա՛լ զաղաչանս
մեր, և կեցո՛ զմեզ ․

Սուրբ զա՟ծածինն՝ և զա՟մ սուրբս քրզ
բարեխօս արասցուք առ հայր 'ի յեր-
կինս ․ զի կամեցեալ ողորմեսցի՝ և
գթացեալ կեցուսցէ զարարածս իւր ․
Ամենակալ տէր ա՟ծ մեր կե ․

աղ Ընկա՛լ տէր զաղաչանս մեր՝ բա-
րեխօսութե̃ սուրբ աստուածածնին
անարատ ծնողի միածնի որդւոյ քո·
և աղաչանօք ամ̃ սրբոց քոց · և որոց
այսօր է յիշատակ · Լո՛ւր մեզ տէր ,
և ողորմեա՛ · Ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ
զմեղս մեր · Արժանաւորեա՛ գոհու-
թեամբ փառաւորել զքեզ ընդ որդ-
ւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ · այժմ և
միշտ և ·

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃ , ամէն ·
Հայր մեր որ յերկինս ես ·

մաղ Զհանգստեան զաղօթս և զաղա-
չանս ընկա՛լ մարդասէ՛ր ած̃ 'ի հաճոյս
բարերար կամաց քոց · և մեր մեղաց
և բազում յանցանացն թողութիւն
շնորհեա՛ · և քեզ փառք յաւիտեանս
ամէն ·

Փառք քեզ տէր ած̃ մեր , որ պար
գևեցեր զօրս զայս բարեաւ և խա-
ղաղութեամբ անցուցանել ·
Մարդասէ՛ր ած̃՝ զառաջակայ գի-
շերս որ 'ի վերայ մեր գալոց է , 'ի մե-

ղաց փրկեա՛, 'ի չարեաց ազատեա՛, և 'ի գործս բարիս առաջնորդեա՛։

Առաւօտու օրհնութե͞ցն և փառաբանութեանցն արժանի արա զա͞մ հաւատացեալս անուանդ քում ս͞բյ, և պահեա՛ 'ի խաղաղութեան։

Տէր ա͞ծ մեր՝ տո՛ւր զքո խաղաղութիւն ա͞մ աշխարհի, բա՛րձ զցասումն և զպատուհասն 'ի յարարածոցս։

Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց։

Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, և այնոցիկ որք տան զտուրս ողորմութե͞ն դպրատանց, և ջանան միշտ հաստատուն պահել։

Տէր ա͞ծ՝ օգնեա՛ թագաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով 'ի խաղաղութեան։

Տէր ա͞ծ մեր՝ պահեա՛ զմեզ ա͞մ պարագայիւք՝ ամբողջ և անխռով 'ի կամս ողորմութեան քո։

Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քո՝ հալածեա՛ զերևելի և

զաներևոյթ թշնամին ՚ի սահմանաց մերոց և ՚ի բնակութենէս մերմէ · փըրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից , և արժանի՛ արա երանաւէտ կենացն անվախճանից , և քեզ փառք յաւիտեանս , ամէն ։

Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց սուրբ հոգւոյն · հանգերո՛ւք խաղաղութեամբ · և տէր եղիցի ընդ ամենեսեանդ , ամէն ։

խրատք սարկաւագութեան և դպրութեան՝ զսրա-
բողութենէ պատարագին ։

Մանուկ ժամանայն չէրքին արջանափառն և ձայնէ ՚ի երգարանն և աւէն առցիրն ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն ։

Յիշեա տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութե՛ ՚ի տեառնէ՝ զի զողորմութե՛ զշնորհան իւր արասցէ ՚ի վերայ մեր ։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողոր ։

Ողորմեա՛ց մեզ տէր ա՜ծ մեր՝ ըստ ։

Եւ ասէ ժամանայն երկրպագան Տէր ողորմեա՛. և ապա զՕրհնեալ ։ Եւ արջապէտն ասացէ զԱստուածաբան և ասէ ։

Լուեալ խաղաղութե՛ զտէր աղա ։

Օրհնութիւն և փառք հօր և ։

Սոյնպէս և Հայցէն ասէ և Որբարէն և Գօրայն և Բաշխանէն և Հարցմանէն ։

Շարական հանդերձի , յորժամ զգենու ։

Խորհուրդ խորին անհաս անըս-
կիզբն ․ որ զարդարեցեր զվերին
պետութիւնս ․ ի յառագաստ անմա-
տոյց լուսոյն ․ գերապանծ փառօք
զդասըս հրեղինաց ։ Անճառահրաշ
զօրութեամբ ․ ստեղծեր զադամ պատկեր
տիրական ․ եւ նազելի փառօք զգես-
տաւորեցեր ․ ի դրախտն Եդենի
տեղի բերկրանաց ։ Չարչարանօք քո
սբ Միածնին ․ նորոգեցան արարածք
ամենայն ․ եւ վերըստին մարդն անմա-
հացեալ ․ զարդարեցաւ ի զգեստ ան-
կողոպտելի ։ Անձրեւածին բաժակ
հրաշհոսան ․ որ հեղեր յառաքելոյն
ի սբ վերնատանն ․ հեղ եւ ի մեզ
հոգիդ սուրբ աստուած ․ ընդ
պատմուճանի զքո զիմաստութիւն ։
Տան քում վայել է սրբութիւն ․ որ ըն

դեցար զվայելչութիւն ն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ տր. պատեա ընդմէջս մեր ճշմարտութեամբ. Սր զարարչագործ բազուկս քո. տարածեցեր ընդդէմ ամստեղան ծց. հաստատեա զբազուկս մեր կարողութե տր. համբարձմամբ ձեռաց առ քեզ մէջնորդիւ. Յուսամամբ թագ ի գլուխ. պատեսցես զմիտս և զզգայարան ծնս. խաչանիշ նուարմամբ զտա ահարկուին տր. ծաղկեալ յոսկեթել ի զարդխորանի. Բամից բոլորից. տիրապէս ամծպետական ծն. նախորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր տր. քում սուրբ խորհրդոյդ լինել պաշտօնաւոր. Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քում պահեա տր ի խաղաղութեան.

Լուացից սրբութբ զձեռս իմ, և քզ շուրջ եղէց զսեղանովդ քով տէր.

Դատ արա ինձ տէր՝ զի ես յամէբ սրկծութեն իմում գնացի, ի տէր յու-

սացայ՝ զի մի՛ եղէց հիւանդ.

Փորձեա զիս Տէր եւ քննեա զիս, փորձեա զերիկամունս իմ եւ զսիրտ իմ.

Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում.

Ո՛չ նստայց ես յատեան նանրաց, եւ ընդ անօրէնս ես ո՛չ մտից.

Ատեցի ես զժողովս չարաց, եւ ընդ ամպարիշտս ես ո՛չ նստայց.

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանովն քով Տէր.

Լսել ինձ զձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն զսքանչելիս քո.

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ զտեղի յարկի փառաց քոց.

Մի՛ կորուսաներ ընդ ամպարիշտս զանձն իմ, եւ մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ.

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կաշառօք.

Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա զիս Տէր եւ ողորմեա ինձ.

Ոտն իմ կացցէ յուղղութեան, յեկեղեցիս մեծամեծս օրհնեցից զքեզ.

Փառք Հօր եւ Որդւոյ եւ.

Նու վասն սրբուհւոյ ածածնին ։ բՀ

Սուրբ զածածինն և զամ սուրբս բԸԴ
բարեխօս արասցուք առ Հայր 'ի յեր-
կինս, զի կամեցեալ ողորմեսցի և դը-
թացեալ կեցուսցէ զարարածս իւր ·
ամենակալ ։

Ընկա՛լ տէր զաղաչանս մեր բարե ։ բՀ

Եւ ապա ասէ , Խոստովանիմ առա ։

Եւ երբ ներքեայ իցէ քահանայն , ասէ 'ի ներքոյ ծածկոցդ՝ Ողորմեսցի քեզ · և այլն ։ Եւ երբ ոչ իցէ , [illegible] [illegible] կամ ոմն 'ի դպրաց ասասցէ զնոյն ։

Եւ ինքն ասէ ։ Ազատեսցէ և զձեզ ·

Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ դպ
գառին աստուծոյ ։

Յիշեալ լիջիք առաջի անմահ գա- բՀ
ռին աստուծոյ ։

Աղաղակեցէք առ տէր ամ երկիր ։ փոխ
և այլն որպէս 'ի ԲԷ-ն , 316 ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք բԸԴ
զտէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի
մեղաց · և կեցուսցէ շնորհիւ ողոր-
մութե իւրոյ ։ Ամենակալ տէր ած
մեր կեցո և ողորմեա ։

Ի մէջ տաճարիս և առաջի ածըն ։ բՀ

Մտից առաջի սեղանոյ քո առ Ած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ.

սրկ Պաշտօն արա ինձ Ած ։ և այլն որպէս ՚ի Բեմն , 495 ։

սրկ Օրհնեսցուք զամենակալն Ած զ- հայր տեառն մերոյ յի քի · որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջ փառաբանութեան և երգել զերգս հոգեւորս · ամենակալ ·

քհ Ի յարկի սրբութե՛ն և ՚ի տեղւոջ ·

Նա ապա չվեն զվարագոյրն · և շպէ- եղանակէն Մեղէդի՝ ըստ պատշաճի աւուրն, կամ Տաղ խորհրդաւոր ·

աւե Խորհուրդ աւետեաց ձայնիւ · ներնե · դաւերնե՛լ դոչէր սրբութեան · Ու քեզ առաքեալ մարդուր · ներնե · պատրաստեալ տեղի տէ- րունեան ·

ծնն Նոր ծաղիկ այսօր բղխէ յարմատոյն յեսսեայ · Նա որդի դաւթի ծնանի զորդին Այ ·

տնը առ Քս փառաց թագաւոր · այսօր երկեալ յընծայումն · Աստուծ.

ըմպէ նա զօրէնս · քաղաքանօրէնի
դալարստեամբն ·

Ասա երբայեցւոց մանկուն- ծաղ
քըն · զերգ ըղ քրովբէից առեալ ·
հեթանոսական դասուց · տօնա
կեց վեհիցն եղեալ ·

Այս ձայն զաւուիւծուն յոր
անեմ · որ գոչէ ·
· ի քառ թևի ն ·
Ի քառաթևին գոչէր · Կրկնէ · Ի
քառ ձայն տունէր ի սա նդարամետսն ·
Կրկնէ · ձայն ա ·

Այսօր նոր արեւ հարեալ ի նոր նոր
րահրաշ արեգակնէ · Կրկ կու
նէ · Ի նորահրաշ · Այսօր նոր շուշան
ծաղկեալ · ի նորատունկ բուրաս
տանէ ն ·

Այսօր անդրանիկ հօր միածին հայր
որդին · յերկին նա սրանայ ադա
մայն կերպին · Ըսւադ ներբողից
եղանակեն այսօր · Հոյլք հոգեղինաց
երկնաւորացն խմբից ·

Հող Նուագեմք Հողոյն · նուագս վայելուչս ։ Վայելուչս բանիւ ։ զարարչութիւնն նախ ասեմք ·

Վարդ Գոհար վարդըն վառաւառեալ չքնաղ · գոհար ։ ի վեհից վարսից արփենից · չքնաղ · ի վեր ։ Ի վեր ի վերայ վարսիցն · պարզապըծէր ծաղիկ ծովային · պարզապըծէր ծա ·

Փոխ Այսօր գաբրիէլ հրեշտակապետն եկեալ · բերեալ զբարեբերն պսակ յաղթող կուսին ։ Այսօր կուսելով ու բոլորիցըն որըն · զառաձար բարձրելոյն և զբնակարան հոգւոյն ·

Խաչի Խաչըն ի նախնաւորութեան · երևեցաւ ծաղկեալ ի դրախտն ա ծառ տունկ · մխիթարիչ եղեալ սգաւոր նախահօրն ադամայ · մեք ի յայն փայտն եմք յուսացեալ · զոր տէր յա բևեռեցաւ · և խա նարհեալ երկրպագեմք ամենակալ սուրբ նշանին ։

Հրեշ Գո... վէմս բեկրանաց ·

քաղցրաձայնեալ երգեմք ձեզ հրեշտակապետք. և հրեշտակաց դումարք:

Արեգակն արդար որ ի հօրէ ծագեալ. զառաքեալսն քո անձառ շնորհօք լցեալ: Լոյս լուսոյ ցուցեալ հայաստանեայց ազանց. մեծըն թադէոս բարդուղիմեաւ փայլեալ: առք

Ի ծայրին խորոցն անձառ. խորհրդածուք սուրբ մարգարէք. բանիպատմօղք զապագայիցն. յառաջագոյն զեղելութիւն: մրգ

Ի հանդէս տօնի. քո ըմխացեալ ցընծամք. հայր և վարդապետք հայրապետ պետորս: հյր

Եկեղեցի կաթողիկէ ի հայաստան. այսօր զմանկունս ժողովեալ իւր համաձայն: եկղ

Ընդրէաշն որ ասէ՝ Մեղէդէ Գ ասէր:

Ընտրեալքդ յաստուծոյ. ով երջանիկ սուրբ քահանայք:

Նըմանեալ ահարոնի. և մելքիսեդ

մարգարէին ։

Այնմ որ զգեստուցն էր յօրինող ․ զոր անհարօն մինչ ընդգենոյր ։

Յօրինէր ընդպատմուծանն ․ զոր ՚ի չորից կազմեալ նիւթոց ։

Ի կարմրոյ ՚ի կապուտոյ ՚ի բեհեզոյ ՚ի ծիրանւոյ ․ Եւ զթելըն յօրինէր ․ կարգն առաջին էր կարկեհան ։

Եւ օծումըն գրապանին ․ շուրջանակի բոլորաշէն ։

Եւ յընթացս դարշապարին ․ հընչէր երկիր ցընծայր խորանն ․ Արդ ՚ի նոյն նըմանութեան ․ քո ընդ մեր տէրս յօրինէ ։

Յորժամ մըտցես ՚ի սբ խորանն ․ անդ յիշեսցես զմեր նընջեցելոցն ։

Յորժամ առնես ընդպատարագս ․ յիշեա և զնս ընդ բազմամեղս ։

Զի և մեզ ողորմեսցի ․ ՚ի միւ-սանգամն իւր դատաստանն ։

Հօրըն փառք որդւոյն պատիւ ․ և սուրբ հոգւոյն այժմ յաւիտեան ։

Յաւիտեանս յաւիտենից . քո օրհնեալ 'ի համայնից .

Շարական խնկարկութեան սրբոյ պատարագին .

Յոյս յարկ նուիրանաց ուխտի տեառըն տաճարիս . ժողովեալքս աստանօր 'ի խորհուրդ պաշտաման պաղատանաց առաջակայ սուրբ պատարագիս . խընկօք անուշիւք խումբ առեալ պարեմք 'ի վերնայարկ սրահըս խորանիս . ուղղութե՜ ընկալ զաղօթս մեր որպ՜ բուրումն անուշահոտ խընկոց տաշխից և կինամոնաց . և ըղձատուցօղըս պահեա սըրբութե՜ մինչ և հանապազ քեզ սպասաւորել . բարեխօսութեամբ մօր քո և կուսի . ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս .

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր զե՜ զեկեղեցի արեամբ քո քս՜ . և ըստ երկնայնոցըն կարգեցեր 'ի սմա զդասս առաքելոց և մարգարէից սուրբ վարդապետաց . այսօր ժողովեալ դասք քահանայից սարկա

ւագանց դըպրաց եւ կղերիկոսաց . խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հընումն զաքարիայ . ընկալ առ ՚ի մէնջ ըզ խընկանուէր մաղթանս . որպէս զպատարագն աբելի զնոյի եւ զաբրահամու . բարեխօսութեամբ վերին քո զօրացդ . միշտ անշարժ պահեա զաթոռ հայկազնեայս :

[illegible]ընդամ յոյժ դուստր լուսոյ մայր ոչ կաթողիկէ մանկամբք քո սիոն . զարդարեալ պըճնեալ հարսըն պանծալի երկնանըման լուսաձեւ խորան . զի օծեալն ած էնն ՚ի յէէն անձախապէս ՚ի քեզ միշտ պատարագի . հօր ՚ի հաշտութի՛ մեզ ՚ի քաւութի՛ բաշխէ զմարմին եւ զարիւն իւր ոչ . վասն իւր կատարման ոչ անօրէնութեան . շնորհէ զթողութի՛ կանգնողի տաճարիս :

Օ՛ անապական կոյսըն մարիամ ածածին խոստովանին ոչ եկեղեցի . ուստի տըւաւ հացն անմահութեան եւ

բանակն մեզ ուրախարար · տուք օրհ
նութիւք նորա հոգևոր երգով ·
Օրհնեալ տէր · սրկ
Օրհնեալ թագաւորութիւն հօր և ։ քհ
Նա աւէ Ճանանու՝ ըստ պատշաճի աւուրն։
Նուէս խաղաղութե · Օրհնեալ տէր · սրկ
Օրհնութի և փառք ։ Խաղաղութի · քհ
Ըն ընդ հոգւոյդ քում · դպ
Աստուծոյ երկրպագեսցուք · սրկ
Առաջի քո տէր · դպ
Տէր ած մեր · որոյ կարողութիդ ան · քհ
Նա աւէ Փոխն և Շարականն ըստ պատշաճի ։
Օրհնեալ տէր · սրկ
Զի քո է կարողութի և զօրութի և · քհ
Պռօսխումէ · սրկ
Նոյնպէս և զՍուրբ Աստուածն՝ ըստ պատշաճի
աւուրն՝ գէթ և այլ ։
Նուէս խաղաղութե ըզ տէր աղաչեսս · սրկ
Տէր ողորմեա ։ դպ
Վս խաղաղութե ամ աշխարհի · և սրկ
հաստատութե սրբոյ եկեղեցւոյ · զտէր ·
Տէր ողորմեա ։ դպ

սրկ. Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց · զտէր աղաչեսցուք ·

դպ. Տէր ողորմեա ։ սրկ. Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց, և փրկութեան հոգւոյ նորին · զտէր աղաչեսցուք ·

դպ. Տէր ողորմեա ։ սրկ. Վասն վարդապետաց քահանայից սարկաւագաց դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ · զտէր ·

դպ. Տէր ողորմեա ։ սրկ. Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց · զօրավարաց, և զօրաց նոցին · զտէր աղա ·

դպ. Տէր ողորմեա ·

սրկ. Վասն հոգւոցն հանգուցելոց որք ի Քրիստոս ·

դպ. Յիշեա տէր և ողորմեա ·

սրկ. Եւ ևս միաբանն վասն ճշմարիտ և սուրբ ·

դպ. Տէր ողորմեա ·

սրկ. Զանձինս մեր և ըզմիմեանս՝ տեառն ·

դպ. Քեզ տեառնդ յանձն եղիցուք ·

սրկ. Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ·

դպ. Տէր ողորմեա · տէր ողորմեա · տէր ողորմեա ·

սրկ. Օրհնեա տէր ·

քհ. Զի ողորմած և մարդասէր ես ·

Գիւտն Նշխարացն Ստեփաննոսի և Հաւա-
տացելոցն՝ 'ի ճաշուն գէթ և չորեքշ։

Օրհնեալ ես տէր։ սրկ
Իսկ մեք փառաւորեսցուք որ յա։ քհ
Եւ եւս խաղաղութեն զտէր աղաչես։ սրկ
Տէր ողորմեա։ դպ
Եւ եւս հաւատով աղաչեսցուք և սրկ
խնդրեսցուք 'ի տեառնէ այ և 'ի փրկչէն
մերմէ յէն քէն 'ի ժամուս պաշտաման
և աղօթից։ Զի է արժանի ընդունե-
լութեան արասցէ լուիցէ տէր ձայնի
աղաչանաց մերոց։ Ընկալցի ըզխըն-
դրուածս սրտից մերոց. թողցէ զյան
ցանըս մեր ողորմեսցի 'ի վերայ մեր։
Աղօթք մեր և խնդրուածք յամ
ժամ. մատուսցեն առաջի մեծի տէրութեն
նորա։ Եւ նա տացէ մեզ միաբան
միով հաւատով արդարութեան վաս-
տակիլ 'ի գործըս բարիս։ Զի է զօ-
ղորմութեն ըզ շնորհսն իւր. արասցէ
'ի վերայ մեր. տէրն ամենակալ. կե։
Կեցո տէր։ դպ
Զ ժամ սբ պատարագիս և զառա- սրկ

Զակոյ օրս խաղաղութե անցուցանել։

դպ Շնորհեա տէր։

սրկ Զհրեշտակ խաղաղութե պահա։

դպ Շնորհեա տէր։

սրկ Զքաւութի և զթողութի յանց։

դպ Շնորհեա տէր։

սրկ Զսբյ խաչին մեծ և կարող զօրու։

դպ Շնորհեա տէր։

սրկ Եւ ևս միաբանն վասն ճշմա։

դպ Տէր ողորմեա։

սրկ Զանձինս մեր և զմիմեանս տն։

դպ Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

սրկ Ողորմեաց մեզ տէր ած մեր ըստ։

դպ Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

սրկ Օրհնեա տէր։

քհ Որպ զի արժանաւորք։ Խաղաղութի։

դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

սրկ Աստուծոյ երկրպագեսցուք։

դպ Առաջի քո տէր։

քհ Խաղաղութե քով քս փրկիչ մեր։

սրկ Օրհնեա տէր։

Տէր ած օրհնեսցէ զամենեսեանդ ․ քհ
Ոչ ոք յերախայից ․ մի՛ ոք ՚ի թերահաւատից ․ և մի ոք յապաշխարողաց ․ որկ
և յանմաքրից մերձեսցի յածային
խորհրդս ․

Մարմին տէրունականն ․ և արիւն դպ
փրկչականն ․ կայ առաջի ․ երկնային
զօրութիւքն աներևոյթս ․ երգեն և
ասեն անհանգիստ ․ բարբառով ․ սբ ․
սբ ․ սբ տէր զօրութեանց ․

Սաղմոս ասացէք տն այ մերոյ ․ դը- որկ
պիրք ձայնիւ քաղցրութե՛ զերգս
հոգևորս ։

[illegible]

Ծննդեան ․ Աւետեաց ․ Վարդավառի ․ և
Աստուածածնի ։

Խոնարհութիւնք հրեշտակաց ․ և
զօրաց երկնաւորաց ․ իջեալ ՚ի
յերկինից ընդ ը միածին թագաւորին ․ Որք երգէին և
ասէին ․ սա է որդին աստուծոյ ․

ամենեքեան տեսացուք․ ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմ-ունք աշխարհի․ Ո է աստուածըն ը յաւիտենականն ի յերկրի երևեցաւ․ և ընդ մարդկան շըրջեցաւ․ զի կեցուսցէ զանձինըս մեր․

Մեծի Հինգշաբաթի։

Որ վերայ նըստիս ի կառս հրանիւթս քառակերպեանն։ Անճառամծուեալ բան ընդ աստուած։ Այսօր իջեալ ի յերկրնայնոցըն ը վայրըն ը քո յ արարածոցս․ յանձն առեր բազմել ընդ աշակերտսն։ Եւ սերովբէքն և քերովբէքն հիացեալ զարմանային․ և պետութիւնք վերին զօրացն ըսքանչացեալ աղաղակէին ասելով․ Սուրբ․ Սուրբ․ Սուրբ տէր զօրութեանց․

Սուրբ ես տէր աստուածածին մեր. Խաչեցար վասն մեր. Թաղեցար. և յարեար հաւատարիմ եղե յաշխարհի և համբարձար փառօք։ Եկայք ժողովուրդք. զօրհնութի ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով. սուրբ. սուրբ. սուրբ ես տէր աստուած մեր։

Կիւրակէի. Եկեղեցւոյ. Ծաղկազարդի. և Հրեշտակաց։

Հրեշտակային կարգաւորութեան ըցեր աստուած. զքո ուէ զեկեղեցի. Հազարք հազարաց հրեշտակապետորք կան առաջի քո։ Եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն ընդ քեզ տէր. և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն։ Ձայնիւ խորհրդականաւ. սուրբ. սուրբ. սուրբ. տէր զօրութեանց։

Պահոց Ննջեցելոց։

Ամըն յիշատակի հանգուցե-
լոցն. ընկալ հայր մեր մարդասէր ընդ
պատարագս. Եւ համբարեալ զհո-
գիս նոցա. ի թիւ սրբոց քոց
յարքայութեանդ երկնից։
Անուանդ՝ զի հաւատով մա-
տուցուք ընդ պատարագս. հաշտես-
ցի աստուածութիւդ. եւ հանգուս-
ցէ զհոգիս նոցա։

Մաղթանաց։

Սրբութիւն սրբոց մեծ ես եւ
ահաւոր. Եւ զինուորութիւնք ընդ
հրեշտակացն օրհնեն ընդ քեզ
եւ ամեն. Փառք ի բար-
ձունս աստուծոյ. եւ յերկիր խա-
ղաղութիւն.

Մարգարէից. Առաքելոց. եւ Հայրապետաց։

Ամենակալ ես տէր զօրութեանց.
որ թագաւոր ես յաւիտենից.
Որ նստիս յերկնից ի յերկինս
եւ լոյս ծագես յարարածս քո։

Որ խոնարհութեամբ իջեր 'ի յերկիր · քեզ պատարագիս մատուցանեմք · Նուէր զանուանելդ քո փառաւո- րեմք · Տէր որ պսակեցեր ես զքոյ սրբոց՝ (այս անուն) ։ Վասըն զի սուրբ են մեզ բարեխօսս · Տէր ամենակալ 'ի քում յարքայութեանդ ·

Ասա ըստ հանդիսաւոր օրինի, և զայսօր խորհրդոյն վերաբերելոյ կանոնն, այս է արա- րողութիւնն ։ Յորժամ քահանայն ասէ ։

Տէր Ած օրհնեսցէ զամենեսեան · քհ

Ասա առաջնորդն ձայնէ ։

Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ · սրկ

Ասա դպիրն երգէն զՍրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն, կանգնեալ ։

Մի ոք յերախայից · մի ոք 'ի թերահաւատ · սրկ
Մարմին տէրունական · և արիւն · դպ

Ասա գան խնկարկելով 'ի սուրբ խորհրդոյն ։

Յարեւու եհար ըդ խորան իւր · և ինքն որպէս փեսայ · զի ելանէ յա- ռագաստէ իւրմէ ։

դպ Նա ցընծայ նա որպէս հըսկայ . յըն-
թանալ ըզճանապարհըս իւր :

սրկ Սըք ըղ.քըր վըեյը [illegible] ցն:

դպ Խոըհըրըդա . բա [illegible] ը կերըպարա
նեմք :

[illegible]

սրկ Ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նըս-
տի յերկնից երկինս ընդ արեւելս :

դպ Նա կենդանարար ե ըրը-
դուն . զերեքըսըրբեան օրհ-
նութիւն մատուցանեմք :

[illegible]

սրկ Ած ի հարաւոյ եկեսցէ . եւ սուրբըն
ի փառան լեռնէ :

դպ Զամենայն ըզկենդանացաղականս ի բաց
դընելով ըզգործս :

[illegible]
[illegible]

սրկ Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի
վեր . համբարձցին դրունք յաւիտե-
նից . եւ մտցէ Թագաւոր փառաց :

Եւ պատարագօղն խնկարկէ և հարցանէ.

Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարօղ ՚ի պատերազմի. <u>քհ</u>

Որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք. <u>դպ</u>

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից. և մտցէ Թագաւոր փառաց. <u>սրկ</u>

Ո՞վ է սա Թագաւոր փառաց և Տէր զօրութեանց. <u>քհ</u>

Եւ ընդ հրեշտակացն հանդիսապէս ընծայեալ երգեմք ընդ կարգ. <u>դպ</u>

Սա ինքն է Թագաւոր փառաց. <u>սրկ</u>

Եւ պատարագօղն երկրպագէ ահիւ և դողութեամբ՝ և առնու ՚ի յետոյ սրբազանագէն. և խաչակնքէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով.

Օրհնեալ եկեալ անուամբ տեառն.

[illegible] <u>դպ</u>

Եւս ևս խաղաղութեան ընդ տէր աղա՝. <u>սրկ</u>

Տէր ողորմեա՛. <u>դպ</u>

Եւս ևս հաւատով և սրբութեամբ կաց- <u>սրկ</u>

ցուք յաղօթս առաջի սբ՟յ սեղանոյս
ա՟յ ահիւ . Մի՛ խղճիւ և դայթակ-
ղութ՟ե . մի՛ նենգութ՟ե խորամանկութ՟ե
մի՛ պատրանօք և խաբէութ՟ե . Մի՛
երկմտութ՟ե՛ և մի՛ թերահաւատութ՟ե
այլ ուղիղ վարուք . պարզ մտօք . միա-
միտ սրտիւ . կատարեալ հաւատով .
Լցեալ սիրով լի՛ և առաւելեալ ա՟մ
գործովք բարութ՟ն . Կացցուք յա-
ղօթս առաջի սրբոյ սեղանոյս ա՟յ . և
գտցուք ողորմութեա՛ն ընդ շնորհս .
Յաւուր յայտնութ՟ն և ՚ի միւսան-
գամ գալըստեան՝ տր՟ն մերոյ և փրկչի՟ն
յի՟ քի՟ . կեցուսցէ և ողորմեսցի .

դպ Կեցո՛ տէր և՛ ողորմեա՛ .

սրկ Օրհնեա՛ տէր .

քհ Շնորհօք և մարդասի՟ . Խաղաղութի՟ .

դպ Եւ ընդ հոգւոյդ քում .

սրկ Աստուծոյ երկրպագեսցուք .

դպ Առաջի քո տէր .

սրկ Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր
սրբութ՟ն . և որք ոչ էք կարօղք հա-
ղորդիլ ա՟ծային խորհրդոյս՝ առ-
դրունս ելէք և աղօթեցէք .

Քո ՚ի մէջ մեր յայտնեցաւ. որ էնն Դպ
ածն ամտ բազմեցաւ. Խաղաղութե
ձայն հընչեցաւ. մեզ ողջունիւ հրա-
ման տրուաւ. Եկեղեցիս մի անձն ե-
ղեւ. համբոյրս յօդ լրման տրուաւ.
Թշնամութիւնն հեռացաւ. սէրն յընդ-
հանուրս սփռեցաւ. Արդ պաշտօն-
եայք բարձեալ զձայն. տուք զօրհ-
նութիւն ՚ի մի բերան. Միասնական
ածութեն. որում սրովբէքն են սըր-
բաբան.

Սմին եւ շարս ասէն ՚ի հանդիսի փոխի:

Որք հաւատով կայք յանդիման. սբ սրկ
սեղանոյս արքայական. Տեսէք բազ-
մեալ զՔս արքայն. եւ շուրջ պատեալ
զօրք վերնական.

Մեր համբառնամք զաչս ունելով. Դպ
եւ պաղատիմք զայս ասելով. Զմեղս
մեր մի յիշեսցես. այլ գթութե քո
քաւեսցես. Ընդ հրեշտակացն օրհ-
նեմք զքեզ. եւ ընդ սրբոց քոց Տր
փառք քեզ:

Ահիւ կացցուք. երկիւղիւ կացցուք. սրկ

բարեաւք կացցուք. և նայեսցարուք ընդ զգուշութեամբ.

դպ Առ քեզ աստուած ամենակալ.

սրկ Պատարագ քրիստոս մատչի գառն անարատ.

դպ Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան.

սրկ Օրհնեա տէր.

քհ Շնորհք՝ սէր՝ և աստուածային սրբարար.

դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

սրկ Զդրունս. ըզդրունս. ամենայն իմաստութեամբ և ըզգուշութեամբ. Ի վեր ընծայեցուցէք ըզմիտս ձեր աստուածային երկիւղիւ.

դպ Ունիմք առ քեզ տէր ամենակալ.

սրկ Եւ գոհացարուք ըզտէր բոլորով սրտիւ.

դպ Արժան և իրաւ.

սրկ Օրհնեա տէր.

քհ Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն.

Իսկ 'ի հանդիսաւոր աւուրս ոմանք ասեն Ար-
ժան և իրաւացին ասեն դպիրք.

սրկ Եւ զսրբոյդ փրկութեան որ միշտ ընդ ամ տեղիս գոհութիւն մատուցան

նեմք քեզ Քս։ Սրով և ընդհրաշալի
զյարութիւնդ քո գովեն զօրութիւնք։
Սարսին սերովբէքն. դողան քե-
րովբէքն. և իշխանութիւնք վերին պե-
տութեցըն պարառեալ ձայնիւ եղա-
նակեն և ասեն։

Սուրբ. սուրբ. սբ. տէր զօ- դպ
րութեանց։ Լի են երկինք և
երկիր փառօք քո. օրհնութիւն ՚ի
բարձունս. օրհնեալ որ եկիր և
գալոց ես անուամբ տն. ովսաննա
՚ի բարձունս։

Օրհնեալ տէր։ սրկ

Առէք կերէք այս է մարմին իմ։ քհ

Ամէն։ դպ

Օրհնեալ տէր։ սրկ

Արբէք ՚ի սմանէ ամքն այս է արիւն։ քհ

Ամէն։ Հայր երկնաւոր. որ զոր- դպ
դիդ քո ետուր. ՚ի մահ վասն
մեր պարտապան պարտեաց մե-
րոց. հեղմամբ արեան նորա. ա-
ղաչեմք զքեզ ողորմեա քո
բանաւոր հօտիս։

սրկ Օրհնեա տէր ·

քհ Եւ զքոյս 'ի քոյոց՝ քեզ մատուցա·

դպ Յամենայնի օրհնեալ ես տէր· օրհնեմք զքեզ· գովեմք զքեզ· գոհանամք զքէն· աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր·

սրկ Օրհնեա տէր·

քհ Խաղաղութիւն ամենեցուն·

դպ Եւ ընդ հոգւոյդ քում·

սրկ Աստուծոյ երկիրպագեսցուք·

դպ Առաջի քո տէր· Որդի աստուծոյ· որ պատարագեալ հօր 'ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս 'ի մէջ մեր հեղմամբ արեան քո սրբոյ· աղաչեմք զքեզ ողորմեա արեամբ քով փրկեալ հօտի·

սրկ Օրհնեա տէր·

քհ Որպ զի եղիցի սա ամենայն մեզ մերձ·

դպ Հոգի Աստուծոյ· որ զփառակցի քո զխորհուրդ· իջեալ 'ի յերկնից ց կատարես, 'ի ձեռս մեր· հեղմամբ արեան սորա աղաչեմք

ընդ քեզ հանդերձ զհոգեւորս մեր նն-
ջեցելոցն ։

Օրհնեալ տէր ։ սրկ

Ընդ որս և մեզ այց արասցես բարե ։ քհ

Յիշեա տէր և ողորմեա ։ դպ

Ի ծածնին սրբոյ կուսին մարիամու ։ քհ

Յիշեա տէր և ողորմեա ։ դպ

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն կեանամած-
ատայէ ։

Առաքելոց սբ ց · մարգարէից · վար- սրկ
դապետաց · մարտիրոսաց · և ամ հայ-
րապետաց սրբոց ։ Առաքելադրած
եպիսկոպոսաց · երիցանց · ուղղափառ
սարկաւագաց · և ամ սբ ց · Եղիցի
յիշատակ ի սբ պատարագս աղաչեմք ։

Յիշեա տէր և ողորմեա ։ դպ

Յարաբերեան կերպարանէս ձայն ասա ։

Օրհնեալ գովեալ և փառաւորեալ, սրկ
հրաշալի և անճառ յարութեանդ
քո երկրպագանեմք ։

Փառք յարութեան քո տէր ։ դպ

Ի յօնէ սրբոյն ձայն ասա ։

Սէ և անճահաճոյ · մարգարէին · հայ- սրկ

րապետին . առաքելոյն . մարտիրոսին .
(այս անուն .) որոյ այսօր զյիշատակն
կատարեմք . եղիցի յիշատակ Ի .

դպ Յիշեա տէր և ողորմեա :

սրկ Առաջնորդացն մերոց և առաջին լու-
սաւորչացն սրբոց . Թադէոսի և
Բարդուղիմէոսի առաքելոցն և Գրի-
գորի լուսաւորչին : Արիստակիսի .
վրթանիսի . յուսկան նորին . գրիգորիսի .
ներսեսի . սահակայ . դանիէլի . և խա-
դայ . մեսրոպայ վարդապետին . և գրի-
գորի նարեկացւոյն . և ներսեսի կլ-
այեցւոյն . յօհաննու որոտնեցւոյն . և
գրիգորի և մովսէսի տաթևացեացն .
և այլոց գրիգորիսեանց և ներսիսեանց .
հովուաց և հովուապետացն հայաս-
տանեայց . եղիցի յիշատակ Ի .

դպ Յիշեա տէր և ողորմեա .

սրկ Միանձնացելոց մերոց . առաքինասէր
և ճգնաւորաց կրօնաւորացն : Պօղոսի .
անտօնի . պօղայ . մակարայ . ոնոփրիոսի .
աբբայ մարկոսի . սրապիոնի . նեղո-
սի . արսենի . և ագրի . պարսամայ :
Յօհաննիսեանց և սիմէօնեանց . մերոց

ոսկեա՛նց և սուքիասանց • և ա̃մ սը՛ր
բո՛ց • հա՛րց և աշակերտելոց նոցին
ը՛նդ տիեզե՛րս եղիցի յիշա՛տա՛կ 'ի •
Յիշեա՛ տէ՛ր և ողո՛րմեա՛ : դպ
Թագաւորա՛ց հաւատացելո՛ց սրբո՛ց • սրկ
Աբգարու • կոստանդիանոսի • տրդա
տա՛յ • և թէոդոսից • և ա̃մ սո՛ւրբ և
բարեպաշտ թագաւորաց և ա̃ծասէ՛ր
իշխանա՛ց • եղիցի յիշա՛տա՛կ 'ի •
Յիշեա՛ տէր և ողո՛րմեա՛ • դպ
Ընդհանո՛ւր ա̃մ հաւատացելո՛ց • ա սրկ
րա՛նց և կանա՛նց • ծերո՛ց և տղայոց •
և ա̃մ չափու հասակի հաւատով և
սրբութ̃ե 'ի ք̃ն ննջեցելո՛ցն • եղի
ցի յիշա՛տա՛կ 'ի •
Յիշեա՛ տէր և ողո՛րմեա՛ • դպ
Օրհնեա՛ տէ՛ր • սրկ
Եւս առաւել զեպիսկոպոսապետս • քհ
Վե՛հութ̃ի և փառաբանութ̃ի մա- սրկ
տուցանե՛մք քեզ տէր ա̃ծ մե՛ր • վ̃սն
ս̃բ և անմահ պատարագիս որ 'ի վե-
րայ սրբո՛յ սեղանոյս • զի սա մեզ 'ի
սրբութ̃ի կենդանութ̃ե պարգևես-
ցէ՛ • Սովաւ շնորհեա զսէր զհաստա-

տութի՟ և զըղձալի զխաղաղութի՛ ամ՟
աշխարհի. սբյ եկեղեցւոյ և ամ՟ ուղ-
ղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպո-
սապետին մերոյ և պատուական հայ-
րապետին ամ՟ հայոց տն՟ (այս անուն.)
և մերոյ արհի եպիսկոպոսին և երջա-
նիկ րաբունապետին տն՟ (այս անուն.)
և քահանայիս որ զպատարագըս մա-
տուցանէ՛. Եւ վա՛սըն զօրութեց և
յաղթութեց թագաւորաց քրիստո-
նէից և իշխանա՛ցըն բարեպաշտից.
Աղաչեսցուք և խնդրեսցուք և վա-
սըն հոգւո՛ցըն հանգուցելո՛ց.
Եւ՛ս առաւե՛լ վասըն հանգուցեալ
րաբունապետացըն մերոց. և շինո-
ղաց սբ՟ եկեղեցւոյս. և որք ընդ հո-
վանեաւ սորին են հանգուցեա՛լ.
Ազա՛տութի՟ եղբա՛րց մերոց գերելոց
և շնորհ առաջիկայ ժողովրդեա՛նս.
Հանգի՛ստ հաւատով և սրբութե՟ ՚ի քս՟
կատարելո՛ցն. Եղի՛ցի յիշա՛.

դպ Ըստ ա՟մի՛. և յաղա՛գս ամենեցո՛ւն.

սրկ Օրհնեա՟՛ տէ՟՛ր.

քհ Եւ եղիցի ողորմութի՟ մեծին այ՟ և.

դպ Եւ՛ ընդ հո՛գւո՛յդ քո՟ ՛ւմ.

Ա՟ր սարկաւագն ժողովէ ՚ի Բեմ·

Ա՟ւ եւս խաղաղութե՛ան զտէր աղաչես· սրկ
Տէ՛ր ողորմեա՛· դպ
Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք· սրկ
եւս առաւելապէս՝ զտէր աղաչես·
Տէ՛ր ողորմեա՛· դպ
Վասն մատուցեալ սուրբ եւ ա՟ծային սրկ
պատարագիս որ ՚ի վերայ ս՟բյ սեղա-
նոյս՝ զտէր աղաչեսցուք·
Տէ՛ր ողորմեա՛· դպ
Ո՟պ զի տէր ա՟ծ մեր որ ընկալաւ զսա՛ սրկ
՚ի ս՟բ երկնային եւ յիմանալի իւր մա-
տուցարանն· զփոխանակն առաքեսցէ
առ մեզ զշնորհս եւ զպարգեւս հոգւոյն
սրբոյ· զտէր աղաչեսցուք·
Տէ՛ր ողորմեա՛· դպ
Ընկա՛լ կեցո՛ եւ ողորմեա՛· եւ պահեա՛ սրկ
զմեզ տէր քոյին շնորհի՛ւդ·
Կեցո՛ տէ՛ր եւ ողորմեա՛· դպ
Զամենասրբուհի զա՟ծածինն ըզ սրկ
միշտ կոյսն մարիամ, հանդերձ ա՟մ
սրբովք յիշելով, զտէ՛ր աղաչեսցուք·
Տէ՛ր ողորմեա՛· դպ
Ա՟ւ եւս միաբան վ՟ն ճշմարիտ եւ ս՟բ· սրկ
Տէ՛ր ողորմեա՛· դպ

սրկ Զանձինս մեր և զմիմեանս՝ տեառն այ

դպ Քեզ տէր յանձն եղիցուք.

սրկ Ողորմեա մեզ տէր աստուած մեր. ըստ մե.

դպ Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողոր.

սրկ Օրհնեա տէր.

քհ Եւ տուր մեզ համարձակաձայն բար.

դպ Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. Եւ թող մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա ՚ի չարէ.

սրկ Օրհնեա տէր.

քհ Զի քո է արքայութի և. Խաղաղութի.

դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

սրկ Աստուծոյ երկրպագեսցուք.

դպ Առաջի քո տէր.

Քահանայն խոնարհէ. և ասէ ժողովրդեան խոնարհելն ՚ի վերայ. Եւ առաջնորդն ձայնէ.

սրկ Օրհնեա տէր.

Քրիստոսի Յիսուսի տէրամբ մերով։ քհ

Եւ սարկաւագն ձայնէ բարձր։

Պռօսխումէն։ սրկ

Ի սրբութիւն սրբոց։ քհ

Միայն սուրբ. միայն տէր. Յիսուս դպ
Քրիստոս ի փառս Աստուծոյ հօր. Ամէն։

Օրհնեա տէր։ սրկ

Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ։ քհ

Ամէն։ դպ

Օրհնեա տէր։ սրկ

Օրհնեալ Որդին սուրբ Աստուած ճշմարիտ։ քհ

Ամէն։ դպ

Օրհնեա տէր։ սրկ

Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ։ քհ

Ամէն։ դպ

Օրհնեա տէր։ սրկ

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ որդւոյ։ քհ

Ամէն. Հայր սուրբ. որդի սուրբ. հոգի դպ
սուրբ. Օրհնութիւն Հօր եւ որդւոյ
եւ սրբոյ հոգւոյն. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեա տէր։ սրկ

Ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ եւ։ քհ

Եւ խաղաչնուէ ժամանայն Սիոնին ՚ի վերայ ծաղկազարդեանն և դառնայ ՚ի մէջ ուեղանն. և ժող չէն դնարագոյրն. Եւ ժամուղէ սարկաւագն.

արհ. Սաղմոս ասացէ՛ք ՟տն ՟այ մերոյ՝ դպիրք ձայնիւ քաղցրութ՟ե զերգս հոգևորս. Զի նմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք. ալէլուք և երգք հոգևորք. Պաշտօնեայք հանդերձ երգովք սաղմոս ասացէ՛ք. և զտէր յերկինս օրհնեցէ՛ք.

Եւ դպիրքն եղանակեն.

դպ. Ի՟ պատարագ գեղեցկաշուք ՚ի մէջ մերում. ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր և ՟ըե զարիւնն իւր ցօղէ ՚ի մեզ. ալէլուիա:

Առէք առ տէր և առէք ըզլոյս. ալէլուիա.

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր. ալէլուիա.

Օրհնեցէք ըզտէր յերկինս. ալէ.

Օրհնեցէք ըզնա ՚ի բարձունս. ալէլուիա.

Օրհնեցէք ըզնա տէր՝ հրեշտակք
նորա · ալէլուիա·
Օրհնեցէք ըզնա տէր զօրութիւնք նո
րա · ալէլուիա·

Ապա դպիրքն երգեն շարս խորհրդաւոր
ըստ պատշաճի աւուրն·
Ապա քահանայն շնորհակալեալ ասէ։ Ապա սար-
կաւագն քարոզէ բարձր ձայնիւ։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա- սրկ
տիք և սրբութեամբ հաղորդեցարուք·

Ապա ժողովուրդքն ասեն ձայնիւ։

Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ· դպ
օրհնեալ եկեալ անուամբ տն·
Կեցո տէր զժողովուրդս քո· և օրհ· քհ

·Դարձեալ քահանայն շնորհակալութիւն։
Ապա դպիրքն երգեն։

Լցաք ՚ի բարութեանց քոց տէր · դպ
ճաշակելով ըզմարմին քո և զար
իւն · փառք ՚ի բարձունս կե-
րակրողիդ ըզմեզ· Որ հանա-
պազ կերակրես ըզմեզ · առաքեա
՚ի մեզ ըզհոգևոր քո զօրհնութիւն·

փառք ՚ի բարձունս կերակրողիդ
ըզ ըը մեզ.

Եւ սարկաւագն քարոզէ։

որհ Դու ես խաղաղութեան զոհէր աղաչես.
Դու ես հաւատով ընկալեալք յանծայ-
ին. որ երկնային անմահ անարատ և
անապական խորհրդոյս. զոհեաւնէ
գոհացարուք.

դպ. Գոհանամք ըզ ըքէն տէր. որ կե
րակրեցեր ըզ մեզ յանմահական.
սեղանոյ քոյ. Բաշխելով զմար-
մինդ և զարիւնդ ՚ի փրկութի աշխար-
հի. և կեանք անձանց մերոց.

Յետ աստանօր դպիրքն եղանակեն տաղս խոր-
հրդաւորս, մինչև քահանայն կատարեսցէ ըն-
թերց աղօթիցն։

Եւ յորժամ հաղորդին արժանաւորքն, դը-
պիրքն երգեն զայս տաղս։

Մայր հաւատոյ որ հարսնա րան.
և առագաստ գերադրա կան.
դու փեսայիդ անմահա կան.
որ զարդարեաց զքեզ անվախ ճան:

Երկրորդ երկինք դու հրաշա կան .
փառաց ՚ի փառըս բարձրա կան .
որ զմեզ ծնանիս լուսոյ նը ման .
աւազանաւն որդեգրա կան .
Բաշխես ըզ հացըն մաքրա կան .
զարիւնդ ըմպել տաս սրսկա կան .
հանես ՚ի վեր դեր ասա ճան .
յիմանալեացն անջրկա կան .
Եկայք որդիք նոր սիօ նի .
մատիք առ տէր մեր սրբութեամբ .
Ճաշակեցէք և տե սէք .
զի քաղցր է տէր մեր զօրութեամբ .
Նա բաժանեաց ըզ յորդա նա ն .
դու զծով մեղաց աշխարհա կան .
նըման յեսուայ մեծ զօրա կան .
զքեզ տէր յիսուս հօր էա կան .
Հինն օրինակ քեզ և նը ման .
դու խորանին դերադրա կան .
Նա խորտակեց զդրունս անդամա նդ .
դու դըժոխոց զդրունս ՚ի հիմա նց .
Հացս այս մարմին է քրիստո սի .
բաժակս արիւն նորոյ ուխ տի .

ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի.
աստուած 'ի սմա մեզ տեսա նի.
Սա է քո բանն աստու ւած.
որ ընդ անձն հօրըն բազ մի.
և անտ 'ի մեզ պատմօրա գի.
բանւոյ ընդ մեզ մերձս աշխար հի.
Նոյն որ օրհնեալն է յաւիտ եան.
հայր և հոգւովըն միա կան.
այժմ և յաւէտ և յապա գայն.
և անըսպառ ու միշտ յաւիտ եան.

Սու 'ի վերջ փաշին՝ առ աւրհնութն.

սրկ Օրհնեա տէր.
քհ Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն.
դպ Նորոգեցի անուն ամ օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան. Երէցս. Երկնեա.
քհ Պատարուամն օրինաց և մարգարէից.
սրկ Նու ասեն՝ Նչելուխա օրթի.
քհ Ծես յարութեան ամն մերոյ յի քի.
Նու խբրև Ճաշեցին. կամ Խսկզբանէ.
դպ Փառք քեզ տէր աստուած մեր.
սրկ Սուրբ աւետարանաւս աղաչեսցուք.
քհ Պահպանեա զծառայս քո քն ամ.
դպ Օրհնեցից զտէր յամ ժամ. յամ ժամ

օրհնութիւն նորա 'ի բերան իմ.
Օրհնեա՛լք եղերուք 'ի շնորհաց տե՛ռ քհ
հոգւոյն. երթա՛յք խաղաղութե՛. և
Տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենես-
եանդ, ամէն.

Եւ 'ի բաշխելն նշխարս ասա ժողովրդեան՝ դպիրքն երգեն զսաղմոսս զայս:

Ի Տէր պարծեսցի՛ անձն իմ. լու-
իցեն հեզք, և ուրախ եղիցի՛ն.
Մե՛ծ արարէ՛ք զՏէր ինև՛. և
բարձր արասցուք զանո՛ւն նորա 'ի
միասի՛ն.
Խնդրեցի՛ 'ի Տ͞նէ և լուաւ ինձ.
յա͞մ նեղութե՛ իմմէ փրկեա՛ց զիս.
Մատի՛ք առ Տէ՛ր՝ և՛ առէ՛ք զլոյս.
և երեսք ձեր մի՛ ամաչեսցե՛ն.
Ա՛յս աղքա՛տ կա՛րդաց առ Տէր, և
Տէր լուաւ սմա. յա͞մ նեղութե՛ սորա
փրկեաց զդսա՛.
Բանակի՛ք հրեշտակա՛ց տե՛ն շուրջ
են զերկիւղածովք իւրո՛վք, և պա-
հեն զնոսա՛.

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տ՟ր. երանեալ է այր որ յուսայ ՚ի նա։

Երկերուք ՚ի տեառնէ ա՟մ սուրբք նորա. զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց որք խնդրեն զտ՟ր, մի պակասեսցին ՚ի նոցանէ ա՟մ բարութիւն։

Եկայք որդեակք եմ լուարուք ինձ. և զերկիւղ տ՟ն ուսուցից ձեզ։

Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան։

Լռեցո զլեզու քո ՚ի չարէ. և շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն։

Խոտորեա ՚ի չարէ և արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն, և երթ զհետ նորա։

Աչք տ՟ն ՚ի վերայ արդարոց, և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա։

Երեսք տ՟ն ՚ի վ՟ր չարագործաց, սատակել յերկրէ զյիշատակս նոցա։

Կարդացի՛ն արդա՜րքն առ տէր, և տէր լուաւ նոցա . յա՟մ նեղութենէ նոցա փրկեաց զն՟ոսա՛ ։

Մե՛րձ է տէ՜ր առ այնոսիկ՝ որք մաշեալ են սրտիւք . և զխոնարհս հոգւո՛վ կեցուցա՟նէ՛ ։

Բազո՛ւմ նեղութի՜ւնք են արդարոց . յա՟մե փրկէ՜ զնոսա տէր . և պահէ զամենայն ոսկերս նոցա . և մի՛ ՚ի նոցանէ՜ մի՛ փըշրե՟սցի՛ ։

Մա՛հ մեղաւորին չար է . բայց որ ատէ զարդա՜րն, զղջա՛սցի՛ ։

Փրկէ՛ տէր զանձի՜նս ծառայից իւրոց . մի՛ զղջա՛սցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ՚ի՟ նա՛ ։

Փա՛ռք հօր և որդւոյ և հոգւոյն սրբո՛յ . Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ա՛մէն ։

# ՑԱՆԿ

Ալէլուք աւագ շաբաթին 182
Ալէլուք եկեղեցւոյ 174
Ալէլուք խաչի 169
Ալէլուք ճրագալուցի և ծննդեանն 143
Ալէլուք համբարձման 159
Ալէլուք հոգւոյ գալստեան 164
Ալէլուք հրեշտակապետաց 179
Ալէլուք ղազարու և ծաղկա 180 · 181
Ալէլուք յարութեան 155
Ալէլուք վարդավառի 186
Ալէլուք քառասնօրեայ գալստեանն 154
Աղաչեսցուք զամենակալն 471
Այնպէս պաշտեմ զհայրենի 404
Այսօր անճառ լուսոյն ծա 60
Աշխարհ ամենայն · առ իս նայէ 31
Առաւօտ լուսոյ · արեգակն 54
Առաւօտու երգք յարութեան 244
Ասասցուք ամենեքեան միաբա 245
Աստուած անեղ անժամանակ 98
Աստուած մեծ հզօր և փառա 275
Արարչական բանին հրաման 300
Արևագալի ժամն 313
Աւետարանք հանգստեան 91
Աւետարանք մարտիրոսաց 438
Բժշկութեան աւետարանք 268
Գոհանամք զքեն տէր մեծ մեր 264
Գոհացարուք զտեառնէ 300

Երգ մեռելոց 107
Եւ ես հաւատով աղաչեսցուք 443
Զարթուցեալքս ամենեքեան 28
Զուարճացեալքս մեծաւ ու 225
Զսաղմոս երգութիւնս և 366
Զքեզ գոհանամք տէր աստուած 37
Թագաւորք ապաշխարութեան 127
Թագաւորք մարտիրոսաց 138
Թափօրի երգն 275
Ժամամուտքն 367
Ի կարդալ իմում լուար ինձ 489
Իսկ այս ծով է որ գիմեալ 414
Իւղաբերից երգն և 211
Լցաք առաւօտու ողորմութեամբ 188
Խաչ քո եղիցի մեզ ապաւէն 511
Խնդրեսցուք հաւատով միա 274
Խոնարհեցո տէր զունկն քո 454
Խորանք երկրպագութեան տաճարին 484
Ծափս հարէք ամենայն հեթա 404
Կանոնագլուխք 39
Համբարձի զաչս իմ ՚ի լերինս 474
Հարցի փոխն 89
Հաւատամք ՚ի մի աստուած հայրն 441
Հրաժարիմք ՚ի սատանայէ 5
Ճաշու շարականք 389
Ճաշու սաղմոս մարտիրոսաց նախքան
զգիրքն 410
Ճաշու սաղմոս յետ գրքին 405
Ճաշու փոխ մարտիրոսաց շարականի 387

Մաղթանք տօնից 115
Մայր սուրբ սքանչելի լուսոյն 261
Մեծացուսցէ անձն իմ 205
Մեսեդիք աղցից կիւրակէին 418
Մեսեդիք ճաշու աղուհացից 416
Մեսեդիք երեկոյից 465
Մեսեդիք ճաշու յարութեան 417
Մեսեդիք յետ գրքին 415
Յարութեան ճաշուքն 424
Յետ գրքին սաղմոսք 422
Յիշեա տէր զպաշտօնեայս քո 288
Յիշեսցուք ՚ի գիշերի զանուն 25
Նորաստեղծեալ բանն 227
Նորոգօղ տիեզերաց 73
Շաբաթապահոց ճշի, և այլն 424
Շաբաթպհց մեսեդի նախքան զգիրքն 415
Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի 226
Ողորմեայքն 332
Որ բնակեալն է յօգնութիւն 479
Պսակիչ սրբոց քրիստոս, որ պսա 289
Պօղոս առաքեալ յիսուսի քրիստոսի 421
Սաղմոսք աւետարանի 80
Սեղան օրհնէքն 447
Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս 411
Սիրեցի՝ զի լուիցէ տէր 357
Սուրբ ա͞ծ. սուրբ և հզօր. սուրբ և 265
Սուրբ ես տէր ա͞ծ մեր հզօր և 282
Սուրբ խաչիւս աղաչեսցուք 277
Տէր ամենակալ աստուած արքա 290

Տէր բարերար, որ. մեծաւ 501
Տէր երկնից փոխն 233
Տէր՝ եթէ զշրթունս իմ բանաս 17
Տէր զի բազում եղեն նեղիչք 18
Փառաւորեսցուք զամենակալն 263
Փառք ՚ի բարձունս աստուծոյ 242
Քեզ վայելէ օրհնութիւն 408
Քում ամենազօր և հրաշալի 274
Քրիստոս ա̃ծ մեր վասն խաչի քոյ 285
Օրհնեցէ՛ք զտէր ամենայն ազինք 389
Օրհնեցէ՛ք մանկունք զտէր 277

# ԽՐԱՏ

## ՏՈՄԱՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿԻՍ

Առ զԹուականն Հայոց յորում ամի եւ իցես, յառաջիկայ աղիւսակէ առ՝ որ յերկուս երեսս Թղթոց եդեալ է. եւ գիտ ՚ի կարգի այնր Թուականի զՏարեգիրն նոյն տարւոյն, յորոյ կարգի եդեալ կայ Նօտր գրով միայն Եօթներեակն՝ Վերադիրն՝ եւ Տանուտէրն։ Դու առի յառաջ գնացեալ յայն մշտնջենաւոր աղիւսակն՝ որ յերկս զոյգ երեսս Թղթոց պարունակեալ է, գտցես անդ զնոյն Տարեգիրն, որ ըստ կարգի այբուբենից եդեալ կայ գլխագրով. եւ ՚ի շարս նորին գտցես յառաջին տափն զօրն յայտնութեն, յերկրորդումն՝ զմիջոց ուտիքն. եւ այսու կարգաւ յառաջ գնասցես մինչեւ ցօր բարեկենդանի յայտնութեան։

Օրինակ իմն, Թուական առաջիկայ տարւոյս է (ՌՄՂԳ), եւ Տարեգիրն. (Բ), զոր գտցես յառաջին աղիւսակի անդ. եւ՚ի նմին կարգի տափին առ ձեռն պատրաստ գտանես զօրն յայտնութեն՝ որ է (Բ̄շԲ̄Թ), եւ զմիջոց ուտիքն՝ որ է (Է) օր, եւ զառաջաւորաց բարեկենդանն որ է յունվարի (ԺԲ), եւ զայլն ամ ըստ վերոգրեալ խրատու մինչեւ ցօր բարեկենդանի յայտնութե։

| Ամք Տն. և Թուականն Հայոց: | [illegible] | Տարեգիր | [illegible] | Տանուտէր: |
|---|---|---|---|---|
| 1847 . ռմղզ | բ | գ | իդ | Կշիռ : |
| 1848 . ռմղէ | գյ | դէ | ե | Կարիճ : |
| 1849 . ռմղը | խ | ղ | ժդ | Աղեղնաւոր: |
| 1850 . ռմղթ | ց | է | իե | Այծեղջիւր: |
| 1851 . ռյ | ղ | ա | ը | Ջրհոս : |
| 1852 . ռյա | ժթ | բգ | ժթ | Ձուկն : |
| 1853 . ռյբ | ս | դ | լ | Խոյ : |
| 1854 . ռյգ | յ | ե | ժա | Ցուլ : |
| 1855 . ռյդ | ղ | ղ | իբ | Երկաւոր : |
| 1856 . ռյե | պչ | էա | գ | Խեցգետին : |
| 1857 . ռյզ | ձ | բ | ժդ | Առիւծ : |
| 1858 . ռյէ | բ | գ | իե | Կոյս : |
| 1859 . ռյը | ն | դ | զ | Կշիռ : |
| 1860 . ռյթ | ծխ | եզ | ժէ | Կարիճ : |
| 1861 . ռյժ | ց | է | իը | Աղեղնաւոր: |
| 1862 . ռյժա | ղ | ա | թ | Այծեղջիւր: |
| 1863 . ռյժբ | ժ | բ | իա | Ջրհոս : |
| 1864 . ռյժգ | փ | գդ | բ | Ձուկն : |
| 1865 . ռյժդ | ծ | ե | ժգ | Խոյ : |
| 1866 . ռյժե | ղ | ղ | իդ | Ցուլ : |
| 1867 . ռյժզ | պ | է | ե | Երկաւոր : |
| 1868 . ռյժէ | իժ | աբ | ժզ | Խեցգետին : |
| 1869 . ռյժը | վ | գ | իէ | Առիւծ : |
| 1870 . ռյժթ | ն | դ | ը | Կոյս : |
| 1871 . ռյի | է | ե | ժթ | Կշիռ : |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1872 | • ռյիա | ձպ | զէ | լ | Կարիճ ։ |
| 1873 | • ռյիբ | ղ | ա | ժա | Աղեղնաւոր ։ |
| 1874 | • ռյիգ | ժ | բ | իբ | Այծեղջիւր ։ |
| 1875 | • ռյիդ | շ | գ | գ | Ջրհոս ։ |
| 1876 | • ռյիե | կծ | դե | ժդ | Ձուկն ։ |
| 1877 | • ռյիզ | ղ | զ | իե | Խոյ ։ |
| 1878 | • ռյիէ | պ | է | զ | Ցուլ ։ |
| 1879 | • ռյիը | ի | ա | ժէ | Երկաւոր ։ |
| 1880 | • ռյիթ | ալ | բգ | իը | Խեցգետին ։ |
| 1881 | • ռյլ | ն | դ | թ | Առիւծ ։ |
| 1882 | • ռյլա | է | ե | իա | Կոյս ։ |
| 1883 | • ռյլբ | չ | զ | բ | Կշիռ ։ |
| 1884 | • ռյլգ | ճղ | էա | ժգ | Կարիճ ։ |
| 1885 | • ռյլդ | գ | բ | իդ | Աղեղնաւոր ։ |
| 1886 | • ռյլե | շ | գ | ե | Այծեղջիւր ։ |
| 1887 | • ռյլզ | կ | դ | ժզ | Ջրհոս ։ |
| 1888 | • ռյլէ | փւ | եզ | իէ | Ձուկն ։ |
| 1889 | • ռյլը | ճ | է | ը | Խոյ ։ |
| 1890 | • ռյլթ | ի | ա | ժթ | Ցուլ ։ |
| 1891 | • ռյխ | ա | բ | լ | Երկաւոր ։ |
| 1892 | • ռյխա | հկ | գդ | ժա | Խեցգետին ։ |
| 1893 | • ռյխբ | է | ե | իբ | Առիւծ ։ |
| 1894 | • ռյխգ | չ | զ | գ | Կոյս ։ |
| 1895 | • ռյխդ | լ | է | ժդ | Կշիռ ։ |
| 1896 | • ռյխե | դգ | աբ | իե | Կարիճ ։ |
| 1897 | • ռյխզ | շ | գ | զ | Աղեղնաւոր ։ |
| 1898 | • ռյխէ | կ | դ | ժէ | Այծեղջիւր ։ |
| 1899 | • ռյխը | ռ | ե | իը | Ջրհոս ։ |
| 1900 | • ռյխթ | մճ | զէ | թ | Ձուկն ։ |
| 1901 | • ռյծ | ի | ա | իա | Խոյ ։ |

| Գիր տարւոյ | Օր Յայտնութեան | Միջնոյ առաջէ, օր | Առաջաւորաց բարէ" | Բուն բարեկենդան | ԶԱՏԻԿ | Երեւման խաչ | Համբարձման | Հոգեգալուստ | ԱՅ Կիրակէ Եար" | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ. | փետր. | մարտ | ապր. | ապր. | մայ. | յուն. | յուն. |
| Ա | Դշբ | զ | ժա | ա | իբ | ժթ | լ | ժ | լա | իը |
| Բ | Եշբ | է | ժբ | բ | իգ | ի | յն. ա | ժա | յլ. ա | իթ |
| Գ | Ուր | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | Շբթ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յլ. ա |
| Ե | Կիր | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | Բշբ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | Գշբ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | Դշբ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | Եշբ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | Ուր | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | Շբթ | ժզ | իա | ժա | ապ. ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | Կիր | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |

| Սրբոց շբթ. պահօք | Լուսաւորչին | Սրբոց շբթ. պահօք | Սուրբ խաչ | Սբ. Գէորգայ բար″ | Սրբոց ոստէ շբթ. | Գիւտ խաչ | Յինանց բարեկենդն″ | Սբ. Յակոբայ բարէ″ | Սրբոց ոստէ , օր | Որ բարեկենդն″ յայտ″ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյեմ | դեկ | | |
| է | ժդ | դ | ժդ | ի | է | իե | ժե | դ | ժը | գշբ |
| է | ժէ | դ | ժդ | իա | է | իդ | ժդ | է | ժէ | բշբ |
| է | ժը | դ | ժե | իբ | ե | իէ | ժէ | ը | ժդ | կիր |
| զ | ժբ | ե | ժգ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| զ | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| զ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | եշբ |
| զ | ժզ | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժը | դշբ |
| զ | ժդ | դ | ժդ | ի | է | իե | ժե | դ | ժը | գշբ |
| զ | ժէ | դ | ժդ | իա | է | իդ | ժդ | է | ժէ | բշբ |
| զ | ժը | դ | ժէ | իբ | է | իէ | ժէ | ը | ժդ | կիր |
| է | ժբ | ե | ժգ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| է | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |

| Գիր տարւոյ | Օր Յայտնութեան | Մ՚եՊոց առաջի՛, օր | Առաջաւորաց բարէ" | Բուն Բարեկենդանին | ԶԱՏԻԿ | Երեւման խաչ | Համբարձումն | Հոգեգալուստ | ՍԲ Գրիգորի բար" | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվր | փետր | ապր | մայիս | մայիս | մայիս | յունիս | յուլիս |
| Խ | եշբ | ժը | իգ | ժգ | գ | ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| Ծ | դշբ | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | գշբ | ի | իե | ժե | ե | գ | ժդ | իդ | ժդ | ժբ |
| Հ | բշբ | իա | իզ | ժզ | զ | դ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | կիր | իբ | իէ | ժէ | է | ե | ժզ | իզ | ժզ | ժդ |
| Ղ | շբթ | իգ | իը | ժը | ը | զ | ժէ | իէ | ժէ | ժե |
| Ճ | ուր | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | եշբ | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | դշբ | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ | ի | ժը |
| Ն | գշբ | իէ | փ. ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | բշբ | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | յն. ա | իբ | ի |
| Ո | կիր | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |

| Սրբոց Հրեշ. պահօք | Աստուածածին | Սրբոց Հրեշ. պահօք | Սուրբ Խաչ | Սբ Գէորգայ բար" | Սրբոց տօնէ Հրեշ. | Գիւտ Խաչ | Յիսնակաց բարեկենդան" | Սբ Յակոբայ բարէ" | Սրբոց տօնէ, օր | Օր բարեկենդանի" շաբաթ" |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյե | դեկ | | |
| ե | ժգ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | ԲշԲ |
| ե | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | ԳշԲ |
| ե | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | ԴշԲ |
| ե | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժե | ԵշԲ |
| ե | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Ուր |
| դ | ժթ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | ՇբԹ |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժգ | Կիր |
| դ | ժգ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | ԲշԲ |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | ԳշԲ |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | ԴշԲ |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժե | ԵշԲ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Ուր |

| Գիր տարւոյ : | Օր Յայտնութեան : | Մ՝եԼոյ ...ատեք , օր : | Առաջաւորաց բարէ″ : | Բուն բարեկենդան : | ԶԱՏԻԿ : | Երևման խաչ : | Համբարձումն : | Հոգեգալուստ : | ՄԷ Վարդավառի բար″ : | Ա Աստուածածին : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Փետ | Փետ | Ապր | Մայս | Մայս | Յունս | Յունս | Յուլ |
| Ջ | շբթ | լ | գ | իե | ժե | ժդ | իդ | գ | իդ | իբ |
| Պ | կիր | լա | ե | իզ | ժզ | ժգ. | իե | գ | իե | իգ |
| Ջ | երկ | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | երք | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | չրք | լդ | ը | ա մր | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | հնգ | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | ուր | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | շբթ | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | ա յլ | իթ |
| Ց | կիր | լը | ժբ | ե | իգ | իա | ա յն | ժա | բ | լ |
| Ւ | երկ | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | երք | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | ա օգ |
| Ք | չրք | խա | ժե | Զինուորեալն ՚ի փետրի ամս։ | | | | | | |

| Մ՝եկնոց շաբթու պասօք։ | Նաւասարդ ամսին։ | Մ՝եկնոց շաբթու պասօք։ | Սուրբ Խաչ։ | Սբ Գէորգայ բար"։ | Մ՝եկնոց առաջի շաբթու։ | Գիւտ Խաչ։ | Յինանկաց բարեկենդանն"։ | Սբ Յակոբայ բարէ"։ | Մ՝եկնոց առաջի, օր։ | Օր բարեկենդանի" յայտ"։ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյ | դեկ | | |
| դ | ժը | ե | ժղ | իդ | ե | իը | ժը | թ | ժէ | [illegible] |
| դ | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | [illegible] |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | [illegible] |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | [illegible] |
| դ | ժզ | դ | ժդ | ի | ե | ի՞ | ժէ | ղ | ժը | [illegible] |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իղ | ժղ | է | ժէ | [illegible] |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժղ | [illegible] |
| բ | ժը | ե | ժղ | իդ | ե | իը | ժը | թ | ժէ | [illegible] |
| բ | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | [illegible] |
| բ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | [illegible] |
| բ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | [illegible] |

# ԳԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

## ՀԱՅՈՑ

*Սկսեալ յառաջնէն Կաթողիկոսէն հայոց ՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն մինչև յաւուրս մեր ՚ի Տէր Ներսէս, Ե, Կաթողիկոսն Աշտարակեցի.*

---

1 Տէր սուրբ Գրիգոր լուսաւորիչ. ա̃: Աթոռն կաթողիկոսութե̃ն դնի ՚ի վաղարշապատ ու րէ Էջմիածին յամի 302: Յաւուրս սորա յամի 325 եղև ա̃ր ժողովն Նիկիոյ, և՚ի հայս ժողովն վաղարշապատու, ա̃: Սա գիւտ խաչափայտին քն̃ ՚ի հեղինեայ թագուհւոյ յեղ̃էմ յամի 327: Սա ՚ի 24 ամի թագաւորութե̃ն մեծին կոստանդիանոսի՝ յամի 329 կոստանդինուպօլիս շինի, յորում ժամանակի թագաւորեր ՚ի հայս տրդատ:

2 Տէր Արիստակէս. ա̃: Յաւուրս սորա արիոս հերետիկոսապետ սատակի:

3 Տէր Վրթանէս: Յաւուրս սորա ո̃րն տրդատ վախճանի: Սա ո̃րն գրիգորիս աղուանից կաթողիկոս նահատակի:

Իսկ սուրբ խաչն՝ երևի յերուսաղէմ առ Կիւրղիւ:

4 Տէր Յուսիկ: Յաւուրս սորա մեծն Վրթանէս վախճանի:

5 Տէր Փառներսէհ յաշտիշատոյ՝ ՚ի վանաց գլակայ: Յաւուրս սորա յուսիկ և դանիէլ, և սարգիս զօրավար նահատակին:

6 Տէր Ներսէս մեծ. ա: Յաւուրս սորա յամի 381 եղև ոբ ժողովն կոստանդնուպօլսի ընդ դէմ մակեդոնի: Իսկ ՚ի հայս ժողովն աշտիշատու, ա. և ժողովն վաղարշապատու, բ:

7 Տէր Շահակ ՚ի մանազկերտոյ:

8 Տէր Զաւէն:

9 Տէր Ասպուրակէս: Յաւուրս սորա աշխարհն հայոց բաժանի ՚ի յունաց և ՚ի պարսից:

10 Տէր Սահակ մեծ՝ պարթև. ա: Յաւուրս սորա յամի 398 ո՛րն յօհան ոսկեբերան նստի պատրիարգ ՚ի կոստանդնուպօլիս: Իսկ յամի 406 ո՛րն մեսրոպ գտանէ գիրս հայոց, և լինի ըսկիզբն թարգմանութե, և թարգմանի ա՛ծաշունչ մատեանն: Յայսմ ժամանակի յամի 411 սկսանի թագաւորութի՛ն սկովտից: Իսկ յամի 414 թագաւորութի՛ն սպանիացւոց: Իսկ յամի 419 թագաւորութի՛ն փռանսայու: Իսկ

լինի ժողով յեփեսոս ընդդէմ Նեստորի յամի 431։ Իսկ ’ի Հայս կրկին ժողով ’ի վաղարշապատ, դ և դ, և կրկին ժողով յաշտիշատ, ը և դ։

11 Տէր Յովսէփ, ա, ’ի Հողոցիմ աւանէ։ Յաւուրս սորա յամի 448 եւտիքէս հերետիկոս դատապարտի։ Իսկ ’ի Հայս կրկին ժողով շահապիվանու, ա և ը. և ժողով արտաշատու. և ժողով դւինայ, ա։

12 Տէր Մելիտէ ’ի մանազկերտոյ։ Յաւուրս սորա ղեւոնդեանք նահատակին։ Իսկ աթոռն կաթողիկոսութեան փոխի ’ի դվին քաղաք յամի 432 յետ կալոյ յէջմիածին ամս 150։

13 Տէր Մովսէս, ա, ’ի մանազկերտոյ։ Յաւուրս սորա նախարարք հայոց ար ձակեալ ’ի կապանաց դառնան յաշխարհէն պարսից ’ի Հայաստան։

14 Տէր Գիւտ յարահեզոյ ’ի տայոց։ Յաւուրս սորա դաւիթ անյաղթ և մամբրէ և ընկերք նոցա ծաղկին։

15 Տէր Քրիստափոր, ա, արծրունի։

16 Տէր Յովհան, ա, մանդակունի։ Յաւուրս սորա վահան մամիկոնեան նորոգէ զաշխարհն հայոց։

17 Տէր Բաբկէն յոթմնոյ՝ որ ’ի վանանդ։ Յաւուրս սորա եղև ժողով վաղարշապատու, է։ Իսկ գիւտ նշխարաց գր-

րիգորիսի աղուանից կաթողիկոսի։

18 Տէր Սամուէլ յարծկեայ։ Յաւուրս սորա եղև սկիզբն աէրուէն շուեատու։

19 Տէր Մուշէ յաղբերց աւանէ։ Յաւուրս սորա Թագաւորն պարսից կաւատ՝ առնու զքաղաքն տիգրանակերտ ՚ի ձեռաց Հայոց։

20 Տէր Սահակ, Բ, յուղկայ որ ՚ի Հարք։ Յաւուրս սորա վահան մամիկոնեան վախճանի։

21 Տէր Քրիստափոր, Բ, ՚ի տիրառինձ աւանէ բագրևանդայ։

22 Տէր Ղևոնդ յեռաստոյ։ Յաւուրս սորա լինի սով սաստիկ յաշխարհին Հայոց։

23 Տէր Ներսէս, Բ, յաշտարակաց ՚ի բագրևանդայ։ Յաւուրս սորա եղև ժողովն դվնայ, Բ։

24 Տէր Յովհաննէս, Բ, ՚ի սիւնձեղնոյ գաբեղեանց։ Յաւուրս սորա յայտնեցաւ դաստառակն քրի։

25 Տէր Մովսէս, Բ, յեղիվարդայ։ Յաւուրս սորա նորոգեցաւ տումարն ՚ի Հայս, որ և յամի տեառն 552 սկսաւ Թուականն Հայոց։ Եղև ժողովն դվնայ, Գ։ Եւ յուստինիանոս մեծ կայսրն յունաց շինեաց զսրբն սոփիա յամի 557։

26 Տէր Աբրահամ, Ա, յաղբաթանից։

Յաւուրս սր̃ եղև ժողովն Դ̃ւնայ, գ̃ ։
Եւ դարձ Անգղիացւոց 'ի հաւատս
ք̃ի յամի 597 ։
27 Տէր Յովհան, գ̃, 'ի Բագարանէ
Բագրևանդայ ։ Սա նստաւ 'ի Բաժ-
նին յունաց յաւուրս Աբրահամու
կաթողիկոսի ։ Յայսմ ժամանակի պար
սիկք առին զԵ̃մ 'ի յունաց յաւուրս
Հերակլի կայսեր, և գերեցին զսուրբ
խաչն յամի 614 ։
28 Տէր Կոմիտաս յաղցից յարագածո-
տան ։ Սա շինէ զվկայարանն սրբոց
Հռիփսիմեանց, և նորոգէ զէջմիա-
ծին ։ Յաւուրս սորա մեծ հայ կար
գի զօրավար 'ի Հերակլ կայսերէն յու-
նաց, և առնէ մեծամեծ քաջութիւնս 'ի
պարսիկս ։ Եւ սկսանի Թուականն
հագարացւոց, յամի տ̃ն 622, յո-
րում էր Թուականն հայոց՝ հ̃ա ։
29 Տէր Քրիստափոր, գ̃, յապահունեաց ։
30 Տէր Եզր 'ի փառաժնակերտէ ։ Սա
շինէ զվկայարանն ս̃բց Գայիանեանց ։
Յաւուրս սորա եղև ժողովն Կարնոյ ։
Եւ դարձ ս̃բյ խաչին յեղ̃էմ, և անտի
'ի Կոստանդնուպօլիս 'ի ժամանակս Հե
րակլի կայսեր յունաց ։ Եւ յամի 637
հագարացիք առնուն զԵրուսաղէմ ։
31 Տէր Ներսէս, գ̃, շինօղ, յիշխանաց
աւանէ 'ի Տայոց ։ Յաւուրս սորա յամի

653 յայտնեցաւ նշ՟ խաչն վարագայ։
Սոյն եղև կրկին ժողով 'ի դվին, ե, զ,
և ժողով ինչ 'ի մանազկերտ 'ի տեղա-
պահութեան յովհաննու։
32 Տէր Անաստաս յակոռւոյ։ Յա-
ւուրս սորա ծաղկեցաւ անանիա շի-
րակացի՝ համարող և աստեղաբաշխ։
33 Տէր Իսրայէլ յոթմնոյ 'ի վանանդայ։
Յաւուրս սորա մովսէս սիւնեցի՝ երկ
րորդ քերթող ծաղկի։ Սոյն մժեժ հայ
նատի կայսր յունաց 'ի կոստանդնու-
պօլիս յամի տեառն 667։
34 Տէր Սահակ, գ, յարքունաշինէ։
Սա կալեալ առաքի 'ի դամասկոս առ
ամիրապետն հագարացւոց։
35 Տէր Եղիա յարճիշոյ։ Յաւուրս սորա
նախարարք հայոց այրին 'ի նախջուան
քաղաքի 'ի հագարացւոց։ Սոյն ժո-
ղով յաղուանս։
36 Տէր Յովհան, դ, իմաստասէր, օձ-
նեցի 'ի տաշրաց։ Յաւուրս սորա յա-
մի 722 հրէայ ոմն յասորիս՝ համբաւէ
զանձն լինել մեսիա։ Սոյն ժողովն
դվնայ, է. և ժողով դվնայ կամ վա-
ղարշապատու ընդ դէմ պօղիկեանց և
յուլիանիտաց։ Լևոն կայսր յունաց
զինի ընդ դէմ սրբոց պատկերաց։
37 Տէր Դաւիթ, ա, յարամոնից։ Յա-
ւուրս սորա յամի 733 յարեան պատ-

կերամորաք յաշխարհին յունաց։

38 Տէր Տրդատ, ա̃, յոթմսոյ ՚ի վանանդայ։ Յաւուրս սորա եղև սկիզբն տէրուն մաձառաց ըստ կուսակալուն ՚ի դխմոց կայսերն յունաց։ Իսկ աթոռ ամիրապետին հագարացւոց փոխի ՚ի դամասկոսէ ՚ի բաղտատ, զոր ՚ի հիմանց նորոգէ Ձաֆար ամիրապետ։

39 Տէր Տրդատ, բ̃, ՚ի դասնաւորից։ Ի վերջին աւուրս սորա եղև կարկուտ և մարախ և երաշտութիւն յաշխարհին հայոց։

40 Տէր Սիոն ՚ի բաւոնից արագածոտան։ Յաւուրս սորա եղև ժողովն պարտաւայ։

41 Տէր Եսայի յեղապատրուշ աւանէ։ Յաւուրս սորա մուշեղ մամիկոնեան հարկանէ զպարսիկս։ Իսկ աշոտ մսակեր առնէ բազում քաջութիւնս։ Իսկ սաքսոնացիք դառնան ՚ի հաւատս քի̃։

42 Տէր Ստեփաննոս, ա̃, ՚ի դունայ։ Յաւուրս սորա մարիամ հայկազն պսակի ընդ կայսեր յունաց։

43 Տէր Յովաբ յոստանէն դունայ։

44 Տէր Սողոմոն ՚ի գառնոյ։

45 Տէր Գէորգ, ա̃, յարագածոտնէ։

46 Տէր Յովսէփ, բ̃, յարագածոտնէ։ Յաւուրս սորա յամի 803 հանգանակն հաւատոյ սկսաւ երգիլ յե-

կեղեցիս լատինացւոց ։ Նա փորձան
հայ ընտրի կայսր յունաց , և հրա-
ժարեալ կրօնաւորի ։
47 Տէր Դաւիթ , Բ , ՚ի մաշաղոյ ։ Յա-
ւուրս սորա յամի 813 տօն վերա-
փոխման հաստատի ՚ի լատինս ։ Նա
արշաւիր հայ ընտրի կայսր յունաց ,
և նուաճի ՚ի Նիկեփորայ ։ Նա սպա-
նանի կայսր լեւոն արծրունի հայ ։
48 Տէր Յովհաննէս , Ե , յովայից ։ Սա
հերքեաց զաղանդն Թոնդրակեցւոց
որ նորոգ սկսեալ էր ։ Յաւուրս սո-
րա եղև ժողովն երնջակու ։ Նա դարձ
բուլղարաց ՚ի հաւատս քրիստոսի ։
49 Տէր Զաքարիա , Ա , ՚ի ձագ աւանէ ։
Յաւուրս սորա եղև ժողովն շիրակվա
նու ։ Նա եկն ձիւն արիւնագոյն յաշ-
խարհն արևմտից ։ Նա յամի 861 ըն-
կլիզքն եղև տէրութեանն մոսկովաց ։
Նա դարձ շքլաւոնաց ՚ի հաւատս քի ։
50 Տէր Գէորգ , Բ , ՚ի գառնոյ ։ Յա-
ւուրս սորա սկզբնաւորի թագաւո-
րութիւնն բագրատունեաց ՚ի մեծէն
աշոտոյ , յամի ան̃ 885 , պսակեալ թա
գիւ յամիրապետէն հագարացւոց , և
՚ի վասիլ հայկազն արշակունի կայսե
րէն յունաց , որ թագաւորեաց ՚ի կոս
տանդնուպօլիս յամի տեառն 867 ։
51 Տէր Մաշտոց յեղեգվարդայ ։

52 Տէր Յովհաննէս, ՟Է, պատմաբան՝ 'ի դրասխանակերտէ։ Յաւուրս սորա նահատակի սմբատ արքայ հայոց, և թագաւորէ աշոտ երկաթ։ Առնուն հագարացիք զկաթողիկոսարանն դըվնայ. և աթոռ կաթողիկոսութ՟ն փոխի 'ի վասպուրական յամի ՟տն 924, յետ կալոյ 'ի դվին քաղաք ամս 472։ Յայսմ ժամանակի նստէր կայսր յունաց լևոն իմաստասէր հայկազն 'ի կոստանդնուպօլիս։ Եւ ապա նստի կոստանդին պերփիւռուժէն հայկազն։

53 Տէր Ստեփաննոս, ՟Ը։

54 Տէր Թէոդորոս, ՟Թ։ Յաւուրս սորա շինի վանքն նարեկայ։ Եւ յամի 930 հերոլդոս լինի առաջին քրիստոնեայ թագաւոր տանիմառքայի։ Յայսմ ժամանակի նստէր կայսր յունաց 'ի կոստանդնուպօլիս ռոմանոս հայ։

55 Տէր Եղիշէ, ՟Ժ։ Յաւուրս սորա անանիա նարեկացի ծաղկի։

56 Տէր Անանիա 'ի մոկաց։ Յաւուրս ս՟ր փոխադրի դաստառակն ք՟ի յեդեսիոյ 'ի կոստանդնուպօլիս։ Ծնանի ս՟րն գրիգոր նարեկացի։ Եւ յամի 948 մոսկովք դառնան 'ի հաւատս ք՟ի։

57 Տէր Վահան 'ի բաղաց։ Յաւուրս սորա յովհաննէս չմշկիկ հայ ազգաւ թագաւորէ 'ի վերայ յունաց 'ի կոս-

տանդնուպօլիս , յամի տեառն 969 ։

58 Տէր Ստեփաննոս , դ̃ , վանահայր սե-
ւանայ ։ Յաւուրս սորա լինի ժողովն
անւոյ . ա̃ ։

59 Տէր Խաչիկ , ա̃ , արշարունեաց եպիս
կոպոս ։ Յաւուրս սորա յամի 980
սմբատ Թագաւոր շինէ զպարիսպ անի
քաղաքին ։ Եւ սամուէլ հայ դերջա
նեցի քաջ Թագաւորէ 'ի վն̃ բուլղա
րաց ։ Եւ լինի ժողովն անւոյ , ը̃ ։

60 Տէր Սարգիս , ա̃ , վանահայր սեւա-
նայ ։ Յաւուրս սորա աթոռ կաթողի
կոսուն̃ հաստատի յանի քաղաք յամի
ան̃ 995 , յետ կալոյ 'ի վասպուրական
աշխարհ` այսինքն 'ի ձորոյ վանք , և'ի
վարագ , և յարգինա ամս 69 ։ Եւ ժո
ղովն հարքայ , ա̃ և ը̃ , ընդ դէմ Թոնդ-
րակեցւոց ։ Եւ յամի 996 մաձառք
դառնան 'ի հաւատս ։

61 Տէր Պետրոս , ա̃ , գետադարձ ։ Յա-
ւուրս սորա գրիգոր մագիստրոս ծաղ
կի ։ Եւ յամի 1022 սենեքերիմ Թա-
գաւոր արծրունի Թողեալ զքաղաքն
վան` չուէ 'ի սեբաստիա քաղաք ։ Եղե
ժողովն անւոյ , դ̃ . և ժողովն հարքայ , դ̃ ։

62 Տէր Խաչիկ , ը̃ , քեռորդի գետա-
դարձին ։

63 Տէր Գրիգոր , ը̃ , վկայասէր` որ-
դի գրիգորի մագիստրոսի 'ի զարմէ

լուսաւորչին։ Յաւուրս սորա գա-
գիկ Թագաւոր տայ զկարս քաղաք 'ի
Յոյնս, և ինքն մեկնի 'ի Հայաստանէ։
Նա աթոռն կաթողիկոսութե՟ փոխի
յանուղ 'ի Թաւբլուր՝ յամի 1063,
յետ լինելոյ յանի ամս 71. և դնի 'ի
ծամնադաւ յամի 1066։ Ժողով սեաւ
լերին, ա՟։ Նա յամի 1079 բառնի
Թագաւորութիւնն բագրատունեաց
մահուամբ գագկայ վերջնոյ, և սկսա
նի տէրութիւնն ռուբինեանց։ Սա
ինքն երանելին գրիգոր վկայասէր
գնայ 'ի կոստանդնուպօլիս առ կայս-
րըն յունաց աղէքս կոմնինոս վ՟ս միա-
բանութեան, և ոչ յաջողի։

64 Տէր Բարսեղ, ա՟, անեցի։ Յաւուրս
սորա աթոռն կաթողիկոսութե՟ դնի
յանի։ Նա յամի 1089 լինի սկիզբն
տէրութե՟ փորթուգեղից։ Սուրբն
ներսէս շնորհալի ծնանի։ Լատինա-
ցի խաչակիր զօրք առնուն զերուսա
ղէմ յամի 199. և կոնդոպրէ նստի
առաջին Թագաւոր յերուսաղէմ։

65 Տէր Գրիգոր, գ՟, կամ Գրիգորիս
պահլաւունի։ Յաւուրս սորա՝ որ
էր ամ տ՟ն 1113, դաւիթ Թոռնիկ-
եան նստի առաջին կաթողիկոս յաղ-
Թամար։ Լինի ժողով 'ի սեաւ լե-
րին, բ՟, և աթոռ կաթողիկոսութե՟

փոխադրի անդր յամի 1113 , յետ լի-
նելոյ 'ի Թաւբլուր և 'ի Ծամնդաւ և
յանի ամս 49։ Եւ յամի 1125 'ի
Ծովք դղեակ . և յետ կալոյ 'ի սեւ-
լեռան և 'ի Ծովք դղեակ ամս 31 ,
փոխի 'ի Հռոմկլայ յամի տն̃ 1147։
Սուրբն Ներսէս շնորհալի , սարգիս
շնորհալի , և իգնատիոս վարդապետ
Ծաղկլին . և սուրբն Ներսէս լամբրո-
նացի ծնանի։

66 Տէր Ներսէս , դ̃ , կլայեցի , որ և շնոր
հալի։ Գրէ Թուղթ առ կիռ մանու-
էլ կոմնենոս կայսր յունաց . և նա առ
շնորհալին՝ վասն միաբանութե̃։

67 Տէր Գրիգոր , դ̃ , կամ Գրիգորիս
տղայ կոչեցեալ։ Սա զսուրբն Ներ-
սէս լամբրոնացի ձեռնադրէ եպիս-
կոպոս։ Յաւուրս սորա եղև ժողո-
վըն Հռոմկլայու փոքր , և ժողովն
Հռոմկլայու մեծ՝ վասն միաբանութե̃
ընդ եկեղեցւոյն յունաց։ Եւ յամի
1187 սուլթան սալահաթին առնու
զերուսաղէմ 'ի ձեռաց լատինացւոց։

68 Տէր Գրիգոր , ե̃ , գահավէժ։

69 Տէր Գրիգոր , զ̃ , որ և ապիրատ։
Յաւուրս սորա յամի 1197 եղև ըն-
կլիղըն Թագաւորութեանն ռուբին-
եանց՝ յերկրորդ լևոնէ։

70 Տէր Յովհաննէս , զ̃ , մեծաբարոյ՝ 'ի

ամս ։ Յաւուրս սորա յամի 1202 Ճին-
կիզ խան տիրապետէ ։

71 Տէր Դաւիթ , դ , ՚ի վանաց արքա-
կաղնոյ ։ Յաւուրս սորա լինի ժողով
ամս , ա , և ժողով ՚ի լոռի , և ժողով
անւոյ , դ ։ Լատինացիք առին ըզ
կոստանդնուպօլիս ՚ի ձեռաց յու-
նաց , և բաղդուինոս լատին Թագա-
ւորէ անդ յամի 1204 ։

72 Տէր Կոստանդին , ա , ՚ի բարձր բեր-
դոյ ։ Յաւուրս սորա վանական վար-
դապետ ծաղկի ։ Ժողով ամս , բ , և
դ ։ Յարձակին Թաթարք ընդ տիե-
զերս ։ Հեթում Թագաւոր գնայ առ
մանգոյ խան կայսր Թաթարաց ։ Եւ
յամի 1261 յոյնք դարձեալ առին
զկոստանդինուպօլիս ՚ի ձեռաց լատի
նացւոց , և միքայէլ բալէոլոգ Թա-
գաւորեաց ՚ի կոստանդնուպօլիս ։

73 Տէր Յակոբ , ա , կլայեցի՝ գիտնա-
կան ։ Յաւուրս սորա Հեթում Թա-
գաւոր լինի կրօնաւոր ։

74 Տէր Կոստանդին , բ , պրօնագործ ,
եպիսկոպոս կեսարիոյ ։

75 Տէր Ստեփաննոս , դ , ՚ի խախ աւանէ
յեկեղեաց գաւառէ ։ Յաւուրս սո-
րա եղև ժողով ամս , դ ։

76 Տէր Գրիգոր , է , անաւարզեցի ։ Յա
ւուրս սորա եգիպտացիք առին ըզ

Հռոմկլայ , և աթոռ կաթողիկոսու՟ն փոխադրեցաւ 'ի սիս յամի տ՟ն 1294 , յետ կալոյ 'ի Հռոմկլայ ամս 147 ։ Փողովսոյ , Ե ։ Յայսմ ժամանակի յամի տ՟ն 1300 սկիզբն եղև Հզօր թագաւորութ՟ն օսմանցւոց , և թագաւորեաց 'ի սէօյիւտձուք որ է մերձ պըրուսայու՝ օսման , Ա ․ 'ի կայսերութ՟ե յունաց անդրոնիկոսի , Բ ․ և միքայէլի , Թ ․ և 'ի թագաւորութ՟ե Հայոց Հեթմոյ , Բ ։ Նու գիւտ բևեռացուցի , որ է բուսոլայ ։

77 Տէր Կոստանդին , Բ , կեսարացի վերստին ։ Յաւուրս սորա լինի ժողով Ինչ 'ի սիս ․ և ժողով՟ն ադանոյ ։ Նու-յամի 1319 կործանում՟ն անի քաղաքին ։

78 Տէր Կոստանդին , Գ , 'ի լամբրոնէ ։

79 Տէր Յակոբ , Բ , 'ի սսոյ ։ Յաւուրս սորա գտանի վառօդն որ է պարութ, 'ի կողոնիա 'ի բարթուղիմեայ գերմանացւոյ՝ յամի տեառն 1329 ։

80 Տէր Մխիթար 'ի քռնայ՝ որ յերնջակ ։ Յաւուրս սորա եղև ժողով սսոյ , Գ ։

81 Տէր Յակոբ , Բ , վերստին ։

82 Տէր Մեսրոպ , առաջնորդ վանաց թադէի յարտազ ։ Յաւուրս սորա եղև ժողով սսոյ , Դ ։

83 Տէր Կոստանդին , Դ ։

84 Տէր Պօղոս, Ա։ Յաւուրս սորա յորում էր ամ Տն 1375, լեոն վերջին Թագաւոր յըմբռնի յեգիպտացւոց, և դնի 'ի բանդ· բառնի Թագաւորութիւն Հայոց, և աւերի աշխարհն կիւլիկիոյ· յորում ժամանակի էր կայսր յունաց յովհաննէս բալէոլոգ, և Թագաւոր օսմանցւոց սուլթան մուրատ, Ա։

85 Տէր Թէոդորոս, Բ։ Յաւուրս սորա յամի 1382, լեոն Թագաւոր ազատի 'ի բանդէ, գնայ 'ի հռոմ և 'ի սպանիա, շրջի յանգղիա և 'ի գաղղիա· և յամի 1393 մեռանի 'ի փարէզ քաղաքի գաղղիացւոց, ուր և կայ գերեզման նորա մինչև ցայսօր· և իսպառ բառնի Թագաւորութիւնն Հայոց։

86 Տէր Կարապետ, Ա, կեղեցի։

87 Տէր Դաւիթ, Գ։

88 Տէր Կարապետ, Բ։ Յաւուրս սորա մեռանի մարիամ Թագուհին Հայոց։

89 Տէր Յակոբ, Գ։

90 Տէր Գրիգոր, Ը, խանձողատ։

91 Տէր Պօղոս, Բ, առաջնորդ եդեմի։

92 Տէր Կոստանդին, Ե, 'ի վահկայ ամրոցէ կիլիկիոյ։

93 Տէր Յովսէփ, Գ։

94 Տէր Գրիգոր, Թ, մուսաբէկեանց։ Յաւուրս սորա լինի ժողովն էջմի-

ածնի, և յամի 1441 փոխադրի աթոռ
կաթողիկոսութե՟ն յէջմիածին, յետ
կալոյ 'ի սիս ամս 147:

95 Տէր Կիրակոս խորվիրապցի՝ նախ-
առաջին կաթողիկոս յէջմիածին:

96 Տէր Գրիգոր, Ժ, 'ի մակուայ: Յա-
ւուրս սորա յամի 1453 սուլդան մէ-
հէմէտ թագաւոր օսմանցւոց առնու
զկոստանդնուպօլիս, և բառնայ զկայ-
սերութին յունաց. որ սկսաւ 'ի շի-
նութէն կոստանդնուպօլսի յամի 329
'ի մեծէն կոստանդիանոսէ կայսերէն
հռովմայ, և տևեաց ամս 1124 մինչև
'ի վերջին կոստանդին բաղէոլոգ կայ-
սըր յունաց:

97 Տէր Զաքարիա, Բ. Սա էր յառաջա-
դոյն կաթողիկոս աղթամարայ, և
նստաւ յէջմիածին: Յաւուրս սորա
յամի 1461, 'ի 11 ամի թագաւորու-
թեան ֆաթիհ սուլթան մէհէմէտի,
յովակիմ եպիսկոպոս պրուսայու նըս
տաւ առաջին պատրիարգ հայոց 'ի
կոստանդնուպօլիս:

98 Տէր Արիստակէս, Բ, մականուան-
եալ աթոռակալ: Յաւուրս սորա աջ
ս՟բ լուսաւորչին ածի յաղթամար:

99 Տէր Սարգիս, Բ: Յաւուրս սորա
աջ սուրբ լուսաւորչին ածի յաղ-
թամարայ յէջմիածին:

100 Տէր Արիստակէս , է̃ ։ Յաւուրս սորա յամի 1492 Քրիստափոր կոլումբոս Ճէնովացի մտանէ 'ի Նոր աշխարհն . և յամի 1497 ամերիկոս վեսպուկիոս փլորենտացի յայտնէ զնա , յորոյ անուանէ կոչեցաւ աշխարհն ամերիգա . յորում ժամանակի Թագաւորէր 'ի կոստանդնուպօլիս սուլդան պայազիտ , ը̃ ։

101 Տէր Թադէոս , ա̃ ։ Յաւուրս սորա շահ իսմայէլ արքայ պարսից նորոգէ զասպահան քաղաք ։

102 Տէր Եղիշէ , ը̃ ։ Յաւուրս սորա յամի 1503 եղև գիւտ փոքրիկ ժամացուցի , այսինքն զէմպէրէկլի սահաթի , 'ի պետրոսէ հէլայ գերմանացւոյ ։

103 Տէր Զաքարիա , է̃ ։ Յաւուրս սորա յամի 1516 սուլդան սէլիմ , ա̃ , առնու զեգիպտոս ։ Ի սմին ժամանակի յամի 1517 յարեաւ լուտեր մարտինոս սաքսոնիացի աղանդապետ , յորմէ լուտերականք ։

104 Տէր Սարգիս , է̃ ։ Յաւուրս սորա յամի 1521 սուլդան սիւլէյման՝ ը̃ , էառ պէլղրատ ։

105 Տէր Գրիգոր , ժա̃ ։ Յաւուրս սորա էր կալվին գաղղիացի աղանդապետ , յորմէ կալվինեանք ։

106 Տէր Ստեփաննոս, Ե, 'ի սալամաստոյ։

107 Տէր Միքայէլ 'ի սեբաստիոյ։ Յաւուրս սորա շահ Թահմազ արքայ պարսից եած աւեր աշխարհին հայոց։

108 Տէր Բարսեղ, Բ։ Յաւուրս սորա յամի 1567 եղեւ սկիզբն տպագրութեան հայերէն գրոց։

109 Տէր Գրիգոր, ԺԲ։ Յաւուրս սորա յամի 1571 օսմանցիք առին զկիպրոս 'ի ձեռաց վէնետիկցւոց, 'ի թագաւորութեան սուլդան սէլիմի, Բ։

110 Տէր Ստեփաննոս, Զ, յառնչոյ։ Յաւուրս սորա յամի 1574 ուլահ անկաւ ընդ տէրութբ օսմանցւոց։

111 Տէր Թադէոս, Բ։ Յաւուրս սորա շահ Թահմազ հեղձանի 'ի բաղանիս։

112 Տէր Ռուաքէլ յէջմիածնէ։

113 Տէր Դաւիթ, Ե, յէջմիածնէ։

114 Տէր Մելքիսէթ 'ի գառնոյ։ Սա յամի 1599 յեօթներորդ ամի կաթողիկոսութե իւրոյ եկեալ նստի պատրիարգ 'ի կոստանդնուպօլիս։

115 Տէր Սրապիոն, որ և գրիգոր՝ յեդեսիոյ։ Յաւուրս սորա յամի 1605 շահաբաս գայ և վարէ զբնակիչս հայաստանու յաշխարհն պարսից, և ածէ աւեր և ամայութիւն աշխարհին հայոց և էջմիածնի։

116 Տէր Սահակ, Է։

117 Տէր Մովսէս, Գ, սիւնեցի՝ որ և տաթևացի, յամի 1629 նորոգէ զէջմիածին։

118 Տէր Փիլիպպոս յերկանէ փոքր աղբակոյ։ Սա կանգնէ բազում շինուածս յէջմիածին. և գրիգոր պարոնտէր՝ յերուսաղէմ։

119 Տէր Յակոբ, Դ, ՚ի Նոր Ջուղայէ։ Յաւուրս սորա յամի 1664 եղիազար անթապցի ձեռնադրի առանձին կաթողիկոս, և դնէ զաթոռն յեղէմ։ Յակոբ կաթողիկոս գնայ ՚ի կոստանդնուպօլիս։ Յայսմ ժամանակի յամի 1669 սաբեթայ սէվի համբաւէ զանձնէ լինել մեսիա։

120 Տէր Եղիազար անթապցի։ Սա յամի 1680 յետ վախճանի յակոբ կաթողիկոսի, հաստատի յաթոռ իւր յերուսաղէմ. և յամի 1682 գնայ և նստի յէջմիածին։ Յաւուրս սորա յամի 1688 մեծն պետրոս թագաւորէ ՚ի վերայ մոսկովաց։

121 Տէր Նահապետ յեդեսիոյ։ Յաւուրս սորա յամի 1701 փրիտերիկոս նստի առաջին թագաւոր պրուշից։

122 Տէր Աղէկսանդր, Ա, ՚ի Նոր Ջուղայէ։

125 Տէր Աստուածատուր ՚ի համատանոյ. Յաւուրս սորա յամի 1722 մահ-

մուտ միւրվէյիզեան առնու զսպա-
հան և Թագաւորէ պարսից : Սոյն յա-
մի 1724 դաւիթ իշխան հայ զօրա-
նայ 'ի սիւնիս :

124 Տէր Կարապետ, Բ, յուլնեայ : Յա-
ւուրս սորա Թահմազղուլի զօրավար
զօրանայ : Սոյն յամի 1728 դաւիթ
իշխանն սիւնեաց մեռանի :

125 Տէր Աբրահամ, Բ, 'ի խոշաբայ՝ ա-
ռաջնորդ ս̃բ կարապետի որ 'ի մուշ :
Յաւուրս սորա մեռանի մխիթար
քաջ սպարապետ հայոց 'ի սիւնիս :

126 Տէր Աբրահամ, Գ, 'ի գանտից կը-
րետեայ՝ առաջնորդ Թէքիրտաղու :
Յաւուրս սորա յամի 1736 Թահմազ
ղուլի խան Թագաւորէ 'ի վերայ պար
սից, և կոչի Նատրշահ :

127 Տէր Ղազար Ջահկեցի : Յաւուրս
սորա տառապին բնակիչք հայոց աշ-
խարհին 'ի ծառայից Թահմազայ :

128 Տէր Պետրոս, Ե, քիւթիւր կոչեց-
եալ՝ անթապցի : Յաւուրս սորա յա
մի 1748 եաղուպ հայկազն իշխան
ակնեցի՝ եղև երևելի յոյժ 'ի կոս-
տանդնուպօլիս :

129 Տէր Մինաս յակնայ՝ պատրիարգ կոս
տանդնուպօլսի :

130 Տէր Աղեքսանդր, Բ, ղարաղաշ կո-
չեցեալ՝ կոստանդնուպօլսեցի :

131 Տէր Սահակ, Ե, ահագին՝ կեղեցի, առաջնորդ կարնոյ: Յաւուրս սորա քերիմ խան պարսից զօրանայ:

132 Տէր Յակոբ, Ե, շամախեցի:

133 Տէր Սիմոն երեւանցի: Յաւուրս սորա յամի 1766 եղեւ շարժ մեծ ՚ի կոստանդնուպօլիս: Եւ ՚ի 12 ամի Թագաւորութե սուլդան մուստաֆայի, Գ, յամի 1769 պատերազմ օսմանցւոց ընդ մոսկովս. եւ ՚ի 1 ամի Թագաւորութե սուլդան համիտի, յամի 1774 հաշտեցան ընդ միմեանս: Եւ յամի 1779 ղրիմեցի հայք վարին ՚ի ղրիմու յաշխարհն ռուսաց ՚ի ռոսդով. ուր ապա շինեցաւ Նոր Նախիջեւան քաղաքն հայոց:

134 Տէր Ղուկաս ՚ի կարնոյ: Յաւուրս սորա յամի 1780 եղեւ գիւտ օդապարիկ գնտոյ ՚ի մոնկոլֆեայ գաղղիոյ:

աւիթ, Զ, ՚ի տփխիսոյ:

նիէլ ՚ի պայազիտոյ՝ պատրի-

ան:

138 Տէր Յովհաննէս, Ը, Կարբեցի։ Յաւուրս սորա յամի 1834 քրիստոսազօր և մեծահռչակ իշխանն Հայ. Յարութիւն պէզճեան մեռանի. և մեծահանդէս շքով թաղի յաթոռանիստ եկեղեցւոջ սուրբ աստուածածնի ՚ի կոստանդնուպօլիս ըստ հրրամանին արքունի։

139 Տէր Ներսէս, Ե, Աշտարակեցի. որ ունի այժմ զհոգևոր բարձրագոյն աստիճան կաթողիկոսութեան, զորոյ գերագահ Վսեմափառութին բազմամեայ կենօք պահեսցէ տէր ՚ի պարծանս ազգիս։